Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ



ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՅԿՈՀՍՀՐԱՏ

891.99 | 8872
П-29 | Пшеничный, Н.
Երկերի ժողովածու.
12п.

27/III	32
9/IV	23
	490
	27



Ռ. ՄԱՏԿԱՆՅԱՆ

ՌՈՓՍԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԱՐՋԱԿ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1946

Կազմը և ճեղինակի պատրճն
ՀԿարիչ ՀՐԱՆՏ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

Տէիսը պատրաստեց
Վ. ԹԵՐԶԻԱՆՑԻՆ

Р. ПАТКАНЯН
Собрание сочинения
(ПРОЗА)
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1946

ԵՍ ՆՉՈՒՇԾ ԷԻ

(ՀՇԳՐԻՏ ԱՆՑՔ ԻՄ ՇՒՇԱՏԱԿԱՐՆԻՑ)

Ա.

185* թվականի ձմեռը այնպիսի ցրտեր էր անում, որ մինչև քաղաքիս վաղուցվա բնակիչները զարմանում էին, և նոցա մտքին չէր դալիս, որ այդպիսի ցուրտ եղանակ նոցա ժամանակները պատահած լինեը: Ձյունը ցրտաթնեն կարծրացած, սնդռացած՝ մանն եկողի ոտքի տակ ճըզճըզում, ճռնչում էր, մարդոց բերնեն դուրչիքը այնպիսի առատութեամբ էր դուրս գալիս, որ աչքի առաջ թանձր մեզ էր ձևացնում և խանգան էր լինում յուրմեն երկու քայլափոխ կեցած առարկաները ջոկելու, դանագանելու: Մարդ չէր համարձակում յուր մարմնոց որևիցե մասը դուրս հանել. թե՛ ձեռքի մատները, թե քիթը, թե՛ ականջները, եթե տաք չլինեին փաթաթած՝ երկու րոպեում սառում վնասանում էին: Դժվար էր չունչ առնելը. ամեն չունչ առնելիս՝ ասես թե կայծակներ էիր կուլ տալիս: Ոտով մանն եկողը չէր գնում յուր սովորական քայլված-քով, այլ զորութեյանը հատածի չափ վազում էր, որ ոտերը ցրտին չտար:

Այս այն չարաչուք ձմեռն էր, երբ քաղաքումս դրախի ցավը և խրեհան իրար հետ դաշնակից էին դարձել և սատիկ կոտորած էին անում սոսկացած ժողովըրդի մեջ: Եթե մարդ համբերութեյուն ունենար կանգնելու նորաչեն քարե կամրջի վրա (որ քաղաքը Վասիլի Կղզիի հետ միավորում է) և առավոտից մինչև մթնակոխը մնար այնտեղ՝ հավատացնում եմ, որ մինչև երկու հարյուր հուղարկավորութեյուն կհամրեր դանա-

պան աստիճանի և կոչման մեռելներու. բայց մանավանդ մեռնող աղքատներու թիվը չատ էր այն ձմեռ։ Թեպետ այսպիսի մեծ և բազմամարդ քաղաքումը, ինչպես որ Պետերբուրգն է, առանց մահատարաժամի էլ մեռնողներու թիվը չատ է, բայց թե հետաքրքրությունն անոնք և հարցնելը ամեն մոռեդ անցկացած հանդուցյալը ինչ մահով է մեռել, համարձակ կարող եմ ասել, որ հիսունից մեկը հազիվ բնական մահով կլինեը մեռած, մնացյալները կամ դռիփով, կամ խոլեռայով կլինեին բռնված։

Երկու ամսվա հասած էի քաղաքս, Եղոլոսկ ծըղրիդի նման՝ ձմեռվա համար վաղօրոք չէի հոգս տարել. մի թեթև չուխայի վերարկու առանց աստառի, մի ուսանողական հին նշանաղգեստ,—այս էին ահա իմ մըրսող մարմնու պաշպանները. միանգամայն պանդուխտ էի այս օտար տեղումն. բայց քանի մի չքավոր հայ ուսանողներե՝ ոչոքի հետ ծանոթություն չունեի. ոչ մեկի հետ գնալ գալ չունեի. ինչ եմ ասում. կարողություն ևս ունենալու չէի ոտս տանեն դուրս կոխելու, եթե բնակարանիս տաքության աստիճանը զրսի եղանակին չհավասարեր։ Բայց այնպիսի բնակարան, ինչպես որ մերն էր (ես կենում էի Գեղարվեստից ճեմարանի աշակերտի հետ, անունը Հովհաննես, ազգավ Հայ), կասկածելի է, որ հյուրասիրությունն խոստանար նաև բուն հյուսիսումն ծնածին, այսինքն ցրտի սովորած մարդու։ Մեղք է ասելը, որ հնոցը չէին վառում կամ վառելիքը խնայում էին, ո՛չ. բայց երբ որ տանը չորս պատից, տափից և վերևից փչում էր քամին, երբ որ հնացած պատուհաններից ծեփը փշրվել ցած էր ընկել և նոցա թողած ծակերից ցուրտը ազատ ներս էր մտնում՝ ինչ վառելիք կդիմանար այդպիսի սխոռին։ Ճարեցս ինչ էր. ո՛չ ես և ո՛չ ընկերս վառ ունեինք, որ կարողանայինք բնակարաններս փոխել. բայց այս, ուր կենում էինք՝ ձրի էր մեզ տված մարդասիրությամբ մեկ բարեբարե...։ Ո՞վ դիտե, դուցե ասում կլինեը մտքումը «խեղճ Հայեր են... տունը դատարկ կա...

թող կենան իրանց համար...»: Եվ մենք կրկնելով առածը թե անասը ուտում է քանչարը, կենում էինք, վա՛յ էն հալին: Ահա այն ժամեն էր, որ առաջս հազը, որն որ մինչև այս օրս չարչարում է կուրծքս...

Ինչպես ասացի, բոլոր այն ժամեը գրեթե չարունակ չորս ամիս սաստիկ ցուրտը կայնել էր. ուրեմն և այն օրը, որ տեղից սկսում եմ վոքրիկ պատմությունս, նամանավանդ ցուրտ էր:

Ցերեկվա ժամը 11-ն էր, որ վաղեվաղ հոգնած տուն էի չուռպում Գաբրիել Ա...ի մոտից: Նոր կամրջին որ հասա՝ առաջ գնալը արդեն անհնարին էր. մի հաբուստ հանդուցյալ էին տանում թաղելու. կառքերը, ոտով գնացողները այնքան շատ էին, որ պետք էր կես ժամ սպասել, որ նոքա անցնեին և ազատ թե ազատ կարողանայի առաջ գնալու: Գրեթե կամրջի կեսին էի հասել, մին էլ տեսնում եսևիցս վաղեվաղ մեկ ուրիշ մեռելակառք էր գալիս. երևի որ աղքատ հանդուցյալ էր դորա մեջինը, որովհետև բացի երկու պատանե և մի մատաղահաս աղջկանե՝ ուրիշ ոչ ոք չէր հուղարկավորության նորան: Պատանիները իրար հետ պինդ-պինդ խոսում էին, ինչպես կարծում եմ, իրանց առօրյա ապրուստի վրա, և որքան կարողացա նկատելու՝ նոքա ամենևին կարեկից չէին հանդուցյալին, այլ սաես թե ակամա էին կատարում այդ սրբազան պարտավորությունը:

Բայց ուրիշ մատծողություն կաներ ով և իցե, թե մեկ բարակ նայեր աղջկա վրա: Ճշմարիտ է, որ նա աղկողորմ ճայնով չէր լալիս, մազերը չէր փետրոտում, երկինք, դետին, ծով ու սարեր չէր կանչում կարեկից իր սրտի վշտին. բայց նորա տխուր և անմխիթար կերպարանքին, նորա արյունկոխ աչքերի մեջ պարզ նկարված էին այն նեղքին պատերազմը, այն կսկծեցուցիչ դարդը, որ նորա հոգին էին տանջում:

Զդեսեմ, ինչո՞ւ դրավեց սիրտս այս տեսարանը, որովհետև կենալով Սմոլենսկու գերեզմանատան մոտերումը՝ պատուհանես ամեն օր տեսնում էի հարյուրա-

վոր այդպիսի ախուր ծեսեր և աչքս արդեն սովորած էր այդ բանին: Բայց մեկ գաղտնի ձայն ասում էր ինձ «դու էլ գնա այդ մեռելակառքի հետից. կարեկցիր ոչ այնքան հանգուցյալին, որ արդեն երկրավոր օգնութեան կարօտ չէ, որքան այս մենավոր որբուկին, որ դուցե յուր վերջին ապաւէնը տանում է հողին ամանդելու»:

Ինչ ասեմ, քրիստոնեական պարտաւորութիւնն էր արդեօք, թե մխայնակ մատաղահաս աղջկա նեղութիւնը, որ սիրեց ինձ, բայց ես առանց ինքս լինել հաւիվ տալու գնացի այդ աղքատ հուղարկաւորութեան հետևն: Ո՛չ աղջիկը և ո՛չ պառաւները ուշադրութիւն դարձուցին վրաս. ամենքն էլ իրանց մտքերովն էին զբաղված:

Ժամանակ առ ժամանակ աչքերս ծածուկ դարձնելով աղջկա վրա, տեսա որ նա գեղեցիկ էր. հասակը բարձր, իրանքը նազուկ և ճկուն, երեսի դծագրութիւնքը ազնիվ, խելօք և բարի, մազերը թուխ, աչքերը սև, (հետևեալին երկրամբ հազվագիւտ է այդ), ունքը կամարաձև, դնացքը հանճնապատում: Եթե նորա արտաքին հանդամանքին եղրակացութիւն անելու լինեի՝ աղջիկը աղքատ հոր ու մոր զաւակ պիտի լիներ, իսկ եթե նորա դեմքին բան ուղենայի հասկանալու՝ նա ազնիվ ընտանեաց պիտի լիներ: Մի անթափանցելի գաղտնիք կար, որ ես և դուք աչքասում էի մեկնելու. բայց այն ներքին ձայնը, որ ամեն ծանրակշիռ պարագայում մարգարեաբար խոսում է մեզ և որ երբեք չէ խաբել ինձ, ասում էր թե՝ արդեն մեկիս մեկի վիճակը վճռվել է. բայց դեպի բարին կամ չարն՝ ոչ ոք չէր կարող նախազուշակելու այն միջոցին:

Այսպես՝ չորս հոգի լուռ ու տխուր հասանք մինչի Սմալենսկի կամուրջի մոտ. այս այն տեղն է, ուր ճանապարհը երեք ճյուղ է բաժանվում. մեկը տանում է դեպի ռուսաց մերձմանաւտունը, մյուսը Հայոց, իսկ երրորդը՝ կաթոլիկի և լուտերականաց: Կառապանը—

երևի թե առաջվանն խրատած չէր— մեռելակառքը ուղիղ դեպի ռուսացն էր տանում:

Պառավներեն մեկը ասաց մյուսին. «կարծեմ որ հանդուցյալը ռուս չպիտի լինի. խոսելից երևում էր որ նեմքա էր, ինչո՞ւ ապա կառապանը դեպի ռուսաց պրեզմանատունն է տանում:

— Չգիտեմ,— պատասխանեց մյուս պառավը,— կարելի է որ կնքված է մեր հավատին:

— Ուրեմն լավ է, որ աղջկանեն հարցնենք: Լաե, աղջիկ, դու ինչ հավատի ես:

Աղջիկը յուր տխուր մտածութեան մեջ ընկղմած՝ ուշք չէր դարձնում, թե ինչ էր կատարվում նրա չորս կողմը: Պառավը յուր հարցմունքը առավել պինդ կրկնեց և այս անգամին կոպտութեամբ քաշեց նորա թիկնոցի փեշը և ավելացուց: «Մատանան դիտե, թե ինչպես հիմար ազդ է այս նեմեց ազգը. ռուսերին պարզ ասում եմ՝ չի հասկանում, անիծածներ, ա՛լ դու ներե իմ մեղքը»:

Աղջիկը չվարած նայեցավ նորա երեսին և պատասխան չտվեց: Ես հասկացա խնդրույն, որ նա ռուսերին չէ խոսում և հարցուցի դադրիերեն:

— Mademoiselle; ces dames ignorent la réligion de la défunte et elles sont dans un grand embarras (*Օրիորդ այս կանայքը չդիտեն, թե հանդուցյալը ինչ կրոն էր պահանում, այդ պատճառով մեծ վարանաց մեջ են*):

— Ma mère était luthérienne (*մայրս լուտերական էր*),—ասաց և նորից ընկավ յուր առաջվա հոգեկան թմրութեան մեջ:

Իսկույն հրամայեցի կառապանին, որ ձիերը դարձնե և տանե դեպի լուտերականաց գերեզմանատունը, որից փոքր ինչ հեռացել էր: Կառապա՞նն էր հարբած, անիվներն էին ծուռ, թե ձիերը չկիված, չգիտեմ, միայն թե կառքը դարձնելիս մազ մնաց, որ դաղաղած ընկնեը, և եթե ես աչքս անդադար նորա վրա չունենայի՝ անշուշտ կառքը և նորա վրայի մեռելով պադաղը գետնին պիտի գլորվեին: Ժամանակ չկորցրած,

խոսքն վազեցի, աչք ուսս դեմ ավի մեռելակառքին և ձեռով դադարը բռնեցի և այդպես մնացի, մինչև որ կառապանը հաղորդությամբ դարձուց կառքը: Բայց երբ որ վանդը անցավ և մենք մտանք դերեզմանատան բակը՝ ի՞նչ տեսնեմ, հալալա արյունով թաթախվել էր, երևի թե դադարը բռնելու ժամանակ՝ անզգուշությամբ ձեռքս սուր երկաթի էլ կպցրել, որովհետև լայն խոցված կար վրան:

— Mein Gott, sie sind verWundet (Աստված իմ, դուք վիրավորված եք)— ասաց ինձ աղջիկը զերմաներեն:

— Մի վախենաք, թեթև քերթված է,— պատասխանեցի, ցավից առաջները կրճտելով, որովհետև խոցի բերանը ցրտին չդիմանալով՝ այնպես կսկծում էր, որ ցավը ուղեղս էր հասնում: Ձեռս տարի դրպանս, որ թաշկինակ հանեմ և փաթաթեմ խոցը, բայց ա՛վ՛ղ, Գաբրիելի տանն էի մոռացել: Աղջիկը հասկացավ կարուստությունս, կարմրելով հանեց տվավ իր բեհեզյա թաշկինակը և ժամանակ չտվավ ընդհակառությունն անելու, խլուզն դնաց մինչև մեռելակառքի կանգնած տեղը: Այս բոլոր անցքը այնպես շուտ կատարվեցավ, որ պատավները չնկատեցին նորա բացակայությունը, և երբ որ գլուխները դարձուցին՝ աղջիկը արդեն նոցա մոտ էր: Վիրավորված ձեռքս թաշկինակով փաթաթելիս՝ տեսա նորա վրա M. V. տառերը ասեղնագործած կարմիր թելերով: Քիչ մնաց որ խելքս գլխից թռչեր. այս ի՞նչ անթափանցելի գաղտնիք է, մտածեցի. մի՞թե իմ և նորա անվանց և մականվանց սկզբնատառերը միևնույնն են. մի՞թե կույր դիպվածը ուզում է ծիծաղել վրաս. մի՞թե նախախնամությունը անտեսանելի ճանապարհներով իմ և այս աղջկա վիճակը միավորում է. ինչպե՞ս մեկնեմ կամըրջի վրա իրար հանդիպելներս, իմ կարեկցելը այս աղջկան (որ ուրիշ անգամ կարելի է առանց տպավորության կիմողնել, մոռես անցնելու), իմ ասպետական անձնազոհությունը—կառքը և դագաղը գլորվելն ապատելիս և վերջապես՝ իմ անունը և մականունը դրոշմած

այս չնաշխարհիկ աղջկա թաչկինակի վրա։ Կրկին և կրկին անգամ նայում էի տառերու վրա, և աչքերուս չէի հավատում. կարծում էի, որ այդ ամենը երազ էին։ Բայց ո՛չ. ամեն բան առաջվա պես էր. լուսերանաց դերեզմանատունը, մեռելակառքը դագաղով, սիրուն աղջիկը ոտաբոբ դեմքով, ես՝ վիրավորված ձեռքով, ցրտից սառած մարմնով...

Ուզում էի երթալ աղջկա մոտ և այս տարօրինակ պատահմունքի մեկնութիւնը խնդրել. բայց հետո խելքս գլուխս ժողովելով՝ զսպեցի ինքս ինձի. մի՞թե նեղելի է, մտածեցի, այսպիսի հանդիսավոր ժամանակ իմ անտեղի և տխմար հետաքրքրութիւնը լցնելու, և դիտավորութիւնս թողի ուրիշ և առավել հարմար ժամանակվա։

Երբ որ մոտեցա կանանցը՝ նոքա վարանաց մէջ էին, թե ինչպես ցած առնուն դագաղը մեռելակառքեն։ Թեպետ բակը մարդկովով լիքն էր, բայց ամենքը իրանց դործով և մտածմունքով զբաղած՝ ոչ ոք չէր չուսպում վերջին պարտավորութիւնը հատուցանելու անտեր մեռելին։ Աղջիկը անհանդիստ աչքերը դարձուց իր չորս կողմը ու ես իսկույն հասկացա նորա մտքի խորհուրդը։ Ինդրեցի կառապանին, որ բռնե դագաղի մեկ ծայրը, մյուսը ես առի ձեռս և այնպես դյուրութիւնը ցած դրինք. դագաղը այնպես թեթև էր, որ մեր կառապանն ևս չհոժարեր օդնելու՝ ես մենակ կարող էի բարձրացնել. երևի, կարծեցի մտքումս, երկարաւոր ծյուրախտով ատնչվել է խեղճ հանդուցյալը։ Հետո նորից բարձրացուցինք դագաղը, տարինք դրինք նոր փորած դերեզմանի մոտ։ Այն օրը դերմանացոց դերեզմանատանը տասնից ավելի մեռելներ կային թաղելու. պատարը գլուխը կորցրել էր. չգիտեր որի՞ն առաջ թաղեր. ի՞նչ ասել կուզե, որ մեր անտերունչ հանդուցյալը մի հանդամանի երեսե ընկած մնացել էր։

Գնացի պատարի մոտ, ամեն բան մեկնեցի և խնդրեցի որ չտապե մեկ վերահասութիւն անելու՝ կարեկցելով աղջկա ցավալի վիճակին։ Պատարը կարճ

և անհամբեր կերպով ասաց «Ո՞ր մեկիդ հանձնա... մի՞թե աղքատությունը լրջախոհություն... համբերեցեք, կամ եթե ավելի լավը ուզում եք՝ ինքներդ առանց ինձ թափեցեք, ես հետս կուզամ և կկարգամ հանգստյան աղոթքը. մի՞թե չեք տեսնում, որ ժամանակը սուիպոդական է...»:

Երևի դռցա սովորությունը այսպես է, առաջի ինքս ինձի ու դնացի աղջկա մոտ և կրկնեցի նորա առաջ պատահածն ասած:

— Ինչպես գիտեք՝ այնպես արեք, ասաց աղջիկը: Երկու պատավը անհամբերությամբ առաջ ու ետ մանում էին գալիս և ամենևին միտք չէին անում այս դժվարությանը օգնության հասցնելու: Նոցա ճմռսած և դեղնած երեսներից անորոշ և անկապ խոսքեր էին դուրս գալիս, և ես կարծում եմ, որ չուտով անեծք լինեին, քան թե հանգստյան աղոթք խեղճ մեռելի վրա: Արդեն զորությունն չունեի դիմանալու. սիրտս սկսավ մղձկալ, արտասուքը պղպջաց աչքերիս և սառեցավ երեսիս վրա, ձայնս դողդողաց: Զգիտեմ, ինչ քարե սիրտ պիտի լիներ, որ չհարժեր այսպիսի արտասվելի վայրկենին. խեղճ հանգուցյալը հետ ամենայն սիրելի բարեկամե, (դուցե) օտար երկրամը, մարդկային վերջի օգնությենեն զրկված և կամ, որ առավել վատթար է՝ այս անգութ, անսիրտ պատավների հոգոին ձգած. այս թշվառ սրբուկը՝ յուր մոր առջև կանդնած, թմրած հոգվով և մարմնով, նմանապես, հետս կարեկից սրտե, որի թեթև հպումսրը ամենևին չէին արդելում դառնաչունչ ցրտին նորա քընքույշ մարմինը փեսացնելու... ա՛խ, քամնելի էր այս պատկերը, որ, տարաբախտաբար, շատ սովորական է մայրաքաղաքումս: Բայց պետք էր վերջ դնել դորան:

— Օրիո՛րդ,— ասացի աղջկանը,— ավելք վերջին մնաս բարեր Ձեր հանգուցյալ մորը, ժամանակին է արդեն թաղելու:

կարծես թե խորը քնից զարթեցավ Թչվառականը, կարծես թե այս ամենը երազումն էր տեսել: Մոլորած աչքերը դարձուց վրաս. Was Wollen sie?[1] ասաց, չճանաչելով ինձ: Ես կրկնեցի ասածս և մատով ցույց տվի նորան մորը դադաղը:

— Und ist das Wahr, dass meine Mutter gestorben ist!? (ուրեմն ճշմարի՞տ է, որ մայրս մեռած է)— ասաց նա կսկիծագին ձայնով, ընկավ դադաղի վրա, պինդ գրկեց և թալիացավ:

Գառավները առաջվա պես անշարժ և անզգա մոխիկ էին անում այս սրտաշարժ տեսարանի վրա,— ոչ մի կաբեկից խոսք, ոչ մի մարդասեր գործ: Հինգ րոպեն չափ մնաց աղջիկը այդ դրությամբ: Ես արդեն սկսա երկյուղ-երերալ, չլինի թե աղջիկան մեկ չար դիպվածը պատահի. ուշ մեկ արի, մոտեցա և սկսա մխիթարական խոսքեր ասելով՝ կամաց-կամաց ուշքի բերելս:

Առանց մեկ դիմադարձության աղջիկը հեցավ[2] ուսիս վրա և ոտի կանգնեցավ. արդեն երեսի վրա չէր երևում այն հուսահատ տխրությունը, որ քանի մի ժամանակ առաջ երևել էր:

Իմ բախտից դերեզմանը խոր չէր փորած, մտա մեջը և նորից խնդրեցի կառապանին, որ ինձ օգնե դադաղը վեռի մեջ իջեցնելու: Երկար ժամանակ ցրտումը կենալով՝ մատներս վեհացել, անզգայացել էին. և երբ որ դադաղի օղակը բռնեցի՝ քիչ մնաս որ ձեռքես բաց էի թողնում, այնքան անզորացել էին մատներս: Այս անգամ դերեզմանի մեջ ավելի դժվարությամբ իջեցրինք դադաղը, քան թե փոքր առաջ՝ մեռելակառքից. բայց ինչ և իցե՝ երկու հոգի արինք այն, որ ուրիշ և աւելի հաջողակ դիպվածներումը տասը-քսան հոգի են կատարում: Շեղ վեռի մեջ հազիվ հազ տեղավոր-

---

[1] Ինչ եք կամենում:

[2] Հենվեց.

վամ էր զազալը, բայց և այնպես ես սոխալված էի նորա մէջ առաջ ու ետ չարժիլ, որ զազալին վայելուչ դրութիւն տամ. ինչ որ ես այն ժամանակ քաչեցի՝ արյունածարաւ թշնամիս չեմ ցանկանում...

Վերջապես ամեն բան կատարելուց հետո՝ դուրս եկա փոսեն, եռանկյունակ[1] (այն ժամանակ տակավին սասոիկ արդելած էր ուսանողներուն դրակ հագնելը) լերկ հողով և առաջարկեցի աղջկանը, որ մոր վրա հող ածե: Աղջիկը հանեց ձեռքի թաթպանները և երեք անդամ լիքը ագուռով հող ցանեց մորը վրա. Auf Wiedersehen, meine gute Mutter![2] ասաց հազիվ լսելի ձայնով, ծունը դրեց փոսի մոտ. դլուխը դրավ դետնին և սկսավ աղոթք անելու: Քամին, որ անդադար փչում էր, այն բոպեին այնպես ասասկացավ, որ հարյուրավոր եղեվիններըը սկսեցին չարժիլ, և նոցա ճյուղերից չատ եղյամ թափվեցավ և կիսով չափ ծածկեց աղջիկը. երանի չէ՛ր լինիլ, որ մի անգամավ թաղել էի այս երկու թշվառականներն, որոնցից մեկը մեռած էր, մյուսը կիսամեռ: Ա՛խ, կան ուրեմն մարդուս կյանքումը այնպիսի բոպեներ, երբ նա մահը առավել մեծ երջանկութիւն է համարում, քան թե կյանքը... կարդացո՛ղ, ինչո՞ւ զարմանում ես դու, որ ես այս աղջկանը մահ էի ցանկանում, դու որ արդեն սկսել ես նկատել իմ սերը դեպի նա, մի՞թե չես կարծում, որ այդ ցանկութիւնս խելացնորութիւն էր: Լա՛ւ ուրեմն իմ արդարանալը: Ես՝ որ աչքս չէի բաց թողնում աղջկա ամենաչնչութիւնքիվ չարժմունքը, մորը վրա հող ածելու ժամանակ տեսա նորա մատին մի ոսկյա մատանի, որ պարզ նշան է նորա հարսնախոսութեանը: Զգիտեմ ինչո՞ւ, բայց այն բոպեին երեք աղջիկը տեղն ի տեղ մեռել էր՝ ես ինձի ամենաերջանիկ մարդը կհամարեի աշխարհիս երեսին: Հանկարծ թուլացավ կարեկցութիւնս դեպի նա. նախանձը արդեն սպրդել էր հո-

[1] Треуголька—Ուսանողական դրակ

[2] Ծեսութիւն, իմ լավ մայր

դուս մեջ. քանի մի ժամանակ առաջ ես կարծում էի, որ նորա միակ տերը և պաշտպանը ես եմ. բայց ոսկե մատանին ցույց տավ, որ կա մեկ ուրիշը, որ առավել իրավունք ուներ նրա երախտադիտության. Թեպետ (կարծում էի) այս բոպեիս ծունը դրած մորը գերեզմանի առաջ՝ նա սոսկալի երդումներ է տալիս հավատարիմ մնալու յուր սրտի ընտրածին... : Այսպիսի անհիմն կասկածներով թունավորում էի հոգիս և պղծում էի այս վեհ բոպեներու մեծահանդիսությունը:

Աղջիկը տեղն վեր կացավ, արտասուքը սրբեց թիկնոցի փեշով, բայց դլուխը քարշ արած անդադար նայում էր ձյունաթաղ դադաղի վրա և մտքով մնաս բարև էր անում յուր մորը: Նորա երեսը նայելիս՝ միանգամայն ցրվեցան իմ սև կասկածանքը. մի՞թե կարծում էի մտքումս, այս անմեղ հոդին թաղցնել դիտե հոդու չարժմունքը. մի՞թե բացի այդ օրհատական մատանին ուրիշ ապացույց չէի կարող նկատել նորա վրա. եթե դա սիրում է՝ ո՞ւր է տալա նորա սիրտ առարկան, ինչո՞ւ թողել է իր նազելիին բաղդի կամքը և այս երկու չատուկներու հոգացողությանը. եթե դա վեհատ ունի՝ ինչո՞ւ տալա այս ցուրտ եղանակին այսպես աղքատ հալավ է հագած... այս անհիմն եղրակացությունները բավականին մխիթարեցին վերդոված երեվակայությունս ու ես նոր եռանդով սկսա հոգս տանել աղջկա վրա:

Փոսի մոտ կար մեկ թիւ ու մեկ բահ. բահը ես առի, թին տվի կառապանին և միասին սկսանք գերեզմանը հողով լցնել: Անհամբեր պառավները կամենալով չտապեցնել այս տխուր ծեսի վերջը՝ ոտերով հողը չալըրտում էին գերեզմանի մեջ: Ամբողջ կես ժամ հազիվ կարողացանք փոսը լցնել: Պառավները չսպասեցին պատարի գալուն և հեռացան մեզանից. կառապանը նմանապես դլխարկը հագավ ու դնաց իր բանին: Մնացինք ես և աղջիկը:

Եկավ պատարը, իր ձեռքը լռնած գրքից ի՞նչ ասես կարդաց, փոքրիկ մխիթարական ճառ ասաց ժո-

դավրդին (այսինքն՝ ինձ և աղջկանը) իրր թե՝ մահը անհրաժեշտ ամենից հասնելու է. առաքինին համբերում է, միայն ցնորամիտը հուսահատում է, և այլն, և այլն, և կարծելով որ աղջկա հոդու մեջ լիովին թաղված հոգեշահ բալասանը՝ ինքն իրմեն բավական, դնաց չարունակելու յուր կոչումն ուրիշ հանդուցյալներու վրա:

Քամին սաստկագին փչում էր, գետնին նոր ընկած ձյունը հավաքում էր ու բարձր դեպի երկինք էր ձըդում. դերեզմանատան չիրիմներու և ծառերու մեջ պտտավելով՝ հազար կերպ անճոռնի նվագներ էր հըրինում, որ խիստ հարմար էր այսպիսի տխուր ժամին: Արդեն ժամը երեքի մոտ էր. այլևս զորությունն չէիր վրաս ցրտին դիմանալու. երեսս պղպջացյի ու սասցի աղջկանը.

— Օրիորդ, այսուհետև ոչինչ օգնել չէ կարելի ձեր յալին՝ լալով և հուսահատվելով այստեղ. պետք է ձեր վրա ևս վոքր ինչ հոգս անեք. եղանակը անտանելի ցուրտ է. ձեր վրայի թեթև հալավը հյուսիսի դառնաշունչ եղանակի համար կարած չէ՛... և միտս չէ՝ էլ ի՞նչ դորա նման բաներ ասացի, որոնք խիստ անտեղի էին այսպիսի արտաչարժ պարագայում:

Աղջիկը աչքերը ցած խոնարհած պատասխանեց.

— Այժմ ես չեմ կարող գանել իմ կեցած տունը. տանտիկինս թողուց ինձ այստեղ և միտք չարավ, որ ես ամենևին չեմ ճանաչում Պետերբուրգի փողոցները. ամիս ավել չկա, որ ես այստեղ եմ:

— Գոնե գիտե՞ք, որ փողոցումն է ձեր բնակած տունը:

— Ո՛չ:

— Անի՞ք որ և է ծանոթ կամ բարեկամ:

— Ո՛չ:

Ի՞նչ անեի, որ քարին տայի դլուխս, ո՞ւր տանեի, որի՞ն հանձնեի այս որբուկ թշվառականին...

Ինչպես վերը ասացի, իմ բնակարանը Սմոլենսկի պերեպմանսաան մոտերումն էր, ուրեմն չատ մոտ էր մեր կեցած տեղին։

— Երթանք,— ասացի աղջկանը, դուրս ասուցած օդնութիւնը մեկ բան կարդանամ մասնելու այս դըժվար հանդամանքումն։

Ուսանողին պատշաճ քաղաքավարութիւնը՝ ոչ կուտա առաջարկեցի աղջկանը և խնդրեցի, որ փոքը ինչ չուտ մանը զա և միասին գնացինք դեպի իմ կեցած տեղը։ Երբ հասանք դրան մոտ՝ խնդրեցի նորան, որ փոքը ինչ սպասե, խոստանալով որ չուտով հետ կըդառնամ։

Մտա ներս։ Ընկերս մեջքի վրա պառկած անկողնային վրա, ձեռքերը գլխի տակ դրած, աչքերը դեպի վեր դարձուցած՝ աշխատում էր թուքը ատլքին հատցնելու։

— Էդ ի՞նչ ես անում, Օհաննես,— ասացի՝ նորա տարօրինակ պարապմունքի վրա ծիծաղելով։

— Ոչինչ մեկ սահաթ է որ՝ էս անպիտան տատասքանին՝ ուզում եմ թքով ցած ձգել։

— Մեկ պահ թող որդ, լսե, բան ունիմ քեզ ասելու։

— Աստ էլի, որսս քեզ ի՞նչ գարար է տալի.— ու նորից սկսավ թքերը բերնեն դեպի ատլք արձակելու։

— Մոտդ քանի կոպեկ չունի՞ս,— ասացի, թեև առաջվանե հաստատ գիտեի, որ «չէ» պիտի ասեր։

— Ո՞ր քանի կոպեկին է քու ասածը, պատասխանեց Հավհաննեսը գարմացած. ես կարծում էի, հետդ դոնե վեց կոպեկ կրերես՝ երեքը ճրագի համար և երեքը՝ երկու գրվանքա սև հացի, մի՞թե չգիտես, որ երեկվանե մեկ կատը հաց էր մնացել, որ այսօր առավոտը թեյի հետ կերա. ժամը 11-ից բերանս բան գրած չեմ։

---

[1] Տատաիան (ռուս.)—սև միջատ, ուտիճ

ես քու գալուն սպասում էի, ինչպես հրեանները Մեսիայի գալուն. չաքար էլ չունինք. վերջի ծախսոնն էլ երկու ժամ առաջ քաշեցի, պրծա:

Աչքս դարձուցի դատարկ սենյակի չորս խորշերին, բացի քանի մի դրքե և համալսարանական ֆեռապիրներես ոչինչ չտեսա: Աչքս դարձուցի վրաս... ո՛վ աքանչելիք... խելացնորի պես դուրս թռա սենյակեն:

— Մի քայլ սպասի՛ր, բան եմ ասում,— ասաց եւ տեվնա Հովհաննեսը, բայց ես չսպասեցի նորա ասելու բանին, և երբ որ դուրսն էի՝ ականջիս հասնում էին խեղճ սուված ընկերոջս կղկղոզադին աղաչանքը, որ հետ դառնամ և լսեմ նորա խնդիրքը, որ ըստ երեվույթին այս պիսի լիներ «ինչպե՞ս ճարենք փոքր ինչ ճրագ, փոքր ինչ հաց և փոքր ինչ ծխախոտ» ուսանողի և ուսանողի նման մարդոց չափավոր պիտույքը աշխարհիս երեսին:

Ա՛խ, իմ ականջը խլացել էր ու սիրտս փակվել էր ընկերոջս համար: Ուրիշ հոգացողություն ծնել էք մեջս, որ մինչև այն օր ինձ միանգամայն չէր հայտնի: Եթե իմանայի, որ Նեվայի խոր հատակումը քանի մի ռուբլի փող կա՝ առանց երկար մտաք անելու, մահը գլխովս առած, կվազեի ու կհանեի...

Գուցե՛ կարդացողը կհարցնե, թե ի՞նչ է պատճառը, որ ես խելագարի պես սենյակես դուրս փախա. ի՞նչ հույս ունեի ցավիս ճար ու դարմիս դարման անելու: Ահա՛, կարճ խոսքով մեկնեմ չտապով անկց դուրս վազելուս պատճառը:

Գարբիելի մոտ որ էի՝ դուրս գալիս սխալմամբ իմ հին կրկնակոշիկի տեղ՝ նորա նորը հագա ոտիս, և երբ որ աչքս ընկավ նորա վրան՝ դլուխս բան ծագեցավ: Հիմի հասկացա՞ք միտքս: Կարծո՞ւմ եք, թե ծախել էի ուզում. ոչ: Առանց ծախելու էս կարելի էր նորան դեպի բարին դործածել: Այս տեղումը մեկ առօրյա սովորություն կա, որ ընդհանրապես տարածված է ուսանողաց և ուսանողի նման մարդոց մեջ. այդ սովորության անունը դրամ դնել է. գործընակ,

եթե դիտես, որ ծանոթիդ մեկը ունի ժամացույց, մատանի, կրծքի քորոց, և այլն. եթե մեկ օր տեսար այդ ծանոթիդ առանց այդ իրեղենների՝ հենց իմացիր, որ հարցմունքիդ՝ թե «ո՞ւր է այս կամ այն ինչ առարկաղ» պատասխան առանալու ես «ուսում առնելու եմ ուղել», որ ուրիշ խոսքով նշանակում է «հրեայի դրամ եմ դրել»: Հիմի հասկացա՞ք, որ ոտիս նոր կրկնակոշիկները միևնույնն էին, եթե դրպանումս մանեթ կամ մանեթուկես ունենայի:

— Գնա՛նք,— ասաց աղջիկը. ասվածն մեզ օգնեց. այժմ սրանն բան դեպի լավը կերթար:

— Անմոռնալի չնորհակալ եմ ձեղնեն. ինչո՞վ արժանացել էի ձեր այդպիսի մեծահոգությանը,— ասաց նա այնպիսի քաղցր ձայնով, որ ես միանգամայն մոռացա այն չարչարանքը, որ կրել էի ամբողջ չորս ժամ՝ այս ցուրտ եղանակին բաց օդի տակ մնալով:

— Կառապա՛ն, չո՛ւտ,— ասաց այնպիսի հրամայական ձայնով, որ ով դիտե ինքը հարուստ Լ... Մ... քը պրոտոանած չլիներ յուր կյանքումը:

Մեկ ակնթարթում չորս հինգ կառապան վազեվազ եկան, մեկը մյուսի ձին պարսավելով և յուր ճիուն արագոնության գովելով՝ առաջարկեցին յուրյանց ծառայությունը:

Արդեն մեկ ոտս սահնակի մեջն էր և մյուսը դեռ նին, որ հանկես մեկ ծանոթ ձայն կանչեց:

— Միքայել, էս ո՞ւր. քանի վախտ ա հատա եմ տալի՝ չես լսում. էս ի՞նչ ա իլել քեզ, համպարտացել ես... էս դուչը հորտեղա՞ն ես խլել:

— Ա՛, Ալեքսան, դու ես...

— Ախպեր, տրխառն ասեմ՝ հորդ լավ ես պրել...

— Ինդրեմ, թող էդ խոսքերը, դրա վախտը չէ. քեզ մեկ ասելու բան ունեմ:

— Հրամայի՛ր, մատաղ:

— Ասա, պաժալուստա (ինդրեմ), ո՞ւր ա կենդի էն հրեան, որ դրավ ա վերառնում,— ասաց, նորա Հաշտարևյանի ոճին նմանեցնելով խոսակցությունս:

— Վա՛հ, մոռացե՛լ եմ. Большой мещанск-ում[1] в доме Глазунова էնտեղ դվորնիքը չանց կաս: Ի՞նչ ա, դրամ տինելի պան ունես, ի՞նչ ս:

— Հա՛, կոլուշներս ուզում եմ դրամ տինել:

— Հե՛ր ես էնտեղ տանըմ. էս պուտեեսնի[2] չէ՞ (ասաց ցույց տալով գարեջրի խանութը). նրա տերը իմ ճանաչնն ա, ուզո՞մ ես տանեմ, դրամ տինեմ նորա մոտ: Ինչքա՞ն է պետք:

— Ինչքան չատ՝ էնքան լավ,— պատասխանեցի՝ ոտես կրկնակոշիկները հանելով և նրան տալով:

— Էս քամ թոպ թոպա կոլուշներ են. ով ա խաբար, բալքամ երկու կոլոլ (մանեթ) տա. ի՞նչ ես ասըմ:

— Լավ. էնքան ա, որ չո՛ւտ ապա. վախտ չունիմ սպասելու:

— Էս ղուչին հո՞ր...ես տանըմ,—ասաց եղալի աչքերով:

Գարշելի թվեց այս լերբ և անպարկեշտ հարցմունքը և մանավանդ այն կատածը, որ առանց մեկ հիմնավոր պատճառի, ընկավ խեղճ որբուկի վրա:

— Գնա՛, դնա՛, խելքիդ չատ զոռ մի տալ, բան ես անըմ՝ բան ապա, թե չէ քո՝ դլուխդ քարը՝ առանց քեզ էլ յոլա կերթանք:

— Ինչ փալանդ վեր քցար. քեզնե՞ խոչտակ անել չի՞ կարելի, ինչ ա: Դա խո պան չի հասկանըմ. քու զորա ի՞նչ:

Բայց ես նորա փիլիսոփայությունը ընդհիմնեցի՝ փոքր ինչ անքաղաքավարի քուռչ տալով և չատպեցնելով դեպի գարեջրի վաճառանոցը:

Քանի որ նա այնտեղացիք դրավի համար հոգացողություն է անում՝ ես կաշխատեմ ընթերցողներիս հարճատոտ կերպով ի մոտո ծանոթացնել այս չնչաչարհիկ արարածի հետ, որի տեղական անունը տեսնատա է, որ ինչանակե նեղություն: Ի՞նչ մարդ է այս

---

[1] Բայլոյ Մեչչանսկում, Գլազունովի տանը:

[2] Գարեջրատուն (портерная):

մարդը, ինչո՞ւ նորա մականունը այդպես է՝ կիսմանաք հետագա տողերում։

Բ.

Օրեա տասը—տասնմեկ տարի առաջ՝ չգիտեմ ո՞ր քաղին, ո՞ր տեղից և ի՞նչ նպատակով բերել ձգել էր Պետերբուրգումը այս հայ տղին։ Եթե նորա խոսքերին հավատաս՝ դա առուտուրի մաքով, իբր թե, եկել է այստեղ. բայց ես, որ ի բնե այնքան դյուրահավատ չեմ, ճշմարիտը ասեմ՝ չեմ հավատում, որ նա միայն այդ բանի դիտավորությամբ եկած լիներ. առավել հավանականը այն է, իմ կարծիքով, որ այս պարոնը լսած կլիներ մայրաքաղաքի անթիվ անհամար գրասանքը, որ հայաբնակ քաղաքներումը, ծանոթ բարեկամներին ամոթ քաշելով՝ գրեթե անհնարին է արձակ համարձակ վայելելը. լսել է, ո՞վ իմանա, թե ինչ գլվարճություն է ազատ դյուրի մարդու համար, մանավանդ երբոր փոքր ինչ էլ փող կա գրպանումը, Պետերբուրգի բազմաթիվ և բազմատեսակ պանդոկները, հյուրանոցները, արձանոցները և չատ ուրիշ անվանի և անանուն տեղը քաշ գալը. լսել է, ո՞վ իմանա, Նեվսկի պրոսպեկտի հռչակավոր անունը, նորա լուսամոտած սալարկները (թռոտուար), ուր գիշեր ցերեկ ժվժվում է ժողովրդի բազմությունը... լսել է վերջապես, թե ինչպես չատերը եկել են այստեղ գրեթե մեկ չապիկով և քանի մի արտասիով գրպանումը և հետ են գարձել յուրյանց տեղը՝ հարստացած, փառք ու պատվի հասած, (օրինակները քիչ չեն)։ Ամո՞ղ, Պետերբուրգի հռչակը չատ բախտախնդիրներու գլուխ է պատրաստել, ուրեմն ի՞նչ պարսանք, որ մեր պարոնն էլ նույն փայլուն հույսերը աչքի առակ ունենալով, ճանկը ձգած կլիներ քանի մի թուման ու վազելով եկած հասած այստեղ՝ իր բախտը որսալու։ Բայց թեղեր մոռացել էր, որ Պետերբուրգը ամենի համար միատեսակ հաջողակ չէ. նա չէ իմացել առաջվանեն, որ բախտախնդիրները այս երկու հատկություններից մեկը պիտի ունենան,

որ մայրաքաղաքում բաղդ կարողանան արասլու, որ չ՝ ուստայությունն և չնորհալի դեմք. տարատեսակ-բար իմ գյուղացիը (?) երկուսից էլ զուրկ էր։ Երևակայեցեք այսպիսի մի հրեչ. հասակը ոչ ավել ոչ պակաս՝ երկու զազ ու մի քառորդ, մարմինը չոր-չոր, բզդոտ, սև, մազերը նմանապես սև, բայց այնպես սև, որ առաջին անգամ տեսնողը դժվար կհամանա՝ բոշա՞ է դա, թե հայ. քիթը այնչափ մեծ, որ դրնեն դլխու երկայնության կես մասն է բռնում, ատերը ծուռ-ծուռ ու կարճլիկ, բերնի ատամներից չատերը մնացել են մուշակ կռվումը, ուրեմն խոսելիս դժվար է նորան հասկանալը, եթե սովորած չլինեք նորա արտասանության, զորօրինակ չ, ժ, չ, ճ, ջ, ծ տառերը արտասրելը ս, զ, ֆ արտասանում։ Գիտե վոքը ինչ ուսական, հայերեն էլ խոսում է, վա՛յ էն հալին, թուրքերենից էլ միանգամայն անտեղյակ չէ՛. բայց խոսակցության ժամանակ բոլոր այդ լեզուները իրար հետ խառնելով կենդանի պատկերացնում է Բաբելոնի լեզվախառնության օրը։ Տարիքը 30—35 է. ուղիղը չգիտեմ։

Դորա վարքն ու բարքը երկու կողմ ունին՝ լույս և մութ. լույս կողմը այն է, որ մենք ճանաչում էինք դորան ինչպես մի խելոք ու անբախտ հայ. երբեմն խղճալով վրան՝ ընդունում էինք մեր տուն մի դավաթ թեյ խմելու կամ մի կտոր հաց ու պանիր ուտելու։ Մութ կողմը այն է, որ դորա մասին չատ զանազան կասկածելի լուրեր էր գալիս քաղաքի մեջ. չկարծեմ որ մեկ մարդ գտնվի, որ ճանաչում չլինի դորան։ Բայց դա մի դեհիկ սովորություն ունի, զորօրինակ՝ երբոր մեկ տեղումը մի վատ գործ կատարեց (իսկ այդ չատ հաճախ է պատահում), որի համար անպատճառ պիտի պատժվի, թեկուզ պատանի՝ չի ասիլ որ հայ է, այդպիսի ձախող դեպքերում կրան կնքում է (չը կարծեք ջրով ու մեռոնով) հուն, վրաց, բոլոր նահ հրեա։ Շատ անգամ ծիծաղելով հարցնում ենք. «Մ՛ատ, հե՞ր ես տղդ ուրանըմ»։— «Վա՛հ, քու մատաղը կը-

նամ, ախը ինչո՞ւ եմ իմ ապրի անումը խայտառակըմ. լավն էն ա գռեզին ուչունց տան, նեժելի հային»: Վրայի հագածը սովորաբար մլևնույնը չէ. այսօր եվրոպական չորեր է նորա հագածը, էդուց ասիական. մին էլ տեսար թե՛ եվրոպականը և թե՛ ասիականը մի ծիծաղելի կերպով խառնած, զորօրինակ՝ ֆուռակ, տակից առխալուխ, քաղքի լեն փոխաններ, գլխին չերքեզի վարախ, և ամենի վրայից՝ ռուսի մուշտակ. ո՞ւր տեղից էր ճարում՝ միայն ինքը գիտեր: Եթե հարցնեիր՝ կարճ պատասխանում էր «Ա՛տա, պանդ տես, օղի գելդի[1] ապրանք ա»: (Նորա ծիծաղելիս միշտ միտքըս էր ընկնում ռուսին հատուկ ասացվածքը «Доброму вору все в пору[2]».) Ձգիտեմ՝ ինչ խաղ էր խաղում ուրիշների հետ, բայց ուսանողներըս համար մի հարկավոր անձ էր. փող չեղած ժամանակը՝ թեյ, չաքար, հաց, երշիկ, ծխախոտ այնպես գիտեր ճարել, որ մենք միշտ զարմացած էինք մնում. նմանապես դրամ դնելումը, բաներ ծախելումը մեծ հունար էր ցույց տալիս. բայց տերը փրկե, եթե լսել էր, որ մեկին մեկը փող ունի,—մինչև որ երեք չորս մանեթ չպոկեր՝ ձեռք չէր առնում: Ասացի, որ դորա տեղական անունը տեհնաստա է: Բայց այդ դիպվածը թող ինքը պատմե և դրանով կպրծնի մեր թեթև գծագրությունը այս չնաչախարհիկ հայի վրա:

«Ախպեր ջան, մեկ օր կաչիս եմ Գաբրիել Բաղդանչի տուն (էն վախտ նա հալա Միխաիլի հետ էր «կնընըմ»), Վանյան էլ էնտեղ էր: «Հը, ասըմ եմ, հե՞ր «եք գլուխներդ քաչ արել, հալբաթ որ պանեդդ պուրթ «ա, պլիկ (փող) չունեք»: Մեն չեն տալի: «Մեխակ, «ասենք թե Վանյան Վանյան ա, մեկ քասիր տղա ա. «Գաբրիելն էլ օղի գելդի փողով ա ապրըմ, էսօր կա՝ «էդուց չէ՛. դու հե՞ր ես անփող նստած... էնա դա, «ախր ասըմ էիմ քեզ՝ թո՛ղ էա քածին, ուսըր արնիդ «կուտի նա. չէ, չէիր հավատըմ. հիմի տեսա՞ր որ

[1] Ինքնիրեն եկած (Թուլբ.):

[2] Ձարպիկ գողին ամեն ինչ ժամանակին է գալիս

«Ալեքսանը սուտ չէր ասըմ: Ախր մատաղ, ես գիտեմ «կա քաճերի խասխաթը. մինչու որ վերջի չափիկը «չի պռւկել՝ կասի թե սիրըմ եմ, մեռնըմ եմ քեզ հա- «մար. եռովան անճեն փեշերը կհավաքի ու պռինա՛յ «կակ զվալի՛... էս քու աղբայրել չնորքը, էս քու սի- «րուն պատկերքը իմա իլլե՛ գիտե՞ս թե ինչ ռոլ կխա- «պայիմ էստեղըմը՛: Ինա չես հասկանըմ, քու գինը «Մե՛խակ— ու քաճին վազ տա՛լ. էս խոմ իստակ գի- «ժուխան ա...»— Ի՜հ, զահլանեմս տարաբ, էն «կըմանից ծեն ալեց Վանիկն. տերտե՞ր ես, ինչ ա, որ «մեր կլխին ավետարաններ էս կարթըմ. տենըմ ես, «որ ոչ-ոք մեղանից վազ չունի, ամենքս էլ էսօր տալ «օրը պան չենք կերել, թամբաքուի հոտ էլ օթախըմը «չկա. քանց թե երկար պարակ քարազ ես կարթըմ՝ «լավ չէ՞ կընտա ուտելի լան հալես մեզ համար:— «Էտա գա՛,— ասամ, հորվախտ վազ կա՝ Ալեքսանին «թափուկավ եք տամ, պանից դուս եք անըմ, վազ չի- «նած վախտին՝ Ալեքսանը լավ մարթ դառավ»: Շուն «էին, գիլ էին, ամա էլի իմ հայ քրիստոնյաներն էին. «կընայիմ, տեսնեմ, մեզ տղերանց համար ուտելի պան «ճարեմ: Կես տահաթ անցկացավ, յա չէ՝ տուն պի- «տամ երեք գրվանքա հայց, եռատունտա եփած ճու, «օսմուչկե չայ, երկու գրվանքա չաքար, սուճուխ, էլ «մխտա չէ լի՞նչ պերամ... հա՛, թամբաքու էլ պերամ: «Մեր տղերքը քաղցած գիլերի նման ընկան վերես, «մենչու ես կերթայիմ ու սուիրեն կպերեիմ, որ տղա- «վարի սաղի վրեն փռեմ, որ մարդավարի նստենք «ուտենք... կամ[2] լի՞նչ տեսնեմ—ոչ հայ կա մեդյանըմը, «ոչ սուճուղ. ատա՛, ծուն չիճաած էին կերել, ա՛յ «պան: Ատա՛ էսպես չչկլած մնացել էի: Էս խո էս- «որ փորերի ճճուն մեքիչ հանդարտեցրին, Մեխակը «հարցնըմ ա, թե որտե՞նց ճարեցիմ էտքան պանը:

---

[1] Поминай как звали—(ռուս. ատած)—հանկարծ չքացավ, կորավ:

[2] Գամ:

«Հարեւան հարեւ մխս էկավ ու ասացիմ «Դուքան-
«դարի հետ տեննատա[1] սարքեցիմ: Ախպեր մեր ազերքը
«մեկ ծրծաղ են ծրծաղըմ, մեկ ծրծաղ են ծրծաղըմ,
«որ փորերը ուզում ա տուրքի, տեննատա՛... խա՛ խա՛
«խա՛ խա՛, տեննատա՛... խա՛ խա՛ խա՛ խա՛, տեննա-
«տա՛... տեննատա՛... էնքան ասացին, էնքան ծրծա-
«զան, որ էս օրվա օրից անունս մնաց տեննատա»:

Քանի մի րոպեից Ալեքսանը եկավ ու ավավ ինձ երկու մանեթ և ասաց, որ խանութպանը չաս թեթև տոկոս նշանակեց, այսինքն ամսական մանեթի դրամ տասնհինգ կոպեկ: Ես չտապով չնորհակալություն արի նորան ու հրամայեցի կառապանին, որ հասցեի տայրանը տանի:

(Հասցեի տայան ասելով ես ուզում եմ հասկացնել այն կառավարությունը, որ ռուսներըն կոչում են Адресный стол[2] Ռուսաստանի մանրաքաղաքներումը չիկա այդպիսի կառավարություն. ուրեմն զարմանալու չէ, որ իմ կարդացողներին քանիսը, որոնք երբեք չեն եղած մայրաքաղաքումը, չիմանան դորա ինչ լինելը: Հասցեի տայան նշանակում է այնպիսի կառավարություն, ուր կարելի է դոնել մայրաքաղաքումս բնակող ամեն մի մարդու կեցած տեղը՝ եթե միայն դիտես այդ անձին անունը և մականունը):

Երբոր հասանք հասցեի տայանը՝ հարցուցի, ազգականը, ինչպես է անունը և մականունը:

— Մարի Վեռդեռ է,— պատասխանեց նա:

— Այս րոպեիս կվիանամ, ասացի, ձեր բնակած տեղը և հետ կուգամ:

Վազելով գնացի բարձրացա մինչի չորրորդ դռան ռիկոնր (ուր է տայանը) և իմացա, որ աղջիկա նեցած տեղը Օֆիցերսկի փողոցումն էր Գամսի տանը № 16.

---

[1] Տեննատա խոսքը, որ ռուսերին նշանակում է նեղվածք, նեղություն մայրաքաղաքիս մազուրիկների (քսակահատ) լեզվով նշանակում է խելացի հնար:

[2] Հասցեատեղան:

և որովհետև մեր այժմվա կայնած տեղեն չատ հեռու չէր, մանավանդ որ երկուսիս ոտներն էլ ցրտից փետացել էին, առաջարկեցի, աղջկանը մինչև նորա տունը ոտով (հետի) երթալու։ Կառապանին արձակեցի. նրբից կուռ կուի ավինք ու դնացինք։ Սրճանոցի մոտից անցնելիս խակուն մխրքա եկավ որ՝ ո՛չ ես և ո՛չ աղջիկը ամբողջ 7—8 ժամ չաբունակ բերաններս բան չէինք դրել. անտիութենից վրաս դորություն էր մնացել ման գալու, անդամներս միանդամայն թուլացել էին, խոսել անգամ դժվարանում էի։

— Կարելի է դուք մեկ բան կկամենայիք անուշ անելու,— ասացի աղջկանը, քայլերս պինդ դեպի սրճանոցը ուղղելով։

— Ուտելու այնքան ախորժակ չունիմ,— ասաց նա, բայց սաստիկ ծարավ եմ, ինձ չատ կպարտավորեիք, եթե մի բաժակ ջուր ճարեիք խմելու։

Մտանք սրճանոցը[1]։ Սպասավորին հրամայեցի, որ նախ և առաջ մեկ բաժակ լիմոնադ բերե և ապա մեկ-մեկ դավաթ սուրճ և մի հատ ծխախոտիթ։ Երբ որ սպասավորը բերեց դրավ այդ ամենը սեղանի վրա ու ինքը դնաց, խնդրեցի աղջկանը, որ նստե բազմոցի վրա և ինքս նորա մոտ աթոռի վրա նստա։

— Ներեցեք համարձակութեանս, օրիորդ, ես կամենում եմ մի քանի բան հարցնել ձեզանից,— ասացի նորան դերմաներեն (սենյակի մեջ ոչ-ոք չկար)։

— Հարցուցե՛ք, պարոն,— ասաց աղջիկը ամոթխածութենեն աչքերը ցած խոնարհած։

— Դուք, ինչպես նկատում եմ, այս տեղացի չեք՝

———

[1] Ինդրեմ մեր պարկեշտ և ընտանեաց հայ կանայք չմեղադրեն իմ դյուցազնուհուն, որ նա նորա ավանդությանը հակառակ է շարժուել. այսոեկի սովորությունը այնպես է, որ կանայք (մանավանդ դրսեցիք) ոտտա էլ ու մուտ են անում սրճանոց կամ հյուրանոց, առանց կասկածանքի տավիր ձգելու իրանց անբիծ վարուց վրա։ Սովորությունը—բռնավոր է։

(Ծ. հեղ.)

կարո՞ղ եք ինձ ասել, ո՛րն է ձեր մայրենի երկիրը և դուք ո՞վ եք...

— Ես չվերադարձի եմ. ամիս ավել չի կա, որ ես և մայրս այստեղ էինք եկել:

— Ինչո՞ւ թողիք ձեր երկիրը ու այստեղ եկաք:

— Հայրս կանչել էր մեզ:

— Ո՞ր է այժմ ձեր հայրը:

— Մեր Պետերբուրգ հասնելից ութ օր առաջ մեռել էր նա այստեղ, նույն իսկ սենյակի մեջ, ուր մայրս վախճանեցավ,— ասավ նա խորը հոգոց հանելով:

— Ի՞նչ զբաղմունք էր այստեղ ձեր հայրը:

— Նորան մեկ հարուստ ռուս իշխան՝ անունը Լ... հրավիրել էր կալվածքը կառավարելու: Հայրս կես տարվի չափ մնաց այստեղ, իշխանը շատ սիրեց հորս նորա հավատարմության և բանիբունության համար, և վերջապես առաջարկեց, որ յուր գերդաստանը ևս բերել տա և խոստացել էր ապահովացնել մեր ապագան: Հայրս նամակ գրեց մեզ, շատ գովեց Ռուսաստանը և նորա կառավարությունը, մանավանդ այն հավատմիությունը, որ ռուսները ունին դեպի արևմտյան ժողովուրդը: Թեպետ հորս հրավիրական նամակը ըստանալով մենք շատ ուրախացանք, բայց ոչ առանց տխուրանալու թողինք մեր սիրական հայրենիքը. ինչու որ մենք շատ մարդոցմե լսել էինք, շատ գրքերու մեջ կարդացել էինք Ռուսաստանի յուրա օդի մասին և միայն այն միտքը, որ մեր սիրուն հայրենիքը պիտի վախենք այդ օտար երկրի հետ, միայն այդ միտքը, ասում եմ, ոտակացնում էր իմ և մորս կանացի երևակայությունը: Եվ հիրավի, ո՞վ պիտի տար մեզ մեր կանանչազարդ դաշտերը, մեր ազատ սարերը, մեր խոխոջուն վտակները, մեր անամպ և կապուտակ երկինքը և վերջապես՝ մեր հյուրասեր և մարդասեր ժողովուրդը (այս խոսքերը լսելիս միտքս եկավ մեր սիրուն Հայաստանը, որ միայն գրքերից էի ճանաչում). ո՞վ կուտար,

ա՛խ... խոսքը չկարողացավ վերջացնել, սիրտը մղձկեցավ, աչքերը կարմրեցան և լցվեցան արտասուքով... ա՛խ, ինչո՞ւ չի լսեցինք մեր սրտի նախազգացմանը, ինչո՞ւ թողնինք մեր հայրենիքը... ի՞նչ կինք պատսում անհայտ հերկրումը պանդխտության մեջ: Պարո՛ն, նեղեցեք ինձ, որ ես չկարողացա զսպել հոգուս կսկիծը, հասկացեք իմ դառն վիճակը և ներողամիտ եղեք վհատղուխյանս, որ ես ցույց եմ տալիս այս հուսահատ դրության մեջ: Ինչքա՜ն թռնում է գլխիցս, քանի որ մինչ եմ անում՝ մի ի՞նչ պիտի լինի իմ վիճակը այսուհետև:

— Դուք ապրանքան ունի՞ք ձեր տեղումը:

— Ո՛չ, իմ հայրը դպղիացի[1] վարսատական էր[2] 1830 թվականի հեղափոխության ժամանակ նա փախավ յուր դահիճներու ձեռքին. բոլոր ինչքը ու կալվածքը թողավ Գաղղիայումն ու դնաց բնակեցավ Շվեյցարիոյ Բազել քաղաքումը: Այնտեղ առաջին անդամ ծանոթացավ մորս հետ, որ մի աղքատ, բայց համեստ որբուհի էր, որ յուր օրական ապրուստը կար ու ասեղովն էր հարում: Ինչպես տեսնում եք՝ ես աշխարհիս երեսին անտեր որբ եմ. երեք օր առաջ վերջին նեցուկս կորցրի այս անճանոթ տեղումն: Հիմի հավատա՞մ եք, որ ես իրավունք ունիմ ինքս ինձի ամենաչվատ մարդը կարծելու:

— Մի այդքան հուսահատվիք,— ասացի նորան,— ամեն տեղ կան բարի մարդիկ. տատիս աչքը որբերու վրա միշտ հովանավոր է: Ես չեմ ասում, որ ձեր ներկա վիճակը թեչատ չէ, արտասովոր, սոսկալի չէ, ա՛յց միշտ բերեք ձեր մորը, քանի որ նա ձեր սիրական հորը չէր ճանաչում, ինչպե՞ս էր հարում նա յուր ապրուստը... ի հարկե, դուք էլ նույն համեստ հնա-

---

[1] Ֆրանսիացի:

[2] Վարսատական (էմիգռան) ասվում է այնպիսի մարդ, որ մի քաղաքական հեղափոխության պատճառով՝ թողնում է յուր հայրենիքը և գնում բնակվում է օտար երկիր: (Ծ. հեղ.)

ըով կարող եք պարկեշտ վիճակ վաստկելու։ Գուցե դուք ևս կարողանաք...— ասացի, բայց խոսքս վերջացնելու չհամարձակեցա. աչքիս տակով նայեցա աղջկա երեսին, երկուսիս աչքերը իրար հանդիպեցան, երկուսս էլ շուռթվեցանք ու աչքներս խոնարհեցինք։

— Անուշ արեք ձեր գավաթով սուրճը, թե չէ՝ կը-սառի,— ասացի նորան, կամենալով այդ շփոթը վա-յրացնելու, ու ինքս կայծրի ծխախոտդիը ու սկսա քաշել ու խմել։ Փոքր ինչ լռելից հետո՝ աղջիկը հարցուց ինձ.

— Դո՞ւք որտեղացի եք. ներեցեք հետաքրքրու-թյանս, բայց ինձ երևում է, որ չեխուհի ուուս լինիք։

— Ձեր կարծիքը ուղիղ է. ես էլ ձեզ պես պան-դուխտ եմ այստեղումը. ես ազգավ հայ եմ։

— Ուրեմն մենք երկուսս էլ մի կրակով ենք այր-վում,— ասաց նա ժպտալով, հետո ավելացուց. ձեր անունը ինչպե՞ս է։

— Միքայել է անունս, մականունս Վայեէյան,— պատասխանեցի ու վիրավորած ձեռքս հետ արի նորա տված թաշկինակը և առանց մեկ խոսք ասելու մատով ցույց տվի ասեղնագործած M. V. տառերի վրա։ Դուք չե՞ք զարմանում, որ իմ և ձեր անվան և մականվան սկզբնատառերը միևնույնն են. չե՞ք կարծում, որ այս-տեղ մի գաղտնիք կա, որ նախատահմանությունը ոտ ժամանակ մի թաղցնում է մեզանից։

— Ինձ էլ այդ տառերը միշտ առեղծվածան ու խորհրդավոր են երևել. ես միշտ աշխատել եմ այդ եր-կու տառերի մեջ իմ վիճակի որոշումը գտնելու։ Մեկ բան ասեմ՝ չե՞ք ծիծաղիլ վրաս։ Մի օր (դեռևս այս-տեղ չէինք եկել) մայրս նկատեցի էր գնացել, տանը մնացել էի ես ու մեր պառավ աղախինը. այսպես մե-նակ նստած սենյակումը աչքս երկու տառերի վրա դարձուցած՝ ըստ սովորության աշխատում էի գու-նագան հարմար բառեր պարտելու. չատ կերպ համա-ռոտ նախադասություններ հյուսեցի այդ երկու տառի վրա, բայց ոչ մինը ինձ համան չեկավ, վերջապես եր-

կու խոսք մխաքս եկան, որ պինդ ապավորվեցան երե-
վակայութիան մեջ և այդ օրհասական ժամեն մխաքս
դուրս չեն գալիս, և ասես թե սարսափելով, բայց ան-
համբերութիամբ սպասում եմ նոցա կատարվելուն:

— Ինչպե՞ս են այդ խոսքերը,— հարցուցի:

— Այդ խոսքերը ֆրանսերեն են՝ Mort par venin (մահ թունիից). ու այնուհետև խելքս մտել է, որ իմ կյանքը թունով պիտի վերջանա:

— Թողեք, ի սեր աստուծո, այդ գնորական նա-
խազգացմունքը, որ կարող էր գալ մխայն երևիայի գլուխը, և ոչ ձեզ պես կրթված աղջիկ... բայց ի՞նչ կասեք ինձ, եթե ես այսպես մեկնեի՝ մադամ կամ Մարի Վասիլչյան,— ասացի ծիծաղելով:

— Այժմ իմ հերթն է ձեզ ասելու՝ թողեք խնդրեմ այդ գնորական դուշահութիյունը, որ կարող էր գալ մի հաճոյախոս երիտասարդի գլուխը, և ոչ ձեզ պես կրթված ուսանողին,— ասաց նա մինչև ականջները կարմրած. հետո ավելցուց, նայելով պատուհանին. Ա՛խ, տեր աստված, արդեն մութը կտևել է. պետք է տուն երթալ. ի՞նչ կկարծե տանտիկինս, որ ես այսքան ուշացա: Խնդրեմ, պարոն, ինձի ճամբա ձգեք մինչև բնակարանս,— ասաց ու վեր կացավ տեղեն: Ես, թեև ափսոսալով, բայց նմանապես տեղես վեր կացա, զան-
գակը խփեցի, ծառան եկավ, ինչ որ հարկն էր ավե
իրան ու աղջիկա հետ միասին դուրս եկանք սրճանոցեն:

— Օրի՛որդ,— ասացի աղջկանը, երբոր արդեն փո-
ղոցումն էինք,— ի՞նչ միտք ունիք անելու:

— Ես ինքս էլ մոլորված եմ այդ մասին և չգիտեմ, թե էգուցվա օրը... խոսքը չպրծավ: Բայց ես հասկա-
ցա նորա ասելուն ու մտքիս մեջ չարունակեցի. «չգի-
տեմ թե ի՞նչ ուտեմ և որտե՞ղ բնակվիմ»:

— Եթե այդպես է՝ ուրեմն կընդունի՞ք իմ վրդովիկ
օգնութիյունը, որ ես ի բոլոր սրտե ձեզ առաջարկում եմ: Ահա ձեզ մեկ մանեթ. մինչև էգուց ցերեկվա 12 ժամը ինչպես և լցնե բավականացնեք դրանով. մնացա-
ծը, աստուծով, մեկ կերպ կվերադարձնենք:

— Ախ, պարոն, ի՞նչ իրավունք ունիմ ձեր վերջին կոպեկը առնելու ձեզանից, ես դիտեմ, որ դուք ինքներդ չքավոր եք. տանն ես ոչինչ չունիք, կարծում եք ես չնկատեցի՞, որ դուք ձեր ուրիշից հանեցիք կրկնակոշիկները ու ծախեցիք այն քաշային, որ ինձ օգնություն անեք: Ես չդիտեմ՝ կարող եմ արդյոք երբևիցե հետ դարձնել ձեզ նախ այն լավությունը, որ դուք ինձ արիք արդեն՝ ձեր կարողությենեն վեր զոհ բերելով:

— Օրիո՛րդ, եթե այդպիսի խոսքեր կասեք՝ այդ ինչանակե, դուք իմ վրա չատ վատ կարծիք ունիք. մի՞թե դուք կարծում եք, որ ես մի թեթև և չնչին զոհ ևս ընդունակ չեմ, և վերջապես՝ որտեղի՞ց դիտեք, որ իմ ունեցած չունեցածը այդ կրկնակոշիկն էր. վառաք աստուծո, ես այնքան... ուզում էի ասել՝ հարուստ եմ, բայց չհամարձակեցա այդպես լրբաբար ասելու և խոսքս կուլ տվի:

— Եթե ինձ պատվում եք՝ մի համոզեք ձեզանից զոհեր առանալու:

— Եթե իմ առաջարկած օգնությունը չընդունեք՝ այդ ասել է, որ ինձ հետ առհասպայն[1] ծանոթ մնալ չեք ուզում. կամքը ձերն է,— ասացի ձևանալով իբր թե սիրտս սառակի ցավել է նորա խոսքերեն:

— Ո՛չ, ո՛չ, պարոն, ես չէի ուզում այդ ասել... բայց դո՞ւք. դուք էլ ինչ էգուցվա համար ուտելու բան չունիք,— ասաց նա այնպիսի հրեշտակական ջարեկցությամբ, որ քիչ մնաց՝ մոռանալով նորա սուգը և ցավալի նեղկա վիճակը՝ տեղն ի տեղ առաջարկեի սիրտս և ձեռքս (մի՛ զարմանաք և մի՛ դատապարտեք, իմ պատվական կարդացողներ, որովհետև այն ժամանակ ես տասնևինն տարեկան էի):

— Խնդրեմ ինձ համար հոգս մի անեք. եթե կամենում եք, որ ես ձեզ հետ սրտաբաց խոսիմ, ահա՛ լսեցեք: Ձշմարիտ է, որ ես հարուստ չեմ. ո՛չ ռոճիկ և ո՛չ արդյունք ունիմ. ծնողքս նմանապես այնքան ունե-

---

[1] Այսուհետև:

վոր չեն, որ կարողանայի ինձ օգնել. բայց վախենում այդ ամենին՝ ես այնպիսի դանձ ունիմ, որ համարձակ կարող եմ անհատական[1] անվանել, այդ դանձը—իմ բարեկամներն են, որոնք թեև այստեղ չեն, բայց մեկ ասող որ գրեցի՝ նրանց վերջին ունեցածը ինձ կուտան: Այժմ հավատում ե՞ք, որ ես այնքան աղքատ չեմ, որքան որ երեում եմ արտաքին հանգամանքովս:

— Ա՛խ, պարոն, դուք ինձ սոխպում եք մինչև կյանքիս վերջին չունչը ձեզ երախտապարտ մնալու. դուք ինձ սոխպում եք մեր ծանոթության հենց առաջին օրեն ձեզ ինչպես իմ հարազատ եղբայրը, ինչպես իմ մաերիմ բարեկամը ճանաչելու: Բայց և այնպես՝ ձեր օգնությունը ես միայն այս երկու պայմանավ կընդունեմ, նախ՝ որ ինձ կիսատանաք, որ երբ ինքներդ կարտուրության մեջ լինիք՝ առաջինը դեպի ինձ կդառնաք:

— Ահա իմ ձեռքը,— ասացի ի նշան համաձայնության:— Այժմ մեկ արեք. գրպանումս կա մանեթ ու տասնըհինգ կոպեկ. այս տասնըհինգ կոպեկով ես ինչպես որ լինի՝ գնչերս կլուսացնեմ, էգուց եթե առացա փող՝ լավ, թե չէ՝ կուգամ ու ձեզանից երեսուն կոպեկ կառնում. հոժա՞ր եք:

— Հոժար եմ,— պատասխանեց աղջիկը:

Այս վերջին խոսքերը գրեթե նորա տան մոտ ավարտվեցավ:

— Կամենա՞ք մոնել իմ բնակարանը,— հարցուց աղջիկը այնպիսի անմեղության և միամտության, որ ամենակափարծռտ և բծախնդիր մարդու երկմտությունը կարող էր փարատել:

— Ա՛խ, շատ կցանկայի տեսնել ձեր սպրուտաը,— ասացի նորան, նմանապես հետ ամենայն պատրաստի մտքերս:

Երեկոն արդեն վրա էր հասել. մութ և ցեխոտ տանդուղները չէին լուսավորած, ու մենք պատե պատ խարխափելով հաղիվ գտանք նորա բնակարանը: Ինձ

---

[1] Այստեղ նշանակում է անսպառ: Ծ. Խ.

արդեն ծանոթ պատավներին մեկը բացեց դուռը և ճը-
պաղը երեսիս մոտեցնելով՝ ուզեց իմանալ, թե ես ո՞վ
եմ: Աղջիկը երկչոտությամբ բարևեց նորան. բայց
պատավը սառը կերպով ընդունեց նորա ողջույնը ու
հեգնությամբ փնթփնթաց.

— Ա՛յ քեզ տրաքոց, մոր մարմինը դեռ ևս չի սա-
ռել դեռևի տակ՝ աղջիկը արդեն սկսել է փողոցին
մարդիկ ներս բերելու:

Փոխանակ պատասխանի՝ նա խստությամբ մատով
սպառնացի պատավին ու հազիվ կարողացա զսպելու
բարկությունս. բայց մոտեցա նորան ու կես ձայնով
ասացի սկանչին. «Եթե մյուս անգամ լսել եմ այդպի-
սի խոսքեր՝ իմացած լինիր, որ բերնումդ մնացած
երկու ատամն էլ դուրս կհանեմ. լսո՞ւմ ես, թե չէ.
բախտավոր համարե քեզ, որ աղջիկը չհասկացավ քո
ասած ւէրը խոսքերը, թե չէ հենց իմացիր որ պատու-
հանեն դուրս պիտի գլորվեիր...»:

Ո՛չ այնքան խիստ խոսքերս, որքան վայրկեն կո-
ճակներս ահ ձգեցին այս ամբիծ քավթաբի սրտի մեջ:
Ասացի ու խնդուն մոտ աղջկա սենյակը: Սենյակը
վա՛յ էն հալին լուսավորած էր մոմի աղոտ լույսով.
երեք թե չորս կոտրատած աթոռ, մեկ հին սեղան,
խորշումը մեկ պայուսակ. այս էին ահա նորա բնա-
կարանի կահ կարասիքը: Բայց այս աղքատ կեցության
մեջ ինձ զարմանալի թվեց մի պատվական ընկուզի
վայտե չինած դաշնամուր՝ երևելի Վիոթի ձեռագործը:

Հանեցի թիկնոցս ու նոտա աթոռի վրա. աղջիկն
ևս նստավ փոքր ինչ հեռու ինձանից: Սկսա աչքս
պատցնել սենյակի չորս պատին: Աղջիկը կամենալով
խզել այս լռությունը,— ասաց.

— Դուք զարմանում եք, կարելի է, որ այստեղ չեք
տեսնում ո՛չ մահճակալ, ո՛չ անկողին, ոչ բարձեր և
շատ ուրիշ առարկաներ, որոնք ոչ միայն հարկավոր,
այլև կարևոր են ամենաչվառ մարդուն. մի՛ զարմա-
նաք, դուք արդեն ունիք իրավունք իմ ամեն հանգա-
մանքը տեղյակ իմանալու. ես ձեզ, ինչպես իմ հարա-

զատ եղբորը, ամեն բան մանրամասնաբար կպատմեմ։ Այսօր առավոտ այդ ամեն բաները կային այստեղ, բայց դաղաղադրծը մինչև որ վեց մանեթը չառավ՝ չհոժարեցավ մորս դաղաղը տալ։ Նույնպես մեռելախառքի տերը մինչև առաջվանն չի առացավ ութը մանեթը՝ չհոժարեցավ մորս թաղել տանելու։ Մորս մահից հետ մնացած ամեն բաները նոցա տվի, միայն թե ինձ օգնեն վերջին պարտքը հատուցանելու խեղճ ծնողիս։

Հետո իմացա որ առավել քան թե հարյուր մանեթի բաներ առել էին դաղան վաճառականները այս անփորձ աղջկանեն, բայց ի՞նչ կանես, անցածը չէը կարելի հետ դարձնել։

— Ի՞նչ պատահմունքով ապա մնացել է այս դեղեցիկ դաշնամուրը, հարցուցի աղջկանը։

— Ա՛խ, պարոն, մի հարցնեք։ այս օտար տեղումն որ բնակում էինք ես և մայրս՝ դա մեր մխակ մխիթարությունն էր աշխարքիս երեսին։ Ես չի խնայեցի ո՛չ հալամներս, ո՛չ զարդերս, ո՛չ դրքերս, ոչ անկողինս, բարձս, վերմակս, վրայիս տաք թիկնոցը անգամ ծախսուցի, միայն որ քանի մի օրով ուշ եղթա ձեռքիս այս սիրական դաշնամուրս, ի հարկե վաղ կամ ուշ դա էլ պետք է ձեռքիս, երբ որ կարոտությունը կատիլե, բայց ես ինքս ինձի խոսք եմ տվել, որ այս ոսկե մատանին որ մայրս մեռնելու րոպեին մատից հանել ինձ էր տվել—առավել շուտ ծախեմ, քան թե այս դաշնամուրը... Տեր աստված, մի՞թե պիտի հասնե այն թշվառական օրը, երբ մորս վերջին հիշատակը պիտի...

Երբ իմացա, որ մատանին յուր մորը տված հիշատակն էր և ոչ նորա հարստության նշանը՝ այնպես հանդարտեցա մտքով, որ ասես թե մեջքիս վրայեն մեկ ծանր բեռ ցած դրի։

— Մի վախենաք, ասացի, աստված մինչև այդ ատեճան չի հասցնիլ, իմ սիրտը վկայում է, որ դուք չտառապիք այդ թշվառ վիճակին, և պիտի ազատվիք՝ ազնիվ ու դովելի հնարով։

— Աստվա՛ծ տա, որ ձեր սրտի վկայությունը կա-

տարվի: Պարո՛ն Մ իքայել, եթե ես այսուհետև էլ ասա-վածանվեց զոհունակ չլինիմ, երբ ապա պիտի կատարողանամ նորա ողորմությունը ճանաչել. կարո՞ղ էի ես կարծել, որ այս անձանոթ երկրումը, ծնողներես զրկված, աղքատ, անտեր, որբ մնացած՝ հանկարծ կգտնեմ ձեզ պես անձնանվեր բարեկամ.— ասաց ու ձեռքը դեպի ինձ ձգեց:— Շնորհակալ եմ, պարոն Մ իքայել, իմ աղնիվ բարեկամ. հավատացեք որ այսուհետև եթե սար ու ծովերը էլ բաժանեին մեզ՝ ձեր բարի հիշատակը մինչև ի մահս անթառամ պիտի մնար սրտիս մեջ:

Այս խոսքերը ինձ միանգամայն չփոթեցրին, պապանձեցրին, շնորհակալություն անգամ չկարողացա անել. խելացնորի պես չկկվել մնացել էի: Եվ ի՞նչ պարմանք. այս առաջին աղջիկն էր, որ բացեց իմ առաջ յուր անբիծ և կուսական սիրտը, առաջին անգամն էր, որ հետս խոսեցան այն անխարդախ լեզվավ, որի ամեն մի խոսքն առանց երկմտության, առանց զննելու հավատում է մարդս: Անիծելով անիծեցի և՛ ինքս ինձ, և՛ իմ բախտը և՛ հաղարումեկ դիպվածները, որ պատճառ էին եղել ինձ՝ սիրտս բանալու անարժան սիրտ և անգոնանելի ախտերի համար...: Անագան, բայց արդյունավետ սորջանք:

Հանկարծ վրաս մահագուշակ սրսմաություն եկավ. հոգիս, ասես թե, դժոխքի մեջ այրվում տանջվում էր. խղճմտանքը բարձրաձայն աղաղակում էր մեջս: Այս աղջիկս սենյակումը այլևս մնալը՝ նշանակում էր ոտնակոխ անել նորա կուսական սրբությունը...: Այո՛ և առանկյունակա, մոտեցա աղջկանը. աչքս չհամարձակելով նորա երեսին քարձրացնելու՝ սկսա մնաս բարով անել: Աղջիկն էլ վեր ելացավ տեղեն, ձեռքը ինձ ձգելով, ասաց.

— Այրեն գնո՞ւմ եք... կարող ե՞մ հուսալ, որ այս ձեր վերջին այցությունը չէ... ե՞րբ կտեսնվինք, իմ հավատարիմ բարեկամ...

— Ինչպես ասացի՝ էգուց ժամը 12-ին. բայց եթե

ուշացա՝ երեկոյանը սպասեցիք, այսպես՝ յոթնին ութնին:

Շտապով ձգեցի վրաս թիկնոցն ու խելագարի պես դուրս ընկա:

Գ.

Պարզիկա դիշերվա ցրտությունը որ ճակատիս չի սվավ՝ սկսան թոթափել ցրվեցան երևակայությունս խառնաշփոթ միտքերը: Վախենալով որ քրտնած մարմինս հանկարծ ցրտեն չի սառի՝ սկսա չուտ-չուտ և դրեթե վազելով առաջ գնալու: Մինչև բնակարանս հասնելու—չորս վերստ չուն տեղ պիտի անցնեի. բայց կարդացողիս հայտնի է, որ իմ բոլոր հարստությունը սան հինդ կոպեկ էր. ուրեմն սահնակ վարձելու համար մատնելն անպատ խելացնորություն էր: Ես հավատի դիտեի որ ընկերս մինչև այժմ անհամբերությամբ սպասում կլիներ ինձ (ժամը արդեն ութն էր երեկոյան), հուսալով որ նորա համար քաշելու և ուտելու բան կբերեմ հետս: Ես դիտությամբ առաջ քաշելու սացի և սպա ուտելու. որովհետև ուսանողը և ուսանողի պես մարդիկ փորի քաղցածությունից այնքան չեն չարչարվում, որքան ծխախոտի ծոմ պահելից:

Չարմանք երևույթ. ինչո՞ւ այդպես հզոր ազդեցություն ունի ծխախոտը այն մարդոց վրա, որոնք սովորվել են սված հոգու, քան թե մարմնու վայելքի: Այդ չծխող մարդիկը չեն ճանաչում այն վայելքը, որ անուն չունի և որ բնական ազդեցությամբ հասկանում է պատանեկության հասակը, այն անպղծունյա գործունեության եմ սուսմ, երբ հոգին, առ ժամ մի դուրսելով մարմնու չղթաները՝ սպատ թռչունի նման թռչում, հեռանում, ճախրում է երևակայության աշխարհի անսահման դաշտերու մեջ...

Երբ որ սանս մոտեցա՝ մտա մանրավաճառի խանութը, հրամայեցի խանութպանին որ սա երկու գլխվանքա սև հաց, մեկ մոմ, երեք կոպեկի թեյ, չորս կոպեկի շաքար. մնաց մեկ կոպեկ. ծխախոտի համար

վող չունեի։ Կարոտությունը մայր է հնարից, ասում է առածը։

— Ծխախոտ էլ ունի՞ս, հարցուցի։

— Ինչպես չէ, ունիմ ձեզ պղնվության,— ասաց sui generis[1] քաղաքավարի խանութպանը։ ո՞րն եք կա-մենում, ունիմ Միլլեռինը, Կաղիրեքինը, Պողոսովի-նը։ քանի՞ հատ է պետք ձեր պայծառափայլության։

— Թեկուզ տասը հատն էլ ինձ բավական կլիներ մինչև էգուց առավոտը։ բայց տեսնում ես սիրականս, բանը ինչ է։ անից դուրս դնալիս կարծում էի թե դըր-պանումս չատ վող կա, բայց մի ասիլ որ տասնհինգ կոպեկից ավել չունիմ հետս։ ահա քեզ մեկ կոպեկ, մնացած ինձը կոպեկը էգուց առավոտ լուս ու մութին կհասցնեմ քեզ ծառայիս ձեռքով։ կհավատա՞ս ինձ ինձը կոպեկ...

— Համեցե՛ք, պարոն, համեցեք,— ասաց մխամխա խանութպանը։

Սրջը կապեցինք, ասացի մտքումս։ Վեր առա դը-նած ապրանքս և տասը հատ էլ Միլլեռի ծխախոտ և ուրախությունից պատեհապահական մառչ տուլելով տուն դնացի։ Ներս որ մտա, Հովհաննե՛ս, ասացի տա-նո՞ն ես։ Ձայն չեկավ։ Հովհաննե՛ս, ասացի նորից ա-վելի պինդ ձայնով։

— Հը՛մ,— ասաց քնած տեղից Հովհաննեսը, Մի-քայե՛լ, դո՞ւ ես։

— Ե՛ս եմ, ե՛ս,— պատասխանեցի։ ինչո՞ւ մութ տեղումը պառկել ես,— հարցրեցի, մտքումս ծիծաղե-լով։

— Ինձ լույսը ո՞վ էր տվել, —ասաց խեղճ ընկերս։

— Վե՛ր կաց, վե՛ր. քեզ համար հա՛մ ճրագ եմ բե-րել, հա՛մ հաց, հա՛մ թեյ։

— Քաչելու բան ունի՞ս,— հարցուց քնաթաթախ ընկերս։

— Դեռ վե՛ր կաց տեղեդ. արի՛ ճրագ վառենք։

———

[1] Sui generis —(լատիներեն) իր տեսակի, յուրահատուկ կերպով։

— Բա՛ռ. ամմա ցուրտ է հա տանը,— ասաց Հովհաննեսը. դրսումը ինչպե՞ս է, էլի ցո՞ւրտ է առավոտվա պես:

— Հա՛. կարծեմ որ մեկ քան էլ ավելի լինի,— պատասխանեցի ես:

Այդպես մի ժամ ավել հյուսիսայլը սաստիկ վըրդովում էր երկինքը (նկատելի է որ այն ձմեռ հյուսիսայդները հաճախ էին երևում երկինքում):— Ես կարծում էի թե դու կես ճամբումը սառած կլինիս... Ա՛ տղա, ինչու էաքան ուշացար... հա՛, էն ի՞նչ էր առավոտվա չկլվածի պես տուն մտնելդ ու կապելու դիմի նման դուրս վախչելդ... ի՞նչ է եղել քեզ:

— Դեռ էդ Թոշննենք. քեզ պատմելու շատ բաներ ունիմ:

Լուցկիքը քսեցի պատին, վառեցի ճրագը: Հովհաննեսը ամենից առաջ ընկավ ծխախոտի վրա, հատճեպով պատռեց կապոցը, հանեց մեջեն մեկ հատը, առավ բերանը և ճրագին մոտեցրեց. մեկ կուշտ ներս քաշեց ծուխը և հետո ասաց. «Օխո՛յ, սիրտս տեղը եկավ. ա՛ տղա, ցերեկվա 11-ից մինչև այս րոպես առանց քաշելու էի, դիտես. Թե որ մեկ-երկու էլ այսպես օրեր լինին՝ ինձ համար խոլեռա պետք չէ, առանց նորան էլ կմեռնիմ»:

— Մի վախենալ չես մեռնիլ. ինձ Մոսկովից գրում են, որ առաջին սուրհանդակով երեք դրվանքա Թիֆլիսի ծխախոտ կուղարկեն...

— Դիտենք, դիտենք, վաղուց ենք լսում այդ մխիթարությունը, քեզ Մոսկովից չատ բաներ են ուղարկելու,— ասաց, ծաղրելով խոսքերուս վրա.— բայց մինչև այնտեղից քու ծխախոտ և չատ ուրիշ բաներ սառնալը՝ ես ու դու դեռ չատ օրեր պիտի անցնինք այսօրվա նըմանի:

— Հովհաննես, դու ինձ վիրավորում ես՝ երկրայելով իմ խոսքերին...

— Ա՛խ,— ասաց Հովհաննեսը, խոսքս կտրելով,—

ես չեմ երկբայում, որ քու ասածը ճշմարիտ է. բայց դու, դու ես խաբվում հույսերովդ:

— Ինդրեմ՝ թողնենք այս խոսակցությունը, որ գրեթե ամեն օր կրկնվում է: Եկ առաջ ինքնաեռը դընենք, մեկ ազատարի թեյ խմենք, հետո գնդ հետ չատ բան ունիմ խոսելու:

— Ա՛խ, Միքայել, դիտե՞ս ինչ,— ասաց Հովհաննեսը չատպով խոսելով. քիչ մնաց, որ մոռանայի: Գահմ՝ ալ մեկ սարսափելի երազ տեսա, երազումս իբր թե դու ու մեկ ազջիկ խոր փոսի առաջ կանգնած՝ պար էիք գալիս: Միքայել, ասում եմ, ի՞նչ տեղ ես գտել պարելու, չե՞ս տեսնում առջեիդ փոսը. դու իմ խոսքին ուշք չէիր դնում ու առաջվա պես պար էիր գալիս: Հանկարծ ազջիկը դուրս պրծավ գրկիդ, մոտեցավ փոսի ափին, մեկ հետ չուռ եկավ, նայեցավ երեսիդ ու թռավ փոսի մեջ: Դու լեզապատառ վազեցիր, մեկ պինդ ազատակեցիր, ու նորա հետևեն գլորվեցար, բայց հետո կամաց կամաց վեր բարձրացար՝ կարծես թե թեվեր ունեիր ու տխուր եկար կայնեցիր մոտս:—Ի՞նչ եղավ ազջիկը— հարցրի: «Կորավ փոսի մեջ, չի գտա նորան» ասացիր դու: Ես վախեցա գարշնեցա:—Փոքր ինչ լռելից հետո՝ ասաց ընկերս:— Ի՞նչ պիտի նշանակե այս երազը:

— Օրը բարի է, երազն ի բարին կատարվի,—ասացի ծիծաղելով և միտքս բերելով Մոսկվայումը տպած օրացույցի խմաստուն հեղինակներին:

— Հանաքը դեն՝ երազները երբեմն կատարվում են, գիտե՞ս,— ասաց իմ միամիտ ընկերը:

— Ի հարկե կատարվում են,— ասացի. զորօրհնակ՝ քանի մի օր առաջ ես էլ էի մի երազ տեսել. երազումս իբր թե ձեռս տանում եմ գրպանս և ի՞նչ տեսնեմ. բուռ բուռ թամակից ոսկիներ եմ հանում, տալքան հանեցի, որ ձեռս հոգնեցավ, բայց չուռ գարշեցա: Առավոտը աչքերս որ բացի՝ խանութպանը իր որդան էր ուղարկել մեր առած ապրանքի վարձը պահանջելու: Լավ մեկնություն չէ՞ր իմ տեսած երազին...

— Չգիտեմ Միքայել, ի՞նչ պատասխան տամ այդ խելոք խոսքերիդ. Թե ինձ հարցնես՝ իմ կարծիքը այն է, որ երբեմն երազը կատարվում է:

— Ի հարկե կատարվում է, ո՞վ է ասում, թե չէ կատարվում, զորօրինակ՝ քնած ժամանակ մարդ ինչ ասես երազ է տեսնում, առավոտից մինչև երեկո մարդ ում ինչ էլ որ հանդիպի՝ այդ երազի կատարումն է,— այդպես չէ՞: Ես հազարից ավել անգամ երազում ջուր տեսած կամ. երբեմն այնպես է կատարվել՝ որ լավ համբավ եմ լսել, երբեմն վատ՝ երբեմն ոչինչ համբավ չեմ լսել, այլ անակնկալ փող եմ ստացել, իսկ երբեմն ունեցածս էլ այլն օձին բանի տվել, փճացրել եմ, երբեմն կուչա-վոր ճաչի եմ մեծարվել, իսկ երբեմն ամբողջ օրս քաղցած ու առանց ծխախոտի եմ անցկացրել, ինչպես որ դուս այսօր: Երևի թե դուս էլ երեկ երազումդ ջուր էիր տեսել, ասացի ծաղրելով նորա վրա:

— Է՛հ, Միքայել, քեզ հետ խոսել չի կարելի, դուս միշտ մեկ պատճառ կգտնես վիճելու կամ մեկի վրա ծիծաղելու: Թողնենք երազը, հիմի դուս պատմե ինչպես անցուցիր օրդ:

Ես նորան ամեն բան մանրամասնաբար պատմեցի, միայն թե աղջկա կեցած տեղը չհայտնեցի:

— Օ՛օ՛օ՛, մեր ազա, ինձնից թագուն թագուն սեր ես վայելում: Էհա, ասում էի, ես ի՛նչ է եղել մեր Միքայելին, խելքը տանուլ է տվել, ի՛նչ է:

Բայց ինքնահավը սկսավ ուրախ ուրախ խշխշալ ու հո դալ ու միտքերս ձգեց, որ մենք առավոտյան ի վեր կարդալ բան չենք կերել. վեր կացա տեղես, թեյամանի մեջ թեյ ածեցի և վրան եռջուր՝ ու դրի ինքնահավի վրա: Հաց ու չաքարը կոտրեցի ու երկուսս նստանք աղամարդի ճաշ ու ընթրիք վայելելու:

— Նո՛ւ, Միքայել, լավ չարչարվեցա այսօր,— ասաց Հովհաննեսը, ևս հացը թաթախելով թեյի մեջ ու շարաս նահապետի ախորժակով ուտելով, լավ-չարչարվեցա, ավելցուց. եթե Աստված վրաս գուն չի բերը՝ չգիտեմ ինչ պիտի լիներ իմ հալը:

Ես էլ Հովհաննեսից պակաս քաղցած չէի, թեև ճշմարիտ է, սրճանոցումը փորիս ճնուն փոքր ինչ հանդարտեցրել էի, բայց մեծ մխիթարություն չէր մեզ զավաթ սուրճը և նորա հետ երկու-երեք հատ պաքսիմատը առատոգքի համար, որ նույնքան կուչա ճաշի և-բես էր տեսնում, որքան մայրաքաղաքս, աշնան օրերումն, արեգակի երեսը: Բայց այդ իմ առանին զաղտնիքն է և կարդացողին հետաքրքրական չէ իմ ներքին հանգամանքն իմանալը...

— Եառ՛, Միքայել, էլ ի՞նչ նոր բան կասես,— առաց ընկերս երեք բաժակ թեյ խմելից և հինգ չերտ հաց ուտելից հետո:

— Ի՞նչ նոր բան ասեմ, ասելու բան չատ կա,— նոցա կատարելն է դժար: Մեկ որ՝ սիրահարված եմ, ինչպես տեսնում ես, երկրորդ որ՝ աղջկանը խոսք եմ տվել էդուց անպատճառ մեկ հնար տեսնեմ նորան օգնելու. երրորդ...

— Միքայել, խոսքդ չաքարով կտրեմ,— սերը լավ բան է, ով է ասում, մանավանդ սերը անմեղ, անարատ աղջկան՝ ինչպես որ քու նոր ծանոթն է, բայց, հո՛պես, դու միտք արա, որ այդ սերը մեծ զոհեր է պահանջում, որի համար ունի՞ս արդյոք դու և նյութական և բարոյական գործութիւն: Աշխարքումս չատ թշվառականներ կան, որոնցմե եթե 9/10 մասը անարժան ևս լինի կարեկցութեան, դոնե 1/10 մասը արժանի է որ մենք մեր կյանքը զոհենք և նոցա զարդին դարման անենք: Եղբայր, մի մոռանալ որ՝ մենք Պետերբուրգումն ենք, մեր թեթև գլխու վրա հոգս անել չենք կարողանում, ո՞ւր մնաց, որ փափկասուն, կրթված և պարկեշտ աղջկա վիճակը ապահովացնենք... երբ որ դու խոստացար այն աղջկան քու օգնութիւնը՝ երևի կարծում էիր որ Լ...Մ...ի որդին ես. բայց մոռացել էիր, որ այս օրվա օրս հույզ Մոսկովի բարեկամներուդ վրան է,— առաց հեգնարար:

— Այդ խոսքերովդ ի՞նչ ուզում ես ինձ հասկացնել,— առաց բարկանալով,—կամենում ես, որ ես նո-

քան կուլը բախտի կամքին թողնեմ, որ աղջիկը քանի մի ժամանակ քաշուելյամբ կավելով աղքատության և ամեն կերպ զրկանքի հետ, ի վերջո ամենայնի յուր վիճակը բարվոքե՝ բարօրականը գտնե՞լ...հա՞, ա՞յդ է քու ցանկությունը, ա՞յդ է ինձ տալու բարի խորհուրդդ...

— Կամա՛ց, կա՛մաց, մի այդքան տաքանալ, ա-յունդ կպղտորես... քեզ ո՞վ ասաց, որ ես քու սրտի ընտրածին այդպիսի վիճակի եմ ցանկանում հասցնել. իմ կարծիքը այն է, որ դու մեկ ուրիշ հնար գտնես— առանց քեզ ծանրության տալու՝ նորան այդ նեղ դրու-թյունից ազատելու: Դու ասացիր, որ նա կրթված է: Ի՞նչ է նորա կրթությունը, դիտե՞ արդյոք լեզուներ, երաժշտություն, ասեղնագործություն, որ կարողանա մեկ տեղ դաս տալ, վարժապետություն անել և կամ վերջապես մեկ հարուստ դերդաստանում մանր երե-խերքի դաստիարակուհի դառնալ:

— Ես նորան քննություն չեմ արել, բայց հավատ-ում եմ, որ դաստիարակուհի դառնալու համար դիտու-թյուն ունի. բայց ես առաջ ալ ձեռս կդնեմ դահճի սրի տակ, և ապա թե խորհուրդ կուտամ նորան այստեղու-մը դաստիարակուհի լինելու: Դու դիտե՞ս այստեղի դաստիարակուհիների վիճակը: Զդիտե՞ս. լսե ուրեմն: Մատաղահաս և անփորձ աղջիկը մտնում է օտար դեր-դաստան. նորա պարտավորությունն է մանր երեխեր-քին ոչ միայն ուսումն տալ և դաստիարակել, այլ և նորա ծնողաց հրամանով երես առած աղերքի ամենա-ընչին կամքը կատարել. նա ստիպված է նոցա հետ փոդո-յե-փոդոյ ման դալ, նոցա ամեն հմար չարժմունքին պատասխանատու լինել. տղան ցած ընկավ, վրայի հա-գուստը կեղտոտեց՝ դաստիարակուհին է մեղավոր, տղան աչքածակություն է անում, չափից ավելի է ուտում, հիվանդանում է ու սկսում անքալ՝ ո՞վ է մեղավոր, դաստիարակուհին. հետո տանտիրոջ խելքը մտնում է երթալ խանութ խանութ, փողոցե փողոց քաշ դալու՝ ո՞վ գիտե ընկերակցի նորան չան պես,—դաստիարա-

կուհին. այդ ևս բավական չէ. տանտիկնոջ տանը չեղած ժամանակը՝ նորա պատվական ամուսնի ձանձրութիւնը փարատելու համար՝ էլի խեղճ դատախարակուհին պարտավորված է նստել ու նորա հետ дурачки[1] խաղալ: Էլի ուզո՞ւմ ես որ ասեմ, մուտեցիր ինձի (այդպիսի բաները մեկին ականջին են ասվում).....հիմի հասկացա՞ր. բայց ելիե ո՛չ՝ անից ամօթով դուրս է ընկնում խեղճ դատախարակուհին: Այժմ ինքդ պարզ տեսնում ես որ...ի և դատախարակուհի մէջ տարբերութիւնը չատ քիչ է. մեկի ամսական դինը 100—500, իսկ երկրորդինը՝ 10—25 մանեթ: Հավատո՞ւմ ես ինձ այժմ, որ ես իրավունք ունեի ասելու՝ լավ է ձեռքս կարեմ, քան թե այդ անարատ աղջկանը խորհուրդ տամ դատախարակուհի դառնալու:

— Թե այդպես է, ուրեմն արա՛ ինչպես որ դիտես, ի հարկե ես քու հոգու աղնվութեանը երբեք չէի երկրայում, բայց, դու էիր մեղքս գալիս, հիմի էլ ասում եմ՝ այնպես արա՛, որ հետո չփոշմանես:

— Ի՛հ եղբայր, եթե մենք ապնիվ դործելուցն էլ որ փոշմանինք՝ կնշանակե ավելորդ է աշխարքիս երեսին մեր կենալը, մեղավոր, ասա, Ջուբը ընկնենք էլի՛:

Հովհաննեսը լուռ էր: Երկրորդ ծխախոտը կպցրուց ու առաջ ու հետ սկսավ մտն գալ սենյակի մէջ:

— Հովհաննե՛ս,— ասացի,— դու շատ ժամանակ այստեղ ես, ուրեմն պիտի լավ ճանաչես այստեղի հասկերուն. ասա, խնդրեմ, ովի՞ց կարելի է քանի մի ռուբլի կարճ ժամանակով փոխ առնել:

— Ի՞նչ ասեմ քեզ: Թեև, ղորդ է, ես ինքս էլ շատ անգամ սատիկ կարոտութեան մեջ եմ եղել, բայց քաշվել եմ հայերից օդնութեան խնդրելուց, և ոչ ոք էլ նոցանից կարեկցութեան չի ցույց տվել իմ վիճակին, թեև հազած չորերես դժար չէը իմանալ իմ որպիսութիւնը: Երևի թե սատ երկիրը ապրում է նոցա հոդու. Ջերմաչափին: Բայց դու փորձ փորձե, կարելի է որ իմ

---

[1] Դուրաչկի—մի տեսակ թղթախաղ:

նկատմունքը անհիմն են. հարուստ մարդիկ չատ կան՝ Բ...ը, Գ...ը, Դ...ը և այլն:

— Դու լսե՞լ ես, այստեղում մեկ հայ կա՝ մակա-նունը Հովսեփյան, որ ասում են չատ բարեհոգի մարդ է, և ինչ հայ կուզե լինի, ամենին անխաթը օգնում է, ապրյոք...

Մտաքս բերանումս էր, որ դռնապանը բացեց դու-ռը, ներս մտավ՝ ձեռքին մի թուղթ բռնած. «Ձերդ ազ-նվություն,—ասաց ինձ,—ահա հայտարարության ձեր անունով եկած. նամակատանից փող ունիք ստանա-լու»:

— Փո՞ղ է, հարցուցի վազելով դեպի դռնապա-նը.— չո՛ւտ, չո՛ւտ, տուր այստեղ... չնորհակալ եմ: Ձախ ձեռքով պինդ բռնած՝ աջ ձեռքովս դողդողալով կոտրեցի կնիքը, բացի և տեսա, որ Մոսկովից 30 մա-նեթ եմ ստանալու:

Դռնապանը դուրս գնաց:

— Չը, տեսա՞ր,— ասացի, ուրախությունից թըռ-չըռտելով, ինչպե՞ս է քու մարգարեությունը. կարելի է երբեմն հուսալ բարեկամների վրա: Ես քեզ չէի՞ ա-սում, որ իմ բարեկամները ազնիվ ազգեր են: Փա՛ռք Աստուծու, այժմ ոչինչ բանից վախ չունիմ, ու այստե-հետև կարող եմ պարզերես երթալ իմ Մարիի մոտ և ապահով քաշաքավարությունով նորա ոտների մոտ դը-նել իմ բոլոր հարստությունը և ասել որ...

— Բաս մեզ համար ոչինչ չէ՞ մնալ,— հարցուց Հովհաննեսը խղճալի ձայնով:

— Ա՛խ, ներե՛, հոգիս, ես միանգամայն չչկլմել էի. ինչպե՞ս կարելի է որ մեզ համար ոչինչ չթողնեմ. իհարկե որ մեզ համար էլ մաան կհանեմ այնտեղեն: Հենց որ փողը ստացա, նախ և առաջ կերթամ մեզ հարկավոր բաները կառնեմ, տուն կերթեմ, և ապա կերթամ իմ նպատակին ուրախացնելու: Լավ չէ՞:

— Մխա՛ լավ է, խիստ լավ,— ասաց ուրախացած ընկերս, ասա տեսնենք, ինչպե՞ս պիտի կարգադրես, ի՛նչ ու ի՛նչ բաներ պիտի առնուս:

— Հայտնի բան է ինչ կառնում. կառնում տասը դրվանքա չաքար, մեկ դրվանքա թեյ, երկու դրվանքա ծխախոտ, սուրճ— երբեմն, պանիր··· բոլորը, բոլորը կառնում: Սև օրվա համար էլ մոտս կպահեմ հինգ մանեթ: Լավ չէ՞ կարգադրութիւնս:

— Ախ՛ատ լա՛վ է, խիստ լավ. մեկ մանեթ էլ ինձ կուտա՞ս:

— Ինչի՞դ է պետք:

— Նկարելու համար թուղթ չունիմ. մատիտներս էլ դրեթե մաշվել, պրծել են. էնդուր համար է, որ էս քանի օրերս ճեմարան չեմ գնում:

— Հա, ինչո՞ւ չէ, մեկ մանեթ էլ քեզ կուտամ:

— Ախոյր կոչիակարը ու լվացարարը եկել էին, մեկը երեք մանեթ ու կես էր պահանջում, մյուսը ութսուն հինգ կոպեկ. ի՞նչ ես կարծում, պե՞տք է նոցա տալ, թե ո՛չ:

— Ի հարկէ՛, ի հա՛րկէ, անպատճառ կուտամ:

— Մանրավաճառը գլուխս տարավ էս քանի օրը. երկու մանեթ յոթանասունհինգ կոպեկ էլ նորան պետք է տալ:

— Ի՛նչ ասել կուզե, որ նորան էլ անպատճառ պետք է տալ. գիտե՞ս խո՝ եթե նորա աչքը մեկ անգամ վախեցավ՝ չատ օրեր ծոմ կպահենք:

— Կաթ ծախող հինիկը նմանապես պահանջում էր հիսուն կոպեկը:

— Անպատճա՛ռ կուտամ, անպատճա՛ռ, չի կարելի չտալ, մեկ որ խեղճ հինիկ է, հենց մեկ էն կովն է որ չատ անգամ թեյ ու չաքար չունեցած ժամանակներիս, պիտես խո, նորա բերած կաթովն էինք օրերս անցկացնում. ումին տամ չտամ՝ դորան անպատճառ կուտամ:

— Խա՛-խա՛-խա՛,—ծիծաղեցավ ընկերս. եթե այդքան ճիշդ հաշիվ կանանես,— ասաց,—լաս մեծ գոհ չես բերիլ սրտիդ ընտրածին:

— Ինչո՞ւ,— ասացի զարմացած,— երեսուն մանեթը քի՞չ փող ես կարծում:

— Երեսուն մանեթը այն մարդու համար քիչ փող

չէ, որն որ ամեն ամիս ավել պակաս գրեթե էլի տյրքան է առնում. քայց քեզ համար, որ ներկայիդ և ապագայիդ բոլոր հույսը այդ է՝ ոչինչ բան է երևոյն մանելը, մանավանդ որ այժմ դու կես անավարտած ես:

— Ի՛հ,— Հովհաննես, Հովհաննես. ասածդ ինչ-չե՞ր ավազ չէ, կարելի է որ այս խեղճ աղջկա աղոթքով էլի բախտի չարքը դեպի բարին չուռ կուգա. ո՞վ գիտե:

— Ա՛սած-մա՛սած ասա, ասածդ ասա:

Երկուսս էլ սես-սես մտածողության մեջ ընկանք:

Հետո Հովհաննեսը ասաց ինձ. «Կարծեմ, Մինքայել, քեզ ժամանակ է քնելու, որ առավոտը չուշանաս: Իմ քունը չի տանում. ես ուզում եմ այս գիշերը և եթ պրծացնել **-ի պատիերը,— կարելի է դորա համար մեկ քանի մանեթ ձեռքս ընկնի:

Ղորղ որ աչքերս ծանրացել էին. հազուս ու մարմնաս ցնցումը ստատիկ խանջացրել էր ինձ, այնպես որ լեզուս դժվարավ չարժում էր բերանիս մեջ: Երեք աթոռ մեկ մեկու մոտ չարեցի, նշանաղբեստս և ուրիշ հալավներս ծալեցի դրի բարձի տեղ, թիկնոցս տակ փռեցա ու պառկեցա, և քունը անմիջապես իջավ վրաս:

Զգիտեմ քանի՛ ժամանակ այսպես քնած մնացի, մին էլ հանկարծ զարհուրած քնես վեր թռա՝ մոլորած աչքերս դարձույն չորս կողմս. Հովհաննեսը նստած էր սեղանի առաջ քնքի տակով մի երգ երգելով, մատիսը ձեռին նկարում էր. ճրագը դրեթե պրծել էր:

— Հովհաննե՛ս,— ասացի,— քանի՞ ժամը կլինի այժմ:

— Ժամացույցս մոտս չէ, ոսկան փոքր ինչ, կեսքամ հրեայի մոտ, կիմանամ ու քեզ իմաց կուտամ, ասաց ծիծաղելով:

— Էլի՛, էլի՛, ի՞նչ ես կարծում. չո՞ր ժամանակ քնած էի:

— Չա՛ կլինի հապես երեք ժամ:

— Ա՛հ տղա, պիտե՞ս ինչ. մեկ սարսափելի երազ տեսա, մինչև հիմի վախից ուշքս վրաս չի գալիս:

— Թե՞ երազի չեիր հավատում:

— Ես քեզ ասացի՞ որ հավատում եմ:
— Ապա ինչո՞ւ վախեցար այդքան:
— Մի բան ես դիտեի՞, որ երազումս տեսածս—երազ էր: Ուզում ե՞ս պատմեմ ինչ տեսա:
— Պատմե, պատմե, այսօրվա համար Մոսկովոմը ոպած օրացույցի մեջ ասած է, որ օրն չար է, երազն ոտանըհինդ օրեն կատարի:
Սրտիս մեջ դող ընկավ: Մարդուս կյանքումը այնպես բոպեներ կան, երբ նա ակամա անապաշա է դառնում: Եթե միաքերդ բերեք (կարդացողք ձեզ եմ ասում) այն խորհրդական հանդիպումը, որ ունեցա Մաքի Վեռեևի հետ, այն անցքը, այն պատմությունը, որ նորանեն լսեցի, ինձ հանկարծ վող պետք լինելը և այդ հոգսահատ դրությեան ժամանակ տեսս թե երեսուն մանեթը ինչպես երկնքից ընկնելը, և վերջապես այն երազները, որ դրեթե միևնույն պարունակությամբ տեսանք ես և Հովհաննեսը,— այս ամենը՝ ինչ ասել կուզի, որ ժամանակավոր թեթև ապավորություն կարող էին ունենալ մի երիտասարդ տղի վրա: Բայց ես ամոթեցս աշխատեցա հանդարտ երեվել ընկերոջս աչքին ու սկսա այսպես պատմել:
— Երազիս մեջ տեսա, իբր թե, ես և Մարին մանկենք զբոս Ամառնոյ պարտեզումը. ես իմ հասարակ ոտանոզական հին չոքեքս ունեի վրաս, բայց Մարին այնպես զարդարված էր, որ նորա բնական գեղեցկությունը մեկ մեկով էր ավելացել: Մոտերես անցնողները հիանալով նայում էին նորա վրա. թեև Մարին ոտոնարյուն և անոտարբեր էր այդ ընդհանուր զբոսանքին. բայց ինձ չատ անդուրեկան էր, երբ ո՛վ ասես իբ լերբ աչքերը դարձնում էր նորա վրա: Մին էլ հանկարծ մի զինվորական վազելով եկավ եռեվներես, բռնեց Մարիի կռնեն և բռնաբար խլեց ինձանից: «Մի քայլ, ասաց Մարին կողկողագին ձայնով, հասի՛ր ինձ

---

[1] Летний сад—հանրային այգի Պետերբուրգում (այժմ Լենինգրադ):

օդնության, աբե՛, աբե՛»: Սիրտս արյուն կոխած վազեցի եռհարկերն. բայց նոքա այնպես չուտ էին դնում, որ անհնարին էր նոցա հասնելը: Պարտեզին դուրս գնացին դեպի Նեվա, բայց ես դեռևս շատ հեռու էի նոցանից, զինվորականը դնաց դեպի ափը, վարձեց նավակ, բռնութեամբ մեջը նստեցուց աղջկանը,— ես միայն այն ժամանակ մոտեցա դեպին, երբ նոքա արդեն Նեվայի մեջտեղումն էին: «Մարի՛ Մարի՛, կանչեցի, աղաղակե՛, օդնություն կանչե՛»: Բայց ձայնս չէր հասնում նորա ականջին: Ուրիշ նավակավարները ծիծաղելով նայում էին վրաս ու ասում էին. «ի՞նչ է, պարոն, տարա՞ն թռչունը. տա՛ր հարյուր մանեթ՝ եռհարկիցը կհասանենք, թե չէ՝ կորա՛վ ու կորա՛վ աղջիկը»: Եվ ոչ ոք չէր կամենում ինձ կարեկցել: Մարդկանցմե օդնություն չունեի. բարկութենից կրակված աչքերս երկինք բարձրացուցի, ի՞նչ տեսնեմ, օդի մեջ Մարին թռչում էր և նորա եռհից նույն զինվորականը ընկել էր, ուզում էր բռնել: Մարի՛, Մարի՛, կանչում էի, ցածից, իմ մոտ իջի՛ր, ցա՛ծ իջիր: «Չէ, ասաց նա, ես երկինք կերթամ, երկրումը չար մարդիկ են կենում»: Մարի՛, չարունակում էի աղաղակել, իջի՛ր իմ մոտ, իջի՛ր, ոչոքից մի վախենար: «Չեմ իջնիլ. վախենում եմ, այդտեղ ամենքը ինձ վնասել են աշխատում»: Մարի՛, ինձ ե՞ս սիրում, Մարի՛, ինձ մոռացա՞ր, ի սեր աստուծո, իջի՛ր ցած, երկինք մի երթալ: «Դու ինձ չե՞ս սպանիլ», հարցուց Մարին ցած իջնելով: Չէ՛, չէ՛, չեմ սպանիլ, պատասխանեցի: Մարին հոգնած էր և հագիվ կարողանում էր թռչել, հանկարծ ուժը թուլացավ և օդի մեջ պռոստ գալով դլխիվայր գետին գլորվեցավ ոտերս մոտ: Կռացա, տեսնեմ՝ անշարժ էր, երեսի գույնը սպրդնած, չունչ չի կար վրան: Ա՛խ, մեռավ, մեռա՛վ աղջիկը, ասացի ու գլորվեցա:

— Ի՞նչ ես կարծում, Հովհաննես... ի՞նչ պիտի նշանակե այս երազը:

— Դու մեկ իմաստուն տղա ես, մինչե՞ այդպիսի բաներուն կարող ես հավատալ. չորս-հինգ ժամ առաջ

չէ՞ր, որ ինձ բարի խրատ տվիր երազին չի հավատալ. այժմ իմ մեկնությունն ես հարցնում, որ հետո էլի վրաս ծիծաղես: Չէ՛, ես այդքան չեմ հիմարանալ,— ասաց սիրտը ինձանից ցաված:

— Հիմի ի՞նչ եղավ քեզ, ինչ զարմանք մարդ ես ե— ղել. հանաք էլ չի կարելի անել քեզ հետ:

— Ուզես հանաք արա՛, ուզես մանաք. իմ կարծի— քը այն է, որ երազի ու խնդության մեջ մեկ ամենևին կապ կա, և երազը թեև ոչ միշտ և ոչ ամեն ային—օ— յին հանդամանքումն, բայց երբեմն կատարվում է, և այդ այն ժամանակ, երբ որ մարդուս կյանքումը մի մեծ և նշանավոր փոփոխություն է լինելու: Ասում ասա, որ ասածներս սուտ դուրս գան,— ես հոգիով չափ ուրախ կլինեմ, բայց··· հոգիս վկայում է, որ այդ հանչվորությունդ աղջկա հետ՝ երկուսիդ մինի գլխուն մեկ փորձանք պիտի բերե: Էլի եմ ասում՝ ասված անե, որ դուշակությունս չկատարվի: Միքայել, սրի՛ այս անգամ լսե իմ բարի խրատը, թո՛ղ այդ աղջկան իր բախտին, մի՛ խառնվիր նրա գործերի մեջ, մի չարությանակիր սկսած ճանչվորությունդ, միանգամայն ձե՛ռք վեր առ նորանից. ոչ դուս առանց նրան, և ոչ նա առանց քեզ— չեք կորչիլ: Երևակայե՛, որ դու քառորդ ժամ կամ առավել կամ հետո անցնելու լինելիր կամրջի վրայով— չպիտի խո տեսնելիր նորան, եթե չտեսնելիր՝ չի պիտի ընկնելիր ետևից. եթե ետևից չընկնելիր՝ չէիր սիրահարվիլ, կնշանակե, որ նա քեզ չէր ճանչնալ և առանց քու օգնությանը կազատեր գլուխը այդ նեղ դըրությունեն: Ասաված ողորմած է. բարի մարդիկ ամեն տեղ կան, և նա մեկ կերպով կգտնե ճար իր ցավին:

Ես լուռ էի. երազս ինձ այնպես չվոթել էր, որ կիսով չափ համոզվեցա ընկերոջս խրատեն և խոսք չըդուս նորան պատասխանելու:

— Ասա՛, խնդրեմ,— չարունակեց Հովհաննեսը,— դիցուք թե խելոք մարդիկ երազը այսպես են մեկնում թե՝ մարդ սրթուն ժամանակը ինչ բանի վրա որ մըտածե, խոսքը կամ ուշիկը դարձնե՝ դրեթե նույն բանը

մոտ է մոտ տեսնում է երազումը: Այդ ես հասկանում եմ և հավատում եմ: Բայց ինչպե՞ս կմեկնես իմ տեսած երազը. ես իսո չգիտեի, որ դու այդ ճանչվորությունը արել ես կամ անելու ես, այն ես կարծել չեմ կարող, որ ես մտքից եմ հնարել այդ երազը, ինչու որ՝ դու առաջվեն աղջկա հետ ծանոթանալդ ինձ չէիր ասել, որ ես քեզ պատմեցի տեսած երազս:

Փոքը ինչ լռությունից հետո՝ նորից ասաց.

— Չէ՛ չէ՛ չէ՛, ի՛նչ ուզես կարծե, ի՛նչ ուզես մտածե՝ այդ աղջկա գլխուն մեկ վորձանք պիտի գա քու պատճառով: Ես թեև տեղով չեմ կարող ասել, թե նորա անբախտությունը ուրտեղաց պիտի ծագի և ինչո՞վ պիտի վերջանա, բայց գլուխս կուտամ կտրելու, եթե նախազգացմունքս չկատարվի. ա՛յ, կտեսնես:

Ճրագը հալվել, պրծել էր, մխայն տակի վաթթաթ թուղթն էր վառվում՝ որ մեկ մեծ լույս էր տալիս, մեկ խավարում էր: Հովհաննեսը վերկացավ տեղեն, հանվեցավ ու պառկեցավ: Բայց իմ աչքերես քունը խոպան փախել էր: Ճրագը սկսավ չըթի-չըթալ ու հանգավ, սենյակը լցվեցավ նորա խեղդաշունչ ծխովը:

— Բարի գիշեր,—ասաց ընկերս, չուռ եկավ անկողնի մեջ, սկսավ փսսալ, չվշվալ, խոխոռալ ու վերջապես անուշ անուշ քուն եղավ:

Մոլորած երևակայությունս սկսավ առաջիս հազարումեկ զանազան պատկերներ նկարել՝ մեկմեկե քամնելի, մեկմեկե զարհուրելի: Ո՛չ երազ էր տեսածս ոչ տեսիլ, այլ երկուսին էլ նման մի բան: Այս մութ տեղումը, այս զերեզմանական լռության մեջ՝ Հովհաննեսի դուշակությունը սաստիկ ազդում էր ինձ: Դաղաղներ, չիբխմներ, սուզի հալավներ, մեռելաթաղներու չահեր, մարդու կմախքներ էին անդադար երևումի աչքիս ու սանդարմեսական ծուխ-ծլնծաղով պըտուտ ու պար գալիս չորս կողմումս: Մահվան քրտինք իջավ վրաս: Վախիցս գլուխս ծածկեցի թիկնոցով. բայց այնտեղ էլ դադար չունեի. չնչիցս տաքացած օդը խեղդում էր ինձ: Ամոթս գալիս էր ընկերոջս դեր-

թեցնելու, որ վտքրոգութիւնս չիմանա նա և չծիծաղի վրաս: Այսպես հինգ թե չորս տաժանական ժամ անցուցին,— թշնամիս չհանդիպի՛...

Վերջապես՝ լույսը սկսավ կամաց կամաց պատուհանին ներս մանել, դանդաղները ախուր ղողանջում էին հեռվից, ու աքաղաղները ժամանակ առ ժամանակ բարևում էին լուսադալը: Այլ ևս մխաս չէ, երևի թե այդ մէջտեղին քունս տարել էր:

Դ.

Մյուս օր, առավոտը երբ որ ինձից դուրս եկա ու փողոց մտա, ինչ ասել կուզե, որ առաջին զարթնս եղավ ուղիղ և դրեթե վազելազ դեպի նամակատուն երթալ (դռնապանը արդեն վաղերացրել էր ավել հայտարարութիւնը թաղապետի դրասենյակում): Գիտցողը գիտե, որ Սմոլենսքին մինչև նամակատուն առ սակավը կլինի, երեք վերստ, որն ես անցա կես ժամվա մէջ: Ա՛վ՛դ, որ ո՛չ խեղճ Հովհաննեսի կարիքը և ոչ մինչև անգամ իմը լցնելու համար էր այդ չտապ տաղնապս, այլ մի օտար աղջկա համար, որին արդեն սիրել էի առաջին անչահասեր ու անկեղծ սիրովս:

Զգիտեմ, այժմ՝վա երիտասարդներին հայտնի՞ է արդյոք առաջին սիրո զգացմունքը. եթե հայտնի է, նոքա ինձ կհասկանան, և իմ վրա ոչ կծու ծաղրով և ոչ արհամարհական ժպիտով կնայեն. բայց եթե հայտնի չէ... բայց եթե նոցա սրտի վարդը բացվել դիտե ոչ սոխակի երգի, այլ ոսկու ձայնի համար, այն ժամանակ ես նոցա ասելու ոչինչ չունիմ: Վա՛յ նոցա:

Աղջի՛կ, խոսքս քեզ եմ դարձնում: Երբոր մի երիտասարդի սեվորակ աչքերը քու սիրտը թափանցեց ու մէջը մի ջերմ հեղուկ լցրեց. եթե մի մատաղահաս թարմ և առույգ պատանիի ձեռքդ սեղմելը քու երակների մէջ էլեկտրական զորութիւն մտցուց. եթե մի երիտասարդի քու մոտից անցնելը, ասես թե, եռևեն վարդ ու մեխակի հոտ թողուց քեզ համար. եթե քու աչքը մի երիտասարդի աչքին հանդիպելիս՝ քու սիր-

ոը նվաղի ու մարմնուդ մեջ մի դուրեսկան սարսուռ ընկնի,— իմացիր որ այդ քու առաջին, սուրբ, անկեղծ և աստուծո օրհնած սերն է. անվախ գնա նորա առջև, բռնե այդ սրբությունը ու էլ ձեռքիդ բաց մի թողնիլ. այդ քու ճակատագիրն, այդ քու բաղդն է. մի պղտճանիլ առաջին զգացմունքդ, առաջին սերդ, իմացիր որ դու արդեն միավորված ես հոդվով, և երկինքը օրհնել է քու ընտրությունը: Բայց... նայի՛, զգուշացիր այդ առաջին սերդ փոխելու չահի, հարստության, ոսկու, փառքի, կյանքի հարմարության հետ: Մի՛ ծախիլ հոգիդ, ապա թե ոչ՝ դառնապես կզղջաս մի օր. ինքդ քեզ ծախելը այնուհետև սովորական բան կդառնա քեզ համար:

Այո՛, ես սիրել էի արդեն Մարիին,— խոստովանում եմ այդ աչխարհի առջև և այժմ ոչ միայն չեմ զղջացել կամ ամաչում եմ պատանեկական զգացմունքես, այլ ընդհակառակն, պարծենում եմ, մխիթարվում եմ, որ ես ևս սրտիս մեջ կրել եմ աստվածային կայծ: Սերը, ինչպես և ամեն առաքինություն, աստուծո առանձին չնորհն է. ամեն մարդու «խելքի բան չէ» չերմ և անկեղծ սիրելը լոկ սիրելու առարկան և ոչ թե նորա աճանդական մասնիկները՝ օժիտի, ապագա ժառանգության, չահաբեր ազդակցության, հովանավորության և այլն, և այլն, և այլն անուններով:

Նամակատնումը ձեռքս տվին, ինչպես հայտարարության մեջ ևս նչանակած էր, երեսուն րուբլի. փողը Դ. Ք. եվ Մ. Թ. բարեկամներես էր. այդ փողով պիտի ապեի մեր չարագրության ժողովածուքի առաջին տետրը:

Այն օրն ինձ մի այնպիսի բան պատահեցավ, որ մինչև այժմ ինքս ինձի մեկնել չեմ կարողանում, և եթե պատմեմ, դիտեմ, չատերին անհավատալի պիտի երևի. այսու ամենայնիվ դա այնքան ճշմարիտ է, որքան ճշմարիտ է արեգակի ամեն ցերեկ, ու աստղերու ամեն դիշեր երկնքի վրա փայլելը: Դիտեմ կասկածամիտ մարդիկ այս պատմելու միջնավեսս պիտի հա-

մաքեն իմ մտացածին deus ex machina[1]-ն— այդ չատ լավ գիտեմ. բայց ի՞նչ փույթ. իրողությունը կմնա, թեկուզ անմեկնելի էլ լիներ նա մարդոց համար: Ո՞վ չգիտե Շիլլերի ասածը, թե՝— աշխարհիս երեսին գեռ ևս չատ անմեկնելի զաղանիք կան: Իմս էլ նոցա թվումը համարեցեք:

Լսած կո՞ք ոզդյոք Պետերբուրգի Щукин двор ասած վաճառանոցի մասին, որին հայերս Գող-բազար էինք ասում, ուր կոպեկանոց լաթեն բռնած մինչև հազար մանեթանոց սամուրի մուչտակ կարող էիր գտնել, ուր Суздаль-ի богомаз-ների[2] պատկերների մեջ հնագիտը կարողացել է փոշիի տակից գտնել Ռաֆայելի, Քորրեջիոյի ու Վան-Դեյքի անգին պատկերները, ու ամեն տեսակ հին, ժանգոտած, կոտրատած, պատռռոտած երկաթներ, հալամներ, դրքեր, չալեր, ինքնաեռներ, կոչիկներ, միով բանիվ՝ ինչ որ սիրտդ ուզենար, կարող էիր ճարել, դրպանումդ դրած վողի քանակության համեմատ: Ահա իսկ այդ Գող-բազարումը մի հնամաճառ խանութպանի մոտ վազուց մի հնաձև դրասեղան էի հավանել, որն ոչինչ աչքը չլացնող արտաքին տեսք չուներ, ոչ նորաձև էր և ոչ էլ հարմար էր գործադրության համար. ինքը մի հաստափար, կարճոտանի ու հնոցի մեծությամբ մի սեղան էր, վրան ու մեջը անհամար գզրոցներ կային՝ ո՛րը թղթի, ո՛րը թանաքամանի, ո՛րը բանալիների, ո՛րը ծխախոտի, ո՛րը ոյս և ո՛րը այն— հազար տեսակ մանրմունր առարկաների համար: Ես էլ չգիտեմ թե՝ ինչի՞ն էի հավանել. յուր ոգեղությունով ու անճոռնիությունով, հավատացնում եմ, ներս մտնելու կարասի չէր. բայց ամեն անգամ որ Գող-բազար էի գնահում՝ մի անհայտ զորություն, կարծես թե, քաշում էր ինձ այդ հնամաճառ խանութպանի մոտ, և ամեն մոտենալիս՝ անպատճառ ծախս էի անում այդ

---

[1] Սարքված բան, շինծու (լատիներեն):

[2] Սրբապատկերներ նկարող անշնորհք նկարիչ:

դրամեղանը, թեև շատ անգամ դրպանումս կոպեկ էլ չունենայի։

Հենց որ բարեկամիս ուղարկած երեսուն մանեթը ձեռքս առի, իսկույն մտքս եկավ հնավաճառկիկ դրամեղանը. և ի՞նչ եք կարծում. ո՛չ դեպի Մարկին շտապեցի, ո՛չ դեպի Հովհաննեսը, այլ ուղիղ գնացի հնավաճառի խանութը և, ըստ սովորության, սկսա հարբերող անգամվա ծախս[1]։

— Կարժե՞ որ ձեզ հետ գլուխ մաշեմ,— ասաց այս անգամ վիրավորված խանութպանը. դուք, ինչպես նըկատեցի եմ, մեկին ժամանակ անցնելու համար եք գալիս ու ծախս անում, գնել ևս ամենևին մտադիր չեք,— ասաց ու խստադեմ երես արավ։

«Ձի՛ չէ՛, ասացի, անպատճառ մտք ունիմ գնելու, եթե աժան տաս»։

— Ա՛առնց նորան էլ չնչին գին է պահանջած,— ասաց մարդը, որ ինքն էլ, ինչպես երևում էր, սասոսիկ զվիզ էր այդ դրամեղանեն, որն նորա փոքրիկ խանութի գրեթե կես մասն էր բռնել.—մանեթ ու կեսը ինչ փող է, որ խնայում եք... Հավատացնում եմ ձեզ, որ վրան մանեթեն ավելի փայտ կա, եթե վառելու լինես. իսկ գամե՞րը, իսկ պտուտակնե՞րը, իսկ կղպակներն ու բանալինե՞րը... ի՞նչ եք ասում, գրեթե ձրի եմ տալիս, դուք էլի ծախս եք անում...

«Վաթսունհինգ կոպեկի կուտա՞ս,—ասացի։ (Ուրիշ անգամներըս հիսուն կոպեկից ավելի չէի տալիս։ Ա՛չքս վախեցել էր ռուս վաճառականներից, պատճառ որ՝ մի որևէ բան գնելիս նոցա պահանջած գնի քառորդն եմ վճարել ապրանքի համար և այնուամենայնիվ դարձյալ միշտ խաբվել եմ)։

— Հավատացնում եմ ձեզ, որ ինձ ավելի թանգ տրժե,— ասաց ըստ սովորության ռուս վաճառականներին. ինքս մանեթ ու քսանհինգ կոպեկ եմ տվել. մի՞թե քսանհինգ կոպեկ չահ պիտի չունենամ, չորս

———

[1] Այստեղ նշանակում է սակարկություն։

տաբլից ավելի է, որ խանութիս մեջ տեղ է բռնում,— ասաց ու բարկությամբ թքեց իմ հավանած գրասեղանի վրա, ու հետո ավելացուց՝ էլի քանի ժամանակ կսպասեմ, եթե ծախվեց՝ լավ. թե չէ՝ ահա երկվեցա, կառնում կացինն տակ կընեմ ու ինչպես որ կա՝ փշուր-փշուր կանեմ ու հնոցը կձգեմ:

Ճշմարիտ պետք է ասեմ, որ չատ կոպտատարազ ու անճոռնի չինված բաներ էի տեսել, բայց այս գրասեղանի նման այլանդակ բան կյանքումս տեսած չէի, ինչի՞ն էի հավանել, թեկուզ մեկընեք՝ մեկնել չեմ կարող:

Խանութպանը չարունակեց՝ կուտա՞ք մեկ մանեթ: Ասաց ու ափը ափիս խփեց ինչպես որ այս ծեսը սովորական է ծախող ու գնողի մեջ:

Ես էլ նորա ձեռքը առի՝ ահա քեզ յոթանասունհինգ կոպեկ ու մեկ դառչ չեմ ավելացնիլ,— ասացի ու ափս ափին խփեցի:

Նորից առավ նա իմ ձեռքս՝ իննսունհինգ կոպեկ կուտա՞ս,— ասաց, ու ափը ափիս խփեց:

Եվ այս կերպ վոխ առ վոխ մեկ մեկի ափին խփեյով՝ բանը հասուցինք ութսուն կոպեկի:

— Вазьмите его к чорту!— ասաց հնավաճառը, սպրանք խո չէ, խայտառակություն է խանութիս մեջ: Սեղմ մարդու երեսից քրտինքը կաթկթում էր: Փողը տվի խանութպանին:

Զարմանալու բան. բնավորությամբ ես ոչ ժլատ եմ և ոչ փողասեր. բայց չգիտեմ ինչու սաստիկ սիրում եմ խանութպաններին հետ համառությամբ ծախս անել:

Վարձեցի սայլապան. երեք հոգի հազիվ հազ կարողացանք սայլի վրա դնել այս վայտաչեն եգիպտական բուրգը, որն տարինք գիտրդ և իսկ տեղավորեցինք մեր սենյակի մեջ: Հովհաննեսը գեհուա Գեղարվեստական ճեմարանեն վերադարձած չէր:

Ինչպես որ ասել էի, գրասեղանը անթիվ անհամար մանր ու խոշոր գզրոցներ ուներ, նորա վրան և

կողքերին հարյուրներն ավելի պղնձագլուխ զամբյուղներ՝ լիքը թե զարդի համար, բայց բոլորը ժանգոտած, կանանչ զույն առացած. սեղանի վրայի չուխան (մահուդ), նորա վերարկուն մասուռները բոլորովին չպարփակած էին չորացած թթվով, տղմով ու հազար տեսակ կեղտերով. սենյակի օդը մի բոպեի մեջ ապականվեցավ, խռնակ, բորբոսած մասուռի հոտ առացավ: Իսկույն դնացի մի կոնդ (լապան) ջուր բերի, թաթախեցի մեջը սպունգը ու սկսա լվանալ. երեք անգամ կոնդի մեջի ջուրը փոխեցի, չորրորդ անգամն էլ նոր թանաքի պես սև էր: Ինչպես և իմ վրդը ինչ մաքրությունն ավի սեղանիս տախտակներն մասին ու հետո սկսա զամբյուղ մաքրել. առի չուխայի կտոր, թաթախեցի քացախաուն կավիճի մեջ ու սկսա պինդ պինդ զամբյուղին քսել: Գամբյուղի մինը այս կերպով մաքրելիս, հանկարծ մի թրխկոց լսեցավ. նայեմ՝ մի զաղանի ղղրոցի կափարչիչը բացվել է. մի՛ ասիլ, որ իմ վերջին մաքրած զամբյուղ և այդ բացված ղղրոցի կափարիչը իրար հետ կապակցություն են ունեցել: Ինչ և իցե: Այս կերպով տեղս մի նոր ղղրոց բացվեցավ, որի մեջ տեսա մեծ ու փոքր չատ կապույներ ու ծրարներ. սկսա նոցա բանալ ու մեջերի գտնվածը աչքիս անցնել: Որի մեջ հին ձեռագիր թղթեր էին, որի մեջ դրիչներ, մատիտներ, կնքամոմի կտորներ. իսկ ուրիշների մեջ կային սահանակուս մատանիներ, մարգարտի չարոցներ, ոսկի ու ակնահետ քթախոտի տուփեր, և մի կապոցում «դխի-նոր» խոշոր ոսկի գահեկաններ, Մարիա Թերեզիա կայսրուհվո օրով տպած յատիական դրեքով, թվով հինգ հարյուր հատ: Մտ մնաց, որ խելքս պիտի թռչեր գլխես:

Առաջին նվազ կարծում էի թե՝ երազի մեջն եմ, և որովհետև երազումս միշտ գտնելը ինձ չատ անգամ պատահել էր, և որովհետև կարծում էի թե՝ այս և երազ է, ստուգելու համար, սկսա մազը քաշել ու մխոց կճմռել: Տեսնում եմ որ ցավում է, կնշանակե՝ այս բանը երազ չէ, այլ ուրախալի իսկականություն: Մե

բոպեի մեջ հազար տեսակ անելիք բաներ մտքովս անցան: Վերջին որոշմունքս այս եղավ, որ իսկույն հրաժարեմ բնակած տանս մեջ ամեն դանվողներին և ցույց տամ այս դառած բաները: Ինչպես որ մտածեցի, այնպես էլ կատարեցի: Տան մեջ ով կար չիկար, ամենքին հրավիրեցի, դառած առարկաները մի առ մի ցույց տվի նոցա և հայտնեցի, որ անհապաղ պիտի տանեմ և նեքայացնեմ քաղաքապետին:

Ներկա դանվողները ո՛րը ինձ դոնքիխոթ էին անվանում, որը անխորձ երիտասարդ, որը թերևս խելագար էին կարծում: Չատերը խորհուրդ էին տալիս հետ կենալ այս տղայամիտ որոշմունքես և օգուտ քաղել բաղդի այդելութենեն, որ մարդուս կյանքումը կամ մի անդամ է պատահում, կամ ոչ երբեք. բայց ես ոչ մի բոպե չտատանեցա իմ հաստատ որոշման մեջ և ոչ մի անդամ չփոշմանեցա: Եթե դործիս մեջ մի դովելի բան կա, դորա համար ո՛չ ինձ, այլ իմ պատվական ծնողներին պետք է «չեն կենաս» ասել: Այդ, հավատացնում եմ, ոչ դպրոցի, ոչ համալսարանի և ոչ հասարակական կյանքի ազդեցութիւն է, այլ առանձին դաստիարակութիւն: Ինչևիցե:

Հինդ հարյուր ոսկին, ակնահեռ մատանիները, մարդարտի չարոցները, ոսկի ափերը, ձեռագիր թըղթերը, միով բանիվ ինչ որ դտել էի դաղտնի դզրոցի մեջ, բոլորը մի ահագին կապոցի մեջ դրինք, ու թադավետի—որին իմ հրամանով դռնապանը հրավիրել էր—հետ նատանք կառք ու տարինք ուղիղ քաղաքապետին:

Երբոր քաղաքապետը բանի էութիւնը իմացավ, ասաց ինձ, «Պարո՛ն ուսանող դուք հարո՞ստ մարդու որդի եք»:

— Ո՛չ,— ասացի, իմ հայրս մի հասարակ... է, և այս բոպեիս...

«Ախո՛ս, ախո՛ս,— ասաց քաղաքապետը,— բայց բանը այն չէ. խոսքս դարձնում եմ ձեր վրա, մի՞թե չդիտեիք, որ դուք այն ժամանակ պարտավոր էիք այս

առաքակաները ինձ ներկայացնելու, երբ փողոցի մեջ դատած լինելիք. բայց որքան իմ խելքս կարում է, այս առաքակաները ո՛չ կորցրած են և ո՛չ դատած. դուք սոցա դնել եք, թեև շատ աժան գնով, ուրեմն դոքա ձեր լիակատար սեպհականությունն են. թղթերից ես տեղեկացա, որ սոցա տերը կեցել է Ելիզավետա Պետրովնա կայսերուհիի օրով, ուրեմն ես մինչև անգամ չեմ համարձակում մի րոպե ձեզ չընդունել այս թանկագին առաքակաների անձնիշխան տերը. իմ կարծիքով դոքա ուրիշ տեր պիտի չունենան. երկրայում եմ, որ սոցա մի ժամանակվա տերը այժմ ժառանգներ ունենա»:

— Այս առաքակաները ես առաջարկում եմ տերությանը այն հիման վրա, ինչ հիման վրա որ գեներալները ու հնադարյան հաղվագյուտ առաքակաները հրամայած է տերությանը ներկայացնել,— ասացի:

«Այդ չոկ բան է,— պատասխանեց քաղաքապետը: Ես վստահ եմ, որ տերությունը ձեզ չի զրկիլ և այս առաքակաները, առանց ձեզ առատաձեռն վարձատրելու, իրան չի սեպհականիլ. կամ կհրամայե ձեզ վերադարձնել կամ կգնե ձեզանից յուր թանգարանի համար: Այսպես, թե այնպես՝ առ ժամանակ մի թող մնան սոքա իմ մոտ. իսկ դուք թողեք ինձ ձեր հասցեն. ես այսօր և եթ ամեն պետք եղած կարգադրությունները կանեմ: Բայց որովհետև ձեր խոսքերին նկատեցի, որ դուք չքավոր եք, ուրեմն ձեզ անչուշտ փող պետք կլինի: Ահա՛ ձեզ առժամանակ (ծոցից հանեց թղթակալը) հազար հինգ հարյուր մանեթ. իսկ ձեր դյուտը, հուսամ տասը հազար ռուբլի ավել կարժե. ուրեմն ինչ որ տերությունը կգնահատե և կնչանակե, այն անկորուստ ձեզ կհասցնեմ, վստահ եղեք»:

Եվ այսպես, ես մի րոպեի մեջ եթե ոչ հարստացա, ապա պատվական կերպով ապահովվեցա. մի խեղճ ուսանողի համար առաձեռն պատրաստ 1500 ռուբլին և ապագայի 10,000-ի հույսը ոչնչով պակաս չէ վաճառականի զուտ միլիոն մանեթից:

Սեր, փող ու չահելություն—ինչ կախարդական ու

հոգեպարար խոսքեր են, չասի՞ն այդպիսի բաղդ։

Ես ունեցա այդ բաղդը և վայելեցի ուղիղ... երեք օր։

Ե

Մյուս օր մայրաքաղաքի լրագրներուն սյունյակները լցված էին այս անգլի մանրամասն նկարագրություններով, իսկ հետևյալ օրը քաղաքի մեջ լուր փըռվեցավ, որ իմ ծանոթի հնավաճառը յուր խանութին վերնատանումը վկին չվան ճգել ու կախվել է։ Բայց թաղնենք այս միջանկյալ մանրամասնություններն ու պատանք վեպի գլխավոր առարկային։

Քաղաքապետին թողած խոհուն կառք բռնեցի և ուղիղ գնացի Милютинский ասված նախարարաճառանոցը։ Ինչ որ աչքիս ընկավ—ապուխտներ, երշիկներ, տեսակ տեսակ պանիրներ, կոնսերվներ, դյուշես տանձեր, թեյ, սուրճ, չաքար, չոկոլաթ, պաքսիմատ ու հազար տեսակ այսպիսի ուտելու պաշար ու չոր խորտիկներ գնեցի, նորա մի մասը առտելշիկի ձեռքով Սմոլենսք փնակարանս ուղարկեցի, իսկ մյուսը հետս առած գնացի Մարիի տուն։ Ինչ մեղքս պահեմ, Ելիսեևի գինեվաճառանոցն ևս հանգիպեցա ու քանի մի չիչ շաթոքեմ, շաթո-լաֆիթ ու շամպայն գնեցի։

Մարին տրտում նստած էր. երեսը երեկվանե ավելի գունատ ու նիհար։ Հացի փշրանք անգամ չի ճաշեցի նորա սեղանի կամ չավելած գետնի վրա. թեյի կամ սուրճի, կամ առավոտվա նախաճաշիկի հետք չէր նշմարվում, թեև ժամը երկուսի մոտ էր. ակներև էր որ խեղճ աղջիկը այնքան ժամանակ դեռևս մի կտոր բան չէր դրել բերանը։ Պառավները իմ գալուց ոկսան քթերի տակ փնթփնթալ, թեև չէին համարձակվում

կռվել խոսքեր ասել. երեկվա սասան, ինչպես երեում էր, բավականին ազդել էր նոցա վրա:

— Ինքնայի՛ա, էսկո՛ւյն,— կանչեցի այն ժամանակվա զինվորականների ձայնով:

Մեր ժամանակ ուսանողները դեռևս այնպես պատվարկ չէին սոցրակարգ ժողովրդի աչքում, ինչպես որ վերջերը եղան. ուսանողը յուր եռանկյունիով, սուրով ու ցոլուն կոճակներով հարգանք էր ազդում խաժամուժին ու նորընտիր անփորձ զինվորներին, և այս վերջինները մինչև զինվորական պատիվ էին տալիս մեզ, որից մեր սիրտը մի մատ եղ էր կապում, և այդ մտանավանդ այն ժամանակ, երբ մեզ, փողոցներումը զբոսնելիս, ուղեկից էին կաբ-կարող բաբեկամուհիներս: Է՛հ, ջահելություն է՛լի:

Երբոր ուսելեղեններէն հոտը առավ Մարին, կարծես թե յուր խորունկ թմրութենեն սթափեցավ. տեսնում էի, ինչպես լեղձ ապչիկը, թևև թաքուն, բայց թուքերը անդադար կուլ էր տալիս. հայտնի նշան էր նորա սաստիկ անօթությանն ու ղրղռված ախորժակին...

Վատ բան է քաղցածությունը, ասաված թշնամիկս չի տա: Պետերբուրգի չքավոր աղջիկներու կես մասը զոհ է դնում քաղցի բռնական հանդարտեցնելուն, հավատացնում եմ ձեզ: Պետերբուրգի քաղցը մի ուրիշ, ճնշող, հալումաշ անող, տակավ առ տակավ սպանող զորություն ունի: Այդ ես փորձով գիտեմ...

Հայե՛ր, հայե՛ր, մինչև արթուն աչքով հսկեցեք ձեր արևակից աղքատ ուսանողների վրա, որոնց բաղդը ձգել է Պետերբուրգ. մի խարվիք նոցա վայելուչ արտաքինեն ու նոցա ինքնագոհությամբ լի խոսքերեն. առաջինը նոցա ծաղիկ հասակի նշանն է, իսկ երկրորդը՝ նոցա ազնիվ հպարտության... Եթե ինձ հարցնեք, ես կասեմ որ ամեն հայի վրա սուրբ պարտավորություն կա յուր համազոր տուրքը (հայը ի բնե ուղղամած է, այդ աներկբայելի է) այս աստիճաններու վրա բաժանել. յուր առաջին օգնությունը պիտի հաս-

ցնեն նա ուսանողներին, երկրորդը՝ ազգային դործերու, եռրորդը՝ եկեղեցիին, իսկ չորրորդը՝ տեղական չքաւորներուն, աղքատներուն և յուր տնանկ ազգականներուն: Ուսանողի ամենամօքրիկ պիտույք լցնելը սուրբ պարտք է ամեն մի կուշտ-փոր հայի... և ինչպես կարելի է անխնամ, երեսի վրա—ձգած թողնել մեր ազդուժյան ծաղիկները, մեր ամենաագնիվ կրտսեր եղբայրներուն, որոնք մի օր պիտի լինին մեր ազգի համար այն, ինչ որ էմարդապատան լինել ոչ ոսկիի մէջ խեղդամած վաճառականները, ոչ պատուախաչերով ծանրաբեռնած մեծաւորները և ոչ բերանները լի աստուածային օրհնութիյամբ հոգևորականները: Հայոց ուսանողութիյունը կամաւոր ողջակեզի դառն է ազգային սեղանի համար:

Դուէ, դուէ և չատ դուէ խեղճ հայ ուսանողներին:

Հարան Թորթաւել՝ չերա չերա կարեցի փափուկ հայը, ապուխտը, պանիրը, երշիկը, պատրաստեցի մյուս խորտիկները ու համեցիք արի Մարիին: «Մինչև ինքնաեռի եփ գալը, այս դինիից մի փոքր խմեցիք», ասացի ու բացի լաֆիթի չիչը ու երկու բաժակ փրփրացուցի: ու ինքս էլ սկսա ոչ թե ուտել, այլ խժռել:

Երիտասարդի ուտելու մէջն անգամ բանաստեղծութիյուն կա, ինչպես և նորա ամեն մի խոսքի, դործքի ու չարժմունքի մէջ, եթե միայն նա երիտասարդ է և ոչ սեվամաղ ծերուկ:

Զառամա՛ծ հայ-կրեսոս, միլիոնիդ ո՞ր մասը կուտայիր, կյանքիդ այդ վերջին րոպեները էլի դեթ մի անգամ ուսանողի ախորժակով ուտելու, խմելու... Արդյոք—չատ անգամ մտքիցս անցնում է—այդ անպատուղ և անգոր նախանձը չէ՞, որ քու սիրտը քար է դարձնում ուսանողին օդնութիյան հասնելու համար: Ծոսք չունիմ, ժամանակ ժամանակ դու չինում ես եկեղեցի, դու կանդնեցնում ես դպրոցի չենք, դու անդամ ուրց-

---

[1] Մի ակնթարթում:

ներին ապաստանարան եմ տալիս. այդ չատ գովելի առաքինություն է. բայց դու այն էլ չատ լավ գիտես, որ ոչ քարաշեն եկեղեցին, ոչ քարաշեն գերեզմանը և ոչ քարաշեն անկենդանները ունի սուբ վերսկիզբ առաքիներ, երկաթ մարեցնող ատամներ ու աշխարքի ամեն բերկրություններ կուլ տվող ախորժակ: Այսուամենայնիվ, ես քու առջև ծնկաչոք կանդնած, աղաչում եմ քեզ, որ հայ ծերունի կրեսոս, խղճա խեղճ հայ ուսանողի վրա.—դու էլ մի օր երիտասարդ ես եղել, դոնե քու ամենաթանկագին օրերը հիշե և հանուն նոցա փարատե սրտեղ այդ անաքանդ նախանձը: Ես քեզ չատ լավ ճանաչում եմ, դու ավելի նախանձոտ ես, քան թե ժլատ:

Ասացի դարձնում եմ դեպի մեզ՝ Մարին և ինձ:

Ներա—չերտի եռևե կուլ էին դնում հազար տեսակ հանաքներով ու ծիծաղներով այն թանկագին խորտիկները պաշարքը, որոնց հինգ մասերը աշխարհիս, երանց բոլոր արվեստի ուժը զորձ դներով, պատրաստել էին մայրաքաղաքների ատամնաբուժի և ապրանքած ատամոքսով մեծատուններէ համար: «Տեր աստված, տեր աստված, ատում էի անդադար մտքիս մեջ՝ ո՞ւմ ես տվել փլավը և ո՞ւմ՝ խշտահը: Երեկվա թաղումը, այսօրվա քաղցածությունը, վաղվա անտերունչ վիճակը—ամենը ամենը մոռացել էր Մարին. մեկ պանրի կտոր էր ծամում, մեկ երշիկ, մեկ դյուշես, մեկ շաթո-իքեմ էր խմում, մեկ նորից պանիր էր ատամ բերանը, և այսպես, անվերջանալի ծամել, կուլ տալ, ծիծաղել, շաղակրատել ու խմել:

Ես՝ ինձ աղջիկ, երևի օրինավոր ծամ էր պահել ոչ միայն երեկ և այսօր, այլև չատ օրեր առանից առաջ:

Ախ, դարչելի աղքատություն, թեև, ինչպես ատում են, դու մոլություն չես, բայց ամեն մոլությունների մայրն ես:

Մինչ այս, մինչ այն, խլխլալի ինքնաեռն էլ ներս եկավ և պատվելի խաշունի նման բազմեցավ սեղանի

վրա: «Թե՞ կխմեք, թե սուրճ», հարցրի:— Սուրճ եթե կարելի է, ասաց Մարին:

Իմ գնած պաշարեղենների մեջ պատրաստի սուրճ (բոված ու աղած) ևս կար. պակաս էր միայն սերը, որ խնդուն բերել ավի քավթառին:

Հոտավետ տաք սուրճն էլ որ խլշտեցինք՝ էլ մեր քեֆին քեֆ չէր հասնիլ:

Հանկարծ աչքս ձգեցի դաշնամուրի վրա: «Մա՛րի, ասացի, չէի՞ք արդյոք հոժարիլ ինձ համար մի բան նվագելու, թեև»... ուզում էի ասել քո սուդի օրն է, բայց չասացի:

— Ինչու չէ, մեծավ ուրախությամբ,— ասաց ու նստավ դաշնամուրի առջև: Դո՞ւք սիրում եք Մոցարթի հորինվածքը, ավելցուց նա:

«Թեև երաժշտություն չգիտեմ, բայց շատ սիրում եմ նվագները, մանավանդ դեմմանական, իսկ Մոցարթը, Բեթհովենը, Մենդելսոնը իմ ասավածությունն են. ես ուրիշ ոչինչ բարեպաշտ ժամ չեմ ճանաչում, բացի այդ մեծ մարդոց հորինվածքի ականջ դնելեն»:

Մարին սկսավ անգիր նվագել Մոցարթի աշխարհահռչակ Requiem–ը[1] և երբ որ հասավ չորրորդ դվուն, Rex tremendae majestatis–ին, արդեն լինքս ինձի մոռացա. չգիտեմ՝ չըջապատող հանգամա՞նքն էր պատճառը, թե՞ այն տխուր նվագը չարագրողի հանճարը, թե Մարիի արվեստը (պետք է ասել, որ հիանալի ածում էր), չգիտեմ, չգիտեմ, միայն այս դիտեմ, որ իմ սիրահարության պատչաճավոր սահմանեն անցավ, և եթե այլևս քանի մի րոպե այդպես մնար՝ անշուշտ խելքս կթռցնեի: Նստած տեղիցս, ասես օձի խայթած, վեր թռա, վազեցի ընկա Մարիի ոտներին ու խնդրագրի նման սկսա նորա ծնկները պագնել: Մարին ոչ զարմացավ և ոչ վիրավորվեցավ, այլ հանդարտ ձեռքը

---

[1] Ռեկվիեմ– թաղման երաժշտություն, մահերգ. Մոցարտի վերջին գլուխ-գործոցը:

վեր առավ դաշնամուրի քլավիշներին ու սկսավ մազերս յուր մատերի վրա ոլորել ու դեպի ինձ կռանալով՝ քանի-քանի անգամ պատճեց դլուխս: Աչքս բարձրացուցի ու տեսա որ՝ աչքերից թեև արտասունք էր գալիս, բայց երջանկութեյան ժպիտը երեսին խաղում էր: Այդպես միևնույն ժամանակ համ աչքը արտասունք, համ երեսը ժպիտ կարող է ունենալ միայն բաղդավոր մատաղահաս մայրը յուր անդրանիկի օրորոցի առջև:

Ա՛խ, ինչո՞ւ ինձ տված չէ Ռաֆայելի վրձինը. ես դիտեի, ինչպես պետք էր նկարել կնկա երջանկութեյունը այս անցավոր կյանքումը:

«Մարի, ասացի, այնպես չէ՞, որ ես քունն եմ և դու իմը. այնպես չէ՞, որ այս Requiem–ը քու արտասութեյան վերջին արտահայտութեյունն է, և դու այսուհետև ինձ հետ ուրախ ու բաղդավոր կլինես»:

— Ա՛խ, ինչպես կուզեի, ասած-լիներ, ասաց նա և խորունկ հեկեկաց:

«Մարի, ի՞նչ ասել է այդ «կուզեին». մի՞թե ուզելը և կատարելը քու ձեռքումը չէ. մի՞թե դու ազատ չես սիրել որին և համանես»:

Պատասխանելու տեղ Մարին նորից հեկեկաց ու երեսը չուռ տվեց:

Այս անգամ նա լաչիս էր:

Ես կարծեցի թե մոր սուգը տակավին չարունակվում է. բայց հետո իմացա, որ սխալված էի:

Մ'ին էլ հանկարծ տեղն եկավ, հուսահատ չարժմունքով եկավ փաթաթվեցավ ինձ ու ամուր ճանկով ասաց.— ինչ լինելու է՝ թող լինի, բայց այժմ բաղդատողութ ինձ, ինչպես որ գիտես: Ասաց ու չուրթը չուրթիս կպցուց ու էլ պոկ չէր գալիս:

Ջարմացա. այդ չափազանց էր: Կայծակի արագութեյամբ եռաև եռաև երկու միրք ծնան մեջս. «կամ այս աղջիկն այն չէ, ինչ որ ես սպասում էի, կամ դինին տողել է նորա ներդերու վրա»: Թե այս լիներ և թե այն՝ երկուսն էլ ինձ համար մխիթարական չէին:

Երկու հարյուր տարվա մեռնողի թողած հարըս-

տուրքյունը սեպհականել չուզեցողը կարո՞ղ էր գողանալ մի անմեղ միամիտ աղջկա բարոյական դանդը:

Մարին դեռևս դրկիս մեջ էր, կամ տասվել ճիշդ ասեմ՝ ես նորա դրկի մեջ էի. գլուխը ուսիս վրա դրած, աղավնիի նման մրմնջում էր ականջիս. «Մ'ի, Մ'իքայել, որքան սիրում եմ ես քեզ, և որքան ես անարժան եմ քո անկեղծ ու ջերմ սիրուն... ախ, իմ պանձա (Schätzchen) ինչո՞ւ մենք միմյանց հանդիպեցանք... դու ինձ կսպանես...»:

Այս խոսքերը ինձ բոլորովին չհկլացուցին: Այս անդադար դրկախառնուքյունը, այս սիրո բաղձանքը, այս արտասուքը, այս երկյուղը—ամենևին իրար հետ չէին չաղկապվում. այդ մեջտեղին այդ ամենը ինձ առեղծանելիք էր երևում, որի լուծմունքը երբոր գար՝ բանը բանից արդեն անցել էր:

«Մ'իքայե'լ,— ասաց,— դիտե՞ս արդյոք որքան ես քեզ սիրեցի երեկ և որքան սիրում եմ այսօր և ինչպես դժվար է ինձ կամավորապես քեզ անձնատուր լինելս. բայց դու իմ հոժարությանը մի սպասիլ, դու ինձ դողացի'ր, դու ինձ հափշտակի'ր, փախցո'ւր ինձ հեռու հեռու, ոտնակոխ արա' ինձ, ջնջի ինձ, բայց դողացի'ր, հասկանո՞ւմ ես, դողացի'ր...

Ասում էր ու պաղնում էր:

Բոլոր ասածներեն ես ոչինչ չի հասկացա, ես առայել համոզվեցա առայժմ ենթադրությանս մեջ թե՝ այս ամենը դինիի ազդեցությունն է երկար մինոց պատպատած աստամոքսի վրա:

Ինչ եք պահանջում մի երիտասարդե, որ մանկական խաղերեն, դպրոցի դասերեն ու համալսարանի դասախոսներեն ու դասագրքերեն զատ ոչինչ տեսած չէր կյանքումը: Կյանքի փորձը երբեք մտքին ու աչյուն չդարձավ իմ մեջ: Ինձ պես երեխա բնավորությամբ երիտասարդ հազիվ թե կգտնվեր: Ճանաչողները ասում են թե՝ ես այժմ էլ նույնն եմ մնացել, ինչ որ էի շատ ժամանակ առաջ, այդ՝ Վայելչյան տոհմի թերությունը կամ արժանավորությունն է,—ա'յը կու-

դեք՝ հասկացեք: Կա մարդ, որ ասես թե, մորը սրդանդեն փորձառու, բանբարակ է ծնում. կա և մարդ, որ մինչև գերեզմանի դուռը անփորձ ու չի խրատված է հասնում, ես ու իմ պապերը, ինչպես երեվում է, երկրորդ դասակարգին ենք վերաբերվում:

— Մարի,— ասացի,— իմ դեպի քեզ ունեցած սիրին դու երկրպագել չես կարող. իսկ քու դեպի ինձ ունեցածին ես համոզված եմ. ես ոչ թե քեզ կամ քու պատիվը, այլև քու մի թելիկ մազը զոդանալու հաճար չեմ, դու ոչ իմ սիրուհին, այլ իմ պատվավոր, օրինավոր ամուսինը կլինես այս օրեն բռնած տասն օր հետո: Այժմ իմ խնդիրս քեզ այս է, որ դու այս օրվանեն սկսես նախապատրաստվելու այն ծանրակշիռ դերին, որն վրադ պիտի առնուս թե ինչպես կին և թե ինչպես... ասացի ու խոսքս չկարողացա վերջացնել. երկուսս էլ աչքներս խոնարհեցրինք ու խնդրի նման կարմրեցանք:

«Մարի, Մարգարիտ, որքան ես քեզ սիրում եմ,— ասաց նա՝ բոլոր խոսքիս պատասխան.— ի՞նչպես լավ կլիներ, եթե դու ինձ բաղդավորացնելիր, չէ՞ որ ինձ քու ձեռքեն խլելին մարդիկ. բայց ես վախենում եմ, որ մենք միմյանցմե անմխիթար կբաժանվինք»:

— Մխայն մահը կբաժանե մեզ այսուհետև, իսկ մարդիկ ու հանգամանք՝ ոչ երբեք,— պատասխանեցի ես:

«Ես էլ այդպես եմ կարծում»,— ասաց Մարին ժպտալով, բայց այդ ժպիտի մեջից դուրս ցոլանում էր անմեկնելի հոգեկան վիշտ:

— Մարի՛— ասացի—թեև այս բոլորիս ես հարուստ եմ և շատ հարուստ, բայց դու պատրա՞ստ ես արդյոք ինձ հետ տանել անհաղորդություն, թշվառություն, չքավորություն և շատ ուրիշ կյանքի փորձանքներ:

«Երանի չէ՞ր լինել, որ քեզ հետ կյանքս անցնեի միշտ, թեկուզ խավարչին բանտի մեջ, թեկուզ դժոխքի անձեջ կրակում»:

Պատասխանի տեղ դրկեցի նորան, և այս անգամ երկար ժամանակ իրար դրկից դուրս չեկանք:

Հոդևևան գնացամները, որ այս կարճ միջոցումը մին մինի քամակից հաճախեցան, սաստիկ հոդնեցուցին թե հոգիս և թե մարմինս: Մի վոքը հանգստություն էր ինձ պետք, ապա թե ոչ վախենում էի, որ կհիվանդանամ, մանավանդ որ՝ ժամանակ ժամանակ մարմինս առանց մի պատճառի սկսում էր սարսել, ասես թե տենդը վրաս էր հասնում: Առի Մարիի ձեռքը, քանի-քանի անգամ պինդ-պինդ պադի, նա էլ դըրկեց ինձ, մեկ վիրս էր պադնում, մեկ դլուխս, մեկ աչքերս ու մեկ պատնդներս, ու անդադար բարեմաղթություններ էր տալիս ինձ, ինչպես որ մայրը յուր վոքրիկ որդուն ճանապարհ ձգելիս: Մարին չափազանց բարեպաշտ աղջիկ էր: Սրտիս մեջ դոհ էի, որ եթե առաջած մի օր մեր ամուսնությունը օրհնե, նա իմ պավակներին իսկական կրոնի և ոչ թե անուհատության, կամ մոլեռանդության և կամ անկրոնության մեջ կըմեծացնե:

Գոհ սրտով տուն վերադարձա:

Ջ.

Ժամը վեցն էր երեկոյան: Հովհաննեսը վաղուց վերադարձել էր ճեմարանեն: Տեսնատան, Միքայել (Մեխակ) Ամատունին, Նիկոլայ, Տրիֆանովը, Հարություն Ղուզանյանը, Գաբրիել Ա. և շատ ուրիշները ժողովված քեֆ էին արել իմ ուղարկած թանկագին պաշարեղեններով, որ իմ կարծիքով դոնե մի ամբողջ շարաթ պիտի բավականանար մեզ, այն ինչ այժմ ապրանքի ոսկորը, երշիկների մաշկը, պանիրների կծեպը ու սարդինկաների թիթեղե ամաններն էին մնացել: Հայհոյ երանց: Լավ ախորժակով երխտասարդներ էինք ամենքս, մեղք է ասելը:

Հինգ հարյուր ոսկիի ու մյուս թանկագին իրեղենների պատմությունը նոքա վաղուց արդեն լսել էին դռնապանեն և տան ուրիշ բնակիչներեն, այնպես որ՝

ես նոցա ուրիշ ոչինչ նոր բան չի պատմեի, բացի քաղաքաղեաից փող և ուրիշ փողի էլ խոստմունք ըստանալես: Ամենքը անկեղծորեն ուրախ էին մանավանդ որ՝ ամենքն էլ վստահ էին, որ հավատար չափով պետի բաժանեի նոցա մեջ, եթե ոչ մայր դուսբը, գեթ փողով ձեռք բերված ամեն կերպ վայելչությունը: Եթանի՛ աչն ժամանակին, երբ ամենիս դրպանը ու քսակը հատաբակաց էր: Տեսնատայի ուրախությունը ուրախություն չէր հասնիլ:

«Մատաղ, Մելիակ Ջան,— ասաց նա,— կհամաձա՞ս, էս քրիստոսը վկա, որ իմ սիրտը քանի վախտա, մաշում էր անըմ, որ դուռ նըպարեմեննա՝ մեկ փանոսկ—պատին պեռք ա կպնես, տեսա՞ր—կատարվավ: Ամբը գիտե՛ս, մատաղ, ինչե՞ր չի ավազ ատամած ա հայի ատամածը, զուրբան դնամ նրա գրբին, թե որ ատամած տարու իլի՝ դուռից չէ՛ որ՝ փանջարայից էլ կուտ, հապա մատաղ Ջան: Ամբը էս բանին դուռ ի՞նչ ես ասըմ, ես էլ էսօր ինձ համար գլուխս քաշ արած՝ գնըմ էիմ. մին էլ բիրդան, հորտեղան-հորտեղ մի օմքին ծուռնի մուռնի գնըմ ա. վերեից վարավուրդ եմ անըմ՝ փիս խոսած ա: Մի խոքիս մեջ ասացիմ՝ «Հը՛ Ալեքսան, նե գելա՛յ»[2]: Էնա, հնացիմ, աղբեր, անճեն ձեռքս չիրը գիրամ, մի լավ բաղդադի աղլուխ դուրս հանամ, փայամ չիրս: Մարդը բանից բեխտար մնաց: Հետևիան, մեկել չիրը բաց թողամ ձեռքս,— էնտեղից էլ դուրս հանամ պռատմանեն. էն էլ գիրամ չիրս: Հետևիամ, մատաղ-Ջան, գնացիմ հետը թուտա սյուտաս, քուչի քուչի անելու բառեկամացամ, տարամ պռատևնոց. լավ հանդի փիվեն ու արաղը գիրամ քիթին,— ողրմելիի աչքերը չարդող բարձրացան. էնա՝ ձեռքս տարամ ժիլիտի չիրը, տահաթը ու ցեղոչկեն աղամարի պլոկեցիմ:— Բաս դուռ ի՞նչ ես կարծըմ: Էս օրվա

---

1 Անպայման (непременно):

2 Մի հորանջիր, ձեռքից մի փախցնիր (не зевай):

3 Դես ու դեն (туда сюда):

դատմա քիչ-քիչ որ ասես՝ հիասուն կոլոլ կիլլի: Խոպես ա, քու մատաղըդ գլնամ, ասծու բանը: Եվոր տալու կիլի՝ կտա դուռից չէ որ, վանչարից էլ կտա... Ամա որ քմանայիր, ասրահի տեղերից որ վերկացամ՝ ինչպե՞ս տաք-տաք ասծու աղոթք եմ արել քի՝ տեր աստված, դու դիտես... տասած էլ աղոթքիս դորա մուրազը բացավ... Բա՛ս, մատաղ-չան, էն կոլոշնելի բանը ինչալե՞ս կիլլի, գրավից կհանե՞ս, թե՞ կմնա էնպես»:

— Նա քեզ երեք մանեթ, ասացի, ինչ որ պետք ա՝ տուր չհուդին. խուրդան ու կոլոշները քի՛ պա:

Հետո բարեկամներիս մանրամասնաբար պատմեցի թե՛ երեկվա և թե՛ այսօրվա պլուխս եկած բոլոր անցքերը: Ոչ մինը չհավանեցավ իմ դիտավորությանը՝ մի որը և անծանոթ օտարուհիի հետ պատկիրու. ամենքը դուշակում էին ինձ եթե ոչ անբաղդություն, գեթ մեծամեծ անհաջողություններ և կյանքի ամեն վայելքներե զրկանք: Ամենից ավելի Տեսնատան էր տրտում ու անթախական. «բա Սեսաֆիմե՞ն, բա Կատի՞ն, և այլն. ի՞նչ կիլլի նրանց հալը»: Բայց ողորմելին չգիտեր, որ Մարթի բարեկամությունը իմ բարոյական մկրտությունն էր երիտասարդական ամեն խենթություններս: Անցյալս ինձ արդեն երևում էր մի գարշելի եղած, որի հիշատակը ամեն կերպ աշխատում էի արմատախիլ անել մտքիս: Մինչև այժմ չգիտեմ՝ լավ արի, թե վատ, բայց բայի Հովհաննեսեան ոչ ոքի չխոստացա և ամենքի խնդիրը բացի ի բաց մերժեցի Մարթի հետ ծանոթացնելու. ինձ այնպես էր երևում, որ այս խառնափնդոր բարոյականությամբ երիտասարդների հայացքը անդամ սլիտի արատեր Մարթի հրեշտակային հոգին:

Բարեկամներս չհասկացան իմ իսկական կարծիքը այս բանի մասին և առաջարկեցին իմ վախը կամ զգուշությունը՝ հաջողուության: Ես չատ ուրախացա, որ այդպիսով վերջացավ նոցա կարծիքը իմ մասին:

———

Նույն երեկոյին քաղաքապետն հրավեր ստացա մյուս օր առավոտյան ժամը 9-ին նորա գրասենյակը ներկայանալուս: Այն գիշեր ես և Հովհաննեսը գրեթե քուն չեղանք: Հովհաննեսն էլ այդ միջոցին սիրահարվել էր մի գաղղիացի աղջիկ վրա, որի անունը նմանապես Սարի էր, որի ծնողքը, մի չնչին պատճառով, չէին հաժարում այդ երկու սիրահարներին իրար հետ միանալու, և այդ չնչին պատճառն էր՝ թե Մարիի և թե Հովհաննեսի փող չունենալը:

Այդ գիշեր ես խոստացա Հովհաննեսին՝ թե՛ մոտս դնելած և թե՛ առանալու փողես, որքան որ պետք էր, մոտն հանել, որ նորա պսակի բանը դյուրացնեմ և ուպաղաղ ապրուստը ապահովացնեմ: Եվ շատ ուրիշ կյանքի ծրագրութիւններ արինք և օդային ամրոցներ չինեցինք ալ բոլորովին ուրախ գիշերը: Աքաղաղները արդեն երրորդ անգամ խոսել էին, որ մեր աչքերի կոպքերն էլ սկսան ծանրանալ և մենք կամաց-կամաց նախ նիրհեցանք և ապա անուշ ու խոր քնեցանք ու ոսկի երազները սկսան թռչտել մեր գլուխներու վրայով:

Առավոտվա 8-ը ժամն էր, որ Հովհաննեսը տեղեկից վեր թռավ, սկսավ պինդ-պինդ ինձ զարթեցնել, տեղով «Միքայե՛լ, Միքայե՛լ, վե՛ր կաց, վե՛ր կաց, նայե՛ չմոռանաս. քաղաքապետը քեզ սպասում է»:

Հապճեպով տեղես ելա. խչխչալի ինքնաեռը ներս բերին, հոտոտ սուրճը, պինդ սերը, շաքարոտ պաքսիմատը, որ վաղուց մեր ճաշարանը (կամ բանդը) մոտած չէր, նորից հազար ու մեկ նյութ ավին մեզ՝ մեր այսուհետև վարելու ապագա փափուկ և երջանիկ կյանքին: Սուրճը ամարտելից հետ, ես դնացի քաղաքապետի մոտ, իսկ Հովհաննեսը դնաց ճեմարան:

Քաղաքապետը ինձ հայտնեց, որ իմ գործ սուարկանների համար ինձ նշանակած է 25,000 մանեթ (մասնագետները այդպես էին դնահատել), և այդ դումարը ես կարող եմ, երբ և կամենամ, սառնալ տերութեան դանձարանեն. իսկ սուարկանները, ինչպես հազ-

վաղյուսա իրեղենք, սիրտ սահվին թանգարանների մեջ։ Թղթերից երեվել է, որ գրասեղանի տերը բոլոր կյանքը ամուրի է մնացել և յուր կենդանության ժամանակ ևս ազգականներ ունեցած չէ։ Ինչպես որ ասում են՝ չոր գլուխ մարդ է եղել, նորա պարապմունքը վաչխատություն է եղել և այլն։ Ուրեմն այդ բոլոր հարբասությունը, ըստ ամենայն իրավանց և արդարության, իմ լիակատար սեպհականությունն էր։

Քանի որ քաղաքապետը այս մանրամասնությունքը պատմում էր ինձ, առենադպիրը բերեց մի պաշտոնական թուղթ, որի տակ քաղաքապետը սատարդրեց յուր անունը և ինձ տվավ, ասելով. «Այս թուղթը կըտանեք տերության դանձարան և կտառնաք ձեզ պատկանած քանհինգ հազարը (ի հարկե, առանց այն հազար հինգհարյուր մանեթին, որն երեկվա օրը ստացել էիք ինձանից)։

Սակի թուղթն ու խակուլն գնացի դանձարան, ստացա բոլոր փողը ու տարի պահ տվի լոմբայատուն և ստացա անդորրագիր։

Այս ամենը քանի մի ժամու բան էր։ Ճաշելու համար դեռ ևս շատ կանուխ էր։ Գնացի, տան եկա խանութները, դնեցի զանազան կերպասներ, կտավներ և այլ կանանց հարկավոր բաներ, ինչպես՝ գլխարկ, թևկնոց, մուշտակ և այլն։ Մսխեցի մոտ 1000 մանեթ, և ահագին կապոցներով չոպարեցի Մարիի տուն։ Ճանապարհին չի մոռացա մի դերձակուհի հանդիպել, որին հայտնելով Մարիի հասցեն, պատվիրեցի անհապաղ գալ այնտեղ։ Ներս որ մտա, Մարին երեկվանի ավելի գունատ էր։

«Բարով, Մարի, ասացի, ինչպե՞ս է առողջությունդ. ինչո՞ւ այդպես դունատ ես. մի՞թե անհանգիստ անցուդարձ դիչերս»։

Պատասխանելու տեղ Մարին վախվխվելով վեր կաց ու ձեզ ժամանակ համբուրում էր գլուխս, աչքս, ճակատս, ու հետո սկսավ ողբագրմ լալ։

— Մարի՛, Մարի՛, ի՞նչ եղավ քեզ, ի՞նչ,— հարցուցի։

Մարին ոչինչ պատասխան չի ավեց: Ներսիսյան չարժմունքով պինդ բռնեց ձեռքս, նստեցուց աթոռի վրա ու ինքն էլ նստավ դրկումս: Աբրյունը խոհեց դեպ խս:

— Ի՞նչ է այդ արածդ,— ասացի. Մարի՛, Մարի՛, խելքդ վրա՞դ է:

«Ապա ինչո՞ւ ինձ չես փախցնում, չես դողանում... ես քեզ ասացի և էլի կասեմ՝ բռնի խլած, հափշտակած՝ ես քուկդ եմ, իսկ իմ կամքին հողած՝ երկրպագելի է, որ երևիցեն քեզ պատահնիմ: Ասելը չունես դու, Մի՛քայել, հասկացի՛ր ինձ. դորանից ավել ես քեզ ոչինչ ասել չեմ կարող. առանց նորան էլ ես քեզ ավելի ասացի, քան կարելի էր. իմ քեզ հետ խոսելը, քեզ հետ բարեկամանալս՝ արդեն մեծ ուխտադրժություն էր իմ կողմանե. իսկ այս սերը, որ ծագեցավ մեր մեջ, արդեն ինձ հավասարացնում է ամենա... Մի՛քայի՛լ, Մի՛քայի՛լ, դու ինձ չես սիրում...

— Մարի՛, մի՛թե երկրպագում ես իմ սիրուն... ինչո՞վ ապացուցանեմ քեզ, որ սիրում եմ:

«Կատարե ինդիրս»:

— Ասա տեսնեմ՝ ի՞նչ է քու ինդիրդ, ինչո՞ւ քաշկռնում ես ինձանից:

«Ինձ դողացիր, ինձ հափշտակե, ինձ փախցուր. քեզ վրաս, մրե ինձ, որ մի ուրիշը տեսնի այդպես կեղտոտած՝ ինձ արհամարհե, որ ես քեզ մնամ»:

— Մարի՛, ես քեզ չատ եմ սիրում, որ կարող լինեմ այդպիսի ցածուքյուն կատարել... ես չեմ ուզում, որ առուծո սեղանի առջև կանգնած ժամանակդ ամաչես ու կարմրիս. ես չեմ ուզում որ՝ երբ և իցե խղճդ տանջե քեզ. ես չեմ ուզում, վերջապես, որ քու ամուսինը քու առջև չարագործ լինի:

«Ջի՛, Մի՛քայել, եթե դու ինձ սիրելիր, ինձ սիրելու համար չարագործություն ևս հանձդ կառնելիր, թեև իմ առջարկությանդ մեջ ոչ չարագործություն կա և ոչ ամոթալի գործ, դու միայն հրաժարվում ես իմ մեղքի կեսը վրադ առնելու. մեր նախահայր Ադամը,

ինչպես երեւում է, ավելի էր սիրում Եվային, քան թե դու ինձ...»:

— Մարի՛, մի՞թե տասը, իննը, յոթը, վերջապես երեք օր ուժ չունես...

«Ա՛խ,— ասաց Մարին. տրանից ավելի սրատեսություն դու ինձանից մի սպասել... Այսուամենայնիվ ասա, որ քո «հոգեւորը» համփին ուշանա մինչեւ մեր պատվի կատարվելը. ասուած ասա, որ իմ չարագուշակ նախազգացմունքը չկատարվին. այն ժամանակ ես բոլորովին բավական կմնամ և ուրախ կլինեմ, որ ոչ դու քո խոսքին, այլ ես քոնիին հետեվեցա. ինչ ասել կուզե, որ խաղաղ, ուրախ, սուրբ պատիվը մեծ առհասարաչյա է երջանկի և անգորը ամուսնական կյանքի համար... բայց եթե, ասուած հետի անե...»:

Այսպես ու ասպսիկ հոգեւոնկ մտածմունքի մեջ ընկղմեցավ խեղճ ալլիկը:

— Մարի՛,— ասպսի, երկար ժամանակ սպասելեն հետ, ես արդեն սկսում եմ կասկածել, որ քու կյանքի մեջ մի սոսկալի բան կա, որն դու ուշի ուշով թաքցնում ես ինձանից... ի՞նչ է այդ գաղտնիքը, ասա ինձ, ես քու ոտքի հողը լինիմ:

«Անհնարին է այդ, սի՛րելական Միքայել, եթե ասեմ, իմացիր որ, ինքս պիտի հրաժարեմ քեզ իմ ներկայությենեն. բայց քեզանից հեռանալու, առանց քեզ ապրելու արդեն ուժ չի կա մեջս: Միքայե՛լ, հավատա ինձ, ես պարկեշտ, ամոթխած ու կույս եմ. բայց... միայն հանգանքը կարող է ինձ քեզ հետ միավորել: Միքայե՛լ-ջան, մի՞թե ես մեղավոր եմ, որ քեզ սիրեցի. մի՞թե չատ ասրի առաջ ես դիտեի, որ դու կաս աշխարհիս երեսին. մի՞թե իմ ծնողքը գիտեին, որ նոցա դուստրը այնպես հզոր սիրով պիտի սիրե մի անծանոթի, օտարազգի երիտասարդի, որվնիսի սիրով, դուրե, աշխարքիս ասեղծմանեն ի վեր ոչ մի աղջիկ սիրած չէ: Լսե՛ ու հասկացիր, Միքայե՛լ. ես քեզ սիրում եմ, ես քեզ պես ասպես բնավորությունով երիտասարդ դեռևս տեսած չեմ. եթե տեսած լինեի, ինչ

ասել կուզե որ, ես այստեղ չէի լինել այս րոպեին— կարծեմ որ՝ այս խոսքերս դու չողոքարկություն չես համարում—ես քեզ հավանեցա, սիրեցի և ուզում եմ առաչիա քուկդ լինել, բայց... հոժար կամքով ես քեզ ընտրել չեմ կարող. դու պետք ե իմ հոժարությունս ոտնակոխ անես. իմ ազատ կամքը պիտի բռնաբարես, ես ամոթես կարմրում եմ, բայց ինչ անեմ, հարկավ պետք ե հետդ սրտաբաց լինիմ, խոսքս էլի կրկնում եմ, ինձ պիտի մրոտես, ցեխոտես որ մարդիկ արհամարհեն ինձ, որ այդ հնարով ես քու կինդ դառնամ, ապա թե ոչ... ես քեզ ավել ոչինչ չեմ ասել, ու մեկնումեկյուն դու լինձմեն մի ազատել: Իսկ եթե երբևիցե դաղանիքը իմացար, այն ժամանակ իմ մահվան ըոթն ես կլնես»:

— Թե՞ դու նշանած ես—, ասացի, ասես թե այդ րոպեին մի մարգարեական ոգի իջավ իմ վրա:

«Ինչ որ քեզ ասացի՝ այնքանը բավական ե. ավել ոչինչ չես իմանալ ինձանից. մանավանդ որ՝ ես կխընդրեի քեզ, որ իմ անցյալի մասին հարցուփորձ չաս չանելը ինձ... մահագուշակ մարքերը պաշարել են ինձ... ա՛խ, ինչպես ես տարաբաղդ եմ...»:

Աչքս դարձուցի Մարիեին, և ինչ տեսնեմ. ճակատի վրան, ասես թե, մահու դատակնիքը խորտնկ ու պարզ դրոշմած էր: Բժիշկները ու քահանաները չաս լավ պիտեն կարդալ մարդուս երեսին այդ դաղանիքը, և հաչիվ թե տասնեն մի անգամ կվրիպին: Օրհասական մարդու աչքերի ցոլքը ու երեսի տիպարքը, ճանաչողի համար, հայտնի նշաններ ունին. ահա այդպիսի նշաններ նշմարեցի Մարիեի երեսին:

— Թող, Մարի՛, դատարկ բան ե ասածդ,— ասացի,— եկ մեր խոսակցության նյութը փոխենք... ճաչ կերե՞լ ես, թե չէ: Հապվե, երթանք Դյուսյին, մի լավ ճաչ ուտենք: Ես էլ, ի դեպ ասեմ, բավական լավ ախորժակ ունիմ: Հա՛, մոռացա քեզ ցույց տալու. նայե՛ կհավանի՞ս իմ ճաչակին և ընտրությանը:

Ասացի և առջևը դրի դնած առարկաները:

Մարթի երեսի ոչ մի դիծը չի փոխվեցավ, ուրախության ոչ մի նշան չի նշմարեցի վրան. միայն ի նշան չնորհակալության ձեռքս սեղմեց ու ծանր հոգվոց հանեց, իբր թե՝ ասել կուզեր «չատ լավ է, բայց ո՞վ պիտի վայելե»:

Առինք կառք և ուղիղ գնացինք Դյուսոյի հյուրանոցը:

Վաղուց լսել էի քառհինգ մանեթանոց ճաշերի անունը, բայց դեռևս կերած չէի. ուզեցի գոնե մի անդամ փորձել: Ներս որ մտանք, ծառան բերից կերակուրների ցուցակն ու ես նորա մեջեն ընտրելով հորինեցի ճաշը, որն եթե ասեմ, թե ինչ կերակուրներից էր բաղկացած, անշուշտ գաստրոնոմը պիտի ծիծաղե վրաս: Բոլոր պահանջած կերակուրներիս անունները միտքս չէ, հիշում եմ միայն հետևյալները՝ կրիայի թան, պաղ թառափ (осетр), փասյան խորոված, աքլորե սոուս, անանաս, և չատ ուրիշ այսպիսի հազվադյուտ (ի հարկե մայրաքաղաքի համար) բաներ, վրայից էլ շամպայն:

Ճաշի ժամանակ ես խոստացա Մարթին, որ երեք օրեն կլինի մեր պատկը, ավելի չուտ ամենևելին չէր կարելի, նախ որ՝ այդ միջոցին ես պետք է խնդիր տայի և դուրս գայի համաքաղաքանեն և գրվեի ազատ ունենդիր. երկրորդ՝ պիտի պատրաստեի թե ինձ և թե Մարթի համար հարատևիքի հարավներ. երրորդ՝ պիտի վարձեի բնակարան, զարդարեի հարկավոր կահ կարասիքով, դնեի տան գանագան պիտույք. միով բանիվ՝ Մարթին համոզվեցավ, որ հետաձգելս ոչ համաուրեհնես էր և ոչ էլ քմահաճութենես. մանավանդ իմ համաքաղաքանեն դուրս գայը ավելի համոզից նորան. եթե ինչպես ուսանող պատկվեի՝ այն ժամանակ ես կարող էի օրինազանց երեվել և անվանարկ մնալ բոլոր կյանքս,— այդ բանին ամենևին հոժար չէր նա:

«Ա՛խ, Միքայել, ինչո՞ւ այդպես ուշ, չատ կարելի է որ այդ միջոցին...» ասելու խոսքը չավարտեց:

— Ի՞նչ կարող է պատահել այդ երեք օրվա մեջ, հարցուցի ես:

«Ոչինչ, ես այնպես ասացի»: Ասաց ու նորից յուր մխիթար մտածմունքի մեջ խորասուզվեցավ, ու ժամանակից ժամանակ ինքն իրան մրմնջում էր՝ «կարելի է... դուցե ասածդ ա... արդեյը... Ախ, ափեր ասածդ, չնորհակալ եմ քեզանից, որ դու ինձ բաղդ տվիր և մեծ բաղդ տվիր. բայց ինչո՞ւ ինձ երեվում է, որ ես այդ բաղդին հասանելու չեմ»:

— Մարի, ասացի—դիտե՞ս ինչ. ես այս րոպեիս կերթամ ու կգնեմ երկու հատ մատանի, մինը՝ քեզ և մյուսը ինձ համար, կուզե՞ս մատանեփոխության ծեսը այսօրևեթ կատարենք, որ դու միտումիս (ես կարծում էի թե՝ նորա անհանգստության պատճառը սրտի վախեն էր, որ չլինի թե ես փոշմանեմ, խոսքս փոխեմ ու չի պսակվիմ վըրան): Ես չատ լավ դիտեմ որ՝ այդ մի դատարկ ծես է, աւանդ նորա էլ ասածդ կօրհնե մեր պսակը, բայց ի՞նչ կարիք ունենք արհամարհելու այդ թեկուզ դատարկ ծեսը, որն ամեն ազդ ունի և ուրախության կատարում է:

Այս որ լավ Մարին, ես առավել գունատվեցայ, նորա հեղ աչքերեն, ասես, կայծակներ թափվեցան ու մի անմեկնելի վշտալի ձայնով ասաց,— Չէ՛, չէ՛, այդ բոլորովին անհնար է. ես ուխտադրուժ լինել չեմ կարող...

— Ո՞ր ուխտադրուժությունն է քու ասածը, ի՞նչ ես ասում,— ասացի վրդովված հոգով ու կասկածս սկսավ աւուրվելու:

«Այդ մեր պսակին հետո կիմանաս... Ա՛խ ինչո՞ւ օրերը չեն անցնում րոպեի արագությամբ... կհասնի՞մ արդյոք այդ երջանիկ օրվան»:

Ու հետո, խոսքը ու ձայնը անակնկալ կերպով վախեցրով,— ասաց՝ — Միքայել-ջան, դիտե՞ս ինչ, ես ասատիկ զգայուն սիրտ ունիմ, ճանճի ատկերն անդամ չեմ կարող անտարբեր նայել. բայց այս րոպեիս չատ ու չատ կցանկայի մի մարդու մահը:

— Այդ ի՞նչ տարօրինակ կանկություն է,— ասացի։— Ձի՞մ կարող արդյոք իմանալ այդ մարդու անունը, ո՞վ է նա։

«Մեր պահակն հետ կվճռանաս»,— կարճ կարեց Մարին։

— Ինչո՞ւ այժմ չէ,— ասացի ես։

«Ինդուր համար որ մեռնել չուզեմ. էլի եմ կրկնում՝ իմ այս գաղտնիքը հենց որ իմացար—ի հարկե մեր պահակն առաջ—ես կմեռնեմ։ Հա՛, քեզ մոռացա ասելու, նայի՛, դռնե այս խնդիրս կատարե. երբոր մենք կպատկվինք, դու, եթե պետք լինի, պարտավոր ես ասելու, որ ինձ բռնի տարիր ժամ ու պահվեցար հետս, կամ՝ բանդով սպառնացար, իբր թե պարքիս համար և կամ սոցա նման մի բան պիտի հնարես։ Հա՞, կանե՞ս, սիրականս»։ Ասաց ու այնպես քնքշությամբ փաթաթվեցավ ճախս, որ ոչ թե այսպիսի անմեղ սուրթյուն, այլ ինձ երեվում էր որ՝ Բաուն Ֆոն-Մյունհհաուզենի բոլոր պատմություններուն տակ կատարվելիք անունս, իբր թե այդ ամեն սատպատիր արկածքը իմ դլխովս լինելին անցած։

Պանդոկեն որ տուն դնացինք, ժամը արդեն երեկոյան 8-ին մոտ էր։ Փոքր ինչ ժամանակեն յոլան ինքնաեռը ներս եկավ (Մարիին արդեն պատվում էին ինչպես հարուստ մարդու հարս և նորա ամենաչնչին հաճույքը սարկաբար կատարում էին)։ Նստանք թեյ խմելու. երկարորեն խոսեցանք հարսանիքի հալավների մասին, հետո՝ մեր ապագա ապրուստին, հետո... երեխաներիս դաստիարակության և, վերջապես, պահակներին պահեցինք ու մենք ինքներս պառկ ու նանի դարձանք։

Մնաս-բարեվ ժամանակ Մարին կես ծիծաղ, կես ծանր դեմքով ասաց՝ «Գիտե՞ս, Միքայել, ես ինչ ներկաեր եմ. այսուհետ Ռուսաստանամբ ժամանակը ավելի համբ է անցնում, քան թե մեր Զվիցերիայումը։

— Եթե Զվիցերիայումը լիներ մեր պահակը, կար-

ձեմ այնտեղ էլ նա կհամբացներ յուր քայլափոխերը, ասացի ես:

Ինձ Մարի. նա կարծում էր թե՝ մեկայն ինքն էր ուզում չուտ միավորվել իմ հետ, իսկ իմ հայեն խաբար չէր նա, թե ամեն մի րոպեն ինչե՞ր կարժեին ինձ համար:

Ե.

Տուն որ գնացի, մեր Հովհաննեսը ուրախ-ուրախ մեն էր գալիս սենյակի մի խորշից դեպի մյուսն ու ամեն անգամ, խորշին հասնելիս, անպատճառ թքում էր:

«Հը՞, Վանյուշ, ի՞նչ ես անում»,— ասացի:

— Ի՞նչ անեմ, ման եմ գալիս ինձ համար: Դո՞ւ ինչ ես անում, դեռ չի կշտացա՞ր Մարիով պղտոնական սերովը: Ամբողջ օրը սրտե՞դ անցկացրիր:

«Նախ ես գնացի քաղաքապետին»...

— Հա, հա մոռացա հարցնելու՝ քաղաքապետին գնացի՞ր, ի՞նչ պատասխան ստացար:

«Ես էլ քեզ էն էի ուզում ասել, դու խոսքս կարեցրիր»...

— Դե, ասա մյուս անգամ խոսքդ չեմ կարել:

«Չեմ կարել ասում ես էլի կարում ես»...

— Հիմի սուս եմ, ինչո՞ւ չես պատմում:

«Դե, լսի՛. գնացի քաղաքապետին. նա իմ գտած առարկաները գնահատել էր 25,000 մանեթի»...

— Պա քու ուղիս-ուղա, էդ խո դու մեկ օրվա մեջ Ռոթշիլդ եղար պրծար... Մի քայլել, ղորդ ե՞ս ասում, թե՞ հանաք ես անում:

«Օրհնած՝ ես հիմի հանաքի ժամանա՞կ ունիմ... Քաղաքապետի հրամանով գանձարանն ինձ այլևս 23 հազար 5 հարյուր ռուբլի տվին, որն ասրի մի ապահով տեղ պահեցի. հետո գնացի Մարիով համար հալածյուս ճոթեր գնեցի. հետո նորա հետ գնացի Դյուսոյի հյուրանոցը ու լավ բաբաթի ճաշեցինք ու ավել լավ բաբաթի սերտեցս վերածեցինք. հետո՝ տուն ե-

կանք ու միասին թեյ խմեցինք, հետո՝ պաշտպանք...»:

— Պաշտպա՞նք... Ես քեզանից ավել բաներ պիտի այսօր:

— Ասա տեսնենք:

«Նախ դնացի Ճեմարան, առաջին անգամ կուշտիրոով նստա աշխատելու, Բելվեդերի Ապոլոնի պատկերը ավարտեցի, եթե չեմ սխալվում, բավական լավ, և եթե ատամած պռոֆեսորիս սիրտը դութ և արդարություն ձգե՝ այս անգամին անպատճառ արծաթե մեդալը պիտի ստանամ: Այս մեկ: Երկրորդ՝ դնացի Մարիի ծնողների տուն, հայրը չիկար, մենակ մայրն էր տանը. ասացի որ Հնդկաստանի բիճաս մեռել է— թաշկինակս ցամաք աչքերիս տարի ու չեզած արտասունքները սրբեցի, որպես դի ցույց տամ թե չատ քընքուչ սրտով երիտասարդ եմ — և ինձ բավական հարստատ ժառանգություն է թողել, որ հիման վրա խնդրեցի, որ Մարիին առանց այլևայլության ինձ կնության տան. բայց վուռ քավթարը, որ ինքն էլ տակավին համով կտորների ախորժակը կոըցրած չէ, և մանավանդ որ, կարծելով թե՝ առջևը գեռևս բավական ժամանակ կա ապաշխարելու ու մեղքերը քավելու, հակառա՞ռ ես խո. մախայա, կարողաբար հայտնեց ինձ, որ մինչև Մարին քառներկու տարեկան չլինի՝ մարդու դնալու չէ, իսկ այժմ նա միայն տասնվեց տարեկան է. կնչանակե՝ Հովհաննես աստուծո ծառան, այդ քավթարի հաճույքի համար, ուղիղ վեց տարի ծոմ պիտի պահե, որ, ինչպես տեսնում ես, խելքի մոտ բան չէ: Ես բանը այսպես որոշեցի. կամացուկ Մարիին աչքով արի թե՝ բան ունիմ քեզ հայտնելու. հնար դատ ու ականջին փսփսացի թե՝ ես կերթամ «վարդ» հյուրանոցը, դու էլ փախիր արի: Հետո մորը մնաս բարև ասացի, տուի դրակս ու դուրս եկա: Դուրս եկա՝ ուղիղ դնացի «վարդ» հյուրանոցը, վարձեցի մի սենյակ, խոհարարին երկու հոգու համար պատվական ճաշ պատրաստելու հետևյալ բավական դինի. քանի մի ժամանակից

Մարին էլ եկավ: Մարին որ ներս մտավ, աղբեր-Յան, առի դրկիս մեջ, ոչ թե քեզ նման չոր ու ցամաք, այլ լավ հանդի պաչեցի-պաչպչեցի, սրտիս սեղմեցի, այնպես որ աղջիկ արյունը երակներիդ մեջ ես բերի. հետո նստանք ճաշի.... Երկու երեք ամսեն, հավատացնում եմ որ՝ Մարիե ծնողք ինքները կուգան, կաղաչեն կպատռեն, որ ես պահվիմ նոցա աղջիկ հետ... բայց, խնդրեմ, ինչոր բարեկամաբար ասացի քեզ, թող մեր մեջ մնա, մարդու բան մի ասիլ:

— Քեզ խոսք եմ տալիս, որ մարդու բան չեմ ասիլ, բայց մի օր կզրեմ,— ասացի:

— Գրե, ինչ եմ հոդում, բայց ի՞նչ լեզվով պիտի գրես,— հարցուց նա:

— Ի հարկե հայերեն,— պատասխանեցի:

— Եթե հայերեն պիտի գրես, վախ չկիա. ուզում էի իմանայ՝ ո՞վ է քու հայերենի կարդացողը:

— Սլուբ ըլի, թե չէ՝ մկերը կզանվին,— պատասխանեցի առածով:

— Իսկ դու ինչո՞վ վերջացուցիր քու «սկրտ արկածքը»:

— Ես երեք օրեն պիտի պահվիմ, և հուսամ որ դու իմ խաչեղբայրը կլինես:

— Ինչու չէ՝ լավ, եթե միայն պահվելու լինես. բայց «կուտես ծվում է», դու ոչ այդպես վաղ պիտի պահվիս և ոչ այդ աղջիկ վրա:

— Կտեսնենք:

— Կտեսնես:

Փոքր մի ապասելից հետ Հովհաննեսը նորից սկսավ.

— Սրե՛, Միքայել, դու էլ իմ օրինակին հետևե. ի սկզբան ես քեզպես կարծում էի թե՝ առանց տերտերի օրհնելուն մեր սերը սիրտ չի նմանիլ, և այդ պատճառավ շատ աշխատեցա, որ Մարին իմ օրինավոր կինը դառնա, բայց երբ տեսա, որ նպատակիս չի հասցնելու համար մարդիկ առջևս քար ու պատեր են դնում, ես առանց արտաքին ծեսերի էլ «յոլա գնացի» և տես-

նում եմ, որ դորանով սերս դեպի Մարին ոչ փոխվեցավ և ոչ սառեցավ։

— Բայց հարցանքը՞ դեպի նա, որ ամուսնական կյանքի ամենակարևոր պայմանն է, ասացի ես։

— Ի՜հ, դու էլ, զարմանալի մարդ ես եղած. ոմեն հատարելությյուն միասին երբ են դանվել, որ այժմ դանվին։

«Վա՛յ այն սերին, որի կեսը հարգանք չլինի, ասացի ես. մարգարիտը անգին բան է, բայց հենց որ կոտրեցիր՝ դինը դառչ է։ Անտաւոր կնկան հավանել կարելի է, խոսք չունիմ, դեպի նա կիրք ու տոփանք ևս կարելի է ունենալ, այդ էլ աներկրայելի է, բայց սիրել «ոչ երբեք»։

— Դու ինչ կուզես ասա. բայց ինձ այնպես է թվում, որ ես ավելի սեր ցույց ավի իմ Մարիին, քան թե դու՝ քուկիդ։ Իմ կարծիքով սիրել նշանակում է աշխատել սիրելու. ես Մարիես արդեն սիրեցի, այսուհետև ոչ ոք նրան ձեռքես չի խլիլ, նշանակում է, որ ես նորան սիրում եմ։

— Հովհաննես, դիտե՞ս ինչ,— ասացի,— Chaque baron a son gout.

Եվ սորանով մեր վեճը վերջացավ։

Կնեցադագիտական կողմից կարելի է որ Հովհաննեսը իրավացի էր. մանավանդ որ ինքը Մարին ևս դորա նման մի բան ակնարկում էր ինձ իհարկե, կույրդիուրայն հետևելով նորա կամքին ու պահանջմունքին, ես առավել երջանիկ կլինեի, բայց ի՞նչ անեի, երբ մեջս ուժ չի կար ծնողացս ներչնչած սկզբունքները հանկարծ ու այդպես կոշտ կերպով քանդելու։ Ես մինչև այժմ չգիտեմ՝ լա՞վ էր արածս թե վատ։ Ես գուցե ընդունակ էի... Սոկրատես, Շիլլեր, Գյոթե, մինչև անդամ Շեքսպիր լինելու, բայց, բայց Ռիչլիյո՝ ոչ երբեք։

Մյուս առավոտ որ գնացի Մարիի բնակարանը, դաղրիայի դերձակուհին նորա մոտ էր ու պահակի հավաքն էր վրան չափում: Մինչև այն օրը Մարիին միշտ մեկնուն անպաճուճ հալավով էի տեսել. բայց այս անգամ, որ պերճ, քաղցրավոր թանգագին սպիտակ կերպասե հագուստով տեսա՝ հիացած մնացի. ոչ թե կենդանի կին, այլ երևելի նկարիչների պատկերների վրա անգամ տեսած չէի այսպիսի գմայլեցուցիչ գեղեցկություն. բայց չազանակագույն ու թավ մազերը ճոխ ճոխ փունջերով ցրված էին ուսերի, մեջքի ու լանջերի վրա. երանքը այնպես քնքուշ փափուկ ու չնորհաշուք էր, ասես թե կաշվի եռև ոչ ոսկոր կար և ոչ միս, այլ լցրած էր այն հյուսիսաբադին (rara) փետրով: Օր ու կես էր մնում պահակս. Հովհաննեսի ասածի պես, Հովիր երանելիի համբերությունն էր պետք, որ մարդ խելքը չի թացնեը դլխեն, այսպիսի գեղեցիկ արարած առջևը տեսնելիս: Քանի քանի անգամ թերահավատել էի, միտք անելով թե՝ մի գուցե Հովհաննեսը ավելի իրավացի էր յուր ռեալական հայացքով իրերի վրա, քան թե ես իմ պյուրիզմով:

Մարին եկավ դրկվեցավ, դլուխը դրավ կուրծքիս ու ասաց՝ «Մի՛քայե՛լ, ասա ինձ ճշմարիտը, իրա՞վ ես այնպես սիրուն եմ, ինչպես որ ասում է ինձ հայելին»:

— Այո,— ասացի,— մի բան էլ ավելի: Հայելին մեջ ցոլացածը ոչ հոգի ունի ոչ մարմին, իսկ դու երկուսն էլ ունես, հետը միասին Սոկրատեսի խելքն էլ:

«Մի՛քայե՛լ, եթե ասվածդ ատ, քանի մի ժամանակներն քու կինը լինիմ, հավատացնում եմ, որ շատ կը-բազդավորացնեմ քեզ. ամեն հնարս դործ կդնեմ, որ դու ուրիշի ամուսնական կյանքին չնախանձիս: Օ՛, դուր դալու ինչ ու ինչ դաղտնիքներ ես դիտեմ»:

Կանդնած տեղերս նա չարունակում էր փիլիսոփայությունն անել: «Եթե կինը խելոք է, նա բոլոր հույսը չի պիտի դնե յուր մարդու ոսկած խոսամոնքի ու

հավատարմության երդման վրա. այդ չատ թույլ առաջարկություն է ընտանեկան անդորրության ու բաղդի համար. կինը ամեն րոպե զգրեկան, հավանելի պիտի լինի յուր մարդուն և, եթե կարելի է այսպես ասել, մինչև վերջը պիտի մրցե յուր չորքը դանված ծանոթ կանանց հետ ոչ միայն բարոյականության, այլև ամեն միանր մունը կանացի հրապույրքների կոդմանե, որով նա դեպի իրան ձգում է ամուսնու սիրտը և անտեսանելի շղթաներով ամուր կապում է յուրինի հետ։ Եթե ինձ հարցնես, ազամարդոց անհավատարմության մեջ մեծամ մասամբ կնանիքն են մեղավոր—իհարկե խոսքս անառականների վրա չէ, այլ փոքր ի չատե օրինավորներին—սիրուն լինելը մեղանից կախյալ չէ. բայց դուրեկան լինելը ամեն կնկա պարտքն է ու նոցա առանձին արժանավորություններից մինն է։ Կանանց անհավատարմության համար ես խոսել անգամ չուզեմ. առնոցի կինը ոչինչ արդարություն չունի յուր անհավատարմության համար, ոչ մարդու սառնության, ոչ չքավորության և ոչ նորա ընկերների գերեզկության... ընկած կինը կարող է առաջարկել ղղումն, ապաշխարանք, արտասուք, ախտասանք, բայց չքմեղություն, արդարություն՝ ոչ երբեք, ինչպես և ոչ մի ղող կամ մարդասպան կարող է յուր հանցանքը ու ոճիրը արդարացնել աղքատության համբ։ Ժորժ Սանը թեև ինքը կին էր, բայց չատ վատ իմաստասիրել էր օրինավոր կնանիքի բարոյական սկզբունքները. նա թույլ փաստարան էր թեթևաբարո կանանց։ Ժորժ Սանին կարդալը և կարելի է, և պետք է. բայց նորանից խելք ու խրատ սպասելը հիմարություն է»։

Թեև չատ բանի մեջ համաձայն չէի Մարիի հետ, այնուամենայնիվ չատ ուրախ էի, որ նա այսպիսի ծանրը հարցի մեջ, ինչպես որ ամուսնական հարաբերությանց հարցն է, յուր սեպհական, զրքե չի քաղած կարծիքն ունի. ես ինքս ինձ մխիթարում էի, որ ժամանակավ կարող կլինենք միասին ավելի խոր և հիմնավորապես զննել կանանց հարցը։

— Շատ լավ ես դատում,— ասացի Մարիին, բայց որովհետև ես դեռ ևս չատ դործ ունիմ կատարելու այս օրուկվա մեջ, այդ պատճառով ամուսնական կյանքի խորհրդածությունը թողնում եմ ավելի ազատ և բարեհաջող մի ոգոց: Դե՛, ցտեսություն: Ես այժմ պիտի երթամ համալսարան՝ վկայականներս հետ առնելու. հետո պիտի երթամ բնակարան վարձելու. հետո ինձ համար աշխարհական հալալ ապագրեմ. հետո տան համար ամենակարևոր կարասիք ու խոհանոցի համար «աման–չաման» դնեմ, վերջապես՝ հայ քահանայի հետ ևս պետք է ինչ ասես խոսիմ մեր պսակի համար, և այլն և այլն. մեկ խոսքով՝ անելու բան չատ ունիմ: Հուսամ որ այս վերջին անգամն է քեզ մնաս բարև ասելս. մի անգամ էլ որ տեսնվինք՝ այնուհետև հավիտյան չենք բաժանվիլ իրարե: Սացի ու, ասես թե սըրտիս մեջեն մի բան կարվեցավ ցած ընկավ. մի անմեկնելի վիշտ պատեց սիրտս: Գնա ու այսուհետև մի հավատար հոգվո վկայության: Չէ՛, ով ինչ կուզե թող ասե, բայց մարդուս չուրջը մի բան կա, որն մենք մեր հինդ զգայարանքով բռնել չենք կարողանում. բայց նա կա ու կա, թեկուզ քարը տրաքի:

«Ցտեսություն, իմ աննման Միքայել»,— ասաց Մարին, ու այնպես պինդ փաթաթվեցավ վզիս, որ ասես թե, էլ անհնար էր միմյանցե պոկ դալ. արտասուքը նորից գոհարի պես ցոլացին աչքերին, բայց այս անգամն ուրախության արտասուքը չէին նոքա. երեսի մեջ դարձյալ նույն մահու դատավճիռը կարդացի:

— Մարի, ի՞նչ եղավ քեզ, ինչո՞ւ այդպես տխուր ես,— հարցուցի:

«Ոչինչ, սիրելյան Միքայել,— պատասխանեց նա, հանկարծ չգիտեմ ինչ պատճառով ինձ այնպես թվից, որ մահս մոտացել է, իբր թե հանդելու չեմ իմ պսակիս օրվան... Էհ, ուշադրություն մի դարձնի իմ վրա. դու երբեք չատ սակավ ճանաչում ես մեզ չվեցարուհիներիս. մենք թեև հռչակված ենք ինչպես կրթյալ զարգացած

ու խելոք կանայք, բայց անտեսանելիներ, որ ա-
սես թե ամեն կնկա բնածին է, ազատ չենք: Դու ուշք
մի դարձնի իմ ամեն մի արտասանքի ու նախազգաց-
մունքի վրա, դու քու բանն արա. ինչ որ պետք է
պատրաստե՛, ոչ մի հարկավոր բան բարձի թողի մի՛
անիլ. բայց հենց որ գործերդ ավարտեցիր՝ խնդուն
չտապե գալու. ես թեև կաշխատեմ սիրտս ամուր պա-
հել, բայց դու ինձ երկար ժամանակ մի թողնիլ. ան-
մեկնելի մահազդուշակ վիշտով լցված է սիրտս: Դեհ,
սիրական դանճս, իմ մեկ հատիկ ուրախությունս աչ-
խարհին վրա, գնա, չուտ, չուտ էլ վերադարձիր, ոչ
մի բոպե չի դադարիս իմ վրա մտածելու»:

Թողի Մարիկն ու սենյակեն դուրս գնացի. բայց
դեռ ևս նախասենյակեն չէի ելել— թիկնոցս ու գլուխ-
ներս էի հագնում—հանկարծ նկատի դուռը դղրդոցով
բացվեցավ, Մարին դուրս պրծավ, խելագարի նման
փաթաթվեցավ վզիս ու նվաղեցավ. հապիհապ հազ երե-
սին ջուր սրսկելով ու ճակատին ու քունքերուն քացախ
քսելով՝ կարողացանք ուշքը վրան բերել:

— Էլի ի՞նչ եղավ քեզի,— ասացի բոլորովին չը-
հոթված. Մարի՛, Մարի՛, հնար չի կա, որ դու կա՛մ
մի սոսկալի գաղտնիք ունիս, կամ թե հիվանդ ես:

«Ոչինչ, ոչինչ,— ասաց նա,— միամիտ գնա քու
բանիդ. միայն թե երկար մի թողնիլ ինձ մենակ...մի-
թե՞ դու չգիտիր, որ չլեցարուհին սիրելը այնքան
հեշտ բան չէ,— ասաց, խոսքը հանագի գործնելով ու
գորաքի երեսը ուրախ ձեվացնելով.— մենք չլեցարու-
հիներս այդպես ենք, եթե մեկին սիրեցինք՝ մեր բոլոր
գոյությունով կսիրենք, և մեր սիրո առարկային բա-
ժանվելը ահա այդպիսի հետևանքներ ունի, որն որ տե-
սար»,— ասաց, և տենդահույզ ցնցմունքներով սկսավ
ամուր ամուր ծիծաղել:

Ես հանդստացա, բայց կիսով չափ: Նորից առի
գաղտ ու դուրս գնացի:

Բակ որ մտա, մի օտարական, ըստ երևույթին ար-
տասահմանցի գերմանացի՝— ինչ որ հարցնում էր գը-

նապանին ու ես, թեև վրան մի առանձին ուշադրութ-
թյուն չի դարձուցել, բայց կարծես թե ականջիս «Մա-
րի» անուն լավեցավ նոցա խոսակցութենեն: Տունը, ուր
կենում էր Մարին, մի փոքրիկ քաղաքի մարզարնակու-
թյուն ուներ. հավատաս մի էլ, քանի-երեսուն զանա-
զան Մարիներ լինեին նորա մեջ. այդ պատճառով օ-
տարականի հարցուփորձը բանի տեղ չի դրի ու դնացի
կառապան վարձելու:

Մինչև որ համալսարանեն վկայագիրները հետ
կատանայի, մինչև որ դերձակին հալալներս կապալը-
ւյի, մինչև որ հարմար բնակարան կգտնեի, մինչև որ
կահկարասիները ու ամանիքը կգտնեի,— չատ ժամա-
նակ անցավ ու դիչերվա տասը ժամը եղավ: Արդեն
ուշ էր Մարիին հանդիպելու. քանիս չէր տանում.
տուն էլ երթալ չէի ուզում: «Արի երթամ,— ասացի
ինքս ինձի, քահանայի հետ խոսեմ՝ առաջիկա պահկի
մասին ու էզուց, ամեն բանը ավարտած, հանդիսա
հոգով, բոլոր օրը միասին կանցնեմ Մարիի հետ»: Է-
զուց էչ մյուս օր նշանակած էր մեր պահկը:

Քահանային տանը չի դատ. իսկ վարդապետը
տանն էր: Ծերունի եվրեմ վարդապետը (որ այսպիսի
բաղդախնդիր արիածքների համար չատ պատվական ու
հարմար մարդ էր, ասսված ողորմի հոգուն) զարմա-
ցավ իմ այդպիսի ուշ ժամանակվա այցելությանը:
Կարճ խոսքով ես մեկնեցի բանի բոլոր հանդամանքը:

— Այդ ամենը չատ լավ է,— ասաց նա, դիցուք թե
դու սիրս համար զոհում ես համալսարանը, քու ապա-
գան, քու պատանեկությունը—այդ ամենը դեռևս հա-
կանալի է. բայց ես ինքս ինձի ինչպես մեկնեմ կամ
դու ինչպե՞ս ինքներդ ձեզի թույլ եք տալիս այդպիսի
անհարմարություն, որ բոլորովին հակառակ է ոչ
միայն պարկեշտության, այլև խղճմտանք. քու ասելով
հարսդ այն ինչ 3 օր է, որ թողել է յուր մորը... օրհ-
նածնե՛ր, դոնե ողորմելի հանդուցյալի քառասունքն
էլա կատարեիք, հետո... էդ ի՞նչ անժուժկալություն
է...

Ու սկսավ գլխուս այսպիսի հոգեշահ պայլե-չարա-կաններ կարդալ, մասամբ Թեսավրոսեն (որն շատ սի-րում էր կարդալ, բայց մեջի խրատները ինքն էլ շատ չէր կատարում), մասամբ էլ յուր հորինածներեն։ Վարդապետս ասածդ ի բնե խրատատու է, բայց ոչ խը-րատակատար։

Ես պատասխանեցի, որ մենք սոխլված ենք մեր պահկը չուտացնել մի մեծ վտանգե ազատվելու համար. իսկ ինչ որ կվերաբերի հանգուցյալի հիշատակը ըստ արժանվույն հարգելուն, ես խոսք եմ տալիս, նախ՝ պահկիս թագը վեր չառնել գլխես և նարոտը վզես չէ հանել գոնե մի ամբողջ տարի։

«Այդ ջոկ բան է,— ասաց Ժպտալով Եփրեմ վար-դապետը ու հանդստացավ։ Ուրեմն կարող եք պահ-վիլ»։

Թ.

Բոլորովին հանդստացած, տուն վերադարձա։ Հոգևհանելը դեռևս եկած չէր, ո՛վ գիտե որ բարեկա-մի հետ պանդոկումը թեյ խմում կլիներ՝ երդեհոնի ա-ծած նվագները լսելով, որն, ասիշտոյե լավագույնին, շատ սիրում էինք երկուսս էլ՝ Քերոբն էլ մեր հետ։

Հոգվով մարմնով վաստակած, չորերս հագիս, ըն-կա բազմոցի վրա ու քունե չհանցած քնեցա։ Բայց ինչ քուն։ Կհավատա՞ք. տասն անգամից ավելի ահ ու սար-սափով տեղիցս վեր եմ թռել այն գիշեր. մինը մյուսից քամահելի երազները բոլոր այն գիշերը դժոխային ար-հավիրքներով տանջեցին ինձ. դաշույն, արյուն, թույն, պարճանակի սպրթյուն, դագաղ, դերեզման, պատան-քած մեռել— ո՞րը կուզես։

Գնա ու այսուհետև նախազգայմունքի, հոգու վը-կայության «պարզատեսության» մի հավատար։

Այս բոլորը պատմածիս մեջ մի հոմա սուտ, կամ մտացածին բան, կամ ստոգաբանք չի կա. ինչ որ գը-րում եմ՝ բոլորը լուսանկարի ճշտությամբ եղած պա-տահած բաներ են։

Թեև առավոտը ծառան ինքնաեռը ներս բերեց, բայց ես տան թեյ խմել չուզեցի. ասես թե մի անհերվելի զորություն ինձ քաշում էր դեպի Մարին: Դրդակս առի, թիկնոցս վրաս ձգեցի ու դուրս թռա: Կառապանը սայլապետ մոտ կանգնած էր: Ծախս չբած նստա կառքը, ու կառապանին հրամայեցի ձին քշել: Թեև խեղճ կենդանին բավական արագ էր վազում, բայց բովենները ինձ մի մի տարի էին թվում: «Շո՛ւտ արա, քշե՛, զարկ ձիին», հրամայում էի անդադար կառապանին, ու անհամբերությունս ուզում էր դուրս թռչել կառքեն ու ոտով վազել, կարծելով թե այդպես ավել չուտ կհասնեմ: Վայնաչարին, վերջապես հասանք Մարիի տան առջև: Դռնապանը ինձ որ տեսավ, չգիտեմ ինչ վնթվնթաց, բայց ես նորա խոսքի վրա ուշք չդարձուցի ու վազեվազ սանդուխքներեն դեպի վեր բարձրացա: Նախասենյակումը չատ մարդոց արագախոս և խառնաչփոթ ձայներ լսվում էին. ոտակնանության քանի մի գնդվորներ էին կանգնած, ոտակճանապորների թիկնոցներ ու գդակներ ձեռքերումը բռնած: Զարմացած մնացի, թե այս ի՞նչ էր նշանակում: Հանկարծ առջևս եկավ Մարիի բնակարանի սանտեխիկները ու երեսը սպրդնած, ասաց ինձ. «Մարին հրամայեց ձեզ երկար սպասել»: Առաջին նվագ նորա խոսքերեն ես ոչինչ չհասկացա. խելագարի նման մի բան էի:— «Ի՞նչ ես հաչում»,— ասացի բարկացած, կարծում էի թե՝ դիշերվա երազներիս չարունակությունն է:

«Հա՛, ջահել պարոն,— հասատեց մյուս պառավը, Մարին— ասաված հոգին լուսավորե— այս դիշեր թուչն խմել է ու մեռել է: Մենք բան չգիտեինք, բայց առավոտս որ ինքնաեռը ներս տարանք նայենք դեռևս տեղերումն է, զարթած չէ. այդպես երբեք պատահած չէր. նա միշտ վաղ էր զարթնում, խրոխտուկը. երբ որ մոտեցանք անկողնին և ուզում էինք զարթեցնել, տեսանենք՝ երեսը դեղնած է, աչքերը կի-

սաթաց ու չորս կողմը կապտած, մարմինն էլ սառած, վհատացած: Իսկույն դռնապանին...

Այլևս չկարողացա նորա պատմածը լսել, այլայլած նեբս մտա, ինչ տեսնեմ...

Է՛հ, այդպիսի բանը կզգացվի, բայց չէի պատմելվել:

Թաղապետի ձեռքումը մի կնքած ծրար կար, հասցեն իմ վրա ուղղած: Հայճեցով, բայց դողդողուն մատերով կոտրեցի կնիքը ու մոլորված աչքերով կարդացի նամակը, որի բովանդակությունը այս էր.

«Ներե՛ ինձ, սիրական Միքայել, որ իմ բարեկամությունը, բայի վիշտ ու թախիծն, ուրիշ ոչինչ էի «տվավ քեզ այս հինգ օրերը: Բայց իմացիր թե՝ որքան «ես քեզ պիտի սիրեի, որ ուրիշին չէի պատահանելու հա«մար, քու անունդ հիշելով՝ մեռնում եմ: Հայրս ու «մայրս, երբ դեռևս իմ երեխայության ժամանակ, «խոսք էին տվել ինձ ամուսնացնել իրանց հինուց բա«րեկամի միակ որդու հետ, որին ես փեսա էի ճանա«չում—քեզ չէի պատահած մինչև անդամ կարծում էի, «թե սիրում եմ նորան— սաստ տարբերց ավելի: Երեկ «հենց որ դու գնացիր, իմ փեսան էլ ներս մտավ, ու «հիշեց մեր ծնողաց ուխտը և իմ երդումները: Բոլոր «ժամանակ որ նա ինձ մոտ էր, ես լուռ էի, ոչ մի խոսք «չարտասանեցի: Մերժել նորան՝ ուխտազանցություն «էր. հաժարել նրբա առաջարկությանը՝ զորությենեա «վեր էր. դեպի քեզ ունեցած սերս ամեն սահմաններն «անցել էր... Մնաս բարև, իմ սիրական, իմ անմոռան «Միքայել. մի անիծիլ ինձ. իսկ եթե կարող ես՝ եր«բեմն հիշե անբաղդ Մարիին: Այժմ հասկանո՞ւմ ես, «անփորձ երեխա դու, թե ինչո՞ւ թախանձագին խրնդ«րում էի քեզ դադանալ, վախչնել, բունի կինդ չինել «ինձ... դու համառությամբ մերժում էիր իմ խնդիրս, «դու չհաժարեցար, առանց մի վայրկյան կորցնելու, «ինձ քու կինը դարձնել (ժամանակը շատ կարճ էր) «ինձ կինդ անել քու ձեռքն էր, բայց քու հարդ լինել «ես չէի կարողը— ես նշանած էի»:

Որի՛ն ինչ բան, թե որքա՛ն վշտացել եմ, ո՛րքան լացել եմ, քանի տարի խորին սուգ պահել եմ ես Մարիի համար: Այդ ամենը, ինչպես նվիրական գաղտնիք, թաղ մնան իմ մեջ:

Մյուս օրը իմ ձեռքով հողը դրի թշվառական աղջկա մարմինը ու իմ առաջին սերը: Սգավոր (դուցե և հեռաքրքիր) հանդիսականներին թաքուն՝ դագաղի մեջ ապրեցուցի լռամայտան պահ ամած բոլոր վշտս:

Մարիի նման չնաշխարհիկ դանդը կորցնելես հետ՝ ժանգոտ ասիլն ինչ արժեք պիտի ունենար իմ աչքումը:

1880.

ՓԱՌԱՍԵՐ

ՎԵՊ

186*-ի հունվարի սկզբին մենք կոմկաբի կողմերին մի տառերով—քան տարեկան հայ երիտասարդ եկավ Պետերբուրգ՝ համալսարան մտնելու: Տարեկան, այնքան կարճ ժամանակի մեջ փոխելու ուսանողական քննությունները նոր ավարտած էին. իսկ նորամուտների քննության ժամանակը շատ հեռու էր, որովհետև նոքա, ինչպես հայտնի է, իրանց քննությունները տալիս են հետո սկսվելիք արձակուրդին, որ կատարվում է երեքին օգոստոսի վերջերը, իսկ շատ անգամ սեպտեմբերի սկզբանն. այնպես որ, մեր հայ երիտասարդը առջևը դրեթե երկու ամիս ազատ ժամանակ ուներ: Նորա այսպես շուտ մայրաքաղաք գալը կարող էր երեք պատճառե հառաջացած լինել կամ նա ուզացել է ուսումնական քննությունների համար երկարատև և լավ պատրաստվիլ, կամ ուզացել է նա ուսանողական պայմաններին վաղօրոք ծանոթանալ և կամ Պետերբուրգի դպրաց սամանային դաստակերտական[1] կյանքը վայելել, որ ըստ մեծի մասին լիքն է լինում ամանթիքական արկածներով, որք չափազանց հրապուրիչ են դաշտաբնակ երիտասարդներուն, և մանավանդ նոցա, որոնց երակների մեջ հորդ վազում է հարավային եռայող արյունը:

Բայց այդ հնչած երեքեն ոչ մինը չէր իսկական պատճառը մեր հայ երիտասարդի ժամանակից առաջ Պետերբուրգ գալուն: Նա ուրիշ հաշիվ ուներ և նորա հաշիվը այս էր: Զքավոր ծնողքի զավակ լինելով՝ նա

---

[1] Ամառանոցային:

չուներ հնար յուր մեխական հաշվով չորս կամ հինգ տարի, ինչպես ուսանող տալերու մայրաքաղաքի մեջ. ի բնե հպարտ և անճնասեր դոլով[1] նա չէր ուզում, յուր շատ համադպրի երիտասարդների նման, մտնել ի թիվս այն երիտասարդների, որոնք լուկ օրական տալրուսակ համար, իբրեւց ամենամանկապին դանճը— իբրեւց հոգմունքը— դնում են կեղծ ազգասիրության դիմակի տակ... Ձէ, մեր նորեկ երիտասարդը շատ բարեկիրթ էր այդ անտանելի պայմանին ինքն իրան ենթարկելու համար: Թիֆլիզի դիմնազիայի մեջ նա առաջին մաթեմատիքն էր. այն չափով և սահմանով, որքան վարժապետները ավանդում էին համաչխարհային պատմություն, աշխարհագրություն, լատին լեզու, և այլն, նա այնպես լավ սովորում էր և լավ դիտեր, որ բոլոր քաղաքի մեջ ամենաընտիր աշակերտն էր համարվում. օրենքը ամբողջ տասներկու ժամ յուր դասերով պարապելը նորա համար մի սովորական բան էր դարձել. խնամատուն վերին դասարանի աշակերտուհիները նորա մեջ պինդ արմատացել էին համոզմունքը թե նա ունի չքնաղ դեմք ու իրանք: Այսպիսի բանտուր և ստացական դեղեցիկ հատկություններով ամոթ չէ՞ր մի փառասեր երիտասարդի՝ յուր գլուխը ծռել մի քանի հեք մեկենասների առջև, գլուխը՝ որ զարդարած էր արջնաթույր[2], ցոլուն և դանդուր մազերով, ջուխտակ խոշոր, կլորիկ, այրող աչքերով ու անթիքական սիրուն երեսով: Չգիտեմ ինչպես ուրիշը, բայց այդպիսի մարդ ու չնչին չնորհի համար շատ անճնասեր էր մեր հայ երիտասարդը: Այո՛, Ալիմատովի միակ պակասությունները էին— անճնասիրությունը և փառասիրությունը:

Հարություն Ալիմատովի... Լսո՞ւմ եք՝ Ալիմատով և ոչ թե Ալիմատյան... Նորա փոքր հասակին՝ խոհեմ հայրը հավատացել էր, որ այդ չնչին «յան»

---

[1] Լինելով (գրաբար):
[2] Սև:

մանկիկը կարող էր չատ խոչ ու խուրթ դնել նորա առջև՝ կենցաղուց ալեկոծյալ ծովի մեջ և երբ միամիտ ժամանակ երեխան հորը առջև բերում էր թե՝ այդ մասամբ[1] ինչպես ուխտադրուժ լինել ազգային պատճառներին, և հիշեցնում էր այն անհամար «յան»-ները, որոնք վոչը առ վոչը, բայց անդադրում հայտնվում են այս և այն երիտասարդների մականվանց ետևները— խոհեմ հայրը ավելի համոզիչ օրինակ էր բերում մայրաքաղաքի քանի մի պաշտոնատարների «ով» լինելը, որ ամենևին արդելք չէ նոցա ժամանակ-ժամանակ արժանանալին ազգասիրական երախտիքները անելով ազգի մեջ պանծալի ազգասերների հռչակ վայելելու: Ես չարունակում եմ պատմուԹյունս: Հարությունն ԱլԹմազովը ծնել էր Երևանա գավառի անհամար գյուղերից մինի մեջ. նորա հայրը մուլքադար էր և ուներ մի ջաղացք և մի վոքրիկ այգի, որ ամենը միասին տալիս էին նորան տարեկան հազար մանեթի չափ արդյունք, որով նա չատ համեստ կերպով կենում էր յուր բազմանդամ դերդաստանովն. բայց մի կողմեկ ավելի չուներ յուր սիրական Հարությունին օգնելու, որ յուր յոթը տարվա Թիֆլիզի գիմնազիայում սովորելու միջոցին մի ըստուկի ծանրուԹյուն չի տվեց ծնողքին: Առաջին տարին նա կենում էր մի հեռավոր ազգականի տանը, իսկ մյուս տարիները նա արդեն ճարել էր մասնավոր դասեր, որից ստացած վոդովն ոչ միայն անդորը տալիս էր, այլ և մի պատառ օտարուհու ամսական տուներկու մանեթ տալով՝ սովորում էր նրա մոտ ֆրանսերեն, գերմաներեն և երաժշտուԹյուն, որը չափանակեց մինչև գիմնազիայեն դուրս գալը: Տանինոնը տարեկան լավ սովորած գիմնազիստ, սիրուն, բարեկիրթ— ո՞ր աչխարհքի մեջ կարող էր կորչել, որ Պետերբուրգի մեջ կորչեր, ուր երիտասարդների մեջ, երբեք այնքան չատ լավ պայմաններ չեն ամփոփված, որքան որ ամփոփված էին ԱլԹմազովի մեջ: ԱլԹմա-

---

[1] Որոշ բանով

դովը վաղուց սրտին սովորել էր առավոտահարդ աշակերտ համարվելու. շատ դժվար էր նորան այդ համոզմունքին ու դիտակցությունն հրաժարվելու՝ կուզեր նորա կեցած քաղաքը Թիֆլիս լիներ, կուզեր Պետերբուրգ, կուզեր Լոնդոն: Անձնապաստանությունը արդեն նորա մեջ խորունկ արմատներ ձգել էր:

Պետերբուրգ գալով, ինչպես շատերին և դրեթե մեզ պատահում է, նա չի չվարեցավ, չի մոլորվեցավ, ինքնիրան չի կորուց. նա յուր կենցաղի և ապագա գործունեության ծրագիրը արդեն վաղուց արել էր: Մայրաքաղաք հասած չի հասած, իսկույն հրամայեց հառապանին՝ տանել իրան Մեծ Մորսկոյ տասը վաղոցը, ուր երևելի հյուրանոցներեն մինումը սենյակ վարձեց: Հետո բացեց պայուսակը, հանեց մեջեն պահծու հալալները, հագավ, ծոցը դրավ Թիֆլիսի, գիմնազիայեն տացած վկայաթուղթը և իսկույն դնաց համալսարան. դռնապանեն հարցուց մի քանի, իրան պետքական պրոֆեսորների անունները ու հասցեները և սկսավ այցելություն անելու. քանիսին տանը չի գրտավ,— նորա կամ արտասահման էին դնացել, կամ տարանոց տեղափոխվել— մեկայն մինին գտավ տանը, որ տեսնելով նրա ընդհանուր դեմքը, չափազանց անձնապատան խոսակցությունը, թղթի մեջի վարժապետների դովատանական վկայությունը, եթե ոչ համակրություն, գոնե սկսած սկսածություն զդաց դեպի այդ ապագա գիտնականը: Ալեքսանդրը նորանից խնդրում էր յուր համար դոնել մի լավ ընտանիքի մեջ դասեր: Պրոֆեսորը կմկմալով «ստիպենդիայի»[1] անուն տվեց, որով ուզում էր հասկացնել նորան, որ դրամական օգնություններ, որ տալիս է համալսարանը խեղճ ուսանողներին, մասամբ իրանից կախված է, եթե միայն նա, Ալեքսանդրը, աչքառաջեմ և օրինապահ ուսանող լինի: Երբ որ ստիպենդիայի անուն

---

[1] Стипендия (stipendium), նպաստ, օգնություն փողով (Թոշակ):

լանց՝ Ալիմազովի ցուրտն աչքերին կայծ ու կրակներ թափվեցան: Ոտքին մինչև գլուխ չափեց պրոֆեսորին. տախտենդիա՞, օդնութի՞ւն, ողորմութի՞ւն, այն էլ որի՞ն, մի քաշատարղ հաղթանդամ երիտասարդի, որի հասակը քիչ-քիչ երեք գազ էր, որի երեսատիպարքը ասիական Ապոլոնին էր նման և որի դիմուածքյունը մի փոքրիկ գավառական համալսարանի պրոֆեսորի կհավասարեր... Պրոֆեսորը տեսավ, որ մեծ անմարդավարութիւն արավ տախտենդիայի անուն տալով, այդպիսի երիտասարդի առջև, որ եթե ասեր քեզ Ալիշանի Յաղուբ խանի որդին եմ, ոչ ոք երկմտելու չէր, նորա դեմքի վրա այնքան խրոխտ հպարտութիւն ու անճնապատուանութիւն էր նկարված: Իսկ սիրունութիւնը՞, աչքերի գույքը՞, քթի անթիքական կորվածքը՞, ճակատի չքնաղ համաչափութի՞ւնը, ասես թե Ֆիդիասի կարկինով նախագծած... Յուր ակամա սխալը ուղղելու համար պրոֆեսորը ամենաքաղաքավարի խոսքերով նստեցուց Ալիմազովին, երկար-բարակ խոսեցավ հետը, հարցուփորձ արավ Կավկասի և Հայաստանի վիճակի մասին, թէեև ու աննկատելի կերպով քերվեցավ նորա առանին պարագաներեն և երբոր Ալիմազովը առավ դռնակը ու պատրաստվում էր երթալու, պրոֆեսորը ամենաքաղաքավարի խոսքերով միամտեցուց նորան, որ այսօր և եթե մի երկու բարեկամներ կհանդիպի և անպատճառ կաչխատե նորան բավարար պատասխան տալու: Պրոֆեսորը չմոռացավ հարցնել նորա հասցեն և ապա ճամփա դրավ, և երբ յուր առանձնասենյակը մտավ և ուշքը մի փոքր վրան եկավ, խեղճ մարդը ասաց իրան. «Այս ինչ սատանա էր, խելքս չի հասնում. այդ ինչ մարդ էր, որ ես տեսա,— իշխանա՞ն էր, թե ամլազակապետի որդի. այսքան հպարտութիւն, այսքան համարձակութիւն, այսքան արտաքին ընորհք... Եվ երկար ժամանակ խեղճ պրոֆեսորի մտքին չէր դուրս դալիս Ալիմազովի ցուրտն, խոշոր ու մի փոքր արյուն-կոխած աչքերի ահագին կախարդական ներգործութիւնը յուր վրա:

Ալֆմազովը գնաց յուր հյուրանոցը։ Ժամը ճաշի էր։ Ծառան հարցուց նորան։ «Որո՞ւ կբաժհամճիք ճաշ ուտելու. ձեր սենյակի՞ մեջ, թե հասարակաց ճաշարանումը։— Հասարակաց ճաշարանումը,— ասաց Ալֆմազովն ու գնաց այնտեղ։ Ճաշարանի մեջ մի երկար սեղանի առջև արդեն շատ մարդիկ նստած էին— եկավոր բարձր աստիճանավորներ, զինվորականներ, օտար տերության դրծակալներ և շատ ուրիշ ազնիվ կնանիք։ Երբ որ Ալֆմազովը յուր սովորական ազատ բռնված քայլվածքով գնաց և մի ազատ սպասքի առջև նստավ, ամենքը և մանավանդ կնանիք զարմացած՝ աչքերը նորա վրա դարձուցին և շատերն մինչև անգամ ակամա հիացման բացականչություն դուրս թռավ. Mais mon Dieu quelle beauté![1]։

Ալֆմազովը չի չխոթվեցավ. այդպիսի բացականչություններն և ավելի լսրուն և համոզիչ արտահայտություններն նա արդեն վաղուց ընտելացած էր. նա թեև կզարմանար, եթե մարդիկ, և մանավանդ կանայք առանց ուշադրության թողնեին նորան, բայց ամենևին չի զարմացավ, երբ նորա արտաքին շնորհքին հարկավոր հարկը հատուցին։ Թիֆլիսի ինստիտուտականներն էին մեղավորը, որ նա այդքան երես առած էր։

Ճաշը վաղուց սկսվել էր և արդեն վերջանալու վրա էր։ Մի տարեց խաթուն կին, որ սոսկի ուշում էր նորա հետ խոսք բանալ, բայց չիմանալով ինչպե՞ս, ասաց նորան ֆրանսերեն. «Պարոն, եթե կներեք իմ, դուցե անտեղի, հետաքրքրությունը, ասացեք խնդրեմ, ազանիացի չէ՞ք արդյոք»։— Ոչ տիկին, պատասխանեց Ալֆմազովը նույն լեզվով։ «Ուրեմն խաալացի՞ եք», չարունակեց անծանոթ կինը։—Խաալացի եա չեմ, ասաց Ալֆմազովը։ «Ես գիտեմ, ասաց մի չոր-չոր, նիհար, բայց ազնիվ դեմքով կին,— պարոնը հնդկաստանցի է. հնդիկ ռաջայի որդի»։— Ա.յդ եա ոչ, ասաց հայ երի-

---

[1] Աստված իմ, որպիսի գեղեցկություն։

տառապրդը: «Ես գիտեմ, ասաց գերմանացին երբորդ կինը, որ ամենից մատաղահասն էր. պարոնը հարավային Ֆրանսիացին է, Բերևս Մարսելիացի»:—Կախաղիք ամենքդ ալ, տիկիններ, ասաց Ալթմաղովը ամուր և համարձակ, ես կավկասցին եմ, և մի փոքր կակազելով ավելցուց Թույլ ձայնով. ես հայ եմ:— «Հա՛յ եք», ասացին երեք կնանիքը և իրար երես նայեցան:— Ի՞նչ զարմանալու բան է որ, ասաց կամաց ձայնով անգլիացի կինը... Փոքր Ասիայի ազգաձն, նաև և Սամարղին, այդ իսկ մեր լորդ Դերբին վաղուց ասել է, պատահմամբ է հայերին, եթե նորա Թաղեսի երկու խոսքը հասկանային—«Մանիր գրել»: Այս թշվառ ազգի բոլոր անբախտությունը այն է, որ 1500 տարիեն ավելի է, որ ինքն իրան ճանաչել չի կարողանում: Հայերին ինքները իրանց չի ճանաչելը, իրանց արժեքը չիմանալը շատ ձեռնտու է Տաճկաստանին, և այդ ազգը, յուր սեփհական չահերի համար, ամեն հնար գործ է դնում, ուրիչ դիպվածներումն խորամանկ, բայց այդ տեղում թեթևամիտ հայերին հավիտենական տգիտության ու կուրության մեջ պահելու. նախնյաց պատմությունը խմաստասիրելը, որ միշտ հետևորդներ աչքը բացել է, ուշի ուշով աշխատում են հայերից հեռացնել՝ իբր գուր ժամանակի կորուստ և անօգուտ աշխատանք. մինչ հայերու բախտը, ամեն գիտությունեն առաջ, գորանից է կախված: Խեղճ ազգ»:

Այս խոսքերը, հարևանցի ասած, մեծ օգուտ կուտային Ալթմազով երիտասարդին, եթե այն րոպե նա յուր անձով չափազանց զբաղված չլիներ: Այդ ու այդպիսի խոսքերը, նա «յան» մասնիկի հետ միասին վաղուց հանել էր մաքեն, ինչպես «կենցաղույս ծովի մեջեն գտած խոխքերը», որ կարող էին նորա նավին վնաս հասցնել, ինչպես որ օր ու գիշեր խրատել էր նորան գավակաեր ծնողը:

Ճաշեն հետ կնանիք և մի քանի օտարազգի երի-

---

[1] Ճանաչիր ինքզ քեզ:

տասարդները գնացին մյուս սենյակը, ուր կար դաշնամուր, և սկսան՝ ո՛րը երգել և ո՛րը նվագել. Ալբմազովն էլ գնաց խառնվեցավ նոցա մեջ: Ամեն տեղ նկատված է, որ դաշնային կոմպոզիտորները՝ Թե նավի, Թե չոգեկառքի և Թե հյուրանոցի մեջ, առավել շուտ և սերտ կերևակայանան, կմիավորվին, քան Թե իրանց սեպհական քաղաքումը, իրանց սեպհական օճախի առջև, որն ամեն մարդ հաչպղկոտ աչքով պահպանում է օտարի ասպատակությեններից: Հյուրանոցի օճախն այն առանձին հատկությունը ունի, որ ամեն ազգի մարդոց բերում, միավորում է յուր հյուրընկալ շրջապատը:

Կուշտ և Թեթև ճաշեն հետ ամենքը սրամաղթված էին զվարճության. դաշնամուրի առջև առաջինը նրա տավ անգլիացի կինը և սկսավ Սկովտիայի սարերու ուրախ ու խաղացկուն արձագանքները հնչեցնել. հետո նստավ (դաշնամուրի առջև) գերմանացին ու սկսավ Մարսեսի վալսերը ածելու, որ դարձյալ դեպի պարը էր հրավիրում բայց լսողին դրեթիեննների հետ, յուրյակ դիշերով, Թյուրինգուրդի այսերով ու վհուկներով լցված անտառումը: Հերթը հասավ Ֆրանսիացի կնոջ, որը նվագեց Ga ira-ն[1] և Marseillaise-ը, որն լսելիս մարդ կատաղում էր:

Անգլիացի կինը զարձավ Ալբմազովին ու հարցուց. «Պարոնը սիրո՞ւմ է արդյոք երաժշտություն»:— Ոչ միայն սիրում եմ, այլ մի վոքը դիտեմ էս, ասաց նա և համարձակ գնաց նստավ դաշնամուրի առջև: Այս համարձակությունը ծիծաղելի երևություն կարող էր երևել հյուրերի աչքին, եթե հենց առաջին աքորդները առնելիս, նոքա չնկատեին, որ Ալբմազովը ոչ միայն սիրուն երիտասարդ է, այլև լավ երաժիշտ է, եթե ոչ նվագահանդեսներումն նվագելու համար, դեթ անհատական ընկերության մեջ: Մի ահեղահնչյուն ներածությունից

---

1 «Սա իռա» և «Մարսեյլեզ»—ֆրանսիական ռեվոլյուցիոն երգեր:

հետո, Ալֆմաղովը նվագեց պոպուրի կավկասի սարերում մեջ երգված տաղերեն, որոնք թե իրանց նորութեամբ և թե մեղեդիների ինքնուրույնութեամբ, հյուրերի վրա եթե ոչ հրապուրիչ, գոնե չափազանց ցնցող, ապշեցնող ազդեցութեան արին: Երիտասարդ հայի մասերի արագութեանը, երաժշտության ինքնուրույնութեանը, ունկնդիրների նյարդերի թուլութեանը, նվագողի կրքոտ բնութեանը միասին առած, այնպիսի ապավորութեան արին կանանց վրա, որը կարող եմ միայն ասուլածաչունչի օձի՝ մեր նախամոր ականջին փսփսած ձայնին համեմատել: Mais c'est la perfection que ce jeune arménien là[1]— ասաց Ֆրանսիացի կինը, կրքոտ աչքերը Ալֆմաղովի վրա նետելով:

— Das ist gefährlich[2],— ասաց գերմանացի կինն ու աչքերը խոնարհեց:

— Անպատճառ. հագրատունիի ցեղեն պիտի լինի, ասաց անգլիացի կինը. այսքան կատարելութեան մի մարդու մեջ՝ ահռելու նման է նրա կամ լորդի, կամ արքայական ցեղե լինելուն:

Երբ որ հյուրերը կամաց-կամաց հեռացան, Ալֆմաղովն էլ գնաց յուր սենյակը և ուզում էր վերջը ինչ հանգստանալ: Հանկարծ սեղանի վրա թատրոնի երկու հայտարարութեան տեսավ՝ մինը ուսաց կոմեդիայի ներկայացման էր, իսկ մյուսը բալետի: Ի հարկե երեսատարը, և այդ՝ երակների մեջ հարավային արյուն ունեցողը կդերադասե երկրորդը: Սիրուն վհուկների նման աղջիկներ, բեմի վրա ձևացուցած առասպելական աշխարհ, հանդիսատեսների ճոխ ու չքեղ հագուստն ու թանկագին զարդարանքը, ամեն տեղ դեղեցկութեան և երիտասարդութեան, արյունի խաղ երեսների վրա, կրքերի արտահայտութեան աչքերի մեջ, հոգեկան արբեցումն, մարմնո զրկիրը, թմբրի բոլեական դերկ,

---

[1] Բայց կատարելութեան է այս երիտասարդ հայը (ֆրնս.):
[2] Վիանալի է (գերմ.):

որից հետո սպասում է անողոք մահ ու չդիտեմ ո՞ր իսկական երիտասարդի երևակայությունը չէր հրապուրել այսպիսի չքնաղ հեռանկարը. և ի՞նչ զարմանք, որ մեր համաշղթին նախադասեց արյուն եռացնող բալետը՝ կրքերը պաղեցնող իրատեսական կոմեդիային: Նա գնաց բալետ և նստավ բաղկաթոռների երրորդ կարգը: Առաջին նվագ հանդիսատեսներեն ոչ ոք նրա վրա ուշք չդարձուց. բայց երրորդ վարագույրը բարձրացավ ու մայրաքաղաքի սիրական առաջնակարգ դերասանուհին դեռևս մի կանգնաչափ թռչտելով՝ եկավ ու ոտքի մատերի ծայրերի վրա կանգնեցավ բեմի մեջ և հազարավոր ձեռների ծափահարության ուժգնությունը չնորհակալությունը հայտնել դիմաց քնքշագին խոնարհելովն ու ձեռների չնորհալի շարժելովը,— հանկարծ աչքը ընկավ Ալֆմադովի վրա և քանի մի ակնթարթ անշարժ, ապշած մնաց: Այդքանը բավական էր, որ հանդիսատեսները հակահանային նորա ապշության պատճառը. բոլոր չանցած՝ չատերի բինոկլները ուղղվեցան Ալֆմադովի վրա: Ալֆմադովը իսկույն հասկացավ, որ այս րոպեիս երկու հանապարհ է բացվում նորա առջև, կամ մնալ թատրոնի մեջ և պետերբուրգի ազնվածների չարքը ընկնել, կամ վախչել ու իր առաջադրած նպատակին չհասորվել: Հորը խրատները նորա մեջ խոր արմատներ էին ձգել: Նա կամացուկ թողնց թատրոնը և հեռացավ: Բայց թե ի՞նչ խրատներ էր տվել նորա հայրը՝ ասել չեմ կարող, եթե ցանկանայի ևս. բայց կարդացողը պարզ կտեսնե այդ, երբոր այս ճշդիվ պատմություններ մատուցվեցան ծայրե ծայր կկարդա:

Պատվական ընթերցող, չմոռանաս որ այս ամեն բանը, որ ես քեզ պատմեցի, պատահեցան իմ հերոսի մայրաքաղաք գալու առաջին օրը. և եթե դու ազդեցիկ իշխատար ստորագրություն[1] նորա ամեն մի քայլափոխին սպասում ես ինձանից նորա հորս տրված

---

[1] Այսինքն նկարագրություն:

կյանքի Պետերբուրգի մեջ— խիստ կսխալիս: Ես աշխատեցա այս օրվա անցքերով փոքր ի շատե քեզ ծանոթացնել Ալեքսանդրի ոչ միայն մինչև այժմ անցած տարիներու հետ, այլև այն բանին, թե այսուհետև մոտ ի մոտո ինչ դերեր խաղալու ընդունակությունն ունի նա: Կարողացա արդյոք քեզ հասկացնել, թե դա ինչ երիտասարդ է և կամ նորա մուլքադար հայրը ինչ բնավորության տեր մարդ է եղել, կյանքի վրա ինչ հայացք է ունեցել ինքը կամ ազդել է յուր որդուն: Ես քեզ սոցա հոգեբանական խնդիրներու լուծմունքը չեմ անել, ես իմ սեպհական եզրակացությունները չեմ անել, ես քեզ զանազան կենցաղական խրատներ չեմ տալ և աղաչահ խորհրդածություններ չեմ անել: Նախ որ կամենայի ևս, ես չէի կարող. երկրորդ, ես գիտեմ, որ ամեն մարդու ավելի հաճելի է իրեն ծամելը, քան թե ուրիշի ծամածը կուլ տալը. գիրքը, որ խրատում է, երբեք չի տալ այն օգուտը, որ կուտա այն գիրքը, որի վրա կարդացողը մի փոքր խելք պիտի մաշե: Ինձմե պատվելի կարդացողը շատ պահանջմունք Թող չի ունենա. բավական է, որ սրդտրասեր պատմաբանի պարտքը բարեխղճությամբ կատարեմ. իսկ դու, կարդացող, իմ պատմածը քու խելքով հասկացիր ու դատե:

Ալեքսանդրը որ տուն եկավ, հրամայեց մի քաս թեյ տալ իրան, որն ծառան խնդույն բերեց. և քանի որ նա խմում էր՝ գնաց նորա անկողինը հարդարեց և ապա հեռացավ: Նորա գնալեն հետ, Ալեքսանդրը պառկեցավ և քանի րոպեեն՝ խորունկ քնեցավ:

Պետերբուրգը հայաստանցի երիտասարդներին փառասիրության երկու մարդու օրինակներով գրավում է. առաջին օրինակը տվեց Ղարախանովը. իսկ երկրորդը վերջի իշխան Վաչինաձեն: Ղարախանովը մի զարթաղցի տղա էր, շատ սիրում էր պառավ և հարուստ այրիներուն հոգաչխոյի հարյուր վեպքը պատմելու, որո փախարեն ստանում էր նոցանից «ի հեքատակ խորին հարգանաց» ոչ միայն թանկագին մատա-

նրանք, այլև մեծագումար բանաքային տոմսակները. բա-
նի վերջը այն եղավ, որ խեղճ երիտասարդին «բարի
դարձնելու համար» Սիբիր ուղարկեցին. իսկ Վաչինա-
ձեն մի սիրուն վրացի էր, որ մեր Ալթմազովի նման,
երբեմն բարի մարդով եկել էր Պետերբուրգ համալսա-
րան մտնելու, որն չհաջողվեցավ նորան. վատնվ
դիմնադիա եղած ժամանակը, երևի, սա ավելի հաճախ
հայելիի էր նայել, քան թե յուր դասագրքերու վրա,
և ավելի շատ՝ աղջիկներու դովասանքին էր ականջ
դնում եղել, քան թե վարժապետի դասախոսություն-
ներին. մեկ խոսքով՝ նորա դիտումը շատ տկար է
եղել համալսարան մտնելու համար: Երբ «իմաստու-
թյան տաճարի» դռները փակվել են աշխարհասեր վրա-
ցի երիտասարդի առջև, նա բարի է համարել ընկերա-
կան ասպարեզ թևակոխելու, որ ավել է նորան արտո-
նություն՝ սիրուն նշանագրեստներ հագնելու. և երբ
մեր պատմելի իշխան Վաչինաձեն յուր սիրուն դեմքով
և սիրուն նշանագրեստովն չրջում է եղել (դու աչառ-
նակել հասկացիր) մայրաքաղաքի փողոցներին մեջ՝
հանկարծ մի հարուստ ռուս այրի աչքը ձգել է մասամբ
նորա սև մազերի ու բեխերի և մասամբ նորա իշխա-
նական տիպարսի վրա, և մի պատվական օր մեր ազ-
գատ վրացին հարուստ իշխան դարձավ:

Ցավ է ասելը, մեր Ալթմազովը, հոր խրատներեն
համոզված, յուր առջև օրինակ ուներ միշտ այս վրացի
իշխանին: Թեև ամենքը դիտեն, որ Վաչինաձեի վերջը
շատ արտասվալի եղավ, բայց այդ բանը ոչ ոքի էի
խրատեց, մանավանդ հայերուն, և Ալթմազովի հայրը
կարծում էր, որ այդ վատ հետևանքին նրա որդին եր-
բեք էի հանդիպիլ...

Ինչ և իցե: Ալթմազովը եկել էր Պետերբուրգ ոչ
միայն դիտումի և ուսումնական ասպարեզի ասպնա-
յու, այլև մի ահագին օժիտով աղջկա հետ պսակվելու:
Այս խորհուրդը նորան ներշնչած էր գրեթե օրորոցի
մեջեն: Դիմնազիայում սովորելը և լավ սովորելը, Պե-

տերբուրդ գալը՝ ուսումն շարունակելու համար, խոհեմությամբ իր բարոյականությունը անբիծ պահելը ոչ թե կյանքի նպատակ, այլ միջոց էր նորա աչքում— հարուստ (բայց չատ հարուստ) աղջկա վրա պսակվելու համար:

Ո՛րքա՜ն հերոսական միջոցներ՝ մի չնչին՝ մանր, հասարակ նպատակի համար:

Երբոր Ալեմպռվը մյուս օրը զարթեցավ, ծառան մի տոմսակ բերեց ավեց նրա ձեռքը: Տոմսակի մեջ մոտ ի մոտ այսպես էր գրած.

«Պարոն Ալեմպռվ,

Համաձայն Ձեր ցանկությանը, ես երեկ խնդրեցի Ձեր հեռանալեն հետ, չըշնչել իմ ծանոթներին. նոցանից մինը—որովհետև ես չատ գովասանական բաներ էլ ասել Ձեր մասին— հոժարեցավ Ձեզ տնական վարժապետի պաշտոն տալու: Լավ և նշանավոր մարդ է իշխան Կաբիլիինը: Հուսամ որ նորա ընտանիքի մեջ Ձեզ լավ կլինի: Երեխայքը, որքան ես ճանաչել եմ, համեստ և բնդունակ են, իսկ նոցա ծնողքը հարուստ, և որ գլխավորն է, լուսամտությամբ մարդիկ են. ուրեմն Ձեր աշխատանքը չի կորչիլ և դուք, թերևս նորա տան մեջ Ձեր նպատակին կհասնիք: Հաստեն Անդլիական դեսպանի վրա, սեղհական տան մեջ: Շտապեցեք:

Մնամ Ձեզ բարիք կամեցող X. Z.»:

Ցուր նպատակին այսպես չուտ հասնելը այս անգամ էլ չզարմացուց Ալեմպռվին, որին բախտը դրեթե օրորոցին այնքան երես էր տվել, որ նա տակավին չդիտեր ի՞նչ ասել է ձախորդություն: Կաբիլիինի հոժարությունը նա վերարերեց իր հատկությանը և ոչ աղնիվ պրոֆեսորի բարեխոսության. մտքի մեջնն անգամ չնորհակալ չեղավ այդ բարի մարդուն: Քանի-քանի ուսանողներ ամիսներ և տարիներ սպասել են և չեն հասել չնչին վարձատրության՝ բոլոր իրանց պատրաստությունով հոգով չափ աշխատելու, միայն թե մի

փոքր ապահոված լիներ նույա օրական ապրուստը և տաք բնակարանը: Բայց ի պատիվ Ալիմազովին, այն էլ պետք է ասել, որ նա ոչ միայն յուր ընչաղ աբուա-քինով, այլև յուր դիտումներով շատ ու շատ դեբտանից էր թե համարդի և թե օտարազգի ուսանողներեն: Զորս տարիա ընթացքումն, որ Պետերբուրգ անցուց, Ալի-մազովը չուներ յուր սեփականը ուսանողների մեջ. այն չեմ ասում, որ մայրաքաղաքումը արտաքինը ոչ մի-այն մեծ նշանակություն ունի, այլ միակ հատկություն է հաջողության ունենալու համար:

Ներսունի Ալիմազովի իր որդուն ուղած խրատնե-րեն մինն էլ այս էր, որ ծախսի առջև երբեք կանգ չառնուս. իր սեպհական պետքի համար երբեք փող չի խնայե. «չատ մխողը, ասում էր նա, չատ դատե (վատահել) կլինանա. միայն հեք բնությունով մար-դիկն են, որ փող դատելը և դրամար չինելը խնայողու-թյան և իրանց մանր-մունր բաներն մեջ զրկելուն են տեսնում»: Հյուրանոցի դռնեն դուրս գալով, մի սիրուն ձիով կառապան տեսավ ու մատով արավ:—«Ո՞ւր կհրա-մայեք», ասաց կառապանը:— Անգլիական դեսպանը, ասաց Ալիմազովը: «Եթե մեկ մանեթ չեք խնայիլ, թռչունի նման կտանիմ»,— ասաց սիրուն և լպստած է-քեսով կառապանը: Ալիմազովը ոչինչ չպատասխանեց ու նստավ կառքը. և իրավ որ դարդիմանդ կառապանը սանձերը մի թեթև թափ տվեց, ձին թռչունի նման սը-լացավ ու թռցրեց մեր դեղեցիկ պատանին:

Առավոտվա ժամը 9-ն էր, որ Ալիմազովը մտեւ-ցավ Կարելիևինի տանը և քաշեց դրան զանգակը: Քանի որ դռնապանը դուրը կբանար, նա քսակեն հանեց մի մանեթանոցը և ձգեց կառապանի առջև: «Կհրամայե՞ք որ ձեր պատճառափայլությանն ասասեմ»,— ասաց կա-ռապանը գդակը հանելով:— Կուզես ասասե, ասաց Ալիմազովը,— ես կարելի է շատ դուրս կուգամ, բայց կարելի է որ կես ժամի չափ մնամ ևս: «Ոչինչ, ես ձեզ

կոպեեմ», ասաց կառապանը: Ալֆմադովը չպատասխանեց նորան ու նեղս մտավ, վասնզի դռնապանը արդեն բացել էր դուռը:— Իշխանը տա՞ն է, հարցուց Ալֆմադովը: Դուռդ դռնապանը, փոխանակ նորա հարցմունքին ճիշտ պատասխան տալու— «Ձեր մտքին ինչպե՞ս հայտնեմ նորին պայծառափայլության», ասաց:— Նա լինճ սպասում է, ասաց ոչ պակաս դոռդոռությամբ, վրայի պատոն դռնապանի ձեռքը ձգելով. հետո քաշեց հանեց աչ ձեռքից ձեռնոցը, դրակը ձախ ձեռքը առավ ու աչով չքեղ դանդուրները չվերով, սկսավ մարմարյա սանդուղքների վրա բարձրանալու, որի ամեն մի աստիճանը զարդարած էր հախճապակյա թաղարների մեջ տնկած հազվագյուտ ծառերով ու ծաղիկներով: Դռնապանը բերանը բացած, զարմանալով երիտասարդի եռանդն էր նայում: «Երևի օտար տերության դործակալ է կամ դեսպանության քարտուղար է», ասաց մտքի մեջ: Նախասենյակումը հանդիպեցավ մի ուրիշ սպասավոր, որ նույն հարցմունքը արավ, ինչ որ դռնապանն էլ արել էր: «Ալֆմադով Կավկասեն», կարճ կարեց մեր երիտասարդը ու խոժոռ խոժոռ նայեցավ նորա աչքին: Սպասավորը դնաց և չուտ վերադարձավ, ասելով՝ «Համեցեք», և նորա առջև բացեց սրանձնասենյակի դուռը:

Իշխան Կաբիլիինը քառասունհինդ տարեկան բարձր աստիճանավորի դեմքով մարդ էր. թեև վրայի քնապդեսը մի փոքր հնացած էր և կերպասի դույնը թըռած, բայց սենյակի առատաղեն կախված ջահը, խորհրդարանի պատվանդաններու վրա դրած մարմարիոնյա արձանները, սեղանի վրա չարած articles de Paris[1] ասած հազար տեսակ ոսկիե, փղոսկրե, կրիայի խեցիե չինած թանկագին մանր–մունր իրեղենքը, դուռ առջև կեց կանգնուհական մունդշթունքները ակներև ապացույց էին նորա հարստության. էլ չհիշեմ թանկագին գորգերը, որ փռված էին գետնի վրա, ուր մարդուս ոտքը,

---

[1] Փարիզում պատրաստվող պերճանքի առարկաներ:

ինչպես բարձր աթոռի մեջ, խրվում էր, էլ չասեմ ամառնային վայրե չինած և ոսկի թիթեղով պատած աթոռները։ Երբ Ալիմազովը նեղս մտավ՝ նուրբ լակոնական ոճովն ասաց. «Ալիմազով Կավկասեն»։

— Այո՛, այո՛,— ասաց իշխանը, տեղեն բարձրանալով.— ինձ պարոն պրոֆեսորը չատ լավ բաներ ասաց ձեր մասին. չատ ուրախ եմ, չատ ուրախ եմ. համեցեք նստեցեք,— ասաց և ցույց տվեց մի փոքր հեռվում կնոջած մենավոր աթոռ կարմիր վայրե։

Ալիմազովի համար այդ րոպեն կորոշական էր. նա կայծակի արագությամբ հասկացավ, որ իշխանը երկու տեսակ այցելուների հետ գործ ունի սովորաբար. մինը խնդրողը և մյուսը հավասարը։ Այդ ցույց տված մենավոր կարմիր վայրե աթոռը ակնհայտ նշանակած էր խնդրողների համար, որոնց կարելի էր «մի փոքր չի պատվիր». իսկ հավասարների համար՝ ինչ ասել կուզե, նշանակած էին թանկագին ոսկեզօծ աթոռները։ Ալիմազովը մեծ–քիթ տղա էր, մի փոքր էլ լիրբ. նա գրակը կարմիր աթոռի վրա դրավ, իսկ ինքը իշխանազնի համարձակությամբ, բայց բարեկիրթ երիտասարդի համեստությամբ նստավ նորա առջևի ոսկենկար և դիպակով ծածկած բազկաթոռի վրա։ Իշխանի երեսին մի զարմանքի և տհաճության զգացմունք նկատվեցավ, բայց և չատ անցավ։ Կարելիկինը ոչ նոր, այլ օիսը պորտով արիստոկրատ էր, արտաքին և մանր–մունր բաներու մեջ մեծահոդի ձևանալը (որով չատ խաբվում են հասարակ մահկանացուները) մեր, այսինքն Ռուսաստանի մեծատուններու տարիներով սերտած աշխարհածանոթությունն է։ Բավական եր–կար տևեց նոցա մեջ լռությունը։

— Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտավետ լինել,— ասաց վերջապես իշխանը, որ կամենում էր այդ ձանձրալի լռությանը վերջ տալ, մանավանդ որ Ալիմազովը յուր կրակոտ, անվախ աչքերը ուղիղ ցցել էր նորա մի փոքր կարճատես աչքերին։

— Մի՞թե պրոֆեսորը խոսած չէ իմ մասին,— ասաց Ալիմամադովը:

— Դուք արդեն ուսանո՞ղ եք:

— Կարծեմ այո՛, վաղուց իմ վկայագիրը տալիս է ինձ իրավունք՝ առանց քննության մանելու համալսարան, պատասխանեց Ալիմամադովը լավ ռուսերեն առոգանությամբ:

— Այո՛, այո՛, այդ ինձ ասել էր պրոֆեսորը, ասաց իշխանը, որ ավելի և ավելի կորցնում էր յուր կախարդանքը մի «խեղճ խնդրողի» վրա:

Դարձյալ լռություն: Ալիմամադովը յուր խոշոր աչքերը հարցական խմաստով անկել էր իշխանի վրա: Այդ րոպեին դուռը բացվեցավ և Թադուհու քայլվածքով ներս մտավ հիանալի դեղեցկուհյամբ՝ Բայլաքի դոված տարիքով մի կին:

Իշխանը ոտի առավ. նա նման էր Սոլֆերինոյի ճակատամարտի մեջ պատերազմող Նապոլեոնին, որին ասացին թե՝ ահա Մակ-Մահոնը գալիս է քեզ օգնության:

Իշխանուհին ներս մտավ. չնորհալի չարժվածքով ձեռքը պարզեց մարդուն, ունքով պատասխանեց Ալիմամադովի ողջույնին և նստավ իշխանի մոտ: Ալիմամադովը ուղեց յուր աչքերի կախարդությունը իշխանուհու վրա ևս փորձել. բայց իշխանուհին չուտ հասկացավ մեր երիտասարդի «փոքուս-փոքուսները» և այնպիսի քիթ ու պռունկ արավ, որ պ. Ալիմամադովը յուր ամենահաղթ ղենքը խոնարհեցուց:

Իշխանուհին փորձառու և կանոնավոր դաստիարակության ստացած կնիկ էր. նա վաղուց լսել էր այն մասնը և կեղտոտ հաղթությունների մասին, որ կավկասցի երիտասարդները, ի վնաս իրանց առողջության և դեղեցկության, կատարում են պարզամիտ ռուս աղջիկների, այրիների և պառավների վրա. նա այդ պիսի գաչելի անբարոյականության համար ի բոլոր սրտե ատել էր Կավկասը և նորա բնիկներուն: Երբոր իշխանը տեսավ, որ նորից լռություն տիրապետեց,

խոսքը կենդանացնելու համար, ասաց Ալեքսանդրովին.— «Կարող եմ հարցնել ի՞նչ ազգից եք դուք»:

Իշխանուհին ժամանակ չի ունեցել Ալեքսանդրովին պատասխանելու և իսկույն դարձավ մարդուն և ասաց:

— Mais, mon Dieu, que vous êtes naif, certainement que monsieur est armenien[1]:

Ալեքսանդրը միայն զլխով արավ, որ նշանակում էր, թե իշխանուհին իրավացի է՝ բայց և հասկացավ իսկույն, որ նա վերջապես դատավ յուր ախոյանը: Ալեքսանդրը, որ դրեթե ծնած օրեն տեսած չէր մարդոց երեսի վրա բացի սերեն և հարդանքեն ուրիշ զգացմունք և այժմ նկատելով իշխանուհու աչքերի և ձայնի մեջ անհաժեշտ ատելություն դեպի իրան—չի վհատեցավ. ինքն իրան երդում արավ մինչև վերջը պատերազմել, եթե հնարը դանե՝ հաղթել, ապա թե ոչ՝ հաղթվել, ծունր իջնել նորա առջև, ոտերը համբուրել, նորա սպրուկը դառնալ, բայց... չի հեռանալ: Ինչո՞ւ: Ով գիտե, գնա իրան հարցուր: Շա՞ն զգացմունք,— լիզել զարնող ձեռքը:

Իշխանուհին դարս դնաց և իսկույն ասաց աղջկան.— «Հորդ սենյակումը մի այնպիսի գեղեցիկ երիտասարդ կա, որի նմանը ոչ իրական կյանքի, ոչ երևակայության մեջ և ոչ պատկերի վրա տեսել ես, կամ պիտի տեսնես. Բելվեդերի Ապոլլոնը դորա առջև ոչինչ է. բայց ախտոտ որ հայ է. հայ է ոչ միայն ծնունդով, այլև բնավորությունով...

Աղջիկը այնպես պինդ ծիծաղեցավ, որ ձայնը մինչև Ալեքսանդրովին հասավ: Նա թեև մոր ու աղջկա խոսքեր հետ ունեցած խոսակցությունը չլսեց, բայց այդ ծիծաղի ձևեն հասկացավ, որ այս այն տունը չէ, ուր

---

[1] Բայց, ասված իմ, որքան միամիտ եք. պարոնը հայ է անշուշտ:

[2] Столбовый—այստեղ նշանակում է հին տոհմի:

նա ձեռքը էր յուր հոր խորհուրդները կացնելու։ Բայց անճնասաստանությունը, համառությունը և յուր խոհամանկության ամենակարողությունը նորա մեջ խոր արմատներ էին ձգել։

Քանի ժամանակից հետ աղջիկն էլ ներս մտավ, նա էլ տեսավ, որ Ալիմադովը երևելի սիրուն երիտասարդ էր։ Նորա խոսակցությունն նկատեց, որ յուր տարիքի համար չափազանց մեծ դիտություն և փորձառություն ունի։ քանի՛–քանի՛ անգամ նորա աչքերին էի դիմա–նալով՝ յուրերը խնդարհեց և երբոր հեռացավ՝ սրտին խոցումն ա՛լ հանելով, ասաց։— «Մեղք որ հայ է»։ բայց մի փոքր հետո ավելացուց։—«Ա՛խ, ինչո՞ւ մարդ տառապ է կավկասցիներուն։ այդ ի՞նչ նախապաշար–մունք է։ մի՞թե ամենքն էլ ղարախանովներ ու վաչի–նաձիններ են։ խելոք երիտասարդը դեռևս տառնինոր տարեկան է, դեռևս երեխա է, աղնիվ պրոֆեսորներուն պատահաստությունները, աղնիվ մարդոց բարեկամու–թյունը, աղնիվ երիտասարդների կենակցությունը և... աղնիվ օրիորդների ընկերությունը մի՞թե չեն կարող բնավորության մի քանի անհարթությունները ուղղե–լու... բայց այդպիսի ցոյուն, խոշոր աչքեր, այդպիսի դեղեցիկ, անթիքական երեսի տիպարք... չէ՛, չէ՛, մարդս տառնիկ սխալվում է, մորս աչքը վախեցած է»...

Իչխան կարելիինը ոչինչ պատճառ չուներ Ալիմա–դովի առաջարկությանը մերժելու, մանավանդ որ նո–րա մոտիկ բարեկամ, մանեմատիկայի պրոֆեսորը մեծ դովասանքով խոսեր էր նորա հաչող դիտության մա–սին, գրեթե ամեն դիմնադիական առարկաների մեջ. նմանապես՝ Ալիմադովը խոսակցության մեջ հայտնել նորան և այն կարծիքը, որ նա ոչ այնքան փողի համար է պաշտոն վինարում, որքան մի աղնիվ գերդաստանի մեջ բնակվելու. վասնզի ինքն էլ, թեև չքավոր է, բայց աղնիվ սերնդե է, և չէ ուզում, շատ ուրիչ յուր հա–մադգիներու նման, բնատնիքե դուրս բնակվելով, նույն իսկ մայրաքաղաքի մեջ անցնել կիսավայրենի կյանք՝

հեռու ընտանեկան անմեղ վայելչություններն, հեռու քաղաքային և ընտանեկան կյանքն, որից միշտ զուրկ են վարձած սենյակներում բնակվող երիտասարդները:

Իշխան Կարիկինը նշանակեց նորան յուր տան մեջ մի զարդարուն սենյակ, ճաշ, թեյ, սուրճ, նախաճաշիկ, լվացք, ծառա և ամսական հարյուր մանեթ ռոճիկ: Մեկ ուրիշ ուսանողի այսպիսի պայմանը երջանկություն կերևեր, բայց Ալիմատովը բավականին քիմը կախած վերադարձավ յուր հյուրանոցը, որ յուր պայուսակը ու մյուս բաները բերե. իշխանուհի լուռ պատերազմը նորա սիրտը «որտա» ձգեց: Կառապանը անհամբերությամբ սպասում էր նորան, որ այս անգամն էս ծառայավ նորանեն մի ուրիշ մանեթնոց: Հյուրանոցումը նախաճաշիկը նորից ժողովեց երեկվա հյուրերուն. այս անգամ Ալիմատովին երեք օտարուհիները և նոցա հետ ուրիշները՝ ինչպես հին բարեկամի բարևեցին. դարձյալ մխաին կերան ու խմեցին, դարձյալ հետ սեղանին, դնացին մյուս սենյակ երգելու և նվագելու, դարձյալ Ալիմատովը յուր չարադրած ասիական մեղեդիներեն մինը նվագեց նոցա առջև, նորից ծափահարեցին նորան, նորից իրանց մեջ փափաալով, բայց նորա ականջին հասցնելով, դովեցին նորա երաժշտական քանքարը, դեմքի ու իրանքի դեղեցկություններ, բարեկըթությունը և դիտությունը, բայց, ավա՛ղ, նորա սրտմտությունը փարատել չի կարողացան: Իշխանուհին նորա անձնասիրությանը անբուժելի խոց էր հասուցել: Երկու ձայն նորա մեջ բարձրաբարբառ խոսում էին. «Փոխի՛ նպատակդ, թո՛ւք դոռոզ իշխանուհու վրա, աղնիվ եղի՛ր, ուղիղ ճամփով առաջ գնա». իսկ մյուսը ասում էր. «Հիշի՛ հորդ խրատները, խորամանկ եղիր, ինչ հնարով կուզե լինի՝ հասիր նպատակիդ— փողի, փողի, և փողի»:

Նույն օրը մնաս բարև ասաց նա յուր նոր բարեկամներին, հավաքեց յուր իրերը և գնաց տեղավորվելու իշխան Կարիկինի տանը: Նորա պատուհանները

դարձած էին Նեվայի վրա. համալսարանը դրեթե դեմուդեմն էր:

Վշտանը ընդամենը երկու զավակ ուներ. մի որդի՝ Ինը տարեկան, որին Պաժերի վարժարանի համար պետք էր պատրաստել, և մի դուստր, տասնվեց տարեկան, որին արդեն մի վոքր ճանաչում ենք. որդու անունն էր Միշա, իսկ աղջկանը Եվդոքիա:

Ալֆոնզովի պարապմունքի համար ես շատ քան չեմ ասիլ: Ինչպես որ պատմութիյանս սկզբանը հիշել էի, նա արդեն տասնըմեկ տարեկան հասակեն սկսել էր զանազան հասակի և բնավորութիյան աշակերտների հետ պարապելու, դրեթե ամեն դիմնագիտական առարկաներեն, ուրեմն մանկավարժութիյան մեջ նա շատ հմուտ և փորձառու էր: Նորա դիտութիյան համար խոսելն ևս ավելորդ է, վասն զի նա, յուր աշակերտութիյան միջոցին, ոչ մի վարժապետի խոսք, ոչ մի դասագրքի առդ առանց ուշադրութիյան, առանց քաջ սերտելու թողուցած չէր: Երբոր վորձի համար առաջին դասին ներկա էին իշխանը և իշխանուհին, նոքա մի ժամի մեջ համոզվեցան, որ Ալֆոնզովը նոցա զավակներին, եթե նոքա բոլորովին ծույլ, բթամիտ և ուսումնատյաց լինեին, անպատճառ մի բարի վերջի կհասցներ: Ալֆոնզովը խոսում էր ամենահասկանալի լեզվով. քերականական կանոնները, մաթեմաթիքական դիլեմմաները այնպես պարզ առաջներն էր դնում, որ աշակերտը դրեթե առանց վարժապետի օգնութիյան հասկանում էր: Վաղվա դասերը այսօր այնպես լավ բացատրում էր աշակերտներին, որ մինչև անգամ նոքա կարիք չունեին դասագրքին մյուս անգամ սովորելու կամ ինքներն իրանց առուղելու: Առաջվանից ասենք. Ալֆոնզովը դրեթե չորս տարի մնաց նոցա մոտ: Միշելը քսանվեց քննվող աշակերտների մեջեն առաջինը հանդիսացավ և մտավ վարժարան և մնացած երեք տարին եռև եռեք փոխում էր դասարանները (Ալֆոնզովը միշտ վարժատուն էր դնում և դասերը քաղվածք անել էր տալիս): Իսկ Եվդոքիան հեռևյալ տարին փառավոր քննութիյուն

ավելց համաբարանումը, և մնացած ժամանակը կատարելագործվում էր մաթեմատիքայի և ընդհանուր պատմության մեջ:

Ալիմազովը յուր վարժապետական պաշտոնը առնենափառավոր կերպով կատարեց իշխան Կաբլիվինի տանը, որ քանի քանի անգամ պատրաստ էր նորա ոտճիկը կրկնապատկելու, եթե երիտասարդը հոժարեր: Բայց նա բացե ի բաց հեռացնում էր իրմեն այդպիսի վարձատրություն. նորա վառասիրությունը ավելի լայն հորիզոն ուներ, քան թե որքան կարելի էր ապահել մի խեղճ վարժապետ:

Այժմ ես ուզում եմ մի քանի մինչևայսպես պատմել նորա կյանքից, որ անցավ նորա հորս տարվա ուսանողության ժամանակ:

Եթե Ալիմազովը հյուրընդունությամբ հանդիպած անդրևացի հինջ խոսքերի վրա լավ ուշադրություն դարձրած լիներ, դուցե հոր աված խրատներն և յուր աշխատասիրությամբ շինած կյանքի ծրագրեն հրաժարվելը ոչ միայն ինչպես մի խելացնոր և երազական, այլ և ինչպես վնասակար և ապարդյուն գաղափարել: Նա կհասկանար, որ հայերուն՝ նորա որևէ նպատակին չհասցնելու համար, հազարավոր արգելքներ դրված են ամեն կողմանե. նորա անունը նախապաշարմունքով չրջապատած է, նորա քանքարը և գործունեության չարախոսությունով, նախանձով, ինչպես էրեն ցանցով՝ վաթաթված է. փառքի ու պատվի դրնեթը նորա առջև փակած են և դեպի այն տանող ճանապարհը փուշ ու տատասկով լցված է. հայի առջև երեք ազատ ճանապարհ բաց են՝ մինը դեպի մոլորություն, մյուսը դեպի ոչնչություն և երրորդը դեպի կորուստ: Նա, խեղճը, չգիտեր, որ հային մինչև անդամ հրամայված չէ յուր ատամածաուռը խելքը ի գործ դնելու. նորան միայն թույլ տված է խելքի տեղ

խոքամանկութեան դործածելու. խոքամանկութեան, որ առելի, անդոսնելի և բարեմիտ մարդոցմէ հալածած առիկի հատկութեան է: Նա չդիտեր, խեղճը, որ իշխանները դաւինինելով գրդռարել են բանաստեղծներին, որոնք իրանց քնարը լարել են դեպի հայը՝ առելութեան, նախանձ, չարակամութեան և ծիծաղ չարժոդ դրացմունքով: Այս ամեն արդելքին նա պիտի հանդիպեր այն ժամանակ, երբ նորա դրացմունքը լինելին ազնիվ, սուրբ, նվիրական. դոնե այն ժամանակ նա սուրբ գոհ կլիներ յուր սուրբ դաղափարին և դրացմունքին: Բայց, ավաղ, Ալիմադովի ոչ նպատակն էր սուրբ, ոչ դաղափարը և ոչ դրացմունքը: Ինչպե՞ս կարելի էր, որ նա և յուր կյանքի հետ ունեցած պատերազմի հաղթանակը առներ, և աշխարհի առջև պարդերևս մնար: Նայենք այսքան հազվադյուտ հատկութեանները տեր Ալիմադովին կհավանի՞ իմ ընթերցողը. նայենք, նա իր անկման միջոցին մի հատիկ կարեկից սիրտ կդտնե՞:

Հուլիս ամիսն էր: Այն ամառ իշխան Կաբիլիլինի սեպհական դաստակերտը նորոդովում էր Պավլովսկուը, և այդ պատճառով նորա դերդաստանը ուշ տեղափոխվեցավ ամարանոց: Ալիմադովի հուչակը այն թատրոնի երեկոյեն արդեն քաղաքի մեջ տարածվել էր. ամենքը ուղում էին նորա հետ ծանոթանալ, բայց այդ բանը չատ քիչերին էր հաջողում. պատճառը այդ է, որ նա մեծապուչն մասը օրվան կամ դրաղված էր իր աշակերտներին սովորեցնելով, կամ Կաբիլիլինի հյուրերի հետ խոսելով, որոնք Ալիմադովի պաչտոն մանելեն հետ՝ սկսել էին սովորականեն ավելի ստեպ այցելութեան դալու և մանավանդ կանանց սեռը՝ «հայ Ապոլոնին» տեսնելու համար, իշխանի տունը ուխտատեղի էին դարձրել. ամենքը ուղում էին նորան տեսնել, հետը խոսել, ծանոթանալ, նորա կարծիքը և նվադը լսել. կարճ՝ սիրել նորան և սիրվել նորանեն: Խեղճ՛երը, նորա չդիտեին, որ Ալիմադովը իր մանկական հասակեն սկսած արդեն խրատված էր հորեն՝ «ճարել մի

անվանի և չատ հարուստ տանե աղջիկ, պատիվել հետը, և պատվի միջոցով արխատիրատե անուն չպղտցնել»: Կարո՞ղ էր Լեռնե Երիտասարդը հոր բաղձանքը և իր սեպհական ուխտը փոխել՝ ներկայումս քանի մի րոպեի մարմնավոր վայելչության և ապագայում հավիտենական սրբջանքի համար: Ո՜հ՛ զ կինանիք. ձեր անկեղծ զղացմունքը, ձեր սրտի դորովանքը պիտի ընդհատվին այդպիսի սուտ հաչիվների և դուք պիտի զարմանաք, թե ինչպես է կարելի, որ այդպիսի դեղեցիկ մարմնու մեջ այդպիսի կոչտ հոգի լինի դրած: Բայց և չատ խիտ մի լինիք ձեր դատաստանքի մեջ: Ալթմազովը իր ծնած տեղի և նորա պարագայի արատավորությունն է: Հայաստանը այն պայմանի մեջ, ուր որ է՝ ուրիշ տեսակ զաղափարներ չէ՛ կարող ծնանիլ: Փոխեցեք կազմաւորը, կիսովին և նորա տակեն դուրս եկած կերպարանքները: Ո՞վ է մեղավորը:

Ալթմազովը հենց որ իշխան Կարիկինի տուն մտավ, իսկույն զրպանեն հանեց երկու հատ ատաս մանեթանոց, մինը տվեց դռնապանին և մյուսը սպասավորին և չսպասեց որ նոքա խոնարհաբար չնորհակալություն ասեին. թողեց և հեռացավ նոցանեն. մի օր էլ, երբ եվդոքիայի նամիչար արծաթե տիսեի վրա նամակ բերեց նորան՝ երբորդ ատաս մանեթանոցն էլ նորան ընծայեց: Այս ամեն կյանքի մանր-մանր փոքանները հայրը նորան սովորեցուցել էր՝ իբր տանեվերջ զարմանքը: Երբ այս և այսպիսի լուրերը իշխանուհու ականջն էին հասնում, նա սրտեն խոր հոգոց առնելով, ասում էր՝ «տեր ասումած, տեր ասումած, այսքան մատաղահաս և այսքան ապականված»: Եվ խոսիլ հրամայում էր ծառաներին՝ զգուշանալ խորամանկ հայեն: Ինչ Երիտասարդը, որ կարծում էր իր ապագա չենքի հիմքը սուրբ դրած, չգիտեր, որ եկած օրին արդեն այն քանդվել էր:

Իշխան Կարիկինի ընտանիքը երկու ամիս ամառանոցում մնաց, և այդ երկու ամիսը Ալթմազովի

համար «Հազար ու մի գիշերի» արհամարհներ էին։ Նա չէր ճանաչում էր չքնաղագեղ կնանիքներու և աղջիկներու սիրով, հարգությունով, պատվով, հրավերքով։ Օր չէր անցնում, որ նա հրավիրված չլիներ կամ մի կոմսուհու, կամ մի իշխանուհու, կամ մի մեծատան կնոջ տուն հացկերույթի, երեկույթի, նվագահանդեսի, հեռավոր մի անտառ կամ ամրոց, կամ ծաղկոց ճաշելու, կամ ձիով զբոսնելու. օր չէր անցնում, որ նրան մի բուրած նամակ չի գար, կամ մի կաթողին ճեռագ սեղմումն չի պատահեր, կամ քնքուշ հայացք չընծայվեր։ Իշխանուհին տեսնում էր այդ ամենը և ամեն հնար գործ էր դնում, որ Եվդոքիան թույլ չտա իրան այդ կրքերի հեղեղատին մատնվելու. բայց ինչ կանես. կարելի՞ է հրամայել կրակի մոտ կեցած վառոդին, որ չի բռնկի. կամ ասել սառույցին՝ կեցիր սրտակի տակ և մի հալչիր։ Դեռևս դաստակերտեն քաղաք չհասած՝ Եվդոքիան պինդ սիրահարվեցավ Ալիմատովի վրա, և նույն չարաթ երեկո դրվեցավ այսպիսի բռնվանդակության նամակ։ «Ամեն բան դեպի լավն է դնում. իշխան Կարիկինը 40,000 օրամբար հող ունի, բանկում 4,000,000 մանեթ նստդ փող և ոչ մի կոպեկի պարտք. իշխանուհին պահարաններէ մեջ առավել քան թե 500,000 մանեթի ակնեղեն, ոսկե գարգեր և արծաթե սպասներ ունի. իսկ աղջիկը իմ վրա մինչև ականջները սիրահարված է»։

Օգոստոս ամիսն էր, որ մաթեմաթիկայի պրոֆեսորը, որի հետ պատմությանս սկզբումը ծանոթացանք, մի օր եկավ և ասաց. «Արդեն ժամանակն է խնդիր տալու և մտնելու համաթարան»։ Հետևյալ օրը Ալիմատովը դնաց համաթարան, խնդիր գրեց և ներկայացավ դեկանին, որ միամտության նորան ասելով՝ «ձեզ առանց քննության կրնդունենք»։ Այս կողմանն ևս միամտեցած, Ալիմատովը վերադարձավ դաստակերտ և այնուհետև լիապես անձնատուր եղավ ամեն կերպ վայելչության։

Քանի մի ժամանակին ամարանոցի եղանակը վեր-
ջացավ, մարդիկ հետզհետե քաղաք քաշվեցան. իշխան
Կաբլուկինն էլ գնաց քաղաք յուր ընտանիքով:

Իշխանուհին չափե դուրս խելոք կնիկ էր. նա չատ
լավ գիտեր, որ Ալեքսադովը երբեք չէ կարող նորա ամ-
ջիկա մարդը լինել, որ ինքը միշտ կզգար հնար նոցա
փոխադարձ սերը կա՛մ սառեցնելու, կա՛մ բոլի բաժա-
նելու, բայց կարծում էր, որ Եվդոքիան, սիրելով նո-
րան, միշտ նորա տված դասերը առավել խորունկ
կտպավորե մտքի մեջ և առավել կորճա. և այդ պատ-
ճառավ թույլ էր տալիս որքան կարելի է՝ երկար տեվի
օրվա մեջ ոգոց պարապմունքը: Եվ զարմանալու բան.
Եվդոքիան, որ առաջները ոչ միայն չէր սիրում ուս-
ման առարկաները, այլ և երաժշտություն, որը պարի
հետ միասին, ինչպես հայտնի է ուս օրիորդի լուսա-
վորության առաջին պայմանն է,— այժմ Ալեքսադովի
ազդեցության տակ դիչերներ լուսացնում էր մի տեո-
րեմայի կամ մի սիմֆոնիայի վրա, որ յուր վեհասքուի
աչքին հաճելի երևի: Քանի-քանի անգամ իշխանուհին,
սրահն ախ քաշելով, ասել է յուր մարդուն, «Ինչո՞ւ
այս դեղեցիկ և քանքարավոր երիտասարդը ուս կամ եվրոպացի չէ. ինչպես մեր Եվդոքիան բաղդավոր կլիներ»:

— Ինչո՞ւ այդպես սխալ ես դատում, պատասխա-
նում էր իշխանը. միթե՞ հայը լավ մարդ լինել չի կա-
րող:— «Ինչո՞ւ չէ, ասում էր նորան իշխանուհին,—
հայն էլ լավ մարդ կարող է լինել, բայց... Եվդոքիան
հայի հետ պսակվել չի կարող և չիպիտի պսակվի»:

Իշխանուհին յուր մանկությունը անցուցել էր մի
հայաբնակ քաղաքի մեջ, ուր նորա հայրը գավառապե-
տի պաշտոն էր կատարում. այդ պատճառով նա կար-

ծում էր, թե հայի բնավորությունը չատ խորունկ ի-մաստասիրել էր:

Թեև Ալիմազովը չատ լավ դաշնամուր էր նվա-գում, բայց նա հանճնառու չեղավ աշակերտներին ե-րաժշտության սովորեցնելու, և այդ մանավանդ այն պատճառով, որ Եվդոքիայի վարժապետը երեկի հենդելին էր, որի հետ բաղդատվելով, ի հարկե, նա համբակ կարող էր համարվել: Մի օր հենդելը էչխա-նուհուն հայտնեց, որ ինքը չուտով արտաստհման կ դնալու, բայց վախենում է, մի գուցե նորա բացակա-յության ժամանակ Եվդոքիան մի անհմուտ վարժապե-տի ձեռք ընկնի և փճացնե յուր կանոնավոր նվագելը: Այդ պատճառով խորհուրդ տվեց մի փորձառու և ըն-տիր վարժապետ որոնել: Իշխանուհին պատասխանեց թե՝ «դուցե ես վարժապետի ընտրության մեջ սխալիմ, չէ՞ք կամենալ արդյոք մեզ ձեր ընտրությամբը մի վարժապետ առաջարկել, ձեր բացակայության մեջո-ցին»:— Ինչո՞ւ չէ, պատասխանեց հենդելը, չատ ու-րախությամբ. ես ի նկատի ունիմ մի մատազահաս ե-րաժշտության վարժուհի, ազգանունը միտս չէ, բայց իմ ընտիր աշակերտներեն է. երթալու ժամանակ ես նորան կուտամ մի հանճնարարական նամակ, որն ստա-նալով՝ իսկույն կընդունիք նորան, բայց նայեցեք, ինչ վարձ որ ինձ եք տալիս՝ նույնը անչուշտ և նորան պիտի տաք. երաժշտության արվեստի մեջ եթե այդ վարժուհին ինձանից լավ չլինի, վատ երբեք չէ:— Իսկ ինքը հենդելը դասի դրուս տառնում էր տասը մա-նեթ:

Այդ վերջին անգամն էր, որ հենդելը եկավ էչ-խանի տունը: Երկու շաբաթ վրա անցավ, ոչ ինքը ե-կավ և ոչ էլ նորա հանճնարարած վարժուհին ներկա-յացավ: Սրտին կարծում էին՝ թե նա մոռացել է յուր

խոսքը և հանճարեղական նամակը վարժուհուն չտված՝ դնացել է տրտունջով։

Մի օր, ճաշից հետո, երբ ամենքը նստած էին դիվանոց սանձ անկյունը, հանկարծ դանգակը հնչեց. ծառան չտապելով գնաց և շուտ հետ եկավ, ասելով. «մի կին կամենում է տեսնել իշխանուհուն»։ Իշխանուհին ասաց ծառային. «Ներս համեցնեք արա»։ Դուռը բացվեցավ և մի թխիկ երեսով, բայց դեղեցիկ տիպարքով աղջիկ ներկայացավ և տվեց իշխանուհու ձեռքը մի նամակ, ասելով. «Հենդելթից»։— Գիտեմ, գիտեմ, պատասխանեց իշխանուհին. խնդրեմ նստեցեք։ Բայց ես ձեզ երկու չարաթ է, որ անհամբերությամբ սպասում եմ։ «Ներեցեք ինձ, պատասխանեց անծանոթ աղջիկը ամաչելով,—ես մի փոքր ակաւ էի»։ — Խնդրեմ նստեցեք, ասաց նորից իշխանուհին, և հետո ավելցուց,— կարո՞ղ եմ հարցնել ձեր անունը։ «Անունս Սուսաննա է», պատասխանեց աղջիկը, աչքերը խոնարհելով։

Համեստությամբ նստավ օբիսրդ Սուսաննան և մի կարճ մտքոց լռության թագավորեց սենյակի մեջ. ինչպես ասում են՝ «երեչտակ խաղաղության թռավ» Նըստաղները սկսան մին մինի երես նայելու. Ալթմազովն էլ նայեցավ Սուսաննայի վրա, Սուսաննան էլ նայեցավ Ալթմազովի երեսին. բայց իշխանուհին, որ այդ դըպեին երկուսի վրան էլ նայեցավ, հետաքրքրությունը արավ, որ Ալթմազովը հենց առաջին վայրկեանում առանց մեկ հեմնավոր պատճառի, ատելով ատեց այդ խեղճ թխիկ աղջկանը, իսկ Սուսաննան դորա հակառակ, ջերմ և անհրաժեշտ սիրով սիրեց այդ դեղեցիկ պատանուն։ Ինչո՞ւ։ Ո՞վ կարող է այդպիսի հարցի պատասխանը տալ։ Ուրեմն մենք էլ թողնենք այս հարցը անպատասխան. նայենք, դուցե իրերի ընթացքը կլուծեն այս հոգեբանական առեղծանելիքը։ Բայց այսքան իմանանք, որ իսկական սերը և իսկական ատելությունը մի բոպեի մեջ է ծնում. իսկ այն, որ

ժամանակով է ծնում, նոցա անունը սեր և առելութիւն են, այլ դնահատութիւն:

Իշխանուհին չափազանց մեղքացավ խեղճ աղջկան, որ օտար դերդաստանի մէջ, առանձին լուռ մնացած, ով դիտե ի՞նչ հոդևկան տանջանքի մէջ էր այն րոպեին. և կամենալով այդ ճնշող, անհաճո լռութիւնը վերջ տալ, առաջարկեց Սուսաննային իրանց մի փոքր զվարճանելու համար, չի՞ կամենալ արդյոք դաշնամուրի առջև նստել և նվագել. բայց և ավելացրեց. «Օրիորդ, չլինի՞ թե իմ առաջարկութիւնս ընդունելիք իրը ցանկութիւն ձեզ քննադատելու: Պ. Հինդլիքը ձեր մասին մեզ ասելն այնպիսի գովասանքներ է տվել, որ ձեր մասին մի ամեն մի չարժվածքը մենք նվագահանդեսի տեղ պատրաստ ենք ընդունելու»:

— Մեծապես չնորհակալ եմ ձեր՝ իմ մասին կազմած այդպիսի չորդորբիչ կարծիքի համար,— ասաց կարմրելով Սուսաննան, բայց ես վազուց է, որ կտոր-նեբ նվագած չեմ. երկու չաբաթ ձեռքս դաշնամուրին դիպած չէ. դուք դիտեք, այդ բավական ժամանակ է, որ մատերը երանց սովորական արագութիւնը կորցնեին:

— Ձէ՛, չէ՛, խնդրենք,— ասաց Իշխանուհին, նվագեցեք մի բան: Մենք խիստ դատաբնիչ լինելու ոչ գիտութիւն ունինք, ոչ ճաշակ... դուցե պ. Ալթմաղոլը...

— Պարո՞նը ևս նվագում է,— ասաց Սուսաննան կարմրելով և աչքերը դարձնելով ուսանողի վրա:

— Այո՛, մի փոքր,— պատասխանեց Ալթմաղոլը այնպիսի արհամարհական ձայնով, որ առաջին վայրկյէս էր մի անպիտան կատապանի, քան թե մի համեստ աղջկա վերաբերմամբ:

Ամենքը նկատեցին այդ չար կոպտութիւնը. Եվդոքիայի աչքեն մինչև անգամ արտասուք կաթեցավ. խեղճ աղջիկը մի րոպեի մեջ երկու անգամ կարմրեցավ և ժպտնեցավ: Իշխանուհին նշանավոր հայացք ձգեց Իշխանի վրա, որ կնշանակեր՝ «Հը, ինչպե՞ս ես, էհի՞

ասում քեզ, որ հայր մի՛շտ հայ կմնա»: Ամենքը նկատեցին այդ անհավի կապուտթյունը. միմիայն միամիտ Սուսաննան չի նկատեց:

— Այդ «մի վոքրը»,— ասաց Ալիմամադովին, շատ և շատ նշանակութթյուն ունի. բայց հուսամ, դուք ներողամիտ կլինիք, ես երկու շաբաթ հիվանդ էի, այժմ ևս բավական կաղդուրված չեմ: — Ասաց և մատները վազեցուց կլավիշներու վրա: Փոքր մի ֆանտազիա անելեն հետ՝ նվագեց Քոնթակիի երևելի «Առյուծի սթափումը», որ այն ժամանակները նորաձև երաժշտական հատվածներից մինն էր. և ո՞ր իսկական պահերբուրգեն չէր լսել նաչինակ հեղինակի նվագածը:

Առյուծի գարթնելից մի վոքը առաջ Սահարա անապատի լռութթյունը, նորանից հետո՝ առյուծի քանի-քանի անգամ ամպրոպաձայն մռնչելը. հետո՝ ավելի և ավելի սաստկացնելը յուր ահեղ մռնչյունը, հետո՝ արյունաուշտ հարձակման պատրաստութթյունը, հետո՝ սպառազինված որսորդներին հանդիպելը. հետո՝ կատաղի պատերազմը երկուսակ, հետո հրացանների ճայթմունքը խառն առյուծի մռնչելուն, հետո՝ վիրավորված և հոգեվարք զազանի ոռնալը և վերջապես՝ որսորդների հաղթութթյան երգը—այս ամենը պատկերացան լսողի երևակայութթյանը մեջ՝ Սուսաննայի ճարտար և խոսուն մատների զորութթյամբ: Մեծ և կախարդական էր նորա կատարած ազդեցութթյունը լսողների վրա:. Իշխանուհին և եվդոքիան սրտերի փղձկուտմեն ականա արտասվեցան, իշխանը մնացել էր հիացած. ամենքը քաղցր ապշութթյան մեջ էին, միայն Ալիմամադովը մնաց անգգա: Իշխանուհին նայեցավ նորա վրա, և դյուխր չարժելով, ասաց մոթի մեջ.— «Այս դեղեցիկ մարմնու մեջ հոգի չկա»: Եվ իրավ որ՝ բնութթյունը ամեն բան առատ ձեռքով տվել էր նորան, բացի հոգիեն:

Սուսաննան երեխայի անմեղութթյունով նայում էր Ալիմամադովի վրա ու սպասում էր նորանից թեկուզ մի խոսք, թեկուզ մի հչոց, բայց մի խոսք, մի մատղկա-

յին խոսք. սպասում էր խեղճ աղջիկը, եթե չամաչեք դուրս նա կվանդրեր, կաղաչեր, մի խոսք կպատասխեր նորանից: Ավա՛ղ, Ալիմատովը ոչ մի խոսք չասաց և հեռացավ:

Ալիմատովը սկսավ համալսարան երթեվեկելու: Հենց առաջին օրեն ընդհանուր ուշադրությունն իր վրա դարձուց և՛ մեծավորներին և՛ ուսուցչապետներին, և՛ ուսանողներին՝ թե յուր սրտաբին բռնվածքով և թե յուր հիանալի ընդունակություններով: Ինչպես որ նա մի անգամ ինքիրան խոսք էր ասել, այստեղ էլ յուր խոստումնքը չի դրժեց. ամենայն կողմանե նա համալսարանի մեջ ընտիր ուսանողն էր համարվում: Սկզբանե ամենքը սիրում և պատվում էին նորան, իսկ ինքը ոչ ոքի ո՛չ սիրում էր և ոչ պատվում. այս որ նկատեցին՝ ուրիշներն էլ դադարեցան նորան սիքելու, բայց միշտ հարգում էին նորան՝ հազվագյուտ հատկությունների համար. իսկ երբ որ նա մի պարահանդեսի մեջ, պաշտպանելով մի ուսանողի պատիվը, երկու ապտակ ավավ մի դնդապետի ու նույն հետայն մենամարտության հրավիրեց և սիրտը վախ ձգելով, սոսկեց բոլոր ուսանողների առջև ներողություն խնդրելու—այն ժամանակ ընկերները մեծ հարգանք ղդացին դեպի «քաջ հայ ուսանողը»: Սրախաղության մեջ ախոյան չուներ Ալիմատովը, իսկ քառասուն քայլափոխն խաղաթղթի մասին խոսելը ատրճանակն՝ նորա համար մի չնչին բան էր: Շատ կարելի է, որ կարդացողներս այդպես համարում են Ալիմատովին մի նոր Դոն-Ժուան: Չէ, սխալ են նորա. հավատացնում եմ, որ բոլոր իր համալսարանական ընթացքի միջոցին նորա մեջ ոչ մի պաղչուտ խորհուրդ չի մտավ. մայրաքաղաքի ոչ մի առյուծուհին չէր կարող պարծենալ, որ նորան յուր երկրպադուն կարողացել է դարձնել. ոչ մի օրիորդ, մինչև անգամ Եվդոքիան, չէին կարող ասել, որ Ալիմատովը նորա վրա սիրահարվել է. մայրաքա-

պաքէ փորձանքներից չատ հեռու պահեց իրան խելոք Ալիմազովը. նորա մարմինը անբիծ, անարատ մնաց, բայց հոգի՞ն: Այդ ուրիշ խնդիր է:

Նա երրորդ դասընթացումն (cours) էր, որ հորը մի նամակ գրեց այսպիսի բովանդակութեամբ.

«Իմ վիճակս արդէն որոշված է. իշխան Կարիկինը ինձ սիրում և հավատում է. նորա դուստրը ոչ միայն սիրում է, այլ սիրահարված է վրաս. մենք արդէն մեր մեջ թաքուն մատանեփոխութեան արել ենք. Եվդոքիան ասում է թէ՝ եթե մայրս կամենա մեր պսակին հակառակելու, ես թաքուն կպսակվիմ քեզ հետ, և նա վաղ կամ ուշ կներե ինձ և չի զրկել ժառանգութենեն. ուրեմն կարող ես ինձ նպատակիս հասած համարել»:

Բոլոր այդ ժամանակը Սուսաննան չարաթը երեք անգամ գալիս էր երաժշտութեան դասեր տալու Եվդոքիային:

Արդէն երեք տարի էր, որ Ալիմազովը և Սուսաննան վարժապետութեան էին անում իշխան Կարիկինի տանը, բայց երբեք պատահած չէր, որ ամենքը միասին ժողովվեին և ընդհանուր խոսակցութեան ուղենային. մանավանդ Ալիմազովը միշտ աշխատել էր բացակա լինելու, երբ Սուսաննան յուր զրպտմունքին ազատ ժամանակը խոսակցել էր Եվդոքիայի, իշխանուհու կամ իշխանի հետ: Մի անգամ Սուսաննան ճաշի էր հրավիրված. բախտի բերմամբ այն օրը Ալիմազովն էլ այնտեղ էր: Հանկարծ իշխանուհին, խոսքը դարձնելով Սուսաննային, ասաց.— «Ահա քանի ժամանակ է, որ մենք մին մեկին ճանաչում ենք, բայց երբեք պատահած չէ, որ ես ձեզ հարցնեմ—թեև շատ անգամ մտքես անցել է—դուք ի՞նչ ազգե եք. թեև դուք պատմական ռուսերեն խոսում եք, բայց ձեր երեսի տիպարքը սլավյանի չէ»:

— Ապա դուք,— ասաց Սուսաննան ծիծաղելով. Եւ ի՞նչ ազգե եմ:

— Զգիտեմ,— ասաց իշխանուհին, դուցե սպանիա-յե եք, կամ իտալացի:

— Ո՛չ, ո՛չ, ավելի ծիծաղելով ասաց Սուսաննան.— Ոչ սպանիացի եմ և ոչ իտալացի. դրամ կուզամ, որ մ'ինչև չասեմ՝ ամենևին չեք դանիլ:

— Ես գիտեմ,— ասաց Եվդոքիան, դուք Փոքր-Ռուսաստանցի՝ եք:

— Զի դասաք,— ասաց նորան արդեն ծիծաղեն կլկլալով Սուսաննան. ասոված վկա, որ չեք իմանալ: Ապա զոր արեք, դուք ի՞նչ ազգից եմ,— չարունակում էր նա յուր հանաքը:

— Ֆրանսիացի՞ չեք արդյոք, ասաց իշխանը, ա-ոանձին ուշադրութիյունով նայելով նորա երեսին:

— Դուք էլ չիգտաք. ես Ֆրանսիացի ևս չեմ,— պատասխանեց Սուսաննան, և չարունակում էր ամենեղ երեխայի նման հանաք անել, որ ոչ ոք յուր առաջարկած դժվար առեղծանելիքը լուծել չի կարողանում: Եվ վերջապես ասաց բառի վանկերը երգարմե բաժանելով. «Ես-հայ-եմ»:

— Դուք հա՞յ եք,— պատասխանեցին նորան ամենքը նույնպես վանկերը բաժանելով և զարմացական ձայնով. ամենքը ասացին այդ, բացի Ալթմազովեն, որին այդ գաղանիքը վաղուց, հենց առաջին օրեն հայտնի էր: «Մի՞թե դուք հայ եք. եթե չասեիք, ասուոծո անունով երդվում ենք, որ ամենևին չէինք գանիլ,— ասաց իշխանուհին, կարծես թե սաստիկ ուրախացած մի թանկագին գյուտի համար.— ուրեմն այսօր մեր սեղանի վրա երկու հայ հյուր ունինք՝ մին դուք և մյուսը պարոն Ալթմազովը»:

Երբոր Սուսաննան լսեց Ալթմազովի հայ լինելը, յուր սրտի ուրախութիյունը բռնել չի կարողացավ, քիչ

---

1 Փոքր Ռուսաստան առաջ կոչվում էր Ուկրաինան (Малороссия):

մնաց նորա դիրքը սխալ ընկնեը, բայց ինքնիրան ըզ-պեց, և ձեռքը նորան պարզելով, բռնեց նորանը յուր-մեջ, և երկար ու ամուր սեղմելով և երեսի վրա ան-հուն սեր, ուրախութիւն և երջանկութիւն հայտնե-լով, ասաց.— Ա՛խ, որքան ես ուրախ եմ, որ դուք հայ եք, որ ես իմ համազգիներես մի հոգի տեսա, վերջա-պես...

— Մի՛թե դուք հայր-մայր, քույր-եղբայր, ազ-գականներ չունիք. հարցրին տանուտերերը, ցավակից-լով:— Ոչ պատասխանեց Սուսաննան. ես բոլոր պետեր-բուրգի մեջ միայնակ և որբ եմ:

Եվ նա պատմեց իր մասին հետևյալ պատմութիւ-նը.—

«Հայրս Սևաստոպոլի դյուցազներեն մինն էր, որ պաշարման տասներորդ ամիսը, ամրակոծութեան ժա-մանակ մահարեր վերք ստացավ և մեռավ: Նորա մահ-վան բոթը տանելով, խեճ և ցավագար մայրս էլ ավե-լի տկարացավ և չորս ամիս տանջվելով մեռավ: Ես մնացի միայնակ, վեց տարեկան երեխա: Հորս պերու-թյան ցույց տված երախտիքի համար՝ ինձ պետերեցին արքունի վարժարան, ուր տասը տարի մնալով, ամար-տեցի ուսման ընթացքը. բայց ոչ մի մերձավոր ազ-գական չունենալով, վարժարանի պատերեն դուրս չե-կա: Բարի տեսչուհին, որ ինքը երբեք զավակ ունեցած չէ, ինձ յուր հարազատ աղջկա նման սիրեց, ինչպես և ես նորան մորս նման սիրել եմ, և վարժարանեն դուրս գալով, նորա բնակարանի մեջ տեղավորվեցա, ուր այժմ ես կենում եմ: Թեև մայրացուս տասմ է, որ ծնողներես ինչ ու ինչ է մնացել, բայց ես երբեք հե-տաքրքրութիւն ոչած և հարցուցած չեմ՝ թե ի՞նչ է և որքա՞ն է. ինչի՞ս է պետք հարստութիւն. իմ աչխա-տածիս կեսն անգամ մսխել կարողացած չեմ, թեև, ինչպես տեսնում եք, ես ոչինչ բանե ինձ զրկած չեմ: (Պետք է ասել, որ Սուսաննան մի չատ ճոխ և թանկագին հագուստով էր հայտնվում լչխանի տանը): Մայրա-ցուս էլ, տիկին Հոմմելը, ասում է միշտ, որովհետև

ստեղած ինձ չարժանացուց մայր լինելու, ուրեմն դու իմ զավակը և ժառանգը կլինես։ Բարի պառավը ինձ չատ է սիրում. ոչինչ չի խնայում ինձ համար, մինչև անգամ սաստիկ անբավական է ինձմեն, որ ես դասեր եմ առնում ոչ փողի, այլ օրեր ու ամիսներ անգործ չի մնալու ու տան խորշումը չնտելու համար»։

Իրավ որ ամենքը նկատել էին նորա անշահասիրությունը։ Շատ անգամ ամիսներ անցնում, իշխանը կամ իշխանուհին նորան փող տալու մոռանում էին, իսկ ինքը երբեք չէր խնդրում. եթե տված փողը հաշվետեարումը չի գրեին տանուտերերը՝ ինքը Սուսաննան երբեք չէր իմանալ՝ հարյո՞ւր ունի տանելիք, թե՞ երկու հարյուր։ Միով բանիվ՝ Սուսաննան չափազանց անշահասեր ազջիկ էր երեվում։ Բայց հագվածը, ինչպես վերը հիշվեցավ, միշտ նորաձև, նուրբ ճաշակով և հագուստի նյութը պատվական կերպասներե էր. մատանըին հագած ուներ միշտ հինգ-վեց մատանիք, ականջին օղեր, ամենը մեծագին և հազվագյուտ գոհարներով հեռված[1]։

Սուսաննան չարունակեց իր պատմությունը.

— Իմ անունս Սուսաննա չէ, այլ Շուշան է, (այսպես է գրած ծննդական վկայագրիս մեջ), որն առանձը չգիտեմ ինչ խորհրդով, իրանց կերպի փոխել են. իսկ ազգանունս է Արղ...յան։ Հայրս սաստիճանով գնդապետ էր և արդեն գեներալության էր ներկայացուցած. նա այդ բարձր սաստիճանը, ասում են, անչուշտ կստանար, եթե այդ չարաչուք պատահարին չհանդիպեր... Խեղճ հայրիկս»։

Աստ ու արտասվեցավ. բայց տեսնելով որ լսողները ամենքն էլ տխրեցան, իսկույն երեսի վրա մի քաղցր ժպիտ վայելեցուց ու ասաց. «Էհ, ինչ անենք, ինչ որ եղավ՝ եղավ. տխրելով ու լալով անցածը հետ չի դառնալ»։

———

[1] Շարված։

Տիտղ խոսակցությունը փոխել կամենալով, Իշխանուհին ասաց.

— Ասացեք, խնդրեմ, օրիորդ, Սուսաննա, կամ ինչպես որ հայերդ ասում եք, Շուշան, մի՞թե դուք միշտ ամուրի պիտի մնաք, մի՞թե ձեր մաքեն երբեք չի անցնում պսակվել, տուն-տեղ ունենալ, կին և մայր լինել. մինչև ի՞րը այդպես չոր-պլուխ պիտի մնաք, միայնակ ու ձանձրալի կյանք պիտի անցնեք:

— Ինչո՞ւ չէ, ես ուրախությամբ կպսակվեի. բայց ո՞վ ինձ պիտի առնու: Դուք պիտեք լոո, մինչև որ աղջկան երիտասարդը չհավանի և չսիրե, աղջիկը երբեք երավունք չունի,— եթե չուզե յուր պատիվը կորցնել—ո՛չ հավանել և ո՛չ սիրել, ասաց նա ու աչքն ծայրով նայեցավ Ալիմադովի վրա: Բայց Ալիմադովը, որ բոլոր ժամանակը նորա վրա էր նայում, հենց որ Սուսաննայի աչքը նորանին դիպան, իսկույն, իրր թե զզվանքով, յուր աչքը հեռացուց նորանեն: Միայն միայն Սուսաննան այդ ևս չնկատեց. բայց այդ քանը նկատեց զարճյալ Իշխանուհին ու մաքի մեջ ասաց.

—«Այս ի՞նչ հրեշ է. ասես թե սորա սրտումը օձեր ու կաքաւներ լինին նստած. այս ի՞նչ անհասկանալի ատելություն է, որ ունի սա դեպի այս պատվական օրիորդը, չեմ հասկանում»:

Թեև առաջները կասկածում էր, բայց այդ օրը Իշխանուհին համոզվեցավ, որ Սուսաննան սիրում է Ալիմադովին. նմանապես համոզվեցավ նա, որ Սուսաննայի մեջ ավելի կանացիություն, քնքշություն, բանաստեղծական հոգի, աչքուց կա, քան թե իր հարազատ Եվդոքիայի մեջ. և եթե երբևիցե երկբայեր ներկայանային մի օրինավոր, լուսավորյալ, առողջամիտ, մարդկային արժանավորություն ճանաչող երիտասարդի, անշուշտ նա նախամեծարության արժանավենին Սուսաննային կասր: Իշխանուհին ամենևին չէր կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս է կարելի, որ Ալիմադովի պես անհոգի, չար-սիրտ երիտասարդն էլ հայ լիներ, Սուսաննայի նման քնքուշ սրտով զգայուն հո-

դով–հայտառ, ուրախ, բարի ապրելին էլ լինեք նույն ապրի ծնունդ: Բայց նա մոռանում էր, որ մինը ասիացու ձեռքումն էր դաստիարակված, իսկ մյուսը եվրոպացու. նա աշյունին ավելի, վերազանցություն էլ տալիս, քան թե դաստիարակության: Այդ թեորիան որքան էլ ճշմարիտ լինի վերաբերությամբ կովերի, ձիերի, խոզերի, շների և հավերի, այսուամենայնիվ, մարդու վերաբերությամբ միշտ էլ սխալ հետևանքների է բերում: Երեխան ոչ նորա համար է վատ, որ վատ հոգի ու մոգի ծնած է, այլ նա նորա համար վատ է, որ վատ հոգ ու մոգ ձեռք է մեծացած, վատ ծնողներից է դաստիարակված: Ահա ինչի վրա մեծ և առանձին ուշադրության պիտի դարձնեին մեր հայր և մայրերը... Բայց ո՞ր հայր ու մայր կասե, թե «ես վատ եմ»:

Մի անգամ իշխանուհին, ըստ դիպաց[1] յուր մարդու բարձրացուն պարգև առանալուն, մտադիր եղավ մի վառավոր պարահանդես տալու, ուր հրավիրած էր նաև Սուսաննան, որին իշխանը և իշխանուհին սրտեն այնքան սիրում էին, որ ոչ մի մեծամոր ապրանքներ սաոր չէին գտնում: Պարահանդեսեն մի չարաք առաջ Սուսաննան երեսը կարմրած, աչքերը ուրախությենե ցոլալով՝ մոտեցավ ու ասաց Ալիմոզովին.

— Պարոն համոզվի, ձեր կարծիքով ինձ ո՞ր դույն հալավը ավել կվայելէ (կսազի):

— Ի հարկե հարդադույնը (de paille),— ասաց Ալիմոզովը զրնեթե ակամա.— այդ ո՞վ չգիտե որ:

— Իսկ դուք որ դույնը ավելի կհավանիք,— չարաճճակեց Սուսաննան:

— Իմ սիրած դույնը մանիշակագույնն է,— ասաց Ալիմոզովը և ուզում էր հեռանալ:

— Ասացեք, խնդրեմ, պարահանդեսի մեջ դուք

---

[1] Առիթով:

որ՞ն միտք ունիք հրավիրելու առաջին կազբիլին՝— ասաց Սուսաննան, որ կարծես թե ոչ նրա համար է խոսում, որ յուր հետաքրքրութիւնը հագեցնե, այլ երբ թե կարող է նորա ձայնին, որ նորա խոսք ու դրույցը վայելով լսե:

— Ի հարկե իշխանուհիին,— պատասխանեց Ալթմադովը հորանջելով և ասես թե սաստիկ դարչելով խեղճ աղջկա անմեղ ճովղեն:

— Իսկ երկրո՞րդը— պնդում էր Սուսաննան:

— կարծեմ որ քաղաքավարութիւնը պահանջում է,— պատասխանեց Ալթմադովը, քիթ ու պռունկը ծամռելով, երբ թե մի չատ հիմար մարդու հետ է խոսում,— որ Եվդոքիային հրավիրեմ. ի՞նչպես եք կարծում:

— Իսկ երրո՞րդը,— չէր դադարում Սուսաննան, հրեսը դունատած:

— Ես ի՞նչ իմանամ՝ ինչ երևելի տան աղջիկները կլինին այնտեղ. ի հարկե մինին արժանի կզտնեմ հրավիրելու:

Սուր և թունավորված դաշույնը սրտի մէջ ցցած այնքան կսկիծ չէր պատճառիլ խեղճ աղջկան, որքան այս կծու, արհամարհական ու դոռոզ խոսքերը: Իսկույն աչքերեն կաթ-կաթ սկսան արտասունքը դեպին թափիլ:

— Մի՞թե ինձ համար նաև ամենափոքր ուշադրութիւն թողած չէք ձեր հիշողութեան մէջ, պարոն Ալթմադով,— ասաց աղջիկը, արդեն բոլորովին լալով.— մեղք է ձեր հոգին, մեղք է... ես ձեզ այնքան անկեղծ սիրել էի... ասոված տա, որ մի ուրիշը տա ձեզ այն երջանկութիւնը, որ ես երազում էի երբ ևիցե տալ ձեզ:

Այլևս չկարողացավ դոպել սրտի փղձուկը և թաշկինակը աչքերին բռնած՝ դուրս փախավ:

---

[1] Եվրոպական սարի տեսակ:

Պարահանդեսի երեկոն, երկու դինվորական՝ մինը սիրուն դեմքով և դեղեցկակազմ մարմնով դնդապետ և մյուսը ծեր զեներալ, զարդարուն ճրագավառ դահլիճի մեջ կանգնած խոսում էին:

— Ասացեք, խնդրեմ, ո՞վ է այն օրիորդը, որ այնպես մոտ կանգնած, իշխանի դստեր՝ Եվդոքիայի հետ խոսում է,— ասաց սիրուն դնդապետը:

— Ո՞րն է, ո՞րն է,— հարցուց կարճատես զեներալը, աչքերի կոպերը սեղմելով:

— Ահա այն աղջիկը, որ մանիշակագույն ժապավենով զարդարած հարդագույն ձորձ[1] ունի հագած, գլուխը նայե՝ արեգակի պես վառվում է գոհարներեն, որ կենդանի շուշանի հետ խառն, այդպիսի կախարդական դեղեցկություն են տալիս նրան:

— Չա՛, հա՛, այժմ տեսա. բայց չեմ ճանաչում:

— Շատ սիրուն աղջիկ է, երեսի տիպարքը խառնուհու կասեի, բայց դորանն ավելի չնորհալի և մեղմ է և չունի այն լիքը գծերը, որով պարծենում են Ասենեինյան թեթակղդուզ կնանիքը և որոնք, եթե ինձ հարցնեն, ավելի հարմարում է Հելենեային, քան թե համեստ տանտիկնոջ: Ինչ խելոք նայվածք ունի այս աղջիկը, ինչ սիրուն լրանք, ինչ հաղուստի ճաշակ, որքան դեղեցկություն բոլոր արտաքինի վրա և դորա հետ միասին որպիսի անմեղություն դեմքի: Տեր աստված, տեր աստված, կո՞ն իսկ այնպիսի բախտավոր մահկանացուները, որոնք այսպիսի գանձի տեր են լինում:

— Այո՛, այո՛, հոժարեցավ զեներալը, սիրուն օրիորդ է· ով դիտե որ իշխանի, կամ Լոմակի աղջիկն է:

— Պետք է հնար գտնել մեկ կերպով հետը ծանոթանալու,— ասաց սիրուն դնդապետը, թողեց զեներալին և գնաց խառնվեցավ բազմության մեջ:

Պատվելի կարդացողս, հուսամ, արդեն հասկացավ, որ դնդապետի գոված աղջիկը մեր ծանոթ Սուսաննան էր, որ այժմ չըջապատած չատ երիտասարդ-

---

[1] Շոր, զգեստ:

նեբով, կապբիլնեբը, վալսերը և պոլկանեբը բաժանում էր, բայց չատ խնայողությամբ և ընտրությամբ։ Սրդենն առաջին կապբիլի նշանը աված էր, բայց Ալֆմազովը դեռևս դամ չէր դոնել։ Իշխանուհին Բարոն Փ–ն էր հրավիրել. Եվդոքիան էլ խոսք էր ավել յուր մոբեղբոր որդի իշխան Ս–ի հետ պարելու. իսկ օտար օբիտրդնեբը մի անծանոթ կավալերի և այն էլ՝ տան դավնբնյորի[1] հետ պարե՞լ արիստոկրատիական պատհանդհասմը... a'h, quelle horreur![2]։

Սուսաննան տեսավ խեղճ երիտասարդի այդպիսի նեղ վիճակը, խնդրեց յուր կավալերի ձեռքը, շտապով մոտեցավ նորան և ասաց.

— Պարոն Ալֆմազով, դամ չունի՞ք, չէք պարո՞մ։

— Ոչ, ասաց նա, առաջին կապբիլը կարծեմ պար չեմ դալ, դլուխս մի վոբը ցավում է։

— Չէ՞ք կամենալ արդյոք ինձ հետ պարել,— ասաց Սուսաննան, երբ թե չիմանալով նորա նեղ դրությունը։

— Բայց դուք, եթե չեմ սխալվում, արդեն հրավիրած եք,— պատասխանեց Ալֆմազովը, աչքերը վար խոնարհած։

— Ի՞նչ վտյթ, եթե ինձ հետ պարելը ձեզ անհաճո չէ, ասացե՛ք միայն. կավալերիս ճամփա դնելը մի չնչին բան է. կասեմ նորան, որ ձեզ արդեն վաղուց խոստացել էք, բայց մոբիցս դնացել էր. ներողություն կխնդրեմ, և ալրծավ դնաց. հա՞ ուդո՞մ եք։

— Եթե կկամենաք՝ համեցեք,— ասաց Ալֆամազովը.— բայց ես վիզավի էլ չունիմ, որտեղո՞ն կգըտնենք. այժմ կսկսեն պարել, ժամանակ չկա...

— Այդ էլ կհոգամ, դարդ մի անիք,— ասաց Սուսաննան, թռչունի պես թռավ ու դնաց։

Մի րոպեի մեջ Շեռուբենն (ծեր գեներալի հետ խոսողին) աված խոսքը եա առավ, չքմեղ բերելով յուր

---

[1] Դասախրատի։

[2] Ա՜խ, ինչ սոսկալի բան (ֆրանս.)։

մոտացկոտությունը, և կոմս Դիլյանին ձեռքերեն բռնած՝ ծանոթացրեց Ալիմազովի հետ և իրանց վիզավի կանգնեցրեց։ Նույն րոպեին էլ երաժիշտները նվագեցին, պուլդերը սեղերեն չարժեցան, պարողների ոտքի տրփոը, կանանց կերպասե հագուստների չիչխոցը, դինվորականների խթանների զընգզընգոցը, տղամարդկանց խոսքը, կանանց ծիծաղը միասին խառնվեցան, և այս ուրախ իրականությունը տևեց դոնե կես ժամ։

Բայց այդքան մարդոց մեջ ո՞վ էր ամենից բախտավորը, դիտե՞ք։ Գուշե մի գալացնեք, չեք իմանալ։ Ամենից բախտավորն էր միամիտ և անմեղ Սուսաննան, որ իր սիրական Ալիմազովին ակնեղև խայտառակությենեն ազատելով, կարծում էր թե յուր մեծահոգությամբ նորա սրտի մեջ մի փոքրիկ խորչիկ սիրազեհել է. բայց որքան մոլորված էր նա։ Բոլոր պարի ժամանակ թեկուզ մի քաղցր, մի քաղաքավարի խոսք ասեր Ալիմազովը նորան։ Նոր աղավնիի նման չորս պտուտ դարգուրալուն թեկուզ մի պատասխան տար։ Բայց Սուսաննայի ի՞նչ հոգն էր, որ նա անքաղաքավարի էր դեպի իրան, լուռ էր նորա ամեն քնքուշ խոսքերին, խոժոռագեմ նայում էր նորա երեխայական ուրախությանը... Ո՛ր մեղաց տերը լինիմ, եթե նա բոլոր այդ մեծամեծների և նոցա զարդարուն կանանց բազմությունը յուր անձկալիի մազի թելի հետ փոխեր։ Երբոր պարը վերջացավ, Սուսաննան հարցրեց Ալիմազովին.

— Երկրորդ կադրիլի համար դամա ունի՞ք։

— Կարծեմ... տեսնեմ... կարելի է... կիմանաք Ալիմազովը։

— Եթե ունիք,— ասաց Սուսաննան,— լավ, ապա թե ոչ՝ ես զարճյալ ձեզ հետ կպարեմ։

— Լավ... տեսնենք...— պատասխանեց նա բանի հորանջելով, որ ծածկե յուր խայտառակությենը և ներքին չփոթը, որ երեսին պարզ նկարած էր։

Ալիմազովը այն փոքրոգի մարդոցմեն էր, որք իրենց հզոր, ակնեղև թշնամիների վրեժը հանուած են անմեղ, տկար և չատ անգամ իրանց մոտիկ մարդոց-

մեն—իրանց ընտանիքին, իրանց բարեկամներին: Փոխանակ բարկանալու և արդար վրեժը հանելու իշխանուհին, Եվդոքիային և ուրիշ ծանոթ կանանցմե, նա յուր վրիժու և առելության բոլոր թույնը աշխատում էր թափել խեղճ անմեղ ազախնյակի վրան, որ յուր ամեն ճիզը թափում էր նորան մխիթարելու, հովանավորելու և պաշտպանելու:

Երկրորդ, երրորդ և չորրորդ կապրելներուն, երբ Սլթմազովը դնաց դամա հրավիրելու և ոչ ոք չհոժարեցավ նորա հետ պար գալու, և խռով խռով եկավ տեղը նստավ՝ երեք անգամ հեռուհեռե եկավ մոտեցավ նորան Սուսաննան և առավնի նման սկսավ հետը պարել, յուր գվարճ խոսակցություններովը աշխատում էր վարառել նորա թախիծը և մի րոպե չէր թողնում, որ հյուրերը նկատեին հասարակաց արհամարհանքը դեպի նա: Սուսաննան չատ լավ գիտեր, որ ազիզտոկրատները միշտ այդ կերպ պատժում են այն մարդոց, որոնք իրենց առջ ստորնանին ջանք են անում դուրս գալ և մեծատուններուն կարգը անցնել:

Բայց խեղճ ազջիկ բոլոր ջանքը, բոլոր քաղաքավարության, բոլոր անմեղ ու անկեղծ սերը, բոլոր մարդավարության իզուր կորան: Սուսաննան պարզ տեսավ, որ յուր գրկածը ոչ մարդկային տաք սիրտ, այլ մի կարը տաքություն էր. հոգնեցավ, վհատեցավ ու հուսահատեցավ խեղճ ազջիկը: Ոչ մի քաղցր խոսք չի լսեց նորա բերնեն ամբողջ երեկոն:

Պարահանդեսը դեռ ևս վերջացած չէր. հանդիսականներուն առջև չատ պարեր, չատ գվարճություններ դեռ ևս կային այն գիշերը, բայց Սուսաննան ազդեն կորցրել էր յուր գվարթ տրամադրությունը. դնաց նստավ մի հեռավոր խորշ և ընկղմեցավ յուր տրտում մաքերի մեջ: Եռև եռևե չատերը մոտեցան— Սուսաննան այն հազվադյուտ արարածներեն էր, որ նորա բացակայությունը ամեն տեղ նկատելի էր լինում—նորան պարի հրավիրելու. բայց նա որին՝ հոգնել եմ, ասում էր, որին՝ գլուխս ցավում է, որին՝ ազդեն խոսք եմ

ավել, և այդպիսով դվնիցը ցանում էր նոցա. և մինչև պարահանդեսի վերջը մնաց սխալը ուղղում: Միայն Ալիմազովը չհեսավ նրա մոտ և ոչ մի քաղցր ու մխիթարական խոսք չասաց նորան, թեև ինքն էր միակ պատճառը յուր համազգի խեղճ ու որբ աղջկան սըրտմուքյանը:

Ինքն Ալիմազովը նմանապես մի ուրիշ խորհում, թեև հոգվով և մարմնով առողջ, բայց սխալուց ու սըրտառած նաստած, ոչ թե կարեկցութքյուն, մինչև անգամ ոչ ոքի հետաքրքրութքյունը չէարթնեց: Ինչպես որ կար, այնպես էլ մնաց լուրը դիշերը, հյուրերի մեջեն իրա համար նորանոր հարցնացուներ չսկսելով՝ հազարավոր օրավար հոգով և միլիոնական մայր դատարով. նա արդեն պարզ տեսնում էր, որ Եվդոքիան ձեռքեն փախել էր: Ի լրումն յուր թշվառութքյան, նա հետագա տեսանելին հանդիսատես եղավ:

Երկու տարից կին նորա մոտիկ անցնելիս՝ իրար հետ այսպես էին խոսում.

— Ուրեմն այսօրվա պարահանդեսը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Եվդոքիայի նշանախոսութքյունը. թեև երիտասարդ իշխան Ո–ն նախանձելի փեսա է ամեն աղջկա համար, բայց ասում էին թե Եվդոքիան մի հայ ուսանողի...

— Զարմանալի թեթևամիտ ես դու cousine[1], միթե՞ իշխանուհին այնքան խելք չուներ, որ վոքրիկ կրքի համար դոհ չերեր աղջկա ապագան...

Կնանիք հետացան, խեղճ հայ երիտասարդի սրտի մեջ դաշույն ցցելով և դենքը վերքի մեջ թողնելով: Կարծես իրար խոսք տվածի պես, այն դիշեր ոչ ոք նորան չմոտեցավ, մինչև անգամ իշխանը, իշխանուհին և Եվդոքիան.— ասես թե ոչ ոք չդիտեր նորա ներկայութքյունը պարահանդեսի մեջ. միայն ընթրիքեն հետ, հյուրերի տուն դնալու ժամանակ Սուսաննան մոտեցավ նորան և կարեկցաբար հարցուց.— «Պարոն

---

[1] Հորաքրոջ կամ հորեղբոր աղջիկ:

Ալիմաղով, ինչո՞ւ բոլոր պիչերը սրտում մատուանջ հիք։ Ինչո՞ւ ինձ չմոտեցաք, հետս խոսել չուզեցիք։ Մինչե՞ ինձ խոսք ու զգացմունք կպակասեր ձեզ մարդապես կարեկցելու, ձեզ մխիթարելու։ Մինչե այս օտար մարդոց ընկերությունը, որ մեր ազգի չհեները ամենևին ճանաչել չէ ուզում, երկու համազգի, չպիտի մոտեցներ...

Այս վերջին անգամն էր, որ տեսան Սուսաննային. այնուհետև նա բոլորովին դադարեցավ իշխան Կարիլինի տունը հաճախելու՝ Եվդոքիային երաժշտության դասեր տալու համար։

Ժամերը անցավ։ Ապրիլ ամիսն էր։ Մի օր Եվդոքիան մի վոքրիկ նամակ դրեց և Ալիմաղովից հետ պահանջեց իր մատանին (ի հարկե, Ալիմաղովի մատանին էլ դրել էր նույն նամակի մեջ) ասելով, որ նա չէ կարող իր մոր կամքին դուրս գալ, որ հիմարությունն է երեխայության ժամանակ ամած խոսքը չափահաս տարիքին կատարելը, որ ուրս արիստոկրատին մահացու մեղք է, որևէ զգացմունքի համար, յուր բարձր դասակարգին դուրս գալ և սորինը մոնել, որ նա թողնելով մայրաքաղաքի պալատների զվարճությունը, ինչ օր պիտի տեսնե վոքրիկ դավառական քաղաքի խրճիթների մեջ, ուր մարդիկ և կովերը մի կտուրի տակ են կենում, որ նա, Եվդոքիան այնքան ուժ չունի, որ կարողանա մի օտարազգի և աննշան երիտասարդի բոնի մացնել բարձր ազնվականների կաճառը, որ այսպիսի անհավասար պսակը ամեն հանգանքներեն աններելին է խելոք և բարեբաստիճան մարդոց աչքում, որոց կարծիքը արհամարհելը շատ վտանգավոր է, և այլն։

Նույն օրը իշխան Կարիլինը մի ծրարի մեջ 500 մանեթ դրած և հետ մի վոքրիկ նամակ, ծառայի ձեռքով հասցրեց Ալիմաղովին. նամակի մեջ դրած էր.

«Եվդոքիայի ուսումնառությունը վերջացած պետք է համարել. այսուհետև նա ուրիշ կյանքի համար պիտի պատրաստվի. ուրեմն ձեր իմ տան մեջ իրը ուսուցիչ մնալը՝ այսուհետև ավելորդ է: Այսօր ևեթ պիտի պրատեք ձեր կեցած սենյակը, ուր պիտի հյուրընկալեիմ իմ հեռավոր մի ազգականին, որ այսօր պիտի գա իմ տունը՝ հեռավոր քաղաքից, և ինչպես ձեզ հայտնի է, տանս մեջ բացի նորանից, ուրիշ ազատ սենյակ չունիմ, իսկ այս 500 մանեթը ստացե՛ք ինձանից՝ կուզեք ինչպես ընծա, կուզեք ինչպես կանխիկ ձեր ռոճիկը մինչև սեպտեմբերի ամսին, որով կլրանա մեր չորս տարվա պայմանագրությունը:

Իշխան Նաքիլկին»

Վրա անցավ երկու տարի: Ալիմատովը թեև համալսարանական ուսման ընթացքը ավարտեց և մաթեմաթիքայի առաջին կանդիտատը եղավ, բայց նա իր նպատակին հասած չհամարեց իրան. նորա գլխավոր նպատակն էր, մայրաքաղաք գալով, ոչ գիտություն, այլ և փող և մեծ փող ձեռք բերել. բայց այն անթածած փողը, այդ ժանդատ մետադը չընկավ նորա ձեռքը: Ալիմատովի սիրտը «խոր մնաց», նորա ուխտը չկատարվեցավ. ամոթ չէ՞ր նորան վերադառնալ Երևան կամ Թիֆլիս՝ առանց արխատկրատ կնիկա, առանց մի-լիոնավոր օժիտի. ի՞նչ պիտի ասեին մարդիկ: Ալիմատովը համառությամբ մնաց Պետերբուրգ և սպասում էր յուր բախտի անիվի չուռ գալուն:

Մի անգամ բարեկամներեն մեկից լսեց, որ գերմանցի ծեր մի ամուրի կա, որ չատ ուզում է յուր եղբոր՝ տարիքը անցած աղջկան մարդու տալու, որին ասում էին ամենքը մխաբերան, թեև այժմ մեծ օժիտ չի տալ, բայց պատավ աղջիկը նորա միակ ազգականը դառով, ծերունու մեռնելեն հետ հարկավ պիտի ժառանգե նորա անբավ հարստությունը, որն ասում էին, ու-

թը մելիոնն ավելի է և ապահով կեցած է տերությունից:

Ալիմազովը խնդրեց բարեկամին, որ իրան ծանոթացնե թե՛ այդ հարստացու աղջկա և թե՛ նորա ծերունի հորեղբոր հետ: Շատ ժամանակ վրա չանցած, նա երկուսի հետ էլ ծանոթացավ, և ինչ որ լսել էր նորա մասին, իրավ որ այդպես էր. աղջիկը երեսուն տարեկանին ավելի չոր-չոր, բարձրահասակ, բավականին գանգատ, դեղին ու նորա մազերով, երկայն երեսով դեմանուհի էր, իսկ ծերունի հորեղբայրը մոտ յոթանասուն տարեկան հիվանդոտ մարդ էր, որը, ինչպես ասում են, «բերնեբերան հոգին ալեակ փչեր»:

Ալիմազովը յուր կրակոտ աչքերով և դեղեցիկ երեսովը չուտ կարողացավ տաքացնել այն սիրտը, որ արագ-արագ սկսել էր հանդչել սիրո համար: Ողորմելի Մարիխենը չգիտեր ո՞ր տասվածներուն փառք տար այսպիսի անակնկալ բախտի համար. երեսուն տարեկան հասակումն քանդիվնդ տարեկան բոցոտ սրտեր— այդ խոտ հեքիաթի մեջ գրվելու բան է: Ինչ՞ն իրան հանգստացնելու համար՝ Մարիխենը ձեվանում է, իբր թե կասկածում է Ալիմազովի սիրո անկեղծության մասին: Ալիմազովը երդումով հավատացնում է, որ բացի անխարդախ սերեն, ուրիշ ոչինչ չի փնտրում նորա մեջ:

— Կարելի է դուք կարծում եք, որ հարուստ ծերունին իմ հայրս է և կամ ես նորա հոգևոր զավակն եմ. ա՛յ, ես մի խեղճ որբ եմ և մի կտոր հացի համար կենում եմ նորա մոտ:

— Ի՞նչ փույթ, ես ոչինչ ուրիշ բան չեմ ուզում, բացի ձեր սրտեն և ձեռքեն,— հանգստացնում է նորան Ալիմազովը:

— Պարոն Ալիմազով, կարելի է դուք կարծում եք, որ ինչպես իմ համազգի գեղմանացի կնանիքը կամ աղջիկները, ես երբեք ուսումն ունիմ կամ հմուտ եմ տնտեսության մեջ, այդտեղ և կսխալիք. ծնողներես վաղ զրկվելով, ես ոչ ուսումն առած և ոչ տնտեսու-

թյուն կարողացա սովորելու. իսկ հորեղբայրս շատ ժլատ էր, որ նա իմ կրթության համար տաք տարեկան մի քանի հարյուր ռուբլի։ Այժմ ես կարող եմ միայն,— նայեցե՛ք, առաջվանե՛ս եմ ասում,— ապահովյալ մարդու կնիկ լինել, ավել ոչինչ։

Ալեքսադովը ծոցեն հանեց համալսարանի առացած վկայաթուղթը և ասաց։

— Ահա այս թուղթը կատա մեզ շատ փող և կատարյալ ապահովություն, իսկ ձեզ, քնքուշ օրիորդ, կմնա այդ փողը ձեր ուզածի պես մսխել և իմ տաք սրտի մեջ ձեր մինչև այժմ վնասած բախտը դանել։

Աղքատակորով դերմանուհին, տեսնելով որ յուր ամեն պահանջությունները հայտնելեն հետո, չկարողացավ հեռացնել իրանից այս սիրահար երիտասարդին, և մյուս կողմանե մտքը անելով թե ինչ չահ է այսքան ժամանակվա կամավոր կուսությունը, խոսք տվեց Ալեքսադովին, ոչ առանց ցիրլիխ-մանիրլիխ (zierlich-manierlich[1] չարժանների՝ նորա հրաբորբոք փափագին հասցնելու, և նույն երեկոյին, թեյի ժամանակ պատմեց յուր հորեղբորը այս անակնկալ բախտը։ Հորեղբայրը երկու ձեռքը mit Andacht (բարեպաշտությամբ) բարձրացնում է երկինք ու ասում.— Փա՛ռք քեզ աստված (Gott sei Dank), թեև մի փոքր ուշ, բայց վերջը-վերջը լսեցիր դու իմ աղոթքը։ Ես խոստացել էի ողորմած հոգի եղբորս, քու հորդ, որ մինչև քեզ մի արժանավոր մարդու կին չի տեսնեմ, ոչ կպսակվիմ և ոչ կմեռնիմ։ Ես ինչ անեի, որտեղո՞ն դանեի քեզ համար արժանավոր փեսա. դու դիտես մեր ժամանակվա երիտասարդները մի-մի արծաթասեր Հուդա Իսկարիոտացիներ են, որ ամեն բան, մինչև անգամ իրանց սուրբ ղպացմունքը պատրաստ են փողի դնով ծախելու. նոցա ո՛չ կենաց անբաժան ընկեր, այլ ոսկիով լցված անդուն է պետք։ այս է պատճառը, որ քու պսակը ein Bisschen (մի փոքր) ուշացավ, իմ սիրական Մարիխեն։

[1] Նուրբ կատարվող, սեթևեթող (գերմ.)։

Գեհ, ուրեմն էդուց ճաշի հրավիրեք Հերցենս լիբխեճիդ[1], որ ես էլ մի փոքր հետը խոսիմ, տեղեկանամ և մխամանամ, որ ասպա թե կարողանամ նորան ավանդելու իմ շեցխենին (գանձին):

Մյուս օր, իրավ որ, Ալթմատովին հրավիրեցին դերմանացի կրնսոսի մոտ ճաշի: Wildbraten-ի մեջ, առանձնակու կոպեկանոց դարնջուրի, առջև սկսվեցավ երեսուն տարեկան դերմանուհու հարսնախոսությունը՝ քսանհինգ տարեկան չքնաղ հայ երիտասարդի հետ: Գերունի Շմիդտը յուր ականջով լսեց Ալթմատովի անշահասեր առաջարկությունը և անչքնաղեի սերը դեպի Մարիխենը, որի վրա, իրը թե, վեց տարին ի վեր աստիկ սիրահարված է: Զդիտե՞մ հավատաց Գերունին, թե՞ հավատացող ձևացավ, միայն թե հոժարեցավ նոցա ամուսնությանը: Ճաշեն հետ երկուսին էլ յուր առանձնասենյակը հրավիրեց, ինքը վրան հինավուրց բարեսաչա նահապետների դերը առավ և սկսավ պես-պես խրատներ տալ, որը քաղել էր դաղ-բաղարի մեջ գնած արժանագին դերմանական դրքերեն. հորդորեց նոցա՝ իրար սիրել, աչքերը օտար մարդոց վրա չէ անկել և չատ այսպիսի հոգեշահ խրատներ ալեց նոցա, որոց համար, ինչպես ամենքը դիտեն, ժլատ մարդիկ խիստ առատաձեռն են: Ես հեղինակս այս վեպին, իմ կողմանե կարող եմ հավատացնել, որ Մարիխենը այդ ամեն խրատները ճշտությամբ կկատարե:

Այսպես, ամեն կողմեն մխամոված, Գերունին Աբրահամի, Իսահակի, Հակոբի և Տոբիտի օրհնությունները թափում է (դերմանացին չատ սիրում է ասալաճաշունչ կարգալ, այդ դիտեք ամենքդ) այս սիրահարներու գլխուն:

Մի շաբաթից, ուր Գրիգորը—Աստված լուսավորե Հոգին—Սմոլենսկի եկեղեցիները, լեզյային կատարում է ոտա պռակի ծեսը, և նույն օրը Պետրոս—Պողոսի եկեղեցում դերմանական արարողությամբ կատարվում

[1] Սրաի սիրածիդ (դերմ.):

է նույն բանը երկրորդ անգամ: Մյուս օր Ծերունի Շմիդտը 3500 ռուբլի Մարիխենի անունով դնում է պահարանը, իսկ չարաճճի չանցած ինքն էլ պահվում է մի աղքատ, բայց շատ սիրուն և քանդրկու տարեկան գերմանացի աղջկա վրա. և բանը սորանով կվերջանար, եթե մի տարուց հետո Ծերունու նորահարսը մի պռվակ չնծայեր Ծերունուն:

1870 թվականին ես վարչվել էի գնացել իմ մասնավոր գործերի համար, և այնտեղ ոչ մի ծանոթ չունենալով, հյուրանոց էի իջել. նույն հյուրանոցումը, ծառաներեն իմացա, իջել էր նաև մի հայ քահանա: Որքան որ հայերը իրանց կեցած քաղաքումը աշխատում են իրարմե հեռու լինել, այնքան էլ օտար տեղը նոցա իրար մոտեցնում է: Ես չուտ ծանոթացա այդ քահանայի հետ և իմացա, որ նա հատկապես Մոսկովեն է եկել՝ մի գերմանացի գեներալի որդին հայ կընքելու: Հետաքրքրությունս չարժեցավ և քահանան ինձ պատմեց հետևյալը.—

Մի պարահանդեսի մեջ գերմանացի գնդապետ, աղջանունը Շեֆուբե, սաստիկ սիրահարվում է մի սիրուն որբ հայ աղջկա վրա, անունը Շուշան, Աբգ...ն իշխանական տոհմեն, որ գրեթե ոչինչ ծանոթություն չունենալով յուր հանգուցյալ ծնողաց մասին— որովհետև շատ փոքր հասակի մեջ որբացել է— վարժուհու պաշտոն է կատարում եղել: Երբոր գնդապետը հնարը գըտնում է նորա հետ բարեկամանալու և նորա մորացուի տունը, ինչպես փեսացու, հրավիրվելու, վերջինեն, այսինքն մորացուեն իմացել է, որ այդ կարծեցած խեղճ որբը բավականին նշանավոր ժառանգություն ունի իր մեռած ծնողներեն՝ կալված-քներով և ոսկեղեն—ակնեղեններով: Բարի պատահար հայտնել է գնդապետին, որ Շուշանը ոչ միայն իր հանգուցյալ ծնողաց, այլ և յուր ժառանգն է, և ցույց է տվել նորան յուր հոգեզավակի անունով հարյուր հազար ռուբլու բանկային տոմսակ:

Պատկի ծեսը չկատարած, Շուշանը յուր վեհապի հետ օրինավոր պայմանաթուղթ է չինել, որով իրմե ծնած զավակները, թե տղա, թե աղջիկ, անպատճառ հայ պիտի կնքվին և հայ պետի դաստիարակվին: Գնդապետը հաժարել է, ատորագրվել այս պայմանին և ապա կատարվել է նոցա պսակի ծեսը: Շուշանի ամուսինը այժմ գեներալ է և Վարշավայի մեջ ռուբլյան ծանրակշիռ պաշտոն ունի:

Իսկ բախտախնդիր Ալիմազովը՞ ինչ եղավ:

Նույն օրը, որ տիկին Շմիտի հղության ավետիսը հասնում է նորա ականջին, նա ինքը էրան խոսք տվել է, հենց որ երեխան ողջ և առողջ աշխարհ գա՝ նույն վայրկյանին ատրճանակը իր ճակատին տրաքացնել: Կատարե՞ց արդյոք նա յուր խոստումնքը, թե ոչ—չգիտեմ, վաղուց է Պետերբուրգեն լուր չունիմ:

ՏԻԿԻՆ ԵՎ ՆԱԺԻԶՏ

Վ Ե Պ

ՏԵՏՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարվա եկավոր ժողովուրդը այնքան չատ էր խանութուքումը, որ ամեն վոքրիչատե օրինավոր տուն, բնակարան կամ հյուրանոցի սենյակ կրակի դին ուներ, այնպես, որ երեք ամսվա տալու վարձով կարելի էր այնտեղ և եթե մի վոքրիկ սեպհական տուն չինել՝ հիմքեից մինչև կտուրը. ուրեմն կամա ակամա ստիպվեցա րավականալու մի վոքրիկ խցիկով, որը վարձեցի մի պառավ ռուս կնոջմե: Առավոտ և երեկո այդ պառավը պարտավոր էր ինձ համար ինքնաեռ դնելու և այդ բանի համար պիտի տայի նորան ամսական երեսուն մանեթ: Սաստիկ զժգոհ էի, բայց ի՞նչ անեի այս մեկ ժամանակավոր հարկ էր, որ ամենքիս (հանքային ջրերով բժշկվողներս) ստիպված էինք տալու կավկասյան բժշկարար ջրերուն:

Մի օր այս պառավը, ձեռքը մի հաստ տետրակ բռնած ներս մտավ ու ասաց ինձ.

— Պարո՛ն հրամանքդ ռո՞ւս ես, թե այլազգի ես, մեք հավատեն չես:

— Ես հայ եմ, պատասխանեցի:

— Եթե հայ ես, ուրեմն այլազգի ես, մեր հավատեն չես:

— Հա՛, այդպես է ասացի, ես ո՛չ ձեր ազգեն եմ և ոչ ձեր հավատեն. ի՞նչ ես ուզում ինձանիցե:

— Ջե՞ս կարող արդյոք իմանալ՝ այս ի՞նչ լեզվով գրած է, (ցույց տվեց ձեռքի տետրակը), ոմանք ասում են

վրացերեն է, այլք ասում են՝ թաթարերեն է, ուրիշները ասում են՝ չերքեզերեն է, բայց տեղյակ ոչ ոք չգիտե: Դու որովհետև ուսս չես, այլազգի ես, անշուշտ պիտի կարողանաս կարդալու: Շատ անգամ՝ ուզեցել եմ հնոցը ձգել այրել, կամ ձմեռվա պատուհաններս թղթել, բայց հետո վրդմանել եմ ու միտք արել թե՝ կարելի է մի մարդ գտնվի, որին դա պետք դա, ինչու փչացնեմ այս տետրակը. անշուշտ մեկ մարդ տորա վրա աշխատություն թափել է ու օրերով աչքը խավարցրել է, գրել է: Նայե՛, պարոն, ինչպես հատա տետրակ է:

Ձեռքս առի տետրակը. նայեցա՝ տեսնեմ հայերեն է. շատ ուրախացա:

— Մայրիկ, ասացի, եթե այս տետրակը քեզ պետք չէ, ծախե ինձ. ես քեզ լավ փող կուտամ:

— Ինչի՞ս է հարկավոր, ասաց պառավը. բայց եթե փող կուտաս ու կառնես այդ ինձ համար ավելի լավ է, ես խեղճ կնիկ եմ մեկ քանի կոպեկը երբեք ինձ համար ավելորդ փող չէ:

— Կուզե՞ս տասը մանեթ տամ:

Պառավի աչքերը վառվեցան ագահությունից, այդպիսի առատ վարձատրություն երբեք չէր ապատում նա մի անպիտան տետրակի համար որ ամեն բոպե պատրաստ էր եղել հնոց ձգելու ու այրելու: Բայց արի տես որ մարդկային ագահությունը սահման չունի եղած:

— Տա՛ր առանըհինգ մանեթ, ասաց պառավը լինքըն էլ վախենալով այս չափազանց պահանջմունքին ու առ քեզ տետրակը:

— Լա՛վ է, մայրիկ, կուտամ քեզ տասնըհինգ մանեթ և կառնում տետրակը. բայց ասա, խնդրեմ, ինչ կերպով դա քու ձեռքը ընկել է:

— Դու ուզում ես իմանալու ինչ կերպով իմ ձեռքը ընկել է այս տետրակը, ասաց պառավը, ահա՛ լսե: Ես մեկ փեսա ունեի, որ վեց-յոթը տարի առաջ հյուրանոցի մեջ սպասավորություն էր անում: Այն տարի մի

օտարազգի բժիշկ եկավ Էսահիթուք և վարձեց այդ հյուրանոցումը մի սենյակ, և քանի մի ամիս կեցավ. երբոր նա յուր տեղը դնաց, սենյակը մաքրելու ժամանակ, վեհաս գտավ այդ տետրակը պահարանի մեջ և, կարծելով որ մի օր սորա տերը կկամ պարելու և զբոսնողին վարձ կխոստանա՝ պահեց յուր մոտ: Բայց փեսաս չուզով մեռավ. աղջիկս էլ նորանից ետ չատ չապրեցավ. նոցանից մնացած մեկ քանի լաթերի ու հին հալալներին հետ մխաին այս տետրակն էլ ինձ մնաց: Ահա՛ այս տետրակի բոլոր պատմութիւնը: Տո՛ւր փողը և բարի վայելե՛:

Ես իսկույն ավի տասնըհինգ մանեթը և տետրակը իմ սեպհականութիւնը դարձրի:

Հուլիսի 10, 18, Էսահիթուք

ԱՌԱՋԻՆ ՏԵՏՐԱԿ

Տաք-Ջուր. Հունիսի 10.

Շատ ձախորդ պարագաներով մտա Տաք-Ջուր: Ճեպակառքը, որն մեզ «Հանգային Ջրերեն» բերեց այս տեղ՝ դուրս թափեց ամենիս փողոցի մեջտեղը և ինքը դնաց հեռացավ: Մանր, սառ, թափանցիկ անձրևը անդադար չաղում էր. գետինը թաց, տեղ տեղ ջրհեղեղներ կանգնած. ծառերից ամեն մի քամի փչելից հորդահոս թափում էին խոշոր կաթիլներ. մարդիկ դեմքերին հոգս նկարած՝ չոտպում էին լրանց գործին. խանութի տղերքը ծուլ-ծուլ կանգնած էին խանութների դրան մոտ, անցուդարձ անողներին մինչև անգամ չէին հրավիրում ապրանք գնելու, իմանալով որ՝ ամեն մարդ այժմ մի բան է գանկանում, որ է՝ պատապարվել այս անտանելի օդեն:

Այսպես իմ մուտս բարևեց Տաք-Ջուրը:

Մի հայ խանութպանի օգնութիւնով քաղաքի եռ ընկած թաղի մեջ ծանր գնով վարձեցի մի հավաքան և փոքրիկ պայուսակս ու իրեղեններս ներս տարի: Եվ շատ ուրախ էի, որ դնեի ցուրտ անձրևին կարողացա ինքս ինձի ապաստել:

«Տաք–Ջուրի երեք ամիսը կերակրում է նորա ամբողջ տարին»: Որպիսի ահագին հարկ պիտի տա ամեն մի ճանապարհորդ, որ կշտացնե մի ամբողջ քաղաք. քնակարանի վարձեն բռնած մինչև վերջին իրը քառապատիկ դին ունի այտեղ՝ համեմատելով ուրիշ տեղերի: Ինչուք թե հարուստ մարդը կարող է պիարդ և իսկ տանել այդ ծանրությունը. ի՞նչ անե աղտմալի չքավորը: Ահա խնդիր, որն վճռելու համար շատ փիլիսոփաների գլուխները պիտի ցավին ունայն:

Մեր կողմի մարդոց շատ հայտնի բ դրել է այտեղ յուր շռայլ ապրուստը բավականացնող առատ ապրյուր: Նորա անհագ առատութը լցնելու համար որքան նիհար քսակներ ու գրպաններ պիտի քամվին:

Այսօր պղտոր եղանակի պատճառով երաժիշտների խառնը նվագելու չէ. ուրեմն ճեմելիքների մեջ գրոսնող ժողովուրդ չի լինիլ: Կմնամ տանը և չիոթած գըլուխս ու պայուսակիս մեջի իրերը կաթպի կբերեմ:

Ինչպես կուզեի իմանալ՝ եկե՞լ է «նա», թե ո՛չ. և կամ՝ այսպե՞ղ է, թե՞ գնացել է Խնեթուք, կամ Թըթու–Ջուր, կամ Երկաթ–Ջուր...

Հունիսի 11.

Այսօր բոլոր օրը անցուցի ճեմելիքների, հասարակական զրոսարանների մեջ և լողարանների մոտերը՝ ման գալով, հույս ունեի կա՛մ «նորան», տեսնել, կա՛մ՝ նորա հորը, կա՛մ նաժիշտին և կամ ծառաներին մեկին. բայց իմ մանրակրկիտ հետազոտությունները իզուր կրան. նա դեռևս եկած չէ՛: Շատ կառապանների էլ հարցուցի՝ արդյոք այս ու այս նշաններով մարդիկ բերե՞լ եք Հանքային-Ջրեր տալած իջևանին. նորա պատասխաններեն եղրակացուցի, որ իմ պարածներին նոքա ոչ տեսել են և ո՛չ հանդիպել են: Ինչո՛ւ այսքան ուշացան, ի՞նչ է պատճառը, ի՛նչ արգելք է հանդիպել: Իմ կարծիքով նոքա ոչինչ պատճառ պիտի ունենային Թոռամով այդքան երկար մնալու:

Քուռակը թեև մայիսի առաջին օրերին սկսած են, բայց ժողովուրդը չատ սակավ է։ Ասում են թե այժմ՝ Կավկասի ջրերը այցելելը ավելի թանգ է նստում, քան թե արտասահման երթալը։ «Կուլրն էլ գետ, որ կլերակին տան օր է»։ Երբոր լուր տարածվեցավ, որ մեր մեծամարդիկը Կավկասի ջրերը ուղել են բախտախնդիր Բ. ձեռք՝ ամենքը, մխաբերան ասացին, որ ջրերու բանը պրծավ. ժողովրդի նախապաշարմունքը չատ և ճիշտ կատարվեցավ, թեև Բ. դորանից ոչինչ վնաս չունի։ Ով գիտե նա յուր տան խորշում նստած և հազարները համարելով քթի տակից որքան կուշտ ծիծաղում կ'լինի, ասելով.

«Թող իմ բանը աչքն, ով կուզի հաչի»։

Քաղաքիս իսկական անունը խաբարդացիներէն լեզվով Ըսաբ–Սու է, որ նշանակում է տաք ջուր, իսկ ռուսաց Փեաթիգոռսք անունը ստած է Բեչ–թաւ սարեն, որ հինգ գագաթ ունի և որ քաղաքիս հյուսիսարևելյան կողմումն է 8—10 վերստ հեռավորությամբ։ Ինքը քաղաքը հիմնած է Մաշուխ սարի լանջի վրա, նորա ստորոտը և այն ձորի մեջ, որն կազմվել է Մաշուխի ծոցեն բխող հանքային ջրերու վորելեն։

Հանքային ջրերու բժշկարար զորություն ունենալու մասին, մեր օրերում, երկարորեն խոսիլն անգամ ավելորդ աչխատանք է, իսկ Կավկասի հանքային ջրերու օգտավետությունը խորին հնություն ևս հայտնի էր։ Բայց ես մի տարօրինակ կարծիք լսեցի, որին թեև չեմ հավատում, բայց այստեղ հիշելը ավելորդ չեմ համարում։ Ինձ չատ տեղացի ծերեր ասացին որ առաջին ժամանակները Տաք–ջուրի բժշկարար ուժը ավելի էր. հենց որ նորա սկսան նորանոր կարգերը մտցնելու՝ ջրերն էլ քանի գնաց ավելի և ավելի կորցրին զորությունը։ Դարձյալ կրկնում եմ, այս խոսքերին ես հավատ չեմ ընծայում, բայց նոցա տակը ամուր գծում եմ։ Սորա նման մի ուրիշ կարծիք կլսեք Թիֆլիսի ծերերից եղանակի ցրտանալու մասին։ Այս ի՞նչ բան է։

Երկու օր անասանելի օրեր էին՝ տոթ, քամի և փոշի. բոլոր այդ ժամանակը ոտքս սենյակս դուրս չէի գրի. ինքս լինել, սիրտ էի ղռում: Խոսելիքի ջուրը մարդուս չատ արթուն է պահում, այնպես, որ՝ նորա խմողը յուր բնակարանին չատ պիտի չհեռանա:

Այսօր որ դուրս եկա՝ առաջին գործս եղավ հարց ու փորձ անել Սոֆիայի մասին. երբոր լսացա, որ առակավին եկած չէ՝ դնացի ու առաջին անգամ մուտ տաք-ջրի երեսին ծծմբային լոգարանը. թեև մեյն տասը փողե մնացի մեջը, բայց երբոր դուրս եկա՝ առես թե կյանքիս վերա տասը տարի ավելցուցած զգացի: Երանի՛ այն մարդոց, որոնք տասվածային այսպիսի հնորհը տարին—տասներկու ամիս քթերի տակ ունին... Բայց ի՞նչ կասես, որ Հայաստանն էլ մի օր լիքն է եղել բնության այսպիսի անդին գանձերով: Ասում են թե՝ Անիի բաղանիքի մեջ հինգ ջոկ հատուկության հանքային ջրեր բերված են եղել գնոազան տեղերե:

Առավոտները բազմությունը ժողովվում է Եղիսաբեթյան աղբյուրի կամ ինչպես չենքի վերա գրած է՝ Եղիսաբեթյան սրահի մեջ, ուր յոթը ժամեն մինչև ութը նվագում է երաժշտաց խումբը: Հիվանդներեն չատերը այդ մի ջոգին են խմում ա՛րը մի և ա՛րը երկու բաժակ ծծմբային ջուր և մարսելու համար ամբողջ ժամ առաջ ու ետ ման են գալիս սրահի մեջ: Երբոր ե-րաժիշտները դադարում են նվագելը, բազմությունն էլ ցրվում է: Այնուհետև սովորաբար սկսում է ժողովըրդի կամ ավելի ճիշտ ասեմ՝ հիվանդների մեծ մասը լոգարաններումը լվացվելու:

Երբ որ աղբյուրին մոտեցա, որ հանքային ջրին խմեմ, մի լիսի դեմքով, բայց բավականին դեղնեգիկ երեսով և բարեկազմ մարմնով երիտասարդ սպա ինձ ետ մդեց և յուր բաժակը լինձանից առաջ տվեց աղբյուրեն ջուր հանող աղջկան, որ լցնե ջրով: Ես վրդովված նայեցա սպայի երեսին. նա էլ նայեցավ վրաս

պայքար հրավիրող կերպարանքով. ասես թե մեղավորը ոչ նա, այլ ես էի: Ես լռեցա, սպան քաջալերվեցավ և առավել համոզվեցավ, որ «համարձակությունը քաղաքներ առնող է»: Այս սպան ինձ բոլորովին անծանոթ չէր: Ես չատ անգամ տեսել էի սորան երկու մայրաքաղաքի մեջ: Օքելների մեջ մեծածախ ճաշի կամ խորակի մասնակցող, դիվներքուի մեջ չիշ ու դավաթ փչրող, ծառա ծեծող, հայելի կոտրող, թատրոնոմը չհավանած դերասաններին և դերասանուհիներին թրջած խնձոր ձգող, լիխաչով չափ-ուվող մայրաքաղաքի հռչակավոր fոfորների եաևից այլն և այլն, մինով բանիվ՝ այնպիսի «չքնդ առահասկությունների» անող, որոնց համար մինչև այժմ, այսինքն մինչև առանևիններորդ դարս չի կարմրում այսպիսի սպան: Ասում են թե՝ այս սպան մի առանձին հատկություն ևս ունի, որն էեան բերել է փարիզին յուր վերջին ճանապարհորդությենեն այսինքն՝ լավ վարժով պիֆոնսուրյուն անել: Այս նորամուտ բառ է եվրոպական լեզուների մեջ. եթե սորա ճիշտ մեկնությունը կուզեք իմանալ՝ հարցուցեք հարուստ այրիներին... Այս երիտասարդ սպայի անունը Վլադիմիր Դոռդրով էր:

Ուեթը ժամին, երբոր երաժիշտները զարթուեցան նվագելու և ժողովուրդը խումբ խումբ սկսավ վերեն վայր իջնելու, ես էլ միայնակ տխուր սկսա իջնել և ուղղեցի քայլերս դեպի բնակարան: Երմալովի լուսբանին որ հասա՝ հանկարծ առջևս երեք փայտոն, սրընթաց անցան, վերջին երկու փայտոններըը ծանր բեռնավորված էին, մեջերը նստողները չկային, իսկ առաջինի մեջ նստած էին չորս հոգի, երեքի երեսը չտեսա, բայց նոցանեն մինին ես նմանեցուցի Կատյային—Սոֆիայի հայ նաժշտին: Սերտս ատաիկ թռունդ առավ. մոռացա Դոռդրովին էլ, իմ այն առավոտ կրած անարգանքն էլ—բոլորը մոռացա. Սոֆիայի ներկայությունը ասես թե բոլոր քաղաքի մեջ երջանկության հատ և լույս տարածեց. ծառերն էլ ավելի դեղածիծաղ էին երեւում, մարդոց երեսն էլ ավել բարի և աչնիվ, աղբ

անպատվող հայերն էլ երեւում էին ինձ առավել անարադ քան թե ցածահոգի:

Գաղտնիք չէ՛, որ ես սիրահարված եմ Սոֆիայի վրա և պլանավորը՝ սիրահարված եմ առանց հույսի: Սոֆիան որ կա՝ մեզնոտաների միակ ժառանգն է, իսկ ես Հայաստանցի մի խեղճ երիտասարդ, համալսարանն հենց այս ամառ արձակած բժշկի վկայագրով: Երկինք ու երկիրը երբ ավելի մոտ են, քան թե ես ու Սոֆիան:

Հունիսի 18.

Հինգ օր անդադրում գիշեր ցերեկ անձրևներ են գալիս, ո՛չ մի վայրկյան չի պարզեցավ երկինքը, ու դեռևիս չցամաքեցավ, որ ես կարող լինեի ոտքս չեմքեա դուրս դնելու ու Սոֆիայի մասին, ինչ ու ինչ համառելու երա՞զ նա էր եկողը, եթ՞ ես խոթվեցա մի օտար աղջիկ կատայի տեղ ընդունելով, և այդ չատ հավանական է:

Ջանճրութիւնը և հոգեկան վիշտը խեղդում է ինձ, սիրտս ուզում է տրաքել: Գիրք չունիմ, որ կարդամ, ծանոթներ չունիմ, որ հետերը նստիմ, խոսակցիմ, սիրտս բացվի, եղանակը պարզ չէ՛, որ վողոց իջնեմ, մարդ տեսնեմ: Բանտարկյալի նման չորս պատի մեջ փակված, հորանջելով և հեկեկալով մնացել եմ:

Որովհետև առջևս պարապ ժամանակ կա (մինչև Սոֆիայի գալը) և ես մեկ ուրիշ օգտավետ գործ չունիմ կատարելու, հիշեմ իմ անցյալը, որն այս ներկայս հետ անխզելի կապ ունի:

Համալսարան մտած տարիս՝ հայրս մեռավ, հորեղբայրներս որոնք հորս կենդանութեան ժամանակ հորս խանութի մեջ հաստարակ սպասավորներ էին, չգիտեմ ի՞նչ խարդախութիւն բանեցուցին, որ մեռելը դեռ ևս սեղանի վրա կեցած՝ հայտնեցին, որ հորս մեծ հարստութենեն բացի հիսուն հազար մոսկովցիների պարտքեն ուրիշ բան մնացած չէ՛: Մայրս քույրս և ես մնացինք որբ և աղքատ: (Հորս մահեն ետ ոտքս էլ շատ

չապրեցան, մի տարեկից մեռավ քույրս և տարի ու կես սից մեռավ մայրս)։ Քանի մի ժամանակներն աղքատ հոր եղբայրները դարձան մեր քաղաքի առաջնակարգ հարուստները, իսկ մայրս և քույրս իրանց իրանք աղքատների ապրուստը ստիպված են եղել կար-կարիատով ճարելու։ Այսպես՝ ես Մոսկովոմը օխտն-օտար աղչի մեջ, հեռի մայրենի քաղաքից, հեռի սիրելի բարեկամներից մնացի անուռը, լքած և օրական հացի կարոտ։

Այն ժամանակները Մոսկվա մի բարի քահանա կար՝ անունը Մովսես։ Այս տեր-Մովսեսը, իմանալով իմ նեղ վիճակը, առանց ինձ բան ասելու, գնացել է մի նորեկ հարուստ հաշտարխանցի հայ վաճառականի մոտ և պատմել է իմ որպիսութիւնը։ Իսկ և իսկ այդ վաճառականին էլ յուր միակ աղջկա կրթութեան համար այդ միջոցին պետք է եղել մի վարժապետ։ Եվ այդ կերպով Տեր-Մովսեսը և Աստուած-աղան իրանց մեջ պայման են դրել՝ ամսական տասներկու մանեթ ռոճկով ինձ կարդալ վարժապետ։ Երբ տեր-Մովսեսը ինձ հայտնեց այս բանը այս նեղ դրութեան մեջ այս պայմանն էլ երևեցավ ինձ Աստուծո ամենամեծ ողորմութիւն, թեև այդ ամենամեծ ողորմութիւնը ամեն օր խլում էր իմ թանկագին ժամանակից ամբողջ երկու ժամ, որն ուսանողի համար անկոխարինելի կորուստ է։ Ոչ միայն այդքան, այլ և Աստուած-աղան աջ ու ձախ քարոզում էր, թե նա մի հայ ուսանողի մեծ բարերարութիւն է անում, այսինքն՝ տալիս է նորան ապրուստ. ոսկի դլուխ հազցնում է և լցնում է նորա բոլոր պիտույքը, և խոհեմութեամբ լռում էր իմ ծանր աշխատանքի մասին։

Սոֆիան (Աստուած-աղայի տասներեք տարեկան աղջիկը) բավականին երես-առած աղջիկ էր. և մինչև որ նորան դասի կարողանում էի նստեցնել՝ ինձ էլ ինձ էր հանում։ Առանց մեկ պատճառի կամ դլուխն էր ցավում, կամ որոմտրութիւն չէր անենում՝ պարապելու, կամ դասերը պատրաստած չէր լինում, կամ դրքերը կորցրած էր լինում եթե խրատում

կամ ազաչում էի՝ սկսում էր լալու ու հապարումիկ նազելը էր ծախում: Սատ քրանինք էր դալիս վրաս մինչև կարողանում էի ամեն բան կարդի բերել ու սեղանի առջև հանդիստ նստեցնել: Աշխարհագրության, կամ քերականության, կամ թվաբանության դասերի ժամանակ ամեն անգամ ասելիքս էի անտեղի հարցմունքի պատասխաններ տալու: «Աղջկան ի՞նչ հարկավոր է, թե Լոնդոնը Թեմս գետի կամ Վոլգայի վրա է. աղջկան ի՞նչ հարկավոր է, որ թագավոր բառի սեռականը թագավորի է և ո՛չ թագավորա. աղջկան ի՞նչ հարկավոր է, որ մեկ փուդի մեջ կա երեք հազար-ութը հարյուր քառասուն զոլոթնիկ. մայրս իսո այդ ամենը ո՛չ սովորել է և ո՛չ գիտե, բայց նա չատ լավ մայր է»: Եթե ես նրան մեկնում էի թե՝ նորա մոր աղջկության ժամանակ այդ ներելի էր, այժմ ուրիշ ժամանակ է, և աղջկանից ավելի է պահանջվում. նա խելոք ասում էր՝ «ուրեմն իմ մայրը հիմար է, ուրեմն իմ մոր ծնողքը անպիտան մարդիկ էին, որ չէին կրթել նորան»: Շատ անգամ խաթուն Օհաննան (Սոֆիայի մայրը) ես ինձանից սկզբը ցաված էր լինում, և ես ստիպված էի լինում գլուխս ցածացնել արդարանալով այնպիսի դործերում ուր ամենևին հանցանք չունեի:

Զգիտեմ կա՞ արդյոք աշխարհիս երեսին ավելի ստոր և ապերախտ պաշտոն, քանդ հայ երեխաների դաստիարակիչ լինելն: Այդ մի ջոգին հազար անդամ առակալի երդումներ եմ կերել, որ եթե ես երբևիցե հայր լինիմ՝ անեծք կդնեմ իմ զավակների վերա՝ ո՛չ հայի քահանա և ո՛չ հայի վարժապետ լինել, տասնապատիկ դերադասելի է կառապան կամ փողոց ավելող մշակ լինել, քան թե հայոց քահանա կամ վարժապետ: Այն թշվառ կոպեկները, որ հայը չպրտում է յուր քահանային կամ վարժապետին, ոչինչով ավելի պատվավոր չեն այն կոպեկներեն, որ նա տալիս է մի մուրացիկ աղքատի. թե՛ այս և թե՛ այն դիպվածում նա յուր ամաչը համարում է ապարդյուն ծախք: Հայը

հավատում է լուսավորության ուժին, բայց ո՛չ այն լուսավորության, որն ստանում է մեկ հայից, այլ որն տալիս է Նորան պաշտոնատարը, ատենաբանավորը:

Զարմանալի՛ բան. քանի՛ ավելի տանջում էր ինձ Սոֆիան, այնքան ավելի ատամկանում էր համակրությունս դեպի Նորան. համակրությունս ժամանակավ սերի դարձավ, իսկ սերս փոխադրվեցավ կրքի: Այո՛, այս երես-առած աղջկանը ես կրավոր կերպով սիրեցի: Օրե օր նա զարդանում էր մարմնով. առողջությունը խոշոր կայլակներով կաճում էր Նորա թշերից, լայն լանջերից ու բամպասին բարձր լերանքից. և երբ լրացավ Նորա տասնյոթը տարին և ես հինգերորդ դասարան մտա՝ Սոֆիան արդեն հարսնացու էր: Սերի կամ սովորության նման մի բան Նորա կողմից ևս նկատում էի արդեն դեպի ինձ. բայց ծնողաց հոժարության մասին բոլորովին հուսահատված էի: Ես ունեի պատճառ:

Մի օր Աստուր-աղայի մոտ Հաշտարխանից հյուրեր էին եկել, երեկոյան թեյ էին խմում: Ես եկա Սոֆիային դաս տալու: Այդ միջոցին Սոֆիան տասնվեց տարեկան կլիներ, ես էլ չորրորդ դասարանի ուսանող էի: Հյուրերեն մինը հարցուց (երևի ականջը փոքր ինչ խուլ էր, վասնզի նկատած է, որ խուլը կարծելով ուրիշին էլ խուլ՝ միշտ պինդ է խոսում)— Ես ի՞նչ մարդ ա, հա՞յ ա:

— Հա, հայ ա:

— Ի՞նչ գործի ա:

— Աղջկանս վարժապետն ա, սովորցնում ա:

— Շատ ջահել ա, չես վախենո՞մ:

— Քու տունր ատամած չի քանդի, ինչի՞ պետք ա վախենամ. Սոֆինկես էն հոր-մոր զավակ ա, որ էդպես անտրտունների վերա թքել չի ուզիլ, չէ թե մեկ ուրիշ բան:

— Նայի՛ր, սո՛խտ կացիր, Բուդդան Նիկիտիչ. կրանին ու բարուրեր մին-մինի մոտ չեն տինում, մին էլ տեսնիս բիրդան կառաքի հա:

— Ջէ, Սիմոն Մալխասիչ, էտ դումանից դու միամիտ կացի՛ր:

— Սոֆինկան իմ մեկ հատիկ պավակն ա, աչքիս լուսն ա, իմ մխլինի ժառանգն ա, ես պի՛ժ եմ, որ էս անփոխանին տամ. ի՛նչ եմ հոգում, որ նա քմիչկ ա, դլուխն էլ քարը, հիմա էտպես քանալաչներով քուչանները մոսախա են անում. պալիովնիկները, ենեռալները, դուբեռնաթըռները քի՛չ են ինչ Ռուսաստանումը...

— Աղա՛ Աստուր, մի՛թե աղչկանդ ռուսի կտաս. հայկի չէ՛: Էդ խոմ չելալ. հաուքթունը մեղալամ կը մռռանա...

— Շատ պետք է ա ինձ քու հաուքթունը, ասաց քեֆ ու պռունկը ծռմռելով Աստուր-աղան. ի՛նչ ա, ռուսը կռապաչա ա, ինչ ա, նա էլ խոմ մեզ նման քրիստոնյա չա, բալքի մի զատ էլ ավելի... Թողի՛ք, պաժալուստա, ձեր ազգասիրութիւնը, ինչ տանս փիս բան՝ էդ ազգասիրութիւնի մեջն ա: Մեկ օր (դուք կացեք) ամենքիդ կը փռնեն, Սիբիր կուղարկեն, էն ժամանակ կիմանաք թե ինչ ա նշանակում՝ ազգասիրութիւնը, հաուքթունը: Չէ՛ աղա-չան, իս Սոֆինկեն ազավաթի չա պուլովնիչա կիլի, չա ենեռալչա, չա դուբեռնաթկուչա. դու գնա էլի քու ազգասիրութիւնը արա...

— Հալբաթ, ասաց Սիմոն Մալխասիչը, Սոֆինկայի բանը չոկ ա. սաղ աշխարհք որ պտրես, Սոֆինկայի նման բառիչնա չա մեկը գիմնես, չա էրկուսը:

Այդ միջոցին Սոֆիան գիրքը առած ներս մտավ, ես դուռը փակեցի ու էլ չի լսեցի այս անբարոյական խոսակցութիւնը երկու պատվավոր հայերի:

Ասացի որ՝ ես Սոֆիայի վրա սիրահարված էլ, բայց ասատիկ կսխալին մարդիկ, եթե կկարծեն որ նորա հոր հարստութիւնը իմ սիրո մեջ մի որևէ դեր էր խաղում. ամենևին ո՛չ: Ասուծո առջև կարող եմ ասել, որ ոչ մի րոպե նորա հարստութիւնը ինձ չէր շլացրել, և ես ոչինչ ցանկութիւն չունեի երբևիցե տեր լինելու այն միլիոնին, որ նա մի օր յուր հորից պետք է ժառանգեր: Իմ պատմածից երևում է, որ Սոֆիան մի առանձին հոգեկան արժանավորութիւն ևս չուներ, որով կարող լիներ ինձ հրապուրելու: Ո՛չ. ես (թեև

ամոթ է խոստովանելը) չատ սոսկական կերպով սիրել էի Նորա դեղեցկակազմ, չնորհալի արտաքինը։ Քանի որ Նորան տեսնում էի՝ աչքս մութ էր կոխում, արյունս եռ էր գալիս, սիրտս պինդ-պինդ բաբախում էր ու ջիլերս քաշքշվում էին։ Եվ ի՛նչ զարմանք. ինքս էլ այն ժամանակ քսան երկու տարեկան էի։ Հոգի իմ մեջ էլ չէի նչմարում. ի՞նչպես կուզեք, որ ուրիշի մեջ ո-րոնեի։ Ես բոլորովին համոզված եմ, որ «առաջին սեր» ասած զգացմունքը իսկ և իսկ այն է, ինչ որ ես զգում էի այդ պատանեկական հասակիս մեջ։ Այս, ինչ որ ես ասում եմ, դուցե ուրիշները չասեն. բայց այդ ոչինչ չէ նշանակում, այդ միայն ապացուցանում է, որ նոքա ինձ նման սրտաբաց չեն։

Բոպեի մեջ սիրել չէ՛ կարելի, բայց սիրահարվիլ կարելի է։ Բոպեի մեջ երևում է մարդուս արտաքինը և ոչ թե հոգին։ Հոգի ճանաչելու համար չատ տարիներ են պետք։ Մենք սիրահարվում ենք արտաքինի և ոչ թե հոգու վերա։ Հավանիլ, սիրահարվիլ, սիրել—պատա-նեկի և աղջկա համար միևնույն գաղափարներ են. միևյն չափահաս տարիքը կարողանում է որոշել և ամենին յուր տեղը և տատիճանը տալ մարդկային հա-րաբերութեանց մեջ։ Ստում է տղան, եթե ստում է թե այս ինչ աղջկա հոգին սիրեցի, նուիրական և աղջիկը տղի համար, մի՛ հավատաք. նոքա հավանել են մի-մյանց աչքը, ճակատը, մարմնու գույնը և այլն։ Պա-տանեկի կամ դեռահաս աղջկա բերանումը հոգին մի ա-նորոշ գաղափար է այնպես, ինչպես որ ազգասիրու-թյուն խոսքը մեր ժամանակակից հայերից չատերի չըթերումն։ Կարծ՝ ես սիրահարված էի Սոֆիայի վե-րա, բայց նույնը չեմ կարող ասել Սոֆիայի հոգուց։ Ի հարկե, չորս տարվա ընթացքում, գրեթե ամեն օր չորս-հինգ ժամ միասին անցնելով, նա եթե չի զգար էլ դեպի ինձ սեր, գեթ ընտելացել էր իմ ներկայու-թյանը։ Ինձ տեսնելով՝ ուրախ էր լինում, եթե երեք-չորս օր հիվանդութեան պատճառով չերևայի նորա աչքին, հարցնում էր՝ ինչո՞ւ եկած չէի... և այլքան։

Երբեք նկատած չէի, որ նորան վշտացնելը իմ բարակամությունը և կամ թե մեծ ուրախություն պատճառելը իմ ներկայությունը։

Մի երեկո, ըստ սովորության, գնացի նորան դաս տալու, բայց տանը չի դտա. հոր ու մոր հետ միասին հիտեմ ո՛ւր էր գնացել։ Որովհետև հոգնած էի՝ չուզեցի, իսկույն բնակարանս վերադառնալու, ու մնացի նորա սենյակի մեջ։ Պատի վերա կախած էր նորա լուսանկար պատկերը, աչքս դարձույի վերան ու երկար ժամանակ նայում էի. հանկարծ վերտա մի անմեկնելի տրամաբանություն եկավ. աչքերես ակամա սկսավ արտասուք գալու։ Հանեցի դրպանես թաշկինակս, սրբեցի աչքերս ու նորից անհագաբար նայում էի պատկերի վերա. դարձյալ բնաց աչքերես արտասուքի աղբյուրը։ Այդ մելոդին մի մարդ դուռը բացեց, ներս մտավ, բայց ես ուշք չդրի այդ բանի վերա. դարձյալ և դարձյալ, աչքս պատկերին հառած, լալիս էի։ «Պարո՛ն, ինչո՞ւ ես լալիս, պա՛րոն մեղք ես դու, պա՛րոն կաժե՛ էդ աղջիկը, որ դու նրա վերա մաշվում ես», ասաց ինձ մի քնքուշ և ողբական ձայն։ Ես դարձա և տեսա որ՝ առջևս կանգնած էր Կատյան, Սոֆիայի հաժիչը։

Կատյան տարիքով հասակակից էր Սոֆիային, չար լեզուները, (դուք նկատե՛լ եք, որ չար լեզուները միճամի մասամբ ճշմարտախոս են լինում)—չար լեզուները ասում էին, որ Կատյան Աստուա՛ծ-աղյի մոտավոր աղջականներից մինն որն է, Մոսկով դալիս առել, բերել են հետերը։ Ուրեմն չորս տարիից ավելի էր, որ ամեն օր տեսնում էի նորան, բայց զարմանք բան, ոչ մի անգամ արժանի համարած չէի նորան իմ ուշադրությանը, տեղեկացած չէի թե՝ ի՞նչպես է կենում, ի՞նչպես է զարդանում, ի՞նչ պիտի լինի սորա ապագան, մինչև անգամ մտադրությամբ նայած չէի երեսին և չդիտեի սիրո՞ւն է, թե տգեղ, և եթե վոդոգի մեջ հանդիպեի նորան, շատ կարելի է որ չի ճանաչեի և։

Երբ որ Կատյայի ձայնը ականջիս հասավ՝ առջին

անգամ՝ նայեցա երեսին և ի՛նչ տեսնեմ. առջևս կանգնած էր, թեև աղքատի հագուստով, բայց չատ գեղեցիկ աղջիկ. հասակը երկու–երեք մատ բարձր Սոֆիայից, երեսի դույնը առատել վարդագույն և առողջ, լանջերը ավելի ճոխ զարգացած, մազը ավելի թավ, վարսը ա–վելի հաստ և երկայն, բաղուկները մոտ, առողջ և ուժեղ. մեկ խոսքով՝ Կատյան այն հազվագյուտ կա–նանցմեն էր, որոնք հաջողակ դիպվածներին հսկաների մայրեր են լինում: Բայց, ուշադրության չդարձրի. աղնիվ ուսանողին չատ անվայել էր չքեղ բամբակին նոխել մի մրոտ աղախնի վերա:

Անհամբերությամբ սպասում էի մայիս ամսին, երբ հարցաքննությունները ավարտած, բժշկի վկայա–կանը ծոցս, օրինավոր քաղաքացի դարձած՝ պիտի ներկայանայի Աստուր աղային և նորա պատվական Օսաննա խանումին և հայտնեի, որ ես ի վաղուց հետե հավանել եմ նոցա աղջկանը. ահա այժմ ուսուց պե–տության ասպիճանավոր եմ, ապրուստս լիովին ապա–հոված է, առաջվա պես ողորմելի երիտասարդ չեմ, ուրեմն խնդրում եմ նոցա աղջկա գեղեցիկ Սոֆիայի ձեռքը: Այս մասին քանի անգամ խոսել էի Սոֆիայի հետ, և որքան միտս էր դալիս, թեև նորա կողմեն մեկ հրճվալի ցնծության նշաններ տեսած չէի, բայց «չէ, չեմ ուզում քու կինը լինել» ևս լսած չէի նորա բերա–նեն, այնպես որ, կարծում էի թե՝ մեր ամուսնությու–նը ոչինչ արգելք չունի, դոնե իմ և Սոֆիայի կողմանե:

Վերջապես մայիսը հասավ, և ես վերջին հարցա–քննությունները փառավոր կերպով տվի պրծա. վկա–յականս ծոցս դրի և ուրախ–ուրախ վազեցի Սոֆիայի ծնողաց մոտ:

— Հը՞, ի՞նչ ա, բարևեց ինձ Աստուր աղան:

— Պրծա՛, պրծա՛, ասացի նորան ուրախ–ուրախ:

— Շատ լավ ա, չատ լավ, ասաց նա. հիմի ուրեմն մեր հինգ տարվա արած յավությունը փուճ տեղը չդնաց, մինչ էլ, վա՛րձ Աստու, պրծանք մեր պարա–քից: Հիմի ինչպես դիտես՝ էնպես կառավարվիր. էլ

աչսուհետև ոմուտղ մեր վերա մի ոչնչէր. ինքն քու դէխու ճարը արա...

Ես ամենևին այսպէսի պատասխան չէի սպասում. այս խոսքերը լսելով, ասես թե գլխուս սառը ջուր թափեցին: Բայց ես ինքս ինձի ժողովեցի ու հետո ասացի.

— Մեծապես շնորհակալ եմ ձեզ՝ իմ վերա ունեցած ամեն երախտիքի համար, բայց ես ձեզ մի ուրիշ խնդիրք ունիմ հայտնելու:

Ինդիրքի անուն որ լսեց, Աստուած-աղայի երեսի դույնը թռավ:

— Հինդ տարի էսքան լավություն անելից հետո՝ էլ՞ բան ա մընում, ասաց նա դժկամակությամբ:

— Այժմվա խնդիրս վերի բան չէ՛, ասացի:

— Ապա ասա՛, տեսնենք, ինչ խնդիրը ա:

— Աստուած-աղա՛, ասացի կմկմալով, ձեզ հայտնի է, որ ես այժմ անկախ մարդ եմ, այսուհետև ինձ ո՛չ առուտուր է պետք, ո՛չ դես ու դեն մանդալ՝ աշխատանք ու ապրուստ ճարելու համար, ոչ պետք է հոգամ թե վաղը ինչ պետք է ուտեմ կամ մյուս օր ի՞նչ պետք է հագնեմ, վա՛ռ Աստուծո, այժմ իմ առջև ամեն դռները բաց են, իմ կյանքը և ապրուստը բոլորովին ապահոված է...

— Լա՛վ, ասաց Աստուած-աղան, ձայնը ձգելով ու ճակատի տակից երեսիս նայելով, էսի որ ասում ես՝ հետո ի՞նչ ես ուզում հասկացնի...

— Այն եմ ուզում հասկացնել, որ ես այժմ ազատ մարդ եմ...

— Թե որ ազատ ես, չատ բարի, քու ձեռը հով ա փոնըմ... գնա՛ ուր որ ուզըմ ես, էլ ո՞ւր ես մարդու բեզարացնըմ. ասաց ու բարկությամբ երեսը չուռ տըվեց և ուզում էր հեռանալ...

Տեսա որ՝ ինչ ուզում էի հասկացնել՝ խոսքերիս այն դուրս չեկավ ու չփոթվեցա, բայց ուժս վրաս ժողովելով, նորից սկսեցի.

— Աստուած աղա՛...

— Էլ ի՞նչ, հալա չի պրծա՞ր...

— Ես մեկ բան ունեմ ձեզ հայտնելու...

— Աստ, տեսնեմ, ի՞նչ ես ուզում հայտնել, ասաց ու երեսը և մարմինը կես դարձուց դեպի ինձ:

— Աստուած-աղա, մի բարկանաք վրաս, ես ձեզ մի պաղատանք պետք է հայտնեմ...

— Փեյ է է է՛, սըպասեցեր վեր տերտր, օրինած մարդ, էս քանի՞ վախտ ա, ակռնճ եմ տինըմ՝ դատարկ խոսքերից պայրաղ բան չեմ լսիմ. ասա՛ պըրծի՛ր, ես ժամանակ չունեմ քու առհաւատքյունները մտիկ անելու...

— Ես... ես... ես սիրում եմ մատմուազել Սոֆիային... Հոժա՞ր եք, որ նա իմ կինը լինի...

Աստուած-աղայի երեսը սպրդնեցաւ, մեռելի դուն եղաւ. աչքերը արյուն կոխեց, ճակատը քրտինք ոտաւ:

— Դո՛ւ... Սոֆիային... դո՛ւն... իմ, իմ, իմ Սոֆիային... իմ Սոֆիան քու կինը լի՞նի... իմ Սոֆինկեն, մի լիմոնեա ապա Աստուած Բեյթումալովի աղջիկը մեկ էլի գըլխիս սամսաոնեկի—խոյեցիր կընիկ լինի՛... ասա՝ խելքդ տանո՞ւմ ես ոտվել, թե ինձ գիժ ես կարծում...: Քեզ հո՞վ իրաւունք տաւ էդպես անամոթի, լիրը բաներ մտքից անց կացնելու: Մխիկ արա՛, պարոն հեքիմ, դու հալա ջահիլ ես. էս անզամին կելի քեղ նեղել, ամա թե մյուս անգամ էսպես անամոթաւարի, պիսատուս խոսք լսել եմ բերանիցդ՝ էն վախտ, խնդրեմ, ինձանից բեզամաղ չելես. նոքըր-նեղես հըրամայեմ վզակոթիդ տալով՝ տանիցս դուրս անեն: Հիմի էլ, խնդրեմ, վախտ թե վախտ տունս մի գալ. այսուհետև վարժապետութունդ պրծաւ, էլ դու ոչ Սոֆիայի վարժապետն ես, ո՛չ էլ Սոֆիան քու աշակերտը: Հիմի գնա՛ քու բանին, կուզես՝ գուլպուդ մտի՛ր, կուզես՝ հնպես հեքիմութուն արա՛, կուզես՝ քու վաթանը—Սամսատ ա, Ղարաբաղ ա, ինչ մարաքա գնա՛ ու քու գործիդ լի՛ր. էս էլ լավ իմանաս, որ Սոֆինկան քու բերանի թիքան չի. նրա վերա խոսողը՝

առաջ մեկ լավ բերանը պետք ա լվանա, խոտակի, ասա թե երախունք ունենա խոսելու։

Այսպիսի անպատիվ վարմունքից ու խոսքերից հետ՝ ինձ ի՞նչ էր մնում անելու։ Գնացի վակվեցա իմ փոքրիկ սենյակի մեջ և ժամերով աղիողորմ լաց եղա։ Սոֆիայի հիշատակը ինձ անդադար հալածում էր. աչքս թե փակ լինեը և թե բաց՝ նորա երեսը կենդանի կեցած էը իմ առջև, և ասես թե մեզադրելով ինձ ասում էր «այդպե՞ս ուրեմն տկար ե քու սերը դեպի ինձ. մի՞թե մի ծեր մարդու երկու-երեք կշտամբանքը կարողացան սառեցնելու քու սերը, որն ես ամբողջ հինգ տարի տածածել ու բորբոքել էի»։

Իսկույն տեղից վեր թռա. մի նամակ գրեցի նորան, այն օրվա նորա հետ ունեցած խոսակցությունս բառ առ բառ գրեցի և հարցուցի նորա խորհուրդը թե՝ ի՞նչ պետք ե անեմ այսուհետև։ Նամակը որ պրծա՝ կնքեցի ու գնացի Սատուր աղայի տուն, եսևի տանդ[illegible]ով մտա խոհանոց, և կամացուկ սպրեցուցի Կատյայի ձեռքը, խնդրելով որ իսկույն Սոֆիային հասցնե։ Կատյան ոչինչ չասաց. մեղքանալով նայեցավ աչքերիս մեջ ու դուրս գնաց խոհանոցից։ Ես էլ գնացի բնակարանս։

Երեկոյան թեյի ժամանակ կամացուկ ներս մտավ Կատյան, ու ավեց ինձ մի փոքրիկ թուղթ, ուր մատիտով գրած էր ռուսերեն. «Այս օրերս մենք գնալու ենք Տաք-Ջուր, եթե կարող ես՝ արի այնտեղ կարելի ե դեպված դռներս մեկ հնարով հորս հետ հաշտվելու։ Իմ վերա հույսեր մի՛ դնիլ, ես քեզ ոչինչով օգնել չեմ կարող. նմանապես չեմ կարող ծնողացս կամքին դուրս գալու. այդպիսի գոհ ինձանից մի պահանջիլ»։ Նամակի տակը ստորագրություն չի կար։

Կատյան սպասում էր։

— Լա՛վ է, չնորհակալ եմ, ասացի, պատասխանելու բան չունիմ։ Ներե, որ քեզ անհանգստությունս պատճառեցի։

Կատյան տեղիցը չշարժեցավ։ Ես տեղես ելա նո-

ըից չնըհակալութ յան ասացի նորան, բայց նա դարձյալ անչարժ կեցած էր, ու աչքը արտասուք ուղիղ աչքիս մեջ էր նայում: Ես զարմացա:

— Կատյա, ի՞նչ եղավ քեզ, ինչո՞ւ ես լալիս:

— Ախ՛, ես քեզ խնայում եմ, դու մեղք ես, իզուր տանջվում ես. Սոֆիան քու ոտքի հողին չարժե. նա փուճ պղչիկ ա. նահախ ես պատիվդ ոտնատակ անըմ:

— Ի՞նչ ես ուզում ասել, Կատյա ջան, ասացի. ինչո՞ւ ես վատաբանում քու խանումին. էտեղ նա ի՞նչ մեղք ունի, եթե կա մեղավոր՝ էդ նրա հերն է, Սոֆիան բոլորովին անմեղ է:

— Չէ՛, աղա, դու սխալվըմ ես, թեպետ աղա Աատուրը մեղավոր ա, սամ Սոֆիան տասնապատիկ ավելի ա մեղավոր. թե Սոֆիան ուզեր՝ քեզ էս օրին չէր հասցնիլ. ամեն բանի մեղավորն Սոֆիան ա, նա քեզ դժվացընում ա. նա քեզ չի սիրըմ. նա ղայրազ երան ոչ-ոքի չի սիրըմ:

Նորից ու նորից զարմացա, որ այս մունջ Կատյայի բերանից այսպիսի համարձակ խոսքեր էին դուրս գալիս: Հինգ տարվա մեջ ես մեկ բառ լսած չէի նորանից: Ասելիք՝ տա՛ր կառներ, ասելիք բե՛ր, կրեցեր, ամեն հրաման առանց մեկ խոսք ասելու, անաբառունջ և լուռ կաներ: Ոչ մի գանգատ, ոչ մի անհեղի, միայն ծիծաղ լսած և տեսածս չէի նորանից: Այսօր մի հրաշք էր պատահել նորան. մեր հինգ տարվա մունջը պերճախոս հռետոր էր դարձել:

Ես գլուխս կախեցի և արտասուքը ակամա վազեցին աչքերես: Կատյան կամաց, բայց այնպես կամաց, որ ես ամենևին չնկատեցի, մոտեցավ ինձ, եռանդոտ գլուխս յուր կրծքին սեղմեց, պաղեց և ասաց նույնպես լալով (նորա արտասուքը մազերիս վրայեն գլորվելով՝ երեսիս վերա ընկան). Ա՛խ, աղա ջան, էս ի՞նչ գժոխք աչխարհ ա, դու Սոֆիայի համար ես էրվում, ուրիշը քու կրակովն ա խորովվում, Սոֆիան էլ, ով դիտե, ում ոտքին մի օր զուրբան պետք ա դնա: Աղա ջան, աղա ջան, հրամայե, ես քու ոտքերի տակ կատա-

կեմ... Ա՛խ, ինչո՞ւ ես իրավունք չունեմ քեզ սիրելու, դուն էն ժամանակ կտեսնեիր՝ թե ինչպես պետք է սիրել քեզ պես հոգիով տգամարդին:

— Կա՛տյա, դիտե՞ս ինչ, գնա՛ չուտով տուն, չլինի թե Աատուր–աղան դա ու քեզ տանը չի գտնե. նա վատ մտքեր կունենա քո մասին:

— Ախ չան, ի՞նչ եմ հոգում, որ նա իմ վերա վատ մտքեր կունենա. այսուհետև թեկուզ սև հողն էլ մտնեմ հաչաթա չէ՛, ասաց աղջիկը լալով ու դուրս թռավ:

Երբ որ Կատյան գնաց՝ խղճի խայթի նման մի բան սկսավ ներսս կրծելու:

— Սոֆիա՛, թէ՛ Կատյա, Կատյա՛, թե Սոֆիա, հարցնում էի ինքս ինձի, ու պատասխանը չէի գտնում: Մի շաբաթից ճանապարհ ընկա դեպի Տաք–Ջուր. բայց Աատուր–աղան արդեն երկու օր առաջ գնացել էր այնտեղ:

Հունիսի 20.

Երկու օր դարձյալ անպատուղ կորցրի հյուրանոցներու, վարձու տարս աներու և բնակարաններու մեջ հարց ու փորձ անելով՝ արդյոք Մոսկովից այս ու այս նշաններով ընտանիք եկել են, թե ոչ: Ոչ ոք ինձ մեկ լավարար պատասխան տալ չկարողացավ: «Երևի, միտք ածի, ես իրալ սխալվել եմ, մի օտար աղջիկ նմանեցնելով Կատյային»:

Այսօր երեկոյան դեմ, ժամը 6–ին, ես գնացի այս տեղի, ճեմելիքը—ուր սովորաբար երաժիշտները նվագում են և ժողովուրդը խումն խումն զբոսնում է:

Ճեմելիքի մեջ տեղ–տեղ դրած են դեղձանիկի վանդակի նման փոքրիկ խանութներ, ուր վրաստանցի հայը ծախում է թարմ պտուղներ, գերմանուհին՝ տաք–տաք գրպահներ, ուրիշ մարդ՝ լրագրներ և գըրքեր. տեղ–տեղ սեղաններ էլ կան, ուր ծախվում են

արծաթագլուխ ցուպեր, կնիքներ բուսած և լաված չինած կանանց զարդեր, «նորաչեն հնություններ և նորաթախիչ հին դրամներ», այս տեղաններից մինչև առջև կանգնած են երկու-երեք պարսիկներ և ծախում են տակեր ու մարգարիտներ:

Ես առհասարակ սաստիկ հակակրություն ունիմ դեպի ակնավաճառները. և նկատել եմ—և իմ նկատմունքը չատ սակավ սխալ է եղել—որ ակնավաճառները ըստ մեծի մասին լինում են խարդախ, խորամանկ, ստախոս, մարդահաճո, չողոքորթող և խարեբա մարդիկ: Պատճառը չատ պարզ և հասկանալի է. նախ որ «մութ ապրանք» է, նա որոշյալ գին չունի, նորա գինը կարվում է ծախողի ճարպկությունով և գնողի թեթևամտությունով, և երկրորդ՝ ակը առօրյա պեռքական բան չէ. այլ զեղխության առարկա է. նորա գնողը հարկավ ունևոր մարդ պիտի լինի, իսկ ունևոր մարդու ձեռքից չատ վող դուրս հանելու համար՝ վաճառականը պիտի ունենա այն հատկությունները, որ քանի մի տող վերը հիշեցի, այսինքն՝ խորամանկություն, մարդահաճություն, ստախոսություն, չողոքորթություն, խարեբայություն և խարդախություն:

Ինչպես ասացի, ճեմելիքի մեջ չարած տեղաններից մինչև առջև կանգնած էին պարսիկներ ու թանկագին ակեր և ակնակուռ զարդեր էին ծախում: Հանկարծ աչքս դարձնեմ ու ի՞նչ տեսնեմ. Աստուր—աղան մի մեծ կարմիր զմրուխտ է ծախս անում. պարսիկը պահանջում է վեց հազար մանեթ, իսկ Աստուր—աղան տալիս է չորս հազար հինգ հարյուր մանեթ:

Համալսարանումը ես առանձին ուշադրությամբ յուսմ էի հանքարանության դասախոսությունները և մեր պռոֆեսորը ակերու վերա խոսելիս՝ միշտ տպրեցնում էր մեզ զանազան հնարներ՝ թե ի՞նչպես պեռք է խարդախ ակը լսկականից ջոկելու. իսկ կարմիր հակինթի մասին—այս օրվա պես միտս է—երկարորեն պատմել էր:

Եվ ճշմարիտ պեռք է ասել, որ այնպիսի ընտիր

ակ, ինչպես որ պարսիկն էր ծախում, ես կյանքիս մեջ տեսած չէի՝ թե՛ ցուրտ, թե թրաշ, և թե խոշորության կողմանե։ Թադավորին էլ որ ընծայելը չէիր սմաչվել,—այնքան դեղեցիկ էր։ Հանկարծ հոգուս մեջ երկմտություն մտավ՝ չլինի թե այս խարդախ ակ լինի. վան գի—ես կարծում էլ—եթե նա իսկական ակ լիներ՝ առաջավը առանըհինդ հազար մանեթ պետք է արժեներ, իսկ մեկ քնծուռ պարսկի ձեռք ի՞նչ գործ ուներ այդպիսի գումարի ահագին տալրանք։ Ամրեն պարսիկը գիջել էր ութ հարյուր ռուբլի և Աստուածատուր ավելացրել էր հինգհարյուր ռուբլի. տարբերությունը այնքան չնչին էր, որ փոքր ժամանակից ետ անպատճառ նոցա ծախսը պիտի վերջանար և ակը պիտի ծախվեր։ Սիրտս չհամբերեց. ուզացի տեսնել իմ կասկածը. մոտեցա Աստուածատուր-աղային, բարևեցի (իրը թե մեր մեջ երբեք դժուրություն պատահած չէր), հարցուցի նորա առողջությունը, (Սոֆինկայի մասին մի խոսք չհիշեցի) և հետո հարցրի, թե ի՞նչ է ծախս տանում։

— Ես յաղութը ուզում եմ առնել, ի՞նչ կասես՝ լավ բան ա՞. և ցույց տվեց ինձ այն սիրուն ակը, որ փըստուզի մեծության կլիներ։

Ձեռքս առի, դարձրի դեպի արեգակն ու ակի մեջ տեղը երկար ժամանակ և ուշադրությամբ նայեցա։ Մի աննշմարելի դիծ տեսա նորա մեջը, որն անհորձ մարդը հարյուր տարի էլ որ նայեր՝ չէր տեսնել, ու դառնալով պարսկին, ասացի.

— Քանի՞ ուզում ես ծախել այս ակը։

Պարսիկը կեղծի ժպիտով ասաց.

— Ես պահանջում եմ հինգ հազար երկու հարյուր մանեթ. իսկ այս աղան (ցույց տվեց Աստուածատուր-աղայի վերա) տալիս է հինգ-հազար. մնում է որ ձեզպես բարեհոգյալ և հմուտ մարդը մեզ հաշտեցնեն այս երկու հարյուր մանեթի համար, ասաց ու խոնարհաբար գլուխը հանեց առջևս։

— Այս խարդախ ակ է, ասացի պարսկին։ Դու ի՞նչ

իրավունք ունիս հրապարակի մեջ և այդպիսի լուրթյամբ միամիտ մարդոց խաբելու: Դու չգիտե՞ս որ՝ այս Ռուսաստան է, ուր կա օրենք և դատաստան. դու քու պարսկաստանը չգիտնաս, ուր կարելի է օր ցերեկով խաբել, խարդավանել և սպանել, ու անպատիժ մնալ:

Պարակի և Աստուած–աղայի երեսները սպրդնեցան, մինինը վախից, իսկ մյուսինը բարկությունից:

— Աստ՛, էլի՞ քու անմարդավարությունը չանց տվար, էլի՞ տեղդ դինջ մնալ չկարողացար. էս ի՞նչ բիաբուռ, թռիչից բաց–ընկած մարդ ես իլած, մեղա յաձծու մեղա, ասաց լնձ Աստուած–աղան:

Նորա բարկությունից խրախուսված՝ պարսիկը հարձակվեցավ վրաս:

— Պա՛րոն, երևի դու լնքդ կարծում ես, որ այս երկիրը Ռուսաստան չէ՛, այլ մեկ վայրենի անապատ է. եթե դու օրենքի հետ ծանոթ լինեիր, անշուշտ կիմանայիր, որ Ռուսաստանի մեջ դրպարտիչը նույն պատիժն է ստանում, ինչ որ պետք է ստանար հանցավորը: Այժմ ես քու օձիկդ (յախադ) ձեռքես բաց չեմ թողնիլ, եթե չապացուցանես, որ ես խարդախ մարդ եմ, օրենքը կուտա քեզ այն պատիժը որն պիտի ստանա խարդախը:

— Թո՛ղ այդպես լինի, ասաց ես, կա՛մ Սիբիր կերթամ՝ աքսոր, կամ կհատատեմ, որ այս ակը խարդախ է, և դա ոչ թե հինգհազար երկու հարյուր մանեթ, այլ մեկ գրուշ չի արժիլ:

Այս որ ասացի, վազեցի մի լուցակուտ ու բոցը մոտեցրի ակին. երբ որ ակը մի վոքր տաքացավ՝ խկուն երկու կաթ սիրուն տաշած և հղկած հատարակ ապակի դարձավ, որի մեջ ներկ էր քսած՝ կարմիր գույն տալու համար ու եղերքները տանձով կպցրած:

Աստուած աղան պապանձված մնաց. իսկ պարսիկը ամոթից ու բարկությունից չգիտեր ի՛նչ աներ:

— Տե՛ս, տե՛ս, ի՞նչպես խաբվել եմ ես. այս անպիտան հատարակ ապակիի համար տվել եմ հինգ հա–

պոր մանեթա. ախտո՞ս, հազար ախտոս իմ կորցրած փողիս, ասաց պարսիկը, հուսահատված ձեռնաթով:

— Մ՛յ բան, ասաց, ծիծաղելով Աստուր-աղան, տամ լավ բաբաթի պետք ա խաբեր ինձ էս չ. ո. պարսիկը, եթե դու չիլնիր... Նո՛ւ, պարոն Վարդան, մեռնելս մոքիցս կանցներ, բայց էսպես դոչդուխյունդ ամենևին մոքիցս չէր անցնիլ: Էսօր դու ինձ հինդհազար մանեթ բաշխեցիր. մեծապես չնորհակալ եմ: Թե էղպես ա՝ արի՛ գնանք մեր տուն՝ մեկ տեղ հաց ուտենք. բայց խնդրըմ եմ, մյուս անդամ էլ էն հին դժուխյուններդ մի՛ անիլ: Էս անդամն էլ քեզ կբաղշեմ:

Պարսիկը կամացուկ հավաքեց տպրանքը, փակեց տպակիե կափարիչով արկղը ու հեռացավ. մենք էլ գնացինք Աստուր-աղայի տունը: Այս կերպով նորա դռները նորից բացվեցան իմ առջև:

Ճաշի վերա ո՛չ Սոֆիան կար և ոչ նորա մայրը Օհաննան, կատյային էլ չտեսա: Երեկոյան ժամը 5-ին սիրտս կոտրած վերադարձա իմ խրճիթը:

Հունիսի 23.

Ի՞նչ եմ ուզում ես Աստուր-աղայից, ի՞նչ եմ սպասում Սոֆիայից, այս հարցմունքներին մինչև յայժմ ինքս ինձի ուզացած չեմ ճիշտ պատասխան տալու. Աստուր-աղան որ կա՝ մի ինքնահավան, կամակոր, փառամոլ մարդ է: Նա ինքը իր խելքով, իր աշխատանքով (արդար, թե անարդար ճանապարհով՝ այդ ջոկ բան է) կարողացել է միլիոնի տեր լինելու. այդ Աստուր-աղայի և նորա նմանների կարծիքով մի այնպիսի սիրադործություն է, որի առջև պիտի ոչնչանան ամենայն ինչ մարդկային արժանավորություններ և առաքինություններ. գիտություն, իմաստություն, քաջագործություն, քանքար, հանճար՝ ի՞նչ չնչին բաներ են հարստության առջև: Աստուր-աղան արդեն սիրահարված է յուր խելքի վերա, կամակորությունը

խորունկ արմատ ձգել է նորա մեջ: Աստուած-աղան հարուստ է, ուրեմն աշխարքի ամեն բարիքը հասանելի են նորան. փողով նա կարող է մեծամեծ, արքայական-յել պալատների մեջ բնակել, իրա հրճվալուը չքնել զարդարել, ծանոթութիւն ունենալ ամեն պատուաւոր, քանքարաւոր և բարձր աստիճանաւոր մարդոց հետ, գնել մարդոց խղճմտանքը, գնել, մինչև անգամ, չքնաղագեղ կանանց երես ոչ սերը, գեթ նոցա կեղծիք դէմքը և հրապոյրքը: Ես՝ մի աղքատ և աննշան բժիշկ, այն էլ հայ բժիշկ, ի՞նչ պիտի կարողանամ նորան տալու, ինչո՞վ զբաւեցնու նորա կուշտացած սիրտը: Նորան պետք է բարձրաստիճան, անվանի, երևելի ազգատոհմ մի վեհատ, որի վերա նայելով նա կարող լինի պարծենալու թէ՝ ահա ինչպես ամեն ովել եմ իմ աղջկանը: Ես ի՞նչ մեկ այլպիսի աչք-ընկնելու արժանաւորութիւն ունիմ բացի համեստութենես և աշխատասիրութիւննես,—որով հազիւ նորա սնափառութիւնը: Այժմ գառնանք Սոֆիային: Ինչո՞ւ ինձ պետք է սիրե Սոֆիան. նորա՞ համար որ ես նորան սիրում եմ. ի՞նչ մեծ փառք և երջանկութիւն է իմ սերը նորա համար: Դեղեցիկ, դեռահաս, և որ գլխաւորն է՝ հարուստ աղջկան ո՞ր երիտասարդը չի սիրել: Ո՞ւր է իմ այն արուաքին դեղը, որի վերա ամեն աղջիկ հաճութեամբ նայում է. ո՞ւր են իմ վայելուն ուսադիրները՝ վայելուն օձիքները, չլսկչլսկքալի թուրը և խթանները, որոնք հրապուրում են ամեն աղջկա աչք ու ականջ: Չէ, ո՛չ Աստուած-աղան և ո՛չ Սոֆիան կարող են սիրել ինձ այնպես, ինչպես որ ես կսիրեմայի: Եթե իմ մեջ կա ինչ ու ինչ արժանաւորութիւն՝ նա այնքան փոքր է, որ խոշորացույով պիտի նայես վերան, որ տեսնես, իսկ այդ խոշորացույցը չի կա ո՛չ Աստուած-աղայի և ո՛չ Սոֆիայի աչքերին... Այս էլ ասենք, եթե Սոֆիան մի հասարակ մարդու աղջիկ լիներ, արդյոք ես կսիրեի՞ նորան և նա ինձ դեղեցիկ ու հրապուրիչ կերևա՞ր... իսկ կատյո՞ն... Չէ, հեռացիր ինձանից զննողական ոգի, քեզ յուր մեջ ունեցողը երբեք բախտաւոր չի լի-

նել: Ձեմ ուզում ես իմ զգացմունքը կշխռքի վերա դնե-
լու... Ես սիրում եմ Սոֆիային. ես ամեն հնար գործ
պիտի դնեմ առաջադրյալ նպատակիս հասնելու և...
կհասնեմ:

Այսօր բոլոր օրը անձրև էր գալիս. ամբողջ օրը
անկից դուրս գալու հնար չի գտա. երեկոյան դեմ թեև
անձրևը դադարեցավ, բայց գետինը այնքան խոնավ
էր, որ հազիվ թե ժողովուրդը դրսոնելու ճեմելիք ե-
թիա: Անհնարին բան է, որ Սոֆիային թողած լինեն
անկից դուրս դնալու, հայրն ու մայրը դաղում են նորա
վերա աչքերի լուսի պես պահում են: Չէ, նա ճեմե-
լիք չի երթալ: Մենակ նստած եմ սենյակիս մեջ ու
սրտնեղությենից պատուհանից դուրս եմ նայում:
Շատ սակավ տուն կդտնվի Տաք-Ջուրի մեջ, որի դիրքը
այնպես կենդանանկար լինի, ինչպես իմը, թեև բնա-
կած վողջս չատ տղեղ անուն ունի (Ագռի ձոր).
բայց այն տեսարանը, որ վառած է աչքիս՝ ի՛նչ ասես
կարժե: Հարավից երևում է գալարագարդ պարտեզնե-
րի և անտառների ծով. առավել հեռուն Փոդքո Տաք գե-
տակը, օձի նման պտույտքերով, անցնում է դաշտերի,
անտառների ու սարերի միջով, ավելի հեռուն միջին
բարձրության բլուրներ ծածկած են ծառերով, որոնք
ինձ գալար խոտ են երևում հեռավորության պատճա-
ռով. նոցա ետևից էլ յուր ալեզարդ կրկնակի գագաթ-
ները «տաչած ադամանդի» նման բարձրացնում է Եալ-
բուզը: Արևմտյան պատուհանից երևում են հայոց
նորաչեն եկեղեցիի գմբեթն ու Բեչթաչի հինդ գագաթ-
ներեն մինը: Ամբողջ քաղաքը լողում է ծառատունկնե-
րի մեջ. կամբրակատներն ու խաղատունկիները նոցա
տղաբծնների մեջ պահված՝ օդը լցնում են լրանց գայ-
լայլիկովը. խոտերի ու ծառերի տերևների վերա ծխա-
ծանի ամեն դույներով վայլում են անձրևի չիքերը.
օդը այնպես մաքուր է, որ ամեն մի չունչ առնելիս՝
կարծում ես թե կյանքը լայն հոսանքով թափվում է
մեջդ:

Անկո՛ւշտ մարդ, ահա քեզ բախտ, ահա քեզ դե-

պեցկութիւն, որն քեզանից չի պահանջում ոչ զոհ և ոչ հոգեկան տանջանք. վայելե՛, բախտավոր եղիր. ինչո՞ւ վազում ես անցավոր մուրճի ու անչոչափելի սովերի հետից: Մի՞թե քեզ սիրող Կատյան խրճիթի մէջ քեզ պակաս բախտ կրերե, քան թե քեզ արհամարհող Սոֆիան ճոխ ապարանքում...

Լռե՛, լռե՛, տառապամոլութիւն, ես քու ձայնը չեմ ուզում լսել. ես սիրում եմ Սոֆիային, և ձեռքես եկածս նրան հնարը գործ կածեմ, որ նա էլ ինձ սիրե և իմը լինի:

Գնեցա, և անհանգիստ երազները սաստիկ տանջեցին ինձ ամբողջ գիշերը. մյուս օր որ զարթնեցա՝ մարմինս հոգնած և տանջված էր:

Հունիսի 25.

Այսօր հասարակաց մատենադարան էի գնացել. ուզում էի կարդալով ձանձրույթս մի փոքր ցրվելու. բայց ո՛չ Լամոնտովը, ո՛չ Տուրգենիեվը, ո՛չ Տոլստոյը և ո՛չ ժամանակակից հատ օրագիրները կարողացան վհատութիւնս թեթևացնել: Թեև Տաք-ջուր եկած օրևս ոչ մի անգամ տհաճած չէի Սոֆիային, բայց հենց որ գիրքը բացում էի՝ էջերի մէջ զրվածքի տեղ տեսնում էի նորա պատկերը. բայց, զարմանալի՛ բան, Սոֆիայի հետից էլ երևում էր աչքես Կատյայի երեսը, որ տխուր նայում էր վրաս և գլուխը չարժելով, ասես թե մեղադրում էր ինձ... ինչո՞ւ...

Ձեզ մեկ բան ասե՞մ, լսեցե՛ք: Տեսնում եք, որ ես Սոֆիային սիրում եմ, այսուամենայնիվ նորա սիրուն ու հոգին գրավել չեմ կարողանում, ինչո՞ւ: Մյուս կողմից, ես համոզված եմ, որ Կատյան ինձ սիրում է, և հոգիս վկայում է, որ այդ ուղիղ, ծառա աղջիկը վաղ կամ ուշ կգրավե ինձ և կերբարեաե... ինչո՞ւ:

Խորհուրդ մաքուր, անհեղձ սերը մէյա՛ կհամոզե ու կհաղթե:

Իմ՛նչ, ինչ ասացի՛ ե՞ս... Կատյայի՞ն... սիրե՞մ...

Է՞ս նորան... իմ կի՞նը... անեմ... Երբե՛ք, ես չեմ-
ռավ ինքս ինձի կատ կպպանեմ, քան թե չքեղ, քնքուշ Սոֆիային թողած, այդ սպասավոր աղջկան սիրեմ և վրան պսակվիմ: Թո՛ղ այն օր ինձ սև սուգի օր լինի, երբ ես կատայի մարդը լինիմ: Մ՛իթե ես այդ բանի համար իմ պատանեկության ամենասիրելի հինդ տարին զոհեցի, ամեն տանջանք, նվաստություն և զրկանք համբերեցի, որ, վերջապես, ծաղիկ հասակս և փայլուն ապագա նվիրեմ մեկ նաժշտի... Ա՛խ, կատյա, կատյա, այս ի՛նչ ես անում ինձ հետ, քու մաքուր և անկեղծ սերը դեպի ինձ առավել վատնեցավոր է, քան թե վիշապ օձի խեղդող օղակները:

Թողի դրքերն ու գնացի հասարակաց զահլիճը (Նիկողայոսյան վոքզհալը), որ կից է մատենադարանին, ուր էսանթռուբի ջուր խմողները ժամ կամ ժամ ու կես ման են գալիս. հանկարծ ի՞նչ տեսնեմ, Սոֆիան և Կատյան ման եկողների մեջն էին. երբ որ հակառակ պատին հասած՝ ես դարձան ու երեսները չուռ տվին՝ մենք միմյանց հանդիպեցանք: Ինձ որ տեսավ Սոֆիան՝ ալըզնեցավ, իսկ Կատյան չատպնեցավ: Իրար բարև տվինք, ձեռք սեղմեցինք (իհարկե, Կատյան ինձ ձեռք տալու չհամարձակվեցավ) ու սկսանք սովորական խոսակցություն՝ օդի և ջրերու ներգործության և այլ այսպիսի աննշան առարկաների մասին: Կատյան թեև չէր խոսում, բայց աչքը աչքիցս պուկ չէր տալիս: Սոֆիան թեև հետս էր խոսում, բայց ամենևին չէր նայում վրաս, այլ նայում էր մեկ սպայի վերա, և այդ սպան էր... Դուզդուվը, որն պահարանի առջև կանգնած՝ հանքերն էր նայում:

Սիրտս տակն ու վրա եղավ. նախանձը օձի խայթոցի նման ցցվեցավ սրտիս մեջ և անողորմաբար տանջում էր ինձ:

— Այս ի՛նչ սիրուն սպա է, ասաց ինձ Սոֆիան, չդիտե՞ք արդյոք ինչպես է նորա անունը:

— Անունը Վլադիմիր է, ասացի:

— Վլադի՞միր, ա՛խ, ինչ սիրուն անուն է:

— Մի՞թե Վարդանը — իմ անունս — Վլադիմիրից վատ է:

— Ո՞վ է ասում, Վարդանն էլ վատ անուն չէ, ասաց ու քթի տակից ծիծաղեց: Վարդան, Վարդան. «Հայը թակե Վարդանին, թուրքը, թակե Վարդանին», հա՛, հա՛ հա՛ հա՛. բայց Վլադիմիրը ավելի դեղեցիկ է: Ինձ այնպես երևում է որ՝ ով որ Վլադիմիր անուն է կրում՝ անպատճառ պետք է լինի սպիտակ երեսով, կարմիր թշերով, բարձր հասակով, կապուտ աչքերով և դեղձան մազերով մեկ քաջ երիտասարդ...

— Ինչպես որ այս Դոռզդովն է, այնպես չէ, օրիորդ:

— Մի՞թե սորա մականունը Դոռզդով է. այդ էլ չատ դեղեցիկ մականուն է... Վլադիմիր Դոռզդով, Վլադիմիր Դոռզդով, մրմնջեց կամացուկ... չատ աչքուն երիտասարդ է:

Սոֆիայի աչքերը գոհարի նման գոլացին, երեսը չառագնեցավ և դեմքի վերա անմեկնելի երջանկություն փայլում էր:

Այդ րոպեին ես այնպես ատեցի Սոֆիային, ինչպես որ մարդս կարող է ատել յուր ծնողաց կամ զավկներին ապանոշին. բայց, ավա՛ղ, այդ ատելությունը նման էր այն ատելության, որն զգում է թշուճությունը, որ կեցած է խորամանկ օձի առջև. աղջամուկին թողած է թռնավոր սողունի աչքերին. նա ակամա մոտենում է նորա բացած բերանին, և ատելով՝ նորա գոհն է դառնում: Այսպիսի կախարդական ուժով Սոֆիան քաշում էր ինձ դեպի իրան: Մի՞թե այս սեր է: Եթե այդ սեր ես լինի, գոնե այն սերն չէ, որն մարդուս երջանկացնում է: Եթե կատյան Սոֆիայի հանգամանքի մեջ լիներ՝ նորան էլ այսպե՞ս կսիրեի արդյոք, թե ո՛չ: Ահա խնդիր, որն լուծելու համար առողջ դատողություններս հրաժարվում էր ինձ օգնելու...

Սոֆիան յուր անզգուշ վարմունքով բանը այն տեղը հասցուց, որ Դոռզդովը նկատեց, որ աղջիկ վերա աղդեցություն է գործել յուր արտաքին տեսքով: Գա-

նե—քանի անգամ նորա վերա չինծու անուշ աչքեր ձգեց, և մի անգամ էլ, երբ թե պեխերն է չփուում, մատի ծայրովը համբուրյր ուղարկեց նորան: Զգիտեմ նը—կատե՞ց այդ Սոֆիան, թե ո՛չ, միայն թե ամենևին վիրավորված չցուցուց իրան, այլ ընդհակառակն, միշտ լնճ հետ պինդ—պինդ ռուսերեն խոսելով, աչքը նորանից չէր հեռացնում, և խոսակցության նյութը ավելի հետաքրքրելի էր Դոռոզդովին, քան թե լինճ:

Կատյան, ինչպես ասում են, կեցած տեղը անկրակ այրվում էր ամոթից ու դժկամակությունից:

Ի՞նչ պիտի կարծեր Դոռոզդովը իմ վերա, ի՞նչ դատաստան պիտի կազմեր օրիորդ Սոֆիայի և առհասարակ ամեն հայերի վերա:

Ես աղջիկներին մինչև նոցա ասեն դուրը ճանապարհ ձգեցի, բայց քաղաքավարությամբ ներս չի մըտա. սպասում էի, որ Սոֆիան կհրավիրե. բայց նա չհրավիրեց, և ես մնաս բարև ասացի ու հեռացա:

Տխուր վերադարձա ճեմելիք: Թեև ժամանակը ուշ էր, բայց շատ ղրոսնողներ կային: Նստարաններից մինի վերա սպանները պինդ—պինդ խոսում և ծիծաղում էին: Հեռվից դալիս էր Դոռոզդովը:

Սպաներեն մինը ասաց.

— Պարոններ, աչքերդ այն կողմը դարձրեք: Թամբովի այրերն է դալիս:

Սպաները բարձրաձայն ծիծաղեցան: «Շատ սիրուն և հարմար անուն է մեր Դոռոզդովի համար», ասացին քանիսը, «Թամբովի այրե՛ր, Թամբովի այրե՛ր» կրկնեցին:

Երբ որ Դոռոզդովը մոտեցավ՝ ոչ մի սպա նորան ձեռք չի տվեց. ինչպես երեում էր՝ նա նոցա առջև խեղկատակի դեր էր խաղում:

— Պարոններ, ծիծաղեցեք վրաս, ծիծաղեցե՛ք, ասաց նա կես ծիծաղով և կես ծանրաբեմ. ձեր չի համառած Թամբովի այրերը մի այնպիսի ասիացի զամբիկ է դտել, որի համար չատերդ ուրախությամբ կհոժարեիք լինել նման այրեր ունենալու:

— Ո՞ւր է կենում այդ դամբիկը, ո՞րտեղ կարող ենք նորան տեսնելու, ասացին մի քանի երիտասարդ ազանները:

— Որտեղ կեցածը դեռևս ինքս էլ չդիտեմ, բայց կարծում եմ, եթե պարզ եղանակները լինեն, նորան միշտ կարելի է ճեմելիքում տեսնել: Բայց այդ չի՛ դլխավորը այն է, որ նա մի չատ հարուստ հայի աղջիկ է, թեև ցեղը, ինչպես տեսնում եք, ասիական է, բայց Փրանսիացիից ավելի ազատամիտ դաստիարակված է. ուրեմն «մեր դաշտի պտուղներիցն է»: Կեցցե՛ յուսավորությունն:

— Շնորհավորենք, շնորհավորենք այդ դյուտը. բայց հետո մեզ էլ մաս կհանի՞, ասացին մի քանի կարմիր ու կապտա քիմիերով ազանները:

— Պա՛րոններ, դուք չատ լավ դիտեք, որ ես եսամոլ չեմ: Իմ սիրած բանս է կանանց սրտերի մեջ ճանապարհ բանալ. հետո արդեն ես չեմ հոգում՝ ով անցուդարձ պիտի անե այդ ճանապարհի վերա:

Ազանները ծիծաղեցան. բայց իմ սրտես արյուն կաթեցավ:

Եվ ի՞նչ դարմանք. եթե լինդ չդիտես պատիվ պահելու, ի՞նչ իրավունք ունես պահանջելու, որ ուրիշները պահպանեն:

Գլուխս կախած տուն վերադարձա:

Հունիսի 26.

Առավոտը որ զարթեցա՝ առողջությունս տեղը չէր. լեզուս պղտոր էր, աչքերիս սպիտակուցը դեղնադույն և մի փոքր էլ արյուն կոխած, բազկերակս անկանոն, բերանս դառն, ասես թե լեղի էի խմել. բայց չատ լավ դիտեմ՝ որ դիշերս մրսած չէի, և ո՛չ երեկվա օրն ստամոքսս ավերած: Այսպես ուրեմն պատճենագրներիս ասածը արդարացավ, թե հոգու տագնապները միշտ ցոլանում են մարմնու վրա: Այսօրվա տկարությունս անշուշտ հետևանք են երեկվա անախորժ անցքերին:

Այժմ արդեն երկրայության տեղի չկա, որ Սոֆիան ինձ չի՛ սիրում. բայց այդ բավական չէ, ես այժմ մինչև անգամ կասկածում եմ, որ նա երբևիցե և որևէ ևիցե կարող լինի սիրելու: Կինը սիրո համար ստեղծած է, վասն զի կինը ինքը անճնավորած սեր է. կինը որ չսիրե՝ նա յուր կնությունը կորցնում է, մի խորհրդակ, մի հրեշ է դառնում: Այղ կինը, որ պղատոնական սիրով չսիրե մի դաղափարական պատանեի, հաբա որ չսիրե յուր վեսային, կողակից որ չսիրե յուր ամուսնին, մայր որ չսիրե յուր զավակին—այս անհասկանալի է ամեն ոգի մեջ: Գիտեմ, հոգիս վկայում է, որ եթե երբևիցե Սոֆիան իմ կինը լինի՝ նա իմ գլխուն մեծ անբախտություն պիտի բերե. աչխարհիս երեսին ամենաթշվառ արարածը պիտի դարձնե ինձ. բայց այնուամենայնիվ, նորա պատկերը մոքիցս հանել չեմ կարող: Ճատ Թանդ կսայլ այն մարդուն, որ ինձ պարզեր՝ արդյոք հինդ տարվա սովորության հետևանքն է այս, թե՞ ես իսկապես սիրում եմ նորան: Նմանապես չատ կուզեի իմանալ՝ թե Սոֆիան ես սիրե ինձ, ինչպես որ ես սիրում եմ նորան՝ արդյոք իմ սերը մի փոքր չէ՞ր պակսել և կամ բոլորովին չէ՞ր անհետանալ արտես: Արդյոք արգելքները գլխավոր դեր չե՞ն խաղում սիրո կապերի մեջ: Արդյոք մենք մեր համառությունը չե՞նք ընդունում սիրո եռանդի տեղ... Ո՞վ ինձ կմեկնե այս, իմ տարիքի համար, դժվարլուծ խնդիրները:

Կեսօրի ժամանակ տոթը սաստկացավ. փոքրիկ սենյակիս մեջ չնչելու օդ չէր մնացել, խեղդվում էի. սրամաշուկ ճանճերը տարմովին թռչում նստում էին մերթ առիքի, մերթ սեղանի և մերթ գլխուս վրա, նոցա բզզոցը դժոխային երաժշտություն էր ականջներիս համար: Էլ հնար չկար տանը մնալու, կես հիվանդ, կես առողջ հագվեցա թեթև ու գնացի ճեմելիք: Մարդիկ կամաց-կամաց, ամեն կողմից, գալիս հավաքվում էին, չատերը իրանց պատվիրած թիվը բաժակներին խմել էին ու լոգարաններըը ընդունել էին, մնացածն էլ

Ինձպես տանը մնալու հնար չունենալով՝ գալիս էին ճամբելիք ըրոսնելու. ճաշելու էլ դեռ չատ վաղ էր:

Տաք-ջուրի ճամբելիքները սկսում են Մաչուխի բարձրադույն լանջին, այսինքն իսկ և իսկ այնտեղեն, ուր կա Եղիսաբեթյան սրահը և իջնում են դեպի վայր, և գնալով միշտ դեպի արևմուտք, վերջանում են քաղաքի սահմանումը: Երբոր Եղիսաբեթյան սրահին հասաբ՝ դեպի ձախ կողմդ վերևումը կտեսնես մի կանաչ ներկած հովանոց, ուր երբեմն եղել է Էդլյան տավիղ, որ այժմ հանած է, ավելի ցած՝ գտնվում է Լերմոնտով լանատեղծի քարայրը և մեջը նորա կիսարձանը. իսկ սրահը մեջընդմեջ անցնելով, եթե երթաս դեպի հյուսիսային–արևմուտք, մի վեռսթ հեռավորութեամբ կա այն եղևեղի փուլը, որն լցված է ծծմբային տաք ջրով, դեպի ուր այժմ տանում է մի դեռնափոր ճանապարհ:

Ահա այսպես, եռև եռևե ճամբելիքները անցնելով, հասաբ մինչև Եղիսաբեթյան սրահը, այնտեղ մի փոքր կանգ առի, հարթավոմբ տեսա ահագին եալբուզը, որ ութսուն վեռսթ հեռվից մի ահագին սառուցի նման փայլում էր առջևս, և հետո քայլերս ուղղեցի դեպի փուլը:

Ճանապարհի կեսը անցած էի, որ տեսնեմ հեռվից մի կին է գալիս, երբոր մոտեցավ՝ տեսա որ Կատյան էր, որ փուլից վերադառնում էր:

Իրար բարևեցինք:

— Երևի փուլ էիք գնացել, ասացի:

— Այո՛, փուլ էի գնացել Թամաշա անելու, տասց նա:

— Սխսո՛ս, որ ես մի փոքր ուշացա և կամ դուք մի փոքր չտապեցիք, թե չէ՝ միասին կերթայինք, ճանապարհը երկուսիս էլ ձանձրալի չէր լինել, ասացի:

— Ի՞նչ հաջաթ, ես դադրած չեմ, պարոն Վաքդան, եթե կկամենաք՝ ես ձեզ հետ նորից կերթամ, ասաց Կատյան:

Երկուսս էլ սուտ ասացինք, երկուսս էլ մին մինի ասելու բաները ունեինք, բայց չէինք ուզում խոսոտովա-

նեղու, երևույթ էլ փուլ երթալը (ես քանիցս արդեն տեսել էի) մի վայելուչ պատրվակ էր:

— Ուրեմն կատյա, եթե ձեզ ծանրություն չի լինել, երթանք միասին, ասացի ու կուռս տվի նրան:

Աղջիկը կյանքի մեջ երևի այսպիսի քաղաքավարություն տեսած չէր. ո՛րպիսի ուրախությամբ ձեռք ընկավ կուռիս, ո՛րպիսի քնքուշ չարժվածքով սիրուն գլուխը խոնարհեց դեպի աջ ուսս, հավատացեք, ոչ մի ավազակության կամ իշխանի կին կամ դուստր չէր կարող այդպիսի չքնաղ պատիվը ձևացնելու յուր անձով: Նորա գլուխը հասնում էր մինչև ականջիս ըմբակը, հասակը հասակիս և կազմվածքը կազմվածքիս այնպես հարմար էին դալիս, որ ասես թե անդուռա ի վերուստ մենք մեկ մեկի համար էինք աշխարք եկած: Աչքիս ծայրով նայեցա նորա երեսին և տեսա նորա լուսին երջանկությունը և անձնաբավականությունը: «Ձեր Աստված, տեր Աստված, ասացի մտքիս մեջ, երբեմն ինչ փոքր բանով կարելի է մարդ երջանկացնել, նոր կյանք տալ նորան և վերադարձ՝ ինչ փոքր բանով կարելի է նորան թշվառության անդունդ գլորել ու բարոյապես սպանել: Իհարկե, այդ բոլորին կատյայից երջանիկ կին չէիր աշխարհս երեսին: Մի փոքր որ առաջ գնայինք, ես կանգնեցա ու ասացի նրան.

— Ես քեզ մի բան ասե՞մ, կատյա, փուլը ես արդեն քանի-քանի անգամ տեսել եմ, դու էլ այս բոլորիս այնտեղ էիր. եկ այս մոտիկի նատարանի վրա նստենք ու խոսենք. մին էլ ի՞նչ այս տրիճին, փուլի կուռ տալով, եղուր պիտի երթանք ու վերադառնանք:

Առաջարկությունս ուրախությամբ ընդունեց կատյան, ու մենք բաց դաշտի մեջ, մի վայրկի տանձի ծառի տակ նստանք: Մեր կեցած տեղը բարձրավանդակ էր. դեպի արևելք խորունկ ձոր էր՝ դահավեժ ափերով. ավելի հեռուն երևում էին փոդքոմոք դեսատկը և չատ տուներ, որունք թաղված էին սաղարթախիտ

պարտեզների և անտառների մեջ։ Սարի կրճիկը զով ու անուշ քամին ուղիղ վիզում էր մեր երեսին։

— Ի՞նչ նոր բան կա ձեր տանը, ի՞նչպես է տատ-Ջուլիտյունը Աստուած-ապրելին, Օսաննա խաթունին և օրիորդին, սկեսրի ես, խոսակցության ավելի համար նյութ չի պակասում դլուխս մեջ։

— Փառք Աստուծո, լավ են, պատասխանեց Կատայան։

Երկուսս էլ լավ հասկանում էինք, որ ոչ ես այն եմ հարցնում, ինչ-որ ուզում եմ, և ոչ նա տալիս է ինձ այն պատասխանը, ինչ որ ինձ կարող էր բավականացնել։ Եվ այս անչնանակ հարց ու պատասխանից ետ երկուսս էլ բավական ժամանակ լուռ մնացինք. երկուսիս լեզուների վրա ևս կար մեկ խոսք, որն ասելու քաշվում էինք։ Վերջապես ես խղեցի այս տագտակալի լռությունը։

— Աա, խնդրեմ ինձ ճշմարիտը, Կատյա, Սոֆիան ինձ սիրո՞ւմ է, թե ոչ։ Տաք-Ջուլը գալիս դեսը ես նորա մեջ մեծ փոփոխություն եմ տեսնում դեպի ինձ, ի՞նչ է պատահել նորան...

— Պարոն Վարդան, որովհետև դուք ինձանից ճշմարիտն եք ուզում իմանալ, ես ինձ համար մեղք կհամարեմ, եթե ձեզ մոլորեցնեմ Սոֆիայի մասին։

Սոֆիան ձեզ ոչ Մոսկովումն է սիրել և ո՛չ այժմ այստեղ սիրում է, ինչպես որ նորա հայրն ու մայրն են միշտ ասում՝ նա էլ այնպես է կարծում, որ նորան արժանի վեհանձը չկիան հայերի մեջ։ Նա ուզում է մի ջահիլ գենեռալի կամ դուբեռնաթոռի կնիկ լինել. այդպես մարդ չունքի հայերի մեջ չկիա Սոֆիան էլ կամակամա օտարազգիի պետք ա դնա։ Սոֆիան, իր հոդնման, հայերին խոկի չի սիրում, միշտ ծիծաղում է նոցա վրա։ Շատ դժար էր ինձ ձեզ այս բանը հայտնելը, բայց չունքի դուք կամեցաք ճշմարիտը իմանալու, ես էլ ձեզ ինչ որ ճշմարիտ բան դիտեի՝ ամենը ասացի։

— Մի՞թե, ասացի հուսահատաբար և դլուխս

կրծքիս վրա խոնարհեցի և արտասուքը ուռ ուռ կա-թում էր աչքերիս:

— Պարոն Վարդան, ինչի՞ եք արտում, ինչի՞ եք լալիս, մի՞թե Սոֆիան կարժե ձեր արտասուքին. մո-ւացե՛ք նորան. Աստուծո փառք տվեցեք, որ ձեր պատ-կի բանը գլուխ չեկավ. Սոֆիան մի օր ձեզ անպատ-ճառ քանքաթաղ կաներ...

— Ա՛խ, Կատյա, Կատյա, մի՞թե սորանից էլ մեծ անքախտութիւն կա աշխարհիս երեսին...

— Կա, պարոն Վարդան, կա. դորանից էլ մեծ ան-քախտութիւն կա. բայց Աստված ուզում է ձեզ պատ-ուել նորանից, և այդ անբախտութիւնն է՝ Սոֆիայի նման աղջկա մարդը լինելը: Հավատացե՛ք ինձ, պ. Վարդան, որ Սոֆիան ամուսնական կյանքի համար ստեղծած չէ. նորա խելքը միայն փարիզներ, վեննա-ներ, պարահանդեսներ, դիմակահանդեսներ, զարդեր և սիրուն դինվորականներ են. ի՞նչ սազ կգա համեստ հայ երիտասարդին այդպիսի կնիկը:

Այն բոլորին ես կարծում էի թե՝ Կատյային այս-քան չարախոսութիւն, այսքան բամբասանք թելադրո-ղը նորա նախանձն է դեպի հարուստ Սոֆիան և, դու-ք, մի փոքր էլ պատմասիրական ձգտումն դեպի ինձ. բայց թե որպիսի անարդար կարծիք էր այդ խեղճ ու անմեղ աղջկա մասին—այդ ես հետո իմացա: Իսկ այն բոլորին ես լուռ մնացի, և միայն երեսիս ծամածռու-թիւնով հասկացուցի նորան, որ այդպիսի խոսքերը Սոֆիայի մասին ինձ շատ անախորժ են:

Կատյայի երեսը մառախուղով պատեցավ. հազիվ նշմարելի արտասուք գոլոր նորա աչքերի մեջ. իմ պատասխանը, ինչպես երևում էր, խորունկ խոցեց նո-րա սիրտը: Դառնալով ինձ, ասաց նա:

— Պարոն Վարդան, շատ կարելի է դուք կկարծեք, որ Ես ատում եմ Սոֆիային, կամ՝ նախանձում եմ նո-րան կամ մեկ չարութիւն եմ կամենում. Աստված մի արասցե. բայց ես մեղքանում եմ ձեզ, որ մինչև այժմ հասկացած չեք նորան: Ես Սոֆիային փոքր ժամանա-

կից ճանաչում էի, դեռևս այն ժամանակ, երբ նորա հայրը այժմվա պես հարուստ չէր, իսկ իմ հանգուցյալ հայրը Հաշտարխանի մեջ առաջին մարդն էր։ Դաբեռնատը ու սրբազան Առաքնորդը ամեն կիրակի մեր տանը ճաշի էին լինում։ Սոֆիան փոքր ժամանակից չունքի հոր ու մոր մեկ հատ աչքի լուսի պես պահակն էր՝ չատ երես էր առած։ ամեն բան ուզում էր, որ իրա կամքով լինի։ Հենց որ մեկ թարս բան առներ՝ խնդրին ինչ ձեռը հասավ՝ կատրում, փշրում, դեմնե դեմին էր տալիս, գըլխի մազերը պոկում էր, գլուխը պատին էր տալիս ու ձեռքերն էր կծոտում։ Այսպես իրա տասնի աղջիկ էր։ Հերն ու մերը տասմ էին թե՝ կմեծանա՝ կխելոքանա ու խակ չէին աշխատում դրստելու։ Մեծացավ, տես տեսա՞ր որ բնությունը չի փոխվեցավ։ Հիմի արդեն նորա դրստելը անկարելի է և կամ՝ չատ աշխատություն և չատ ժամանակ է պետք դորա համար։ «Էլ ո՞ր հեռու գնանք։ Էրևի մխալին էինք մտն գալի բուլվարամբ։ մին էլ բիրգան մեր գարշու էկավ էն Դոռդոմ օֆիցերը ու էրկուսիս չհատ տվավ։ Սոֆիան փոխանակ գլուխ տալու ու մոտից անճնելու, ինչ անի լավ ա,— սկսավ հետը խոսելու։ խոսան, խոսան, մտն էկան մտն էկան ու, վերջապես առանց հոր ու մոր հրամանին տուն ձեն տավ իրիկնաչալի։ Դոռդոմի դորա ինչ։ նա ազամարդ ա, ամոթ, պատիվ, խալխի բամբասանք նրա համար ոչինչ բան ա։ Եկավ տուն, բաբեկամացավ Աստուա—ապայի ու Օվսաննա խանումի հետ։ խելի վախտ նստավ ու պիչերի չատ ուշ ժամանակ գնաց տուն։ Մոսածներն էլ ի՛նչ։ ամենը դատարկ, հայվարա բաներ էին,— Փարիզի քեֆերի, բեսբուր գնանքի վրա։ Մեր Սոֆիան էլ, ամաչելու, կարմրելու տեղ, բերանը բացած՝ ծիծաղում էր։ Ապա հերի ինքդ տաս՝ ի՞նչպես չի բարկանամ ախբը— նրա վրա։ մատաղ-ջան, էսպեսով հայբրիստոնայի անըմը կոտրըվմ ա ախբը օխտրն օտարի աչքըմը»։ Այս բոլոր մեհատուքյունը հաշտարխանցի հայ կնոջ արտահատությամբ, չունչ չառած, նկատեց դժկամակած կա-

տյան: Այդ բոլորին շատ դեղեցիկ էր նա. հայ կնոջ բնական խելքը, պարկեշտությունը և արդարամտությունը փայլում էին նորա դեմքին:

Նա լուռ. ես ոչինչ պատասխան չի տվի:

Տեղերս ելանք ու եղևտաբեթյան սրահի մեջտեղը գնացինք դեպի ճեմելիք: Ժամը երկուսի մոտ էր. ճաշելու ժամանակ էր. ճեմելիքի մեջ դրեթե մարդ չէր մնացել, ամենք իրանց տներն էին քաշվել: Ես ճանապարհ ձգեցի Կատյային մինչև Աստուր-աղայի տան մուտքը: Նորս չի մտած, Կատյան ինձ հարցուց.

— Այս երիկուն կգա՞ք աղայի մոտ:

— կարծեմ որ չեմ գալ, ասացի:

— Ես ու իմ հոգին՝ շատ էլ լավ կանեք. ի՞նչու է ի զուր ձեր ստորանալը մի թեթեվամիտ աղջկա և մի անհոգի ծերունիի առջև:

Բայց ես խոսքս չէ բռնեցի, ու չ'արաչաբ պատմվեցա:

Երեկոյան ուղիղ յոթը ժամին գնացի: Աստուր-աղան քանի մի ռուս բարձրաստիճան պաշտոնատարների հետ պատշգամբի վրա նստած՝ թեյ էր խմում. իսկ Սոֆիան Դոռդովի հետ մի փոքրիկ բազմոցի վրա նըստած՝ շատ կամաց խոսում էր. Դոռդովի աչքերը արյուն էին կոխած: Սոֆիան չառադնած, աչքերը խոնարհած՝ ուշադրությամբ լսում էր նորա խոսածը: Ինչ էին խոսում նոքա՝ ոչ լսեցի և ոչ իմացա, բայց հավատի դիտեմ, որ նոցա ամեն մի խոսքը գաշնակի մահաբեր հարված պիտի լիներ ինձ համար: Ժամ ու կես մնացի Աստուր-աղայի տանը, անտնդմե ոչոք մի խոսք չասաց ինձ, ոչոք բարևս չընդունեց, ոչոք ինձ ձեռք չպարզեց, մինչև անդամ երկրպագելի է, որ իմ ներկայությունը նկատած լինեին: Զայը քեֆիս տակից անցնելով՝ տալիս էին հյուրերին, իսկ ինձ ոչ առաջարկեցին և ոչ հարցրին՝ կկամենա՞մ, թե ոչ: Ամբողջ, և խոր խոցված դնացի տուն: Շատ փոչմանեցա, որ Կատյայի խոսքին ականջ էի դրի:

Ջորա ամբողջ օր վրա-վրա տանս փակված մնացի։ Ոչոք ինձ չայցելեց՝ ոչ բարեկամներ և ո՛չ հիվանդներ, թեև, ըստ օրինակի ուրիշ բժիշկներուն, տեղական լրագրի մեջ հայտարարել էի, որ «պատիվ կունենամ հիվանդներ բժշկելու»։

Քաղաք հասած օրես ի վեր դեռևս ոչ մի հիվանդ դիմած չէ՝ իմ օգնությանը բացի Կատյային, որն թերևս մննակ հավատում է իմ բժշկական հմտությանը։ Ո՞վ է հարցնողը, թե այսպիսի եռ ընկած փողոցի մեջ մի նորավարտ հայ բժիշկ կա Վարդան Հուսկանյան անունով կամ չկա, մինչ Բառթեր, Վիլեր, Սմիթ-նոմներ, Միլյուտիններ, Մարեցքիներ արեգակի նման փայլում են ահա քանի տասնյակ տարիներ։

Այստեղ ևս ավելի մեղադրում եմ հայ բժիշկներին, քան թե ժողովրդին։ Ըստ մեծի մասին բժիշկները և հայ բժիշկը մանավանդ՝ իրանց գործի վրա ինչպես հարստացնող արվեստի վրա են նայում։ Երբ որ մեկ մարդու նպատակ հարստանալ է՝ արդեն հնարքներու աղնվությունը և անաղնվությունը նորա աչքին փախչում են։ Երեք պաշտոն կա, ուր փողի սերը մարդուս համար դառնում է աններելի մոլություն. դոքա են պաշտոնները քահանայի, մանկավարժի և բժշկի։ Ես չեմ ասում, որ այս երեքին փող և ապրուստ պետք չեն. ամենևին ոչ. բայց եթե տոցա աչքում փողը առաջին կարգումն լինի, նոցա գործելի կղարձնե մարդոց աչքում։ Ամենքս ներողամիտ աչքով նայում ենք սրծաթասեր վաճառականի վրա, եթե մեկ դինվորականն սիրե ճոխ և դեղի ապրուստ՝ մենք ամենևին նյութ չենք դարձնում մեր խոսակցությանը նորա այդ թուլությունը, բայց եթե մեկ քահանա, կամ մեկ մանկավարժ, կամ մեկ բժիշկ սիրե ճոխ ուտել-խմել, շռայլ ապրել, պերճ հագնվել ու զարդարվել՝ մենք արդեն մեր մտքի մեջ նոցա կարդադրուկ և պաշտոնանկ ենք համարում, չենք հավատում նոցա օգտաբերության, և

չենք գնահատում նոցա հմտությունը իրանց արվեստի մեջ: Ինչո՞ւ: Այդ ամենին էլ հասկանալի է, ամենքն էլ գիտեն: Թե քահանան, թե բժիշկը և թե մանկավարժը պահանջ մտած օրից պիտի չարունակ սովորի և կատարելագործվի. դրա համար ժամանակ է պետք, իսկ եթե նոքա անձնատուր լինին վաղ հարելու և ճոխ ապրուստ վայելելու՝ նոցա թանդագին ժամանակը իրանց ընտրած արվեստի համար անպատուղ կըկորչի, և նոքա ա՛չ միայն չեն կատարելագործվիլ, ոչ միայն իրենց ստացած դիպուածքը կպահպանեն, այլ օրեօր կհոռանան այն և կ՚ապիհոանան: Երկրորդ պատճառ էս կա, որ ժողովուրդը չի նեղում այդ երեք պահանջին նվիրված մարդոց արծաթասիրությունն և գեղեցկություն: Քահանան, մանկավարժը և բժիշկը ոչ միայն խոսքով պարտավոր են խրատելու ժողովրդին, այլև իրենց անձնական համեստ կյանքով լինել նորան օրինակ, որն ավելի կհամոզե, քան թե ամենաճարտար լեզուն:

Մեծագույն մասը հայ բժիշկներին սովորություն ունի, հենց որ իրանց համալսարանական նստարանը, խնդրոյն հետամուտ լինել, որ յուր ապրուստը ապահովացնե: Ընթերցանություն, պարապմունք, ուսումնական վորձեր, կատարելագործություն, հետախուզություն.— բոլորը ցնդում են նորա մտքեն, նորա բոլոր խնամատրությունը սահմանափակվում է այն կիսակատար գիտությամբ, որ նա յուր պատանեկության օրերը օրամեջ քաղել էր պռոֆեսորների դասախոսություններեն և տարիա վերջին ամիս ու կես վայելչաբերին քաղվածք էր արել յուր ճմռած տետրակներումը: Թեև ամեն ազգի մեջ կան այսպիսի թերուս բժիշկներ, բայց մեևնույն ժամանակ ամեն ազգ ունի հմուտ, կատարելագործած, առաջնակարգ բժիշկապետներ, տարաբախտաբար հայ ազգը շատ ունի առաջիններեն և գրեթե ոչ մինը երկրորդեն:

Երեկոյան դեմ, ժամը այսպես վեցին, դնացի ճեմելիք. սպանները մեծ խումբ կազմած՝ ծիծաղելով դե-

պէս վեր էին նայում ու անպարկեշտ կատակներ էին անում իրանց մէջ նոցա մասին, որոց վրա նայում էին, եւ նայում էին նոքա Դոռդրովի եւ Սոֆիայի վրա, որոնք կուռ-կուռ ածած՝ դնում էին դեպի վերի ճեմելիքները:

— Ա՛յ կարիճ, ասում էր սպաներին մինը, որքան և անպիտան է, որքան և անամօթ է, բայց կարողացավ ֆռանկը ձգելու այդ թռչունին...

— Օ՛, Դոռդրովը մեծ ոմն է փոքր գործերումը, պատասխանեց մյուսը, բայց մեկ հին և խելոք ասած կա, որ ասում է «գու ասա՝ ինձ ով է բարեկամդ, ես էլ քեզ կասեմ գու ինքդ ո՛վ ես»: Դոռդրովին ճանաչելով՝ մենք պետք է երևակայենք, թե նորա ձեռք ձգած աղջիկը ինչ պատուղ է...

— Չէ՛, պարոններ, ինչ կուզեք ասել, բայց աղջիկը բավական սիրուն է, հորը համար էլ ասում են, թե չատ հարուստ մարդ է:

— Ո՛րքան կուզե հարուստ լինի, բայց Դոռդրովին Փարիզի մէջ մեկ տարի մսխելու փող չի ունենալ, վաշընդի նա յուր հորից մնացած միլիոնը և հորաքրոջից մնացած հարյուր հազարները երկու տարվա մէջ այնպես փճացուց, որ դրեթե մերկ եա եկավ:

— Մ՛թե աղջիկ ժլատ հայրը յուր բոլոր ունեցածը կառնե կուտա նորան. չէ Դոռդրովը թո՛ղ յուր սխալմամբ պահե մինչև նորա մահը...

— Եթե չի տալ՝ Դոռդրովը կզրպահա, պրամարիզ կտաբել բանալ, սուտ մուրհակ տալ, թղթախաղի մէջ հազար տեսակ խարդախութիւններ անելը նորա համար նոր բան չի՛:

Սվելի չկարողացա համբերելու, թողի ու գնացի տասէ. բայց Սոֆիային ևս հանդիպել չէի ուզում, ուստի մեծ լայն ճանապարհը թողած՝ կոզմնակի նեղ ճանապարհներով խորացա ծառատունկի մէջ, որ տարի լանջի վրա էր գետեղված: Այստեղ ծառերը, թփերը ու մարդահասակ խոտերը այնքան խիտ էին, որ չորս քայլափոխ հեռի կեցողին անհնար էր տեսնելը: Հանկարծ

ականջիս չհավատալ ձայն եկավ, ուշքս դրի, տեսնեմ Սոֆիայի ձայնն է, բայց չատ կամաց արտասանած.

— Պարո՛ն Դոռոզդով, ի՞նչ եք անում, թողե՛ք, մարդ կտեսնե, ամոթ է:

— Ջե՛, հոգիս, ոչ ոք չէ տեսնիլ, մի՞թե ինձ չես սիրում, էլ մեկ համբույր տո՛ւր, այն ժամանակ ես կիմանամ, որ դու ինձ սիրում ես:

Ու լավեցավ մի բարձրաձայն համբույրի շըրխկոց:

— Իավական չէ՞ր, էլ՞ ես չարութիւն անում, թող, թե չէ, կկանչեմ...

Ես դիտմամբ ամուր հազացի, որ ձայնս լսվի ու այս խայտառակ տեսարանին վերջ լինի: Այնպես էլ եղավ: Երբ որ ձայնս լսեցին՝ խլուրդ թիթերի միջից ճանապարհի վրա դնացին, և ես դուրս ազատեցի Սոֆիային այնպիսի անկումե, ուր կինը կյանքի մեջ գըրըվում է մի անգամ ու էլ ոտքի կանգնել չէ կարող: Բայց ի՞նչ օգուտ. Դոռոզդով որ կար՝ երևելի չար որոմն էր, իսկ Սոֆիան նորա համար ամեն րոպե պատրաստ պարարտ հող:

Երբ որ առավոտն ճեմելիքը եկա՝ ապաների խումբը աղաղակ, աղմուկ բարձրացուցած չրջապատել էր Դոռոզդովին, իսկ հեռվոմը Սոֆիան նորան էր սպասում, երեսը հակառակ կողմը դարձուցած: Ապաներից մինը ասաց:

— Դոռոզդո՛վ, պիտի չնորհավորենք քու օրհնավոր պատիը, ու ծիծաղեցավ, հետո էլ ծիծաղեցան մյուս ապաները:

— Օրհնավոր պատիի համար դեռ ես ոչինչ ասել չեմ կարող, պատասխանեց Դոռոզդովը, բայց քաղաքական պատիս պատիվ կունենաք չնորհավորելու:

Ապաները ավելի պինդ ծիծաղեցան, ու մի քանիսը մինչև անգամ աղաղակեցին. «կեցցե՛ Թամբովի մատակարանչը, կեցցե՛ ասիացի դամբիկը»:

Էլ մի՛ հարցնեք, ինչ կրակի մեջ էր իմ հոգին: Լավ է որ այս խոսքերը չհասան Սոֆիայի ականջը:

Բայց այս օրվա «ավուրն չարը» այս ամոթալի մեջ-

հաղեցրով չէ պիտի վերջանար։ Մի գաղանի, անմեղ-նեղի զորություն ինձ քաշում էր դեպի Աստուած-աղաչ տուն, ուր թեև գիտեի, որ բացի անախորժութենեն ուրիշ բանի հանդիպելու չեմ, այսուամենայնիվ ուղիղ գնացի այնտեղ։

Այս անգամ Աստուած-աղան մենակ էր իր գրասենյակի մեջ։ Մոտեցա նորան. ձեռքս պարզեցի, բայց նա չգիտեմ, չտեսա՞վ թե չուզեց ինձ ձեռք տալու, միայն թե իմ խոնարհ ողջունիս ունքի թեթև շարժումներով պատասխանեց։

Լուռ մունջ նստա մի հեռավոր աթոռի վրա։

Ես տարօրինակ ստեղծված եմ. երբ որ մարդիկ իմ սիրտը ցավեցնեն, սաստիկ վիրավորեն՝ բարկանալու տեղ, ես առավել և՛ն կկակղանամ, կընճվիմ, կոչընչանամ, մինչև անգամ՝ ինքս պատրաստ եմ՝ նորանից ներողություն խնդրելու. ուրիշ բան է, եթե իմ առջև թշնամանեն մի բարեկամիս, կամ մեկ անմեղ և մանավանդ մի տկար մարդու. այն ժամանակ ես կկատաղեմ, իմ բարկությունը չափ և սահման չէ ունենալ. չգիտեմ պատերից վրաս քաջություն կուգա և իմ վրեժը սոսկալի է, օրքան որ գենք ունիմ՝ բոլորը հանդես կհանեմ։ Ի՞նչու է այդպես, ի՞նչ է սորա պատճառը։— Սորա պատճառը այն է, որ ի մանկութենե ինձ սովորեցրած չեն իմ ծնողքը ազնվության և հնազանդության հետ միասին նաև իմ մեջի մարդկային արժանավորությունը հանաչելու և պաշտպանելու. իսկ վերջերումը իմ ստացած լուսավորությունը տվել է ինձ քաղաքացիի առաքինություններ, որոց թվին է նաև պաշտպանել անմեղին և տկարին։

Իմ տեղ մի անգլիացի կամ մի ամերիկացի լիներ, հազար անգամ թքած կլիներ Աստուած-աղայի ու Փիլայի երեսներին և Դոռոդովի թշերը ապտակներով կուռեցներ. բայց ընդ նմին և ըստ արժանավույն կպատվեր և կգնահատեր կատայային, և ոչ թե ինձ նման օրը տասն անգամ վոքրոգությամբ նորա սիրտը կկոտրեր։ Ծեծոդ ձեռքը չան նման լիզելը ոչ թե խոնարհություն,

այլ ամենագարշելի ցածութիւն և ամենանուրբ կեղծաւորութիւն է: Այս խորհրդածութիւնները արի իմ մէջ, քանի որ Աստուած-ազան լուռ կեցած էր ու տէր ղողմյան համբաւ էր: Վերջապես դլուխը բարձրացուց ու ասաց ինձ.

— Ա՞ռաջ ես, ախպեր մենք Սոֆիային պետք ու նշանենք. ուզող կա:

— Հա՞, բարի ճահաթի լինի: Կարո՞ղ եմ իմանալ՝ որի հետ, ասացի:

— Քսանեղ մեկ հարուստ պամիչչիկի տղա կա, չղիտեմ մայո՞ր է, թէ պղովնիկ. մախաս ջահիլ, սիրուն, բոյով-բուսով տղա յա, շատ հավանել ա մեր Սոֆիային: Հերը, ասում են, երկու երեք միլիոն ունի, տոսինկեն-էլ յա էտքան յա մի գառ պակաս, գայրատ քանի քանի հազար դեսեթին հողից, լեսից ու Մոսկովի ու Պետերբուրգի եքա եքա տներից: Մեկ խոսքով՝ շատ խոշոր տղա յա, թաղավորի էլ, ասում են, աչքի լուսն ա. գվատիմն դուլլուզ ա անում: Ի՞նչ ա, լավ ա՞:

— Ինչո՛ւ չէ, շատ լավ է, պատասխանեցի ես:

— Էդ ա գա՛. դու ապա ինչ էիր Թահմին անում. բան Սոֆիկից չէիրայի մեկ պարտքի մեջ խեղդված գուբանդարի, յա մեկ անփոխան հայ չինովնիկի, էսի չէ՞ն առնել, ասաց, մատերին մի օտարուհի ձև տալով:

Ես ծիծաղեցա ոչ նորա խոսքերի, այլ իրա Աստուած-աղայի վրա. բայց նա իմ ծիծաղի իսկական միտքը չհասկանալով ևս առավել ոգևորվեցավ:

— Դու ի՛նչ ես կարծում, ես ի՛նչ մարդ եմ, ինչ մարդու զավակ եմ: Հորս վրա բան լսած չէ՞ս, լսած չէ՞ս Մկրտում աղայի անունը: Իմ հերս էնպես մարդ էր, որ սաղ Հաշտարխան նրա առաջ ձեռքերը խաչ կապած կայնում էր: Նրա նավերը ղազարևի տեղից պետա մեր կողմերը ապրանք էին բերում, էստեղից էլ էնտեղ ռուսի ապրանք էին տանում: Մեկ օր խարաբ բերան քի՝ էրկու նավդ բախմիչ ա իլել ծովի վրա: Հերս իսկույն հրամայել ա տասը ոչխար տանեն ժամին

դուռը մատով բաժանելու խալխին: Հարցրել են թե՝ էդ ի՞նչ աչքաբուժանքի համար ա մատադդ. նա ասել ա՝ քի՝ չատ ուրախ եմ որ էրկուս նավս ա բաժմիչ էլել և ոչ թե ատաներկուսը. էլի չահս մեծ ա: Խոպես գոչալ մարդ ա էլել ազգմած հողին: Մեկ օր էլ ենեռալնեք, պալկովնիկները, մայոռները, չգիտեմ, որ թագավորի կենացը չամփանցկի խմում են էլել. էդ մի կողքին էլ հերս կառեթով անց ա կանում էլել էն տան զարըվից, ուր էդ մեծավորները քեֆ են անում էլել: Գուբեռնաթըրը որ վանչարից տեսնում ա հորս՝ ձեն ա տալիս թե, «Նիկիտա Ամբաքումիչ, Նիկիտա Ամբաքումիչ, արի էսան՛ղ, թագավորի կենացը մի բաքալ չամփանցքի անուշ արա՛»: Հերս էլ կպատեխին պատասխան ա տալիս «Ես չեմ դալ ձեզ մոտ. լավն էն ա՝ դուք կամպանիով էկեք իմ տուն. սամավար սրինել կամ, լավ բաբաթեի կնսանինք ու թագավորի կենացը տաք տաք չայ անուշ կանենք»: Մեր գուբեռնաթըրը կատղում ա. «Ո՞նց թե թագավորի կենացը չայ կխմես. դու ի՞նչպես համարձակվաց էդպես օրենքի հակառակ խոսք բաց թողնելու բերանիցդ. չգիտե՞ս որ թագավորի կենացը մենակ կարելի ա չամփանցքի խմել. ես հիմա քեզ փողսուդ կառամ, վրեդ դատաստան կբանամ ու անով-տեղով Սիբիր կուղարկեմ»: Հերս բան չի ասըմ. զբնըմ ա տուն: Գուբեռնաթըրը ինչքան որ բազմաթյուն կա մոտը, ամենին առնըմ ա, դուխ ու դուզ գալիս ա ներս եռանից, ուզում ա մարդուն մեղադամ կորցնի: Հերը որ իմանըմ ա թե գուբեռնաթըրը եկել ա իրա տուն՝ խուլյն հրամայըմ ա նեղս բերել արծաթի սամավարը ու սանդուկներից հանըմ ա պաչկա պաչկա սախդնացիաները, քըցըմ ա մեջը ու վառըմ ա. ու էքա սամավարը խըշխըշցնում ա մենակ սախդնացիաներով: Գուբեռնաթըրը ու հետի մեծամասա մարդիկը էսի որ տեսնըմ են պելըմած՝ էնպես են զամանըմ: Մկրտում ա ղեն, իմ հանգուցյալ հերը, ասըմ ա էն վախտ «Հիմա տեսեցի՛ք, պարոններ, որ իմ մեկ թաս չայը մեր ազգմած թագավորի համար ավելի թանկագին պատ-

վավոր ա, քան թե ձեր բութիլը հինդ ռուբլանոց չամփանցքին: Էն ժամանակ դուբեռնաթըռը ու հետի մեծամարդիկը սեանըմ են, որ ղորդ ա իլել մարդու աաածը քի՝ «իմ հայը ավելի պատիվ կըբերի մեր թաղավորին, քան թե ձեր չամփանցքին», ինչու որ նոցա խմած մեկ-երկու սթաքան չայի համար նա էրել ա երկու-հարյուր հազար մանեթից ավելի:

— Հիմի սեսեցի՞ը, պարոն բժիշկ, թե Սոֆիան ինչ երևելի օջախեցն ա: Հիմի դու ու քու հոգին՝ ախր մարդ ի՞նչպես ղմըշի էսպես ապիշ մեծացրած աղջիկանը առնի ու մեկ հասարակ հայի կնիկ անի:

Ես սեսա որ Աատուր-աղայի հետ վիճելը բոլոր-բոլորին ավելորդ է, անհնար էր նորան սովորեցնել թե որ գործը պղնիվ է և որը ոչ, ինչ բան մարդուս բարձրացնում է և ինչ բան ցածրացնում. մեր կարծիքը երբեր այնքան հակառակ էին, որքան որ կրակը ու ջուրը:

— Շատ լավ, ասացի. բայց, Աատուր-աղա, դուք հավատաք դիսո՞ք, որ Դոռոդովը հարուստ կալվածատեր հայր ունի. հավատաք եք, որ նորա հայրն ու հորքուրյրը կենդանի են և այդքան մեծ հարստութիյուն մի օր նա պետք է ժառանգե. արդյոք այդ ամենը սուտ, հնարած պատմութիյուններ չե՞ն:

— Ի՛նչ ես ասըմ, ի՛նչ ես հայվարա հայվարա խոսըմ, ի՛նչ ես լորի կերած դուս տալիս. թե որ ես մեկ բան եմ ասըմ, լա՛վ իմացած իլիր, որ նահախ չեմ ասիլ: Նախանձը՞մ ես ինչ են օֆիցեռին. թե՞ կամենըմ ես որ միլիոնչիք մեծավոր աղին թողնեմ ու աղջկանս քեզ տամ, որ դու էլ էն խեղճ երեխին տաներիր Հայաստանիդ գումաններըը, կարմիր թմբան հագցներիր ու նրա օր-արևը սևացներիր լիսո ու օխյոտ հավաբուների մեջ: Ջարմանըմ մընըմ եմ էս հայի փուճ խասխաթի վրա, մեկ բան թե իրանց ասածի պես էիլավ, թեկուզ ջուր դա աշխարք տանի՝ նրանց համար մեկ բան ա: Պարոն Վարդան, ամո՛թ ա, ամո՛թ, թող հայի էդ փչանալու ադաթը, մարդու չհամութիյուն մի՛ անիլ, փիս բան ա: Ես հազար անգամ ասել եմ ու էլի կասեմ իմ Սոֆինկա-

յի նասիբ չահել ոտա չկա հայերի մեջ. ադա-Լազարո-վանց մեջ իսո ադերք իսկի չկան. նրանցից ցած մարդու ասել չեմ ղբյմըշըմ. ճարը կտրած ռուսների գըմման պետք աչքս չուռ տամ,— ի՞նչ ես ասըմ:

— Աստուբ-ադա, ինչի՞ ես բարկանում, ես քեզ դոբա հակառակ ի՞նչ եմ ասել որ, ո՞վ կարող է քու ձեռքից հայրական իրավունքդ խլելու. մխայն թե...

— Ի՞նչ մխայն թե, ի՞նչ մխայն թե, ասաց, ինձ անագ տալով, էդ մխայն թե՛ովդ ի՞նչ ես ուզըմ ինձ հանկացնել, Վլադիմիր Դոռոդովը գնաց-եկավ՝ քեզ-նից էլ պակաս մարդ էլավ, գլուխդ մեռնի, ոչ...

Էլի ուզում էր այս տեսակ անախորժ խոսքեր ասե-լու, հանկարծ, թուրը ու կոշիկների թաթանները չխչխ-կացնելով նեղս մտավ Դոռոդովը, չնորհակալ ձևով բա-րևեց Աստուբ-ադային, ձեռքը սեղմեց ու մոտը նըս-տավ, և սկսավ սուտ-ղորդ Պետերբուրգի ավազորյա-րի և հայսերական դրան բանները պատմելու, ոչ ինձ բարևեց և ոչ ձեռք տվավ, և Աստուբ-ադան մինչև անգամ ավելորդ համարեց մեզ իրար հետ ծանոթա-ցնելու, ինչպես որ այդ սովորություն է ամեն բարե-կիրթ ընկերության մեջ: Նոր էր նեղս մտել Դոռոդո-վը, մեն էլ տեսնես, հակառակ դռնից, երեսը կամըր-ըած, ղեմքը այլայլված, արեգակի նման աչքերը ցո-լալով նեղս մտավ Սոֆիան ու այնպես մտերմաբար բարևեց նորան, ասես թե նորա հորս-հինդ տարուց այր ու կին լինեին: Աստուբ-ադան էլ, հայր Աբրահամի դերը վրան առած՝ ներողամիտ աչքով ու անդորր ո-գով նայում էր Սահակի և Ռեբեկայի վրա:

Անձնապատվությունը, ազնիվ հպարտությունը պահանջում էին, որ ես թեքեի ու դուրս գայի այս գար-շելի որջեն, բայց, ավա՛ղ, պատիվը ու հպարտությու-նը վաղուց թմրել էին մեջս: Ես գրմանում եմ, թե մինչև ո՛ր աստիճան մարդս կարող է ինքն իրան մոռա-նալ և ստորանալ: Հաստատուն կամք բոլորովին մհա-ցած չէր մեջս. այնպես կարծում եմ, որ եթե այդ րո-պեին Դոռոդովը դար թեքեր երեսիս կամ ոտակեք՝ ես

լուռ կմնայի ու համբերությամբ կսանեի, միայն թե ինձ չէի զրկեր Սոֆիայի երեստեսությունից: Ի՞նչ զղայմունք էր այս, սե՞ր էր: Չեմ կարծում: Խելագարության նման մի ցավ չէ՞ր արդյոք: Վերջին ենթադրությունս չատ հավանական է. վասն զի բժշկական զուտ իմաստությունը ամենևին չի մերժում այսպիսի ժամանակավոր, բոլորական խելագարության մանավանդ քնությամբ թեյել և սիրտը վախուզ մարդոց:

Հանկարծ Դոմզդովը զդակի մեջից մի փոքրիկ կապոց հանեց, եղավի աչքերով մոտեցավ Սոֆիային ու ասաց.

— Օրիորդ, խնդրեմ ընդունեցե՛ք ինձանից այս փոքրիկ ընծան:

Սոֆիան ուրախ ուրախ առավ կապոցը. դեմքի վրա անպատմելի ուրախություն ցույց տալով, մեջից դուրս հանեց մի փոքրիկ տուփ, ուր կար բուսած զույն օշ և մի քորոց: Ամենը միասին կարժեր վեց կամ յոթը մանեթ: Եվ նա, որի պարանքը լիքն էր կազնի մեծություն մարգարիտներով, ադամանդներով, զմրուխտներով և ուրիշ զոհարներով, մի նաժշտի վայելուչ ընծայի համար չգիտեր արտ ուրախությունը ինչպես հայտներ:

— Ա՛խ, պարոն Դոմզդով, ինչպես չնորհակալ եմ ձեզանից, ա՛խ, ի՛նչպես սիրուն բան է, ի՛նչպես ընտիր ճաշակ ունիք դուք:

Իսկույն մոտեցավ հայելին, չուտ չուտ հանեց ականջներեն ու դեն ձգեց յուր օղերը, որոնք առաջվանը երկու հազար կարժեին ու հագավ այդ նորերը, իսկ քորոցը չգիտեր կոնծքի ո՛ր կողմը ցցե՝ վեր, թե ցած, աջ, թե ձախ, ասես թե խնայում էր ձեռքից հանելու:

— Ա՛խ, ինչ հիանալի զարդեր են, քանի՞ տվիք, որի՞ գնեցիք, մինչև մահս պարտական չեմ բաժանվիլ:

— Գնի համար մի՛ հարցնեք, չատ չնչին փող եմ տվել, բայց գնեցի կավկազի կողմերից եկած մի «առմեաչկայից»:

Այս վերջին խոսքը մի այնպիսի հատարակ, տավ-

քահան բառ երևցավ Աստուած-աղային, որ տես թե նա ծնած օրից ուրիշ անուն չէր լսել հայի աղջկայ-նը: Բայց իմ համբերութիւնս սպառեցավ: Ծեղից ե-լա:

— Պարոն Դոռդոլ, ասացի, ղէպուք թե դուք հա-յերին չէք սիրում, ասում եք. ղէպուք թե ինձ էլ ար-համարհում եք. բայց դուք ի՞նչ իրաւունք ունիք ան-պատուելու այն տունը, ուր դուք դռել եք հիւրասի-րութիւն և ավելի քան թե հիւրասիրութիւն՝ պաշիվ և սեր. ա՞յդ է ապացոյցը ձեր ազնիվ ծնողաց դաւակ լինելուն, որով այս պարզամիտները (մատով ցույց տվի Աստուած-աղային և Սոֆիայի վրա) պարծենում են, ա՞յս է քաղաքավարութիւնը, որն սուրբ պարտա-վորութիւն է ամեն ազգի...

— Պարո՛ն, ասաց ինձ Դոռդոլը դառնութեամբ, դուք ինձ չէք ճանաչում, նմանապես ես էլ ձեզ չեմ ճանաչում, և ինձ նման մարդը ամենևին հարկավորու-թիւն չունի ձեզ նմանների հետ ծանոթ լինելու, ու-րեմն ձեր անտեղի հարցմունքը ես անպատասխան կթո-ղում...

— Ա՛խպեր, քո՛ւ դորա ինչ, էլի սկսա՛ր... ասաց Աստուած-աղան:

Բայց ես նորա խոսքը բանի տեղ չէի դրի ու չարու-նակեցի ասելու Դոռդոլին.

— Եթե դուք ինձ նախատած լինելիք, ես ձեզ մար-դապես կարող էի ներել. բայց որովհետև իմ աղգս նա-խատեցիք...

— Մի՛թ ունիք ինձ պատժելո՞ւ, կտրեց խոսքս Դոռդոլը:

— Պարոն վարդան, խնդրեմ ձենդ կտրի՛ր, ասաց Աստուած-աղան, թե չէ ես...

Բայց ես դարձյալ նորա խոսքը բանի տեղ չէի դրի ու՝ դառնալով Դոռդոլին, ասացի.

— Այո, կպատժեմ և սաստիկ կպատժեմ:

— Ջո՛ւրբինակ... ասաց նա երեսը սրդնած և չինծու ժպիտով թաքցնելով սրտի երկյուղը:

— Մենք կմենամարտինք, ասաց վճռաբար, խոսքը ծանր-ծանր արտաբերելով, ասես թե բառից ամեն մեկ վանկը տպաւորի ուզր հարվածներ լինեին ու բուռերս սեղմած Դոռղդովի վրան վազեցի, որ մի քանի ապտակ տամ: Դոռղդովը հասկացավ միտքս ու թուրը մերկացուց, և մերկացուցած թուրը ձեռքին, քաշվեցավ Սոֆիայի եռանը՝ երեսը նորա ճոխ շինուածի մեջ թաքցնելով: Աատուր-աղան սաթե կտուցով ծխամորճով—նա պապիոս քաշելու սովորություն չուներ—վրաս վազեց:

— Պարոն Աատուր, ասացի կատաղած, եթե էլի մեկ քայլ ես արել դեպի ինձ՝ հենց կեցած տեղդ կխեղդեմ:

Սոֆիան բարկացած երեսը ինձ դարձրած և ձեռքերը քարձրացած՝ անվախ կանգնած էր առջևս ու պատրաստ էր մինչև վերջին շունչը պաշտպանելու Դոռղդովին:

— Դնա՛ կորիր մեր անից, ցա՜ծ հոդի, ասաց ինձ, ի՞նչ ես ուզում մեզանից. դնա՛, դնա՛. մենք քեզ ատում ենք՝ թքում եմ՝ քու վրա. այո՛, այո՛, ամենքդ էլ ամեհաչքաներ եք, դու էլ արմեհաչքա ես...

Մեկ րոպե ևս չփորթիեցա. ձեռքերս թուլացան և լեզուս պապանձվեցավ, բայց այդ չփորթա տևեց միայն մի րոպե, ճիշդ արև, ուժս ժողովեցի ու...

— Օրիո՛րդ, ասացի. եթե այդպես է՝ ես էլ քեզ արհամարհում եմ, դու ազդուրո՛ց ես, հայուհյան սուրբ անունը ախտոս է, որ քեզ նման ապականված հնոջ վրա լինի: Թո՛ւք, մո՛ւք և խայտառակուհյո՛ւն այս անիծված տան վրա: Ու հետո խոսքս դարձնելով Դոռղդովին ասացի.

— Դոռղդով, դու ինձ հետ պիտի մենամարտես, և որքան չուտ՝ այնքան լավ...

— Ես չեմ մենամարտիլ ձեզ հետ, ասաց նա եռուռ ու եռուռ քաշվելով:

— Ձկ՛, կմենամարտիս, անասո՛ւն դու, ասացի ու վրան վազեցի:

— Չէ՛, չեմ մենամարտիլ, ասաց նա, այժմ սա-
տիկ արդեօք է մենամարտութիւնը: Եթե ինձմէն
անբաւական եք հաշտարարին հայտնեցէ՛ք:

— Ես քեզ կատիպեմ մենամարտելու, ասաց, վրան
վազեցի ու ապտակ տվի, բայց տարաբախտաբար, այդ
մէջտեղն Սոֆիան այնքան մօտիկ կանգնած էր Դոռդ-
դովին, որ ձեռքս նորա երեսին կպավ: Շինկոնը թռաւ
դէմեն, Դոռդդովի ընծայած օղերեն մինը ականջեն
պոկ եկաւ ու գլորվեցաւ դեպի տան խորչը և խեղճ
աղջկա երեսին էլ հինգ մատիս հետքը կարմիր դոյնով
տպվեցաւ: Տեսնելով որ Դոռդդովը պիտի ազատվի
ձեռքես, մի կողմ մղեցի Սոֆիային, բռնեցի նորա
մերկացուցած, բայց գուլ թո՛ւրը և երեք չաղ-չաղ
ապտակներ ծեփեցի նորա թխլիկ թշերին:

— Հիմի կմենամարտի՞ս, ասացի:

Այդ մէջտեղն Ասատուր-աղան սենյակից դուրս էր
դնացել մարդիկ օդնութեան կանչելու. մինչև նա մար-
դիկ կժողովեր, մինչև կվերադառնար, ես սենյակեն
դուրս դնացի: Նախասենյակումը կանգնած էր կա-
տյան՝ վերարկուս ձեռքին:

— Ղոչա՛դ, Վարդան-ջան, ջա՛ն Վարդան, օհա՛,
մեկ էս ա, որ չիդրեքս հանեցիր, ասաց ու տւսերիս
ձգեց վերարկուս: Աղա, էն դռնից մի երթալ. մարդիկ
կան, կբռնեն, եկ էս դումանից դուրս գնա, ու ցույց
ուեց այն դուռը, ուստի ծառաներն էին ելումուտ ա-
նում: Երբ որ հեռավոր դռնով Ասատուր-աղայի բնա-
կարանից դուրս եկա ու մտա փողոց՝ տեսա չատ մար-
դիկ, որ ժողովված էին նորա դռան առաջ:

Շփոթս վերատեղու համար մի դարբղացիե վար-
ձեցի ձի ու գնացի դեպի գերմանացոց կոլոնիանան և
մինչև գիշերվա մութը աննպատակ չափ էի տալիս
Տաք-Ջուրի չրջակա սարերի, ձորերի ու անտառների
մեջ: Կես գիշերը անցած էր, որ քաղաք եկա, մտա
մեջ: Կես գիշերը անցած էր, որ քաղաք եկա, մտա
սենյակս և այն գիշեր առաջին անգամ հանգիստ ոդով
մտա անկողինս:

Հուլիսի 8. Իսսենթուքում:

Ահա քանի օր է, որ Իսսենթուքումն եմ՝ մի հյուրանոցի սիրուն սենյակի մեջ տեղավորված. բայց ո՞վ ինձ այստեղ բերեց—չգիտեմ: Միտքս ասում է թե՝ երեք օր ուշաթափ էի. բժիշկները կարծել են թե անպատճառ կմեռնեմ—անգամ վտանգալի հիվանդ եմ եղել:

Վերջին անգամ որ Սատուրաղայի տանից ոտքիցս կախվով դուրս գնացի՝ բոլոր գիշերը անցուցի խոնավ օդի մեջ ու թեթև հագված, գիշեր որ տուն եկա հոդնած՝ խևուշն քնեցա, բայց մյուս առավոտ միայն զգացի, որ կովկասի անիծած դողդոջը ինձ բռնել է. հայելին մոտեցա, տեսնեմ՝ երեսիս գույնը մեռելի գույն է: Շուտ-շուտ հագվեցա (բոլոր ժամանակը ատամս ատամիս չէր դիպչում, այնպես ատամիկ դողում էր), մտա Բոլթի դեղանոցը, բավականին մեծ քանակ քինաքինա կուլ տվի ու գնացի Դոռդոռվի տան առջև կանգնեցա ու սպասում էի նորա դուրս գալուն: Թեև ամբողջ երկու ժամ անպատուղ սպասեցի, բայց պատրաստ էի այլևս տասներկու սպասելու, որ նորա լրությունը անպատուհաս չթողնեմ: Ժամը տասնին, տեսնեմ. սանդխտից ցած է իջնում նա: Ուրախությունից սիրտս սկսավ ատամիկ բաբախելու: Երբ որ նա փողոց մտավ, ես էլ խևուշն եկա կանգնեցա նորա առջև:

— Պարոն Դոռդոռով, զենքդ հե՞տդ է, հարցուցի, ժամանակ է մեր մենամարտությունը վերջացնելու:

— Պարոն, ես ձեզ արդեն պատիվ ունեցա հայտնելու, որ չեմ մենամարտիլ, օրենքը խստիվ արգելում է մենամարտությունը, պատասխանեց ցած ձայնով Դոռդոռովը:

— Պարոն Դոռդոռով, ասացի: Բայց նույն օրենքովն նմանապես ատամիկ արգելված չէ՞ր նախատինք անելու այն ազգին, որն բացի լավ գործերե ոչինչ արած չունի յուր պատմական կյանքի մեջ, զեթ Ռուսաց էչխանու-

Թյան տակ. եթե դու մեկ օրենքին այդքան հնազանդ ես, ինչո՞ւ մյուսը այնպես լրբաբար ոտնակոխ արիր:

— Ես չեմ մենամարտիլ, ասաց Դոռոդովն ու ձայնը, ասես թե արդեն վորիցն էր դուրս գալիս:

— Բայց ես քեզ կստիպեմ՝ մենամարտելու, ասացի ես, ու արյունս սկսավ նորից եռ գալու:

— Չե՛ք կարող ինձ սպանել. օրենքը ձեզ կպատասպարան. ձեզ կբռնատարկեն, կաքսորեն...

— Թող դնեն ինձ բանտ, թող աքսորեն ինձ, ասացի կատաղած, դնա՛ դանդաո՛ վրաս ո՛ւր և ուզես, ո՛ւմ և ուզես, ու սկսեցի կարկամ նման թափեցնել նորա թշերին, գլխին, ուսին, կրծքին, վզին ապտակները և մուշտակներ:

Երբ որ վրեժս հանդարտացրի ու ձեռքս էլ թուլացավ, Դոռոդովը դեռնից բարձրացուց ընկած գտակը. վրայի ճմռթած հալավը հարդարեց, չորս կողմը նայեցավ ու ասաց. «լավ է որ ոչ-ոք չտեսավ» ու վախավ:

Այն էր, որ նորան տեսել էի, էլ աչքիս չերևեցավ չատ երկար ժամանակ:

Կամաց-կամաց դնացի դեպի Տեմերնիք և գժվարավ հասա նռատարանին: Երևի այդտեղ ևեթ թալկացել ընկել եմ, և բարի մարդ գտնվել է, որ բերել հասուցել է ինձ այստեղ:

Հուլիսի 16·

Հիվանդությունս չարունակվում է. գլուխս գալում է. ականջներիս մեջ մեկ սամավարի խշխշոց է լսվում, մեկ դանգակի ձայներ. լեզուս պղտոր է. երեսիս գույնը դեղնած՝ կանաչ գոլքով:

Ի՛հ, եղած-չեղածը մեկ մահ չէ՞. կմեռնիմ ու կպրծնեմ աչխարքիս ցավ ու դարդերից... Տե՛ր Աստված, մի՞թե պիտի մեռնիմ. տակավին ի՞նչ կյանք վայելել եմ, որ այդպես չատպով Թողնեմ՝ աչխարքս ու հեռանամ: Չինդ տարիս անցավ ծանր աչխատանքի և կենսամաչ չքավորության մեջ. եթե առջևս խաբուսիկ

հուսեր չկային՝ կյանքը ինչո՞վ պիտի զանազանվեր հանցավորի ապրելանքից և կամ նորա բանտարկա-ժանական աշխատանքից. միայն հույսն էր, որ վոքրիշատե պահպանում էր իմ ոգին և տալիս էր ուժ ամեն օրվա դրկանքս համբերությամբ տանելու. այժմ այն հույսն էլ կորավ. այսուհետև էլ ինչ կապում է ինձ այս կյանքի հետ: Ես Սոֆիային չեմ մեղադրում իմ թշվառության մեջ և ոչ Աստուած-ապային. նորա ինձ երբեք աստպատիը հուսերով սնուցած չէին: Ես Դոռոդովին էլ շատ չեմ մեղադրում. իմ դժոտությունը Դոռոդովի հետ բոլորովին ուրիշ աղբյուրե բղխեցավ. միայն թե ոչ ոք չդիտե այդ: Որի՞ համար կենամ. ո-րի՞ն պետք է իմ կյանքը... Իսկ Կատյա՞ն... Չէ՛, Կատյան իմ սրտի մեջ այն տեղը չէ կարող բռնել, որն պիտի բռներ Սոֆիան: Ինչո՞ւ ինքս ինձ խաբեմ. ես Կատյային միշտ կսիրեմ ինչպես բարեկամ, ինչպես քույր. բայց ինչպես կին սիրել չեմ կարող նորան. եթե ասեմ թե կսիրեմ, խեղճ աղջիկը խաբած կլինեմ: Մեր մտավոր զարգացումը դանդաղ է. մենք մին մինի հավասար չենք. նա ինձ րնկեր-կին, բարեկամ-կին լինել չէ կարող, նա իմ սորուկը կլինի. սորուկին կա-րելի է մեղքանալ, դեպի նա գութ ունենալ, խնայել, բայց սիրել երբեք չէ կարելի. բայց նա ինձ սիրում է, և ի՞նչպես քնքույշ սիրով, արդար սրտով է սիրում... Ներ՛ղճ աղջիկ: Ժամանակից ժամանակ մխքս է գալիս, թե ո՞րքան նա սրտմում էր, երբ որ ինձ փոքր ի շատ սիրում, պատվում ու գուրգուրում էին Աստուած-ապայի տանը և ի՞նչ ուրախություն էր սկսում ցոլալ նորա աչքին, երբ ակներև արհամարհանք էին ցույց տալիս նորա ինձ:

Այս խորհրդածությունների մեջ էի, որ մի հասա-րակ ուս մարդ ձեռքս մի նամակ տվավ: Բացի ծրա-րը, նամակը կարդալու չի սկսած, ուզացի իմանալ ով էր գրողը, նայեմ՝ ստորագրված է Կատարինե Մեր-ջանյան: Ա՛, ասացի, Կատյայից է ուրեմն այս նամա-կը, նայենք ինչ է գրում:

Ես գիտեմ, որ հրամանքդ ձեռքդ հաղիվ փող չունես Մոսկով և կամ քու տեղը դնալու, եթե երթաս էլ՝ խելոյն զուլլուղ չես գնչիլ, ուրեմն մի փոքր ժամանակ փողի նեղություն պետք ա քաշես: Ես էսպես մխթ ա-բամ, որ դու լավն էն ա ինձ պարտք մնաս, քանց մի-նի–մյուսի առաջ գլուխդ ծռես: Էդ պատճառով ես նա-մակիս մեջ տիրամ 200 ռուբլի (և իրավ որ նամակի հետ այդքան փող կար), որն ունեիմ վայեած իմ ժա-լոլնիից: Ես դուրս եկամ աղա Աստուրի տանից, հիմի գընըմ եմ Հաշտարխան: Խընդրըմ եմ չի բարկա-նաս վրես, որ համարձակեցա քու գործերի մեջ խառնը-վելու: Ինձանից քոմակ ստանալը դու քեզ համար ցա-ծություն մի համարիլ. բալքի մեկ օր էլ դու ինձ պետք դաս. «տաք հացը փոխ ա» ասըմ ա հայի խոսքը: Ե-րեկի, Աստուր–աղայի տանը նրա աղջկա Սոֆիայի նշանառքը կատարվեցավ Ֆլան Դռռղռվի աֆիցեռի հետ. բավական չատ վայելնըչներ կանչած էին, հայ ոչ մեկ հոգի չկեր. քահանեն էլ ռուսի էր: Աֆիցեռանե-րը չատ խման, չատ անհամ բաներ ուրան. իրանց էն-պես պահըմ էին Աստուր–աղայի տանը, կարծես թե զաբաղըմը լըներ. Սոֆիայի երեսին էին ծիծաղըմ, ա-սելով «բախտավոր պսակիլ արժանի լինիս»: Դռռղռվն էլ փիս գյած էր. հետևան ինձ հետ էլ ուզում էր լիրբ վարվիլ. ամա ես չատ չի համբերամ, քեզ նման ես էլ նրան մեկ լավ սիլլա տըվամ ու փախամ: Հիմիկ դաս-տիննիցուն եմ. մեկ նամրա եմ փըռնել առ ժամանա-կի, և մեկ սահաթից գնալու եմ Մինեբալնըյ ստան-ցին: Դեհ մնաս բարով, Վարդան Ջան, ղռչաղ կացիր, ումուշդ մի կորիվ Աստվածանից որ ես էլ քու բախ-տավորությունդ լսելով՝ միչտ ուրախանամ:

Մնամ խոնարհ աղախին քո

ԵԿԱՏԵՐԻՆԵ ՄԵՐՋԱՆՑԱՆ

Տաֆ-ղուռ

Նամակաբերին ոչքան և աչխատեցա հարց ու փորձ անելու կատարյալ մասին ինչ ու ինչ կարևոր դիտելիք, բայց նորանից ոչինչ չհմացա, բացի այն թե՝ մի աղջկից ավել է նորան այս նամակը և պատվիրել է ինձ հասցնելու. ինքն էլ պատրաստված է եղել գնալու յուր քաղաքը. այժմ, անշուշտ, Տաք Ջուրից դուրս եկած պիտի լինի: Աչխի ոչինչ չկարողացավ պատմելու, վասն զի ինքն էլ ավելի բան չգիտեր: Այս էլ ավելացրեց նամակաբերը, որ աղջիկը երան էլ ընծայել է հինգ մանեթ:

Աչքերիս չէի հավատում: Առանց այլ և այլութեան այս նամակը կատարյալ երա գրածն էր. բայց ես հինգ տարվա մեջ իմացած չէի, որ նա գրել-կարդալ գիտե, ո՞վ և ե՞րբ սովորեցրել էր նորան—խելքս բան չէ կարում: Ես սովորեցրած չեմ, այդ շատ լավ գիտես և, եթե Սոֆիան սովորեցներ, անշուշտ, հազար անգամ աչքին ինձ ասած կլիներ: Երևի ինքն երան էր սովորել, թաքուն առնելով Սոֆիայի գրքերը և պատի եռանդ լսելով Սոֆիային ասածներս ու միտը պահելով: Բայց այս ո՞ր: Մի խեղճ նաժիչա խնայողութեամբ, մսից կտրելով, կակորդից խլելով, յուր աղքատին առնիկը կոպեկ-կոպեկի վրա դնելով՝ երկու հարյուր մանեթ դարձնել (որ մի որբ աղջկա համար ահագին դումար է) և այդ հինգ տարվա աչխատանքի պտուղը մի օսար մարդու տալ—այս ոչ թե սիրո, այլ կանացի դյուցազնութեան նշան է: Ա՛խ, կատյա, կատյա՛, ինչո՞ւ քեզ ուչ ճանաչեցի. ինչո՞ւ իմ աչքերս մինչև այժմ կույր էին. ո՛րտիսի մեծ հոգի ունես դու ամփոփած մի հասեատ անձնավորութեան մեջ. ո՛րքան փոքր եմ ես քու առջև...

Այժմ ես սկսա կամաց-կամաց հասկանալու, թե ինձ Տաք-Ջուրից էսենթուք ով բերած պիտի լիներ, ո՛վ վարձած պիտի լիներ այս սենյակը և ով պիտի ժողված և այստեղ բերած լիներ իմ առարկաներս:

Գնացի տանտիրոջս մոտ և հարցուցի.

— Ասացե՛ք, խնդրեմ, ինձ հիվանդ–հիվանդ ո՞վ այստեղ բերեց և ո՞վ վարձեց այս սենյակը:

Տանուտերս ասաց.

— Մի դեռահաս կնիկ բերեց ձեզ այստեղ, վարձեց ինձանից այս սենյակը և մի ամսվա բնակարանի և կերակուրի վարձը կանխիկ վճարեց. չայ, շաքար, սուրճ, ճրագ, օճառ, Ա.Ն. Նմանապես նա բերեց ձեզ համար: Ձեր կառավիքը նա ժողովեց, ամեց լվացարարին վճարելու, որի համար փողը նմանապես կանխիկ վճարեց նորան, և ամենևին խոսիվ պատվիրեց, որ ձեզանից երբեք փող չպահանջենք, անհանգիստ չանենք ձեզ: Եթե դուք ամսից ավելի մնալու լինիք՝ պատկանյալ փողը նա կհասցնեն մեզ: Բայց չասաց յուր անունը, և ազաչեց որ նորա մասին ձեզ ոչինչ չասենք:

Այսպիսի քնքուշ վարմունք, այսպիսի մարդասիրություն, այսպիսի մարդասիրական ընթացք միայն կարելի է կրթյալ եվրոպացի կնոջմե սպասել, բայց մի հայ աղախնի՝ որի սպասավորությունը մի հարուստ վաճառականի տան մեջ ոչինչով չի զանազանվում անջատյալհանացնող սորկությենից, առաջացած այդ ամենը, պետք է հոժարել որ՝ գրեթե մի անհավատալի մեծագործություն է: Ես արդեն զգացեցա կատյալ վրա նայելու ինչպես մի հասարակ հայ կնոջ վրա. ես նշմարում էի նորա մեջ երկու անդնահատելի հատկություններ՝ կրթվամտություն և ազնիվ արյուն: Այդ կոպիտ կեղևի մեջ, եթե աշխարհք էլ ինձ հավատացներ, որ անազնիվ սերմ կա՝ ես չէի հավատալ: Մարդուս մեջ կան այնպիսի հատկություններ, որոնք պատահական և ստացական չեն, այլ ծննդական ժառանգություն են ծնողներից: Այժմ որ կատյան աչքերես հեռացավ, սրբեմն և նորա հիշատակը ինձ համար թանկ է՝ միայն բերելով նորա ամեն խոսքը, վարքը և բնավորությունը՝ սկսում եմ դնահատելու նորան և բարձր դասելու: Բայց անազան սորկությենից ի՞նչ չահ դուցե մյուս անգամ երբեք նորան չտեսնեմ. դուցե նա ինձ

աղջկան արհամարհում է ինչպես անզգա, ապերախտ և պակասամիտ մարդ: Ի՞նչ պետք է մեղքս ինքս ինձանից թաքցնեմ, ես սև ապերախտությամբ հատուցել եմ Կատյայի սիրն մի մարդավարի վարմունքը ինձ հետ: Չէ՛, ինքս ինձի խոսք եմ տալիս՝ հենց որ առողջացա, իսկույն գնալ այդ աղջկան և...

Սոֆիայի հիշատակը ոչ թե ջնջվել է սրտից, ո՛չ, այլ նա երևում է իմ կյանքի թերթերի մեջն իբր աղճատած, արատավորած ու զզվելի թերթ, ուր գրված է իմ բարոյական անկումը, իմ ամոթալի ախտերը և իմ ամենամեծ թշվառությունը: Միայն այս ես լիապես հասկացա, թե կիրքը մինչև ո՞ր աստիճան կարող է մարդուս ստորացնելու, կուրացնելու. ես միայն այժմ հասկացա, որ սարսափելի անբախտություն է այն ամուսնությունը, ուր խոհեմ սիրտ տեղ թագավորում է կույր կիրքը:

Հուլիսի 29.

Երբ որ առողջությունս մի փոքր կազդուրվեցավ՝ առաջին գործը այն եղավ, որ նորից գնացի Տաք-Ջուր (խոսենթուրից 12 վերստ հեռի է), ամբողջ չարաթ գործածեցի պարելով Կատյային, էլ ոչ մի ոտն, ոչ մի քնակարան, ոչ մի հյուրանոց չթողի, ոչ մի ծառա, ոչ մի աղախին, ոչ մի կառապան չթողի, ամեն տեղ և ամենին հարցուցի, հարց ու փորձ արի, վնտրեցի, բայց չկարողացա Կատյային գտնելու: Ո՛չ մի ճեպակառքի fոնդուfբոռ և ոչ մի կառապան չկարողացավ ինձ տեղյակ պատմելու թե՝ այս ինչ նշաններով աղջիկ ուր և իսկ ուրեղ է: Նամակներ թռուցի մերձավոր լճանները, հեռագիրներ քաշեցի գնացող քաղաքներ, բայց ոչինչ բավարար պատասխան չի ստացա. «չը դիտենք, լսած չենք», ահա այս այն պատասխաններն էին, որն ես ստանում էի իմ աղաչանքով լցված ամեն մի նամակին: Կորա՛վ, կորա՛վ ինձ համար Կատյան և ինձ չարժանացուց դեթ խոսքով չնորհակալիքս լսելու:

Հաչատրեանցի բարեկամներս էլ ինձ ծանուցին, որ այդ անունով աղջիկ չեն ճանաչել երբեք և այժմ էլ Հաչատրեանի մէջ չի կայ:

Թեև կատյայի մասին ոչինչ տեղեկութիւն ստանալ չի կարողացա, բայց Սոֆիայի մասին շատ բաներ լսեցի, և այժմ ևս հետզհետե լսում եմ:

Այն օրը տեղի ունեցած չէ՛ մատանեփոխութիւնը Դոռդրովի հետ, բայց երեք օրից, ինչպես որ կատյան էլ հիշում էր յուր նամակի մէջ, մեծ խայտառակութիւնով կատարվել է: Աստուբ—ազան ասել է Դոռդրովին որ «ես հայեր հրավիրելու չեմ. ես այսուհետև նոցա հետ ամեն բարեկամական և արհեստական կապեր կտրելու եմ. դու հրավիրե՛ քու ծանօթներին և բարեկամներին իմ տուն, և միասին ուրախութեամբ կատարենք դատեր հարսնախոսութեան ծեսը ռուսաց քահանայի օրհնութեամբ»: Իսկ Դոռդրովը գնացել է մի քանի յուր նման սպաների մոտ և ծիծաղելով հրավիրել է նոցա «մի ճոխ դիներոյթի», որն պիտի կատարեան նորա «քաղաքական ամուսնութիւնը». և քահանային պատվիրել է որ դա և յուր աշրացուների հետ միասին «բազում ամբ» բարեմաղթե Վլադիմիրին և Սոֆիային, մատանեփոխութեան մասին ոչինչ հիշված չէ: Թեև սպաները այդ օրը շատ խայտառակ վարել են քանց, բայց Դոռդրովը աշխատել է թեթևացնել նոցա հանցանքը՝ պատճառելով պինդի առատութիւնը: Այսպես բոլոր անեգլէք խարվել են և կարծել են թե օրինավոր կերպով կատարվել է Սոֆիայի մատանեփոխութեան ծեսը, և միամտվել են:

Մի քանի օրից եկել է Դոռդրովը Սոֆիայի մոտ և ասել է թե՝ եթե հայրս լսմանա, որ ես մի հասարակ հայ աղջկա վրա պետք է պսակվիմ՝ երբեք չի տալ յուր հոժարութիւնը և օրհնութիւնը, իսկ եթե ես հակառակ նորա կամքին երթամ՝ անպատճառ կզրկե ինձ այն մեղիոններեն, որն սիրտ ժառանգեմ նորա մահվան. բայց եթե ես դադանի կերպով պսակվիմ և հետո գամ ընկնեմ նորա ոտքերը՝ նա ինձ կներե և չի զրկիլ

ոչ օրհնութենեն և ոչ ժառանգութենեն. ուրեմն՝ այժմ մեզ ուրիշ բան չի մնալ անելու, բայց եթե փախչել Փարիզ և այնտեղ պահվիլ: Այժմ դժվարությունը այն է, որ ես այդ ճանապարհորդության համար փող չունիմ: Եթե դու ինձ անկեղծ և մտերմաբար սիրում ես՝ պարտավոր ես ինձ մի աննշան գոհ բերելու, որ է՝ հարյուր դրամարկղը թաքուն բանալ և մի քանի օրվան կարելի է շատ փող առնել. և ժողովել քու թանկագին զարդերը ու ակնեղենները ու գիշերով փախչել տանից»:

Սոֆիան առանց ընդդիմախոսության հաճարել է նորա առաջարկությանը, հավաքել է յուր բոլոր և մանամբ մոր ակն ու մարգարիտները, դրել է մի արկղիկի մեջ, թաքուն բացել է հոր դրամարկղը, միքանի հանել է քան հազար մանեթ և նույն օրն Դուդդովի հետ միասին փախել են Ստավրապոլ, այնտեղ մի պանդոկում մնացել են երեք օր և ապա չինծու անցագրով գնացել են Փարիզ:

Հայրը իմանալով այս փախուստը (Սոֆիան բոլոր այս հանգամանքը նամակով հայտնել է նորան) ամենևին չվհատված և բարկացած չէ, այլ, ընդհակառակն, անգութ-դարձողին պատմել է թե՝ արիստոկրատների մեջ այսպիսի ոսկանքիքական պատկր շատ սովորական բան է և հաճախ կպատահի, և բոլորովին հանդիստ սրտով սպասում է եղել յուր սիրական դստեր և ապնիլ վեհապետ վերադարձը քանի մի չաբաթից:

Այստեղ վերջանում է բժիշկ Վարդան Հասկիկյանի հիշատակարանը, որ ես խոսենթուրի պատավից գնեցի տասնհինգ մանեթով: Բայց, ինչպես ներողամիտ ընթերցողս տեսնում է, պատմությունը թերակատար է մնում: Ինձ շատ հետաքրքիր էր իմանալը՝ արդյոք այս ճշգրիտ դեպքը ինչո՞վ վերջացել է, ի՞նչ եղան ազնվահոգի Կատյան, թեթևամիտ Սոֆիան, հայատյաց Աստուած-ատան և անբարոյական Դուդդովը. կենդա-

նրո՞ւ են, ո՞ւր են. ի՞նչ վիճակի մեջ են. եթե մեռած են, արդյոք ի՞նչը կարճեցուց նոցա կյանքը այդ ծաղիկ հասակի մեջ (իհարկե, բացի Աստուր–աղայից), նոքա էլի միմյանց հանդիպեցան, թե՞ առ հավիտյան բաժանվեցան իրարե և մյուս անգամ մեկ մեկի երես չտեսան:

Հայկական կյանքը գայն աստիճանի միաձև, առօրեական և ձանձրալի է, որ վոչքրիչատե սովորականն դուրս կենցաղ վարող հայը միշտ չարժել է իմ հետաքրքրություն. ես միշտ ցանկացել եմ իմանալու՝ ի՞նչ է եղել պատճառը, որ նա ընդհանուրի օրինակին հետևված չէ և հայկական կյանքի սովորական ճանապարհեն խոտորվել է: Այդպիսի անձինք թե՛ առաքինի լինեին և թե՛ մոլեկան, միշտ գրավել են իմ կարեկցությունը:

Շատ հարց ու փորձից հետո, մի օր հանկարծ հիշեցի, որ Ռուսաստանի բոլոր բժիշկների ցուցակը կա, որն ամեն դեղագործ պարտավոր է ունենալու: Երբոր այդ ցուցակը ձեռքս առի և այբուբենի կարգով դատ Վարդան Հուսիկյանի անունը, կարդացի որ նա Վ. քաղաքամբ քաղաքական հիվանդանոցի դլխավոր բժիշկն է:

Բժիշկի վարպանքն բնակության տեղը իմանալենետո, արդեն դժվար չէր նորա և նորա ընկերների պատմությանը տեղեկանալու. պետք է միայն մի քաղաքավարի նամակ դրել նորան և հարցնել մանրամասն տեղեկություն տեսրակի մեջ հիշած անձանց մասին, որ և արի խակ: Իսկույն նամա ու մի նամակ դրեցի Վարդան Հուսիկյանին, որի բովանդակությունը այս էր, թե՝ պարոն բժիշկ, քու հիշատակարանը պատահմամբ ընկավ իմ ձեռք, որի համար վող վճարելով իմ սեպհականությունը դարձրի: Բայց, ինչպես դիտեք, հիշյալ հիշատակարանը պարունակում է քու, Կատյայի, Սոֆիայի, Դոռոդովի և Աստուր–աղայի կյանքի առաջին մասը, բայց ի՞նչպես չարունակվում է կամ վերջացել է մնացած մասը՝ ես չդիտեմ, բայց ինձ չատ

հետաքրքրելի էր իմանալ այդ: Եթե արքունական պաշտոնեք ազատ ժամանակ ունէին, քեզ շատ կվնդրեմ, վրադ ծանրութիւն առնուս, մանրամասնաբար դրես վերը հիշած անձանց կեանքի մնացորդը, ուստի և ես կարողանայի եղրակացնել, թէ ինչպես վերջացավ ձեր հարաբերութիւնը: Քեզ խոսք եմ տալիս, որ այդ պատմութիւնը ինչպես և այն տետրակը, որ մոտս է, մարդկեմ առ իշտ ծածուկ կմնա (պատվական կարդացողս տեսնում է, թէ ինչպես ճիշտ կատարեցի խոստումնքս):

Այս էր իմ երկար նամակի բովանդակութիւնը:

Երկու ամսից ստացա մի վոքրիկ տետրակ և հետը մի նամակ, որն բառ առ բառ այստեղ առաջ կբերեմ:

ՊԱՐՈՆ ՍՅՈՒԼՅՈՒՆ.

Ձեր հիշած տետրակը իրավ ես կորցրել էի, բայց չդիտեի որ նորան մոռացմամբ թողել էի Խաչենթաւքի հյուրանոցի պահարանի մեջ: Եթե վող վճարել եք ու դնել եք՝ ինչանակ որ նա ձեր անկողոպտելի սեփականութիւնն է և ես իրավունք չունիմ ձեզանից պահանջելու. ճշմարիտը ասեմ՝ հարկավորութիւն էլ չունիմ: Եթե ձեզ պետքական է՝ պահեցեք ձեր մոտ, միայն թե դուց մի տաք մարդոց՝ ես չուզեի որ հաշտարհանցիներն բարոյական թերութիւնները, որն ես անհնարաբար մտրակել եմ, հռչակվի մյուս հայերի մեջ, թեպետ և դրավոր կերպով մարդկութեան պակասութիւններ ցույց տալը, բացի օգուտեն ուրիչ բան հառաջացուցած չէ:

Թեև ինձ շատ դժվար էր մոքով վերանորոգել տըխուր անցյալիս հիշատակարանները, բայց որովհետև դուք համոզիչ խոսքերով խնդրում եք ինձ՝ ես չկարողացա մերժել ձեր խնդիրը, ուր դուք նյութական շահ չունիք: Բայց եթե այս նոր հիշատակարանիս մեջ հայկական լեզվի դեմ սխալներ գտնեք՝ շատ մի մեղադրեք ինձ: Այս քանի տարի է որ ես ոչ հայի դիրք առել եմ

ձեռս, ո՛չ հայի երես եմ տեսել և ոչ հայի ժամերգությո՛ւն եմ լսել. միայն կատյա է, որ իմ հայ լինելս միտս է ձգում. եթե նա չլիներ՝ կրոն, աղջային ծեսեր և ավանդություններ և հայոց լեզու բոլորը ցնդած կլինեին իմ մեջեն:

Երբ որ ես բժշկապետության հարցաքննությունս ավարտեցի, քանի քանի հայաբնակ քաղաքներ գրեցի թե՝ չէ՞ն կամենալ արդոք ինձ քաղաքական բժշկի պաշտոն տալ. և բոլոր նամակներս անպատասխան մնացին: Երբ որ ռուսաց քաղաքներ գրեցի, գրեթե ամենից հրավերներ ստացա, մինը մյուսից օգտավետ պայմաններով: Ես ընտրեցի Վ. քաղաքը, ուր ահա վեց տարի է, որ փառքի, պատվի և ճոխության մեջ ապրում եմ իմ փոքրիկ հայ ընտանիքովն: Բայց ինչո՞ւ ես այս մանավոր նամակիս մեջ թափում եմ իմ սրտի ցավն ու դարտը. երկու տետրակներովս բավականին գրել եմ այդ ձանձրալի նյութի վրա... Կատյա ձեղնից հոգվով չափ չնորհակալ է, որ դուք նորա և իմ կյանքովս հետաքրքրվում եք:

Ողջ և հաջող եղեք:

Բ.Ժ. ՎԱՐԴԱՆ ՀՈՒՍԻԿՑԱՆՑ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՏՐԱԿ

Սխալ ու կես ի գուր պտրելով Կատյային և ամեն աչխատանքս կորած տեսնելով՝ ես բոլորովին առեցի կյանքը, վասն զի կյանքը մեզ այն ժամանակ է քաղցր, երբ որ նա մեկ թանկագին էակի կամ մեկ քաղցր հույսի հետ կապված է. իսկ եթե ոչինչ սուրբ կապեր չուշնի՝ կյանքը դառնում է մարդուս համար անտանելի բեռ:

Մի օր սխալը նատած էի սենյակիս մեջ ուսանողական տարիներս հիշողությանս առջև կարգավ անցնում էր. հանկարծ պռոֆեսորներիցս մինի խոսքը մխոցս եկավ թե՝ ձանձրույթի դեմ ամենահզոր դեղը աչխա-

տանքն է։ Իսկույն մտքիս մեջ խորհուրդ ծագեցավ. «արի նորից դնամ Մոսկով, ասացի ինքս ինձ, չարունակեմ ուսումս և բժշկապետի հարցաքննության տամ։ Եթե մի առանձին չահ էլ չունենամ դորանից, գոնե կմեղմացնեմ ձանձրույթս և վիշտս, որ մաշում են իմ կյանքը»։ Ինչպես ասացի, այնպես էլ արի։ Նույն երեկոյին ժողովեցի իրեղեններս, դրի պայուսակի մեջ, մյուս առավոտ կանուխ զարթեցա, թեյս խմեցի ու ընկա ճանապարհ։ Զորս օրից հասա Մոսկով, Մոսկով— գետակի մյուս կողմը վարձեցի բնակարանս ու վերնորոգած աչխուժով սկսա մասամբ քաղվածք անելու բժշկական դիպուածյան առարկաները և մասամբ այցելելու լաբարանները և մասամբ թեթև վարժասրությունով մերձավոր թաղերի հիվանդներին դարմանելու։ Ստացածս չատ չէր. բայց իմ այս ժամանակվա ապրուստիս կյանքիս համար բավական էր։ Ժամանակիս մեծ մասը անցնում էր սովորելով։ Այդ միջոցին չարաղրությունս էլ բավականին հառաջացել էր։

Բժշկապետության աստիճան ստանալու համար ես ինքս ինձի երկու տարի ժամանակ էի որոշել, տարի ու հեսը պարապելու և հարցաքննության տալու, իսկ մնացած կես տարին ուսումնական չարաղրությունս դրբելու, մշակելու և պաչտպանելու համար. տարիս վեսը անցել էր և ես մի քանի առարկաներե հարցաքննությունս հաջողակ ավել էի։ Այդ միջոցին մեկ աչնան դիչեր հանկարծ դուռս ծեծեցին և հրավիրեցին ինձ մի ծննդականի մոտ։ Հիվանդը չբավոր էր, եսևես կատ չէին ուղարկել. և որովհետև հենց այն օրը կրկնակուկնեցս կարկատելու էի ուղարկել՝ սիրելեցա թաց ու ցեխոտ փողոցների միջից բարակ կոչիկներով անցնել։ Երկու ժամ չարչարվելից հետ, երբ նորածինին ընդունեցի ու առավոտյան ժամը երեքին ազատվեցա հիվանդից, դարձյալ սիրված էի առավ տուն վերադառնալու, վասնզի այդպիսի ուշ ժամանակ, Մոսկովի հեռավոր և սակավամարդ փողոցների մեջ երբեք կառապաններ չեն լինում, իմ անբախտութենից վերևից էլ մանր

և սառ անձրև էր գալիս, վրայիս բոլոր հալավը, կոշիկներս, գուլպաներս թաց էին, ջուրը, ինչպես ասում են, մինչև ոսկորներս էր հասել։ Երբ որ տուն եկա, թեև խնդուն հանվեցա, կասվիքս փոխեցի, անկողնում մոտ ու տաք-տաք ծածկվեցա, բայց բանը բանից պրպղեն անցել էր. մեկ սարսռալի դողում էի, մեկ կրակի մեջ էրվում էի. բոլոր գիշեր քուն չեկավ վրաս և անդադար բանպադուշակում էի... էլ ոչինչ չեմ հիշում։ Երբ նորից աչքս բացի, ինձ տեսա պառկած քաղաքիան հիվանդանոցի մեջ։ Յոթը օր (մոռիս պառկած մեկ հիվանդի սաբոլն) բժիշկները ամենևին հույս ունեցած չեն, որ ես կենդանի կմնամ. մահճակալիս տախտակի վրա գրած էր լատիներեն Typhus recurrens, որն այդ մլղոցին Մոսկովի մեջ սաստիկ կատորած էր անում։

Ես, ինչպես տեսնում եք, թեև չմեռա, բայց իմս էլ ինձ հասավ. մարմինս բոլորովին հալել էր. վրաս մնացել էր միայն ոսկոր և միս. եթե ինձ կշռեին՝ փուդ ու կես կամ լինեի, կամ ո՛չ։ Այսպես անցան աշունը և ձմեռը և սկսեցավ գարունը. բայց իմ տկարությունս անփոփոխ մնաց. ոչ վատթարանում էր առողջությունս որ մեռնեի, և ոչ բարվոքվում էր, որ աղատվեի հիվանդանոցի անտանելի օդեն, ապատավորների ձանձրալի երեսներեն և իմ հիվանդ ընկերներիս սրամաչուկ պատմություններեն,— ամենքը ինձ իրանց մեհնուն ցավերն ու դարտերն էին պատմում ամեն օր, ասես թե իմերը ինձ բավական չէին։

Վերջապես հասավ ապրիլ ամիսը. ձյունահալքը սկսեցավ. արեգակը արձակեց յուր կենսատու ճառագայթները դեռնի վրա. երկաթի նման կարծր սառույցները լուծվեցան ու քայքայվեցան. ձյունները հալեցան ու խոխոջալով հեղեղներ կազմեցին ու գլորվեցան դեպի գետը, օդը լցվեցավ տեղատխիկ թռչունների և հավերի ձայներով, որոնց օրհներգում էին նորածին դարնան գալուստը. ձյունի տակից գլուխները բարձրացուցին ձյունածաղիկը, արջի ականջը, մանիշակը, վայրի քրքումը ու բյուր տեսակ գալարիք և ծաղիկներ։

վեր, վայր, աջ ու ձախ— ամեն տեղ ուրախություն և բերկրանք էր. մի մի խայ իմ սրտում յուր արմատները խոր տարածել էր վիշտը: Ո՞վ յուր ուշքը պիտի դարձներ մի խեղճ պանդխտի վրա, ո՞վ պիտի հոգար նորա մասին, ո՞վ մի թեթև ախ պիտի քաշեր նորա անբախտ վիճակի վրա: Լուռ ու անտրտունջ արադ քայլերով մոտենում էի առվակ վաղ փորված դերեզմանին:

Մի այպիսի պայծառ օր մեզ հիվանդներիս թույլ տվին մանր զալու հիվանդանոցի պարտեզի ու բակի մեջ: Զբոսնելու ժամանակ հանկարծ տեսա մի դեղեցկահասակ, թանկագին հալաներ հագած կին, որ հետվից ուղիղ դեպի իմ կողմ էր գալիս. երկու աղախին էլ կտավիքով լցրած մի ահագին կողով բերում էին նորա ետևից. երբ որ կինը ինձ մոտեցավ՝ աչքերիս չհավատացի, կարծում էի թե երազիս մեջն եմ. «Կատյա՛, ասացի, այդ դո՞ւ ես, ո՞րտեղից ես գալիս, ի՞նչ գործ ունիս այս անիծած տեղը, ուր ամեն ծակուծուկ զանազան տեսակ մահերով է լցված»: Իմ ձայնս երևի չատ փոխվել էր և խոպոտ էր դարձել, որ Կատյան լսելով՝ սաստիկ վախեցավ:

— Տե՛ր աստված, ասաց Կատյան, Վա՛րդան՝ մի՞թե դուք այստեղ էիք. այս ի՞նչ ողորմելի վիճակի մեջ եք. այս ի՞նչպես նիհարել եք, եթե անունս չի տալիք, եթե հետս չխոսեիք, տասը տարի էլ որ ձեր երեսին նայեի՝ չէի ճանաչիլ,— այնքան փոխվել եք: Ի՞նչ կեր-պով ընկաք այստեղ, ի՞նչ պատահեցավ ձեզ»:

Ես համառոտ խոսքով պատմեցի նորան վերջին երկու տարվա իմ դլխով անցած ամեն բաները: Կատյան ինձ լսելով՝ թաշկինակը անդադար աչքերին էր տանում և սրբում էր արտասուքը: Տեսնելով նորա անկեղծ արտասուքը, ես էլ չատ լացի այնտեղ: Վերջապես Կատյան ինձ ասաց.

— Պարոն Վարդան, դիտե՞ք ես ձեզ ինչ ուզում եմ ասելու. ձեր այստեղ մնալը անհնար է. այս հիվանդանոցի մեջ (որա հանգամանքը ես չատ լավ դիտեմ) չեմ ասում որ դուք կմեռնիք— Աստված մի արասցե,—քայլ

երբեք, ինչպես որ պետք է, չեք կազդուրվել և չեք առողջանալ: Որքան կարելի է շուտ պիտի փոխել, թե ձեր բնակարանը, թե՛ կերակուրը և թե բոլոր ապրուստը: Ես խոհուն կերթամ, կխոսեմ այս մասին զվարվոր բժշկի հետ...

— Կատյա՛, ասացի, ինչ որ ասում ես՝ շատ լավ է, ես քեզ հետ չեմ վիճել. բայց դու զվարվորը ինձ չպատմեցիր, ինչպես պատահեցավ, որ դու մյուս անգամ հայտնվեցար Մոսկովի մեջ... Ես քու հետքը Տաք-Չուրումը կորցրի, դու այնտեղից ուր գնացիր և այս երկու տարին ո՞ւր էիր և ի՛նչ էիր անում:

Կատյայի պատմածի համառոտությունը այս է, որ նա երբ որ ինձ տեղավորեց Էսսենթուքի հյուրանոցի մեջ, նույն օրը նստավ չոգեկառք և ուղիղ գնաց Մոսկով: Ի բնե առողջակազմ և աշխատասեր լինելով, նա Մոսկով հասած-չհասած պտրել է աշխատանք և անհապաղ մտել մի փրանսիացի լվացարար կնոջ գործարան: Փրանսիացի կինը առաջին ամսվա վարձ նշանակել է նորան երեք մանեթ. երկրորդ ամիս, տեսնելով Կատյայի հմտությունը, ժրաջանությունը և պարտաճանաչությունը, կրկնապատկել է նորա ռոճիկը. չորս ամսից Փրանսիացի կինը յուր բոլոր բանվորների վրա կարգել է վերատեսուչ և նշանակել քսանևհինգ մանեթ ռոճիկ. այսպես շարունակվել է այլևս երեք ամիս: Հանկարծ Փրանսիացից նամակ է նա ստացել, որ նորա մերձավոր հարուստ ազգականներից մինը մեռել է, բայց մահից առաջ նորա անունով կտակել է յուր բոլոր ինչքը ու փողը: Որովհետև այս յոթն ամսվա մի[illegible]ին Կատյան յուր հավատարմությունով, ժրաջանությունով և քաղաքավարությունով կարողացել է նորա սիրտը սաստիկ գրավելու, այդ պատճառով, ի նշան յուր բարեկամությանը յուր բոլոր գործարանը շատ ածան, գրեթե ինչին գնով, ծախել է նորան և ինքը գնացել է յուր հայրենիքը: Թեև այս գործարանը Փրանսիացի կնոջ ձեռքին մեծ անուն է ունեցել, բայց Կատյան յուր խոհեմ ընթացքովն կարողացել է շատ ու շատ ավելի

բարձրացնելու Մոսկովի մեջ, այնպես որ՝ քառասունհեղով դավոզների թիվը, ընդհանին և քառասունհել է յուր արդյունքը: Այժմ նորա գործարանին քան հազար մանեթ ավող դնող կա: Այս է համառոտաւիվ կատարյալ պատմութիւնը այս երկու տարվա միջոցին, երբ մենք երկու տարի առաջ Տաք-Չուրսում միմյանցից բաժանվեցանք:

Երբ որ երկուսս բավական լացինք և տխրեցինք, ես հարցուցի Կատային՝ բայց ա՞յս հիվանդանոցումը դու ինչ գործ ունիս: Նա ինձ ասաց որ՝ կապալով առել է ոչ միայն այս, այլ և չատ հիվանդանոցների արբուենի վարժարանների և ուրիշ հասատատութիւնների կըտավիքի տարեկան լվացքը, ունի հարյուր հիսուն վարձկան, որոնք դիշեր ցերեկ աշխատում են նորա գործարանի մեջ. իսկ այժմ այս մեծ կազմվոլը բերել է լվացած կտավիքը և պիտի տանիա յուր ամսական վարձը:

— Այժմ,— ավելցուց նա, ես կերթամ հիվանդանոցի վերատեսչին, տանալիքս կտտանամ և քու մասին ես կխոսիմ: Դու հանգիստ սպասե մինչև իմ գալս: Եվ գնաց:

Այսպես՝ նախախնամութիւնը նորից մոտեցուց մեզ, և ես արդեն նախազգում էի, որ Կատյան իմ կյանքի մեջ մեծ դեր պիտի խաղա և ինձ համար պատհապան հրեշտակ պիտի լինի: Եթե իմ մեջ չլիներ այն խոտելի նախապաշարմունքը, որ թանձր քողով ծածկում էր աչքերս, ես պետք է վաղուց նկատած լինեի, որ մի գերբնական զորութիւն օրե օր ավելի և ավելի մոտեցնում էր մեզ մին մինի, և ասես թե մենք տնդուստ ի վերուստ միմյանց համար աշխարհք էինք եկած: Իմ ժամանակավոր կուրութիւնը պատճառ եղավ իմ այսքան տանջանքիս:

Հազար անգամ արդեն ես պատրաստ էի ընկնիլ Կատյայի ոտերը և խնդրել թողութիւն իմ կատարած ամեն կոպտութեան համար. բայց մի բան ինձ կանգ առնել էր տալիս. Կատյան չէ՞ր կարող կարծել, որ ես

ծուռը եմ դնում ոչ նորա անձին, այլ նորա ունեցած հարստությանը առջև. չէ՞ր կարող նա մտքի մեջ այսպես խորհել՝ «քանի որ ես մի աննշան վոքրամարդ աղջիկ եմ՝ դու ինձ արհամարհում էիր, վրաս նայելու անգամ չէիր արժանացնում ինձ, և երբոր դու վայելուն հույսերիդ մեջ սխալեցար, երբ ես քեզ օգնության ձեռք կարկառեցի, երբ ակներև վտանգերով ցույց տվի, որ քու կարծածի չափ անպիտան անարժան աղջիկ չեմ, այն ժամանակ դու սկսար առջև սողալու»: Ի հարկե, եթե նա այսպես կարծեր կամ սուր՝ պիտի մեղանչեր իմ առջև, վասնզի ես երբեք հարստության առջև ծուռը դրած ու երկրպագության արած չեմ. բայց միայն կանանց արտաքին վայելին խաբվել են իմ աչքերը և ես այնքան խորապիտության ունեցած չեմ, որ կոչտ կեղևի տակից նըշմարեմ թաքուցած թանկագին ակը: Հայաստանի գեսամայրենի քաղաքացուղի մեջ մեծացած, աչքս ճոխության և դեղխության վայելին չընտելացած, կյանքի սանձն դեղեցկությանները դրված՝ մի՞թե զարմանալի բան է, եթե Սոֆիայի արտաքին վայլն ինձ լուսավորության արդասիք երևեր ու ես բոլոր պատանեկական եռանդովս անձնատուր լինեի նորան, ինչպես մեկ հնաչխարհիկ, եթերական էակի: Սիրելու համար պետք է բամականին հոգեկան զարգացումն. արդյոք ունեի՞ ես այդ, իսկ մարդուս կիրքը չարժելու համար— կիրքը՝ որ չատերը, և գրեթե ամենքը մեր համազգիներեն ընդունում են զուտ սիրո տեղ— պետք է գեղահաս տարիք, եռացող արյուն, երեսի նախշուն տիպարք, աղվաչ աչքեր, թարմ թշեր— ահա պատրաստ է ասիական սերը, որի համար վարդն էլ յուր թերթիկները բացում է, ասխարն էլ արևագարից մինչև արևի մուտքը հնչեցնում է յուր գայլայլիկները, այգուն էլ հրեշտակի բերանից դուրս եկած ման ու ման է գալիս գալարագարդ ծառի պտուտը...

Իհարկե, ես այժմ գաղջում եմ Սոֆիայից, և այս գաղջանքի մեջ կա կշիռ և դիտակցություն. ես և միայն

ես դիտեմ, թե մինչև որ ատելության անբարոյական, սնուցող ու թունավոր արարած է նա. ես հրաժարվում եմ այն զգացմունքներից, որ անխոհեմաբար սնուցանում էի մեջս դեպի նա... Բայց այդ ամենը կհավատա՞ արդյոք հարատացած և յուր դինը արդեն ճանաչող կատյան... Տեր Աստված, Տեր Աստված, ինչպես անբախտ մարդ եմ ես. իմ սիրտը տակավին սիրո համը ու հոտը չառած՝ պիտի չախչախվի և անպտուղ թառամի. ինչո՞ւ, ինչո՞ւ: Մի թե քան հինգ տարեկան հատակիս մեջ ես արդեն աշխարքես խաբված, նորա ամեն քաղցրությունեն զրկված պիտի համարեմ ինքս ինձ: Ինչո՞վ մեղանչել եմ մարդոց առջև: Կատյան վաղուց ինձ սիրում էր, և իմ հոգիս վկայում էր, որ նա մի օր ինձ պիտի հաղթե, ինձ էլ սիրել պիտի տա իրան— ինչպես որ կատարվեցավ իսկ.—բայց արդյոք մի օր նա իմ ներսով չի՞ տալ այսքան ժամանակվա տառնությունս դեպի նորան և ձգտումս դեպի Սոֆիան. նորա հոդուս մեջ բան չի՞ դնել արդյոք հավիտենական կտակածը, որ իմ սիրտը կիսված է արդեն, կուսական անարատություն չունի... Ո՛չ, ո՛չ, Կատյան թող վատահ լինի (այս ամենը ես նորան հենց այսօր կասեմ), որ իմ սիրտը ամբողջ է, կիսատ չէ՛, ապականված չէ. այո, Սոֆիան նորան խոցոտեց, բայց չի կարեց ու կեսը հեռը չի տարավ: Այժմ իմ սիրտը բոլորովին բուժած է, ամբողջ է ու ազատ է. որին որ ես կուտամ՝ ամբողջ և առողջ կուտամ, և կուտամ, ի հարկե... Կատյային, վան դի...

Այդ մտքոցին Կատյան ուրախ դեմքով մոտեցավ ինձ.

— Դե՛հ, սիրելիս Վարդան, դնա՛ ներս ու պատրաստվիր, ես կերթամ, քեզ համար ինչ ասես հարկավոր բաներ կպատրաստեմ և խնդուն կվերադառնամ, որ քեզ ազատեմ այս ապականված, ճանճրալի տեղեն, որ քու կյանքը ամեն րոպե ավելի և ավելի թունավորում է: Շատ համբերել ես, էլի մի փոքր համբերե. սիրտդ պինդ պահե՛. զվարթ կաց. տկարությանդ թող

չէ ընկճե քեզ. միայնակ եմ, անտեր եմ էլ մի ասել. երկու առողջ ձեռքեր ամեն օր կաչխատեն քեզ համար և մեկ տաք սիրտ էլ ամեն րոպե պատրաստ է քու արեւնաթոր, հիվանդոտ սիրտը գրկելու ու նորա մեջ կենսատու ջերմություն մտցնելու...

— Կա՛տյա–ջան, Կատյա–ջան, մի՛թե ես արժանի եմ քու այդքան գորովին, ասացի ու ոտքերին փաթաթվեցա. Կա՛տյա, մի՛թե դու ինձ կարող ես ներել: Մի՛թե ես արժանի եմ, որ իրավունք ունենամ ուղիղ աչքիդ մեջ նայելու. մի՛թե դու բացի արհամարհանքեն ուրիշ բան կը զգաս դեպի ինձ: Չէ՛, չէ՛, դու ինձ մի խարիր, դու ինձ երբեք չես սիրել, վասնզի ես քու սիրտը խոր խոցել եմ, ասացի ու երեխայի նման լալիս էի:

— Ի՞նչ լալավ քեզ, ի՞նչ լալավ, Վարդան ջան, երեխա մի լինիլ, մարդիկ կան, նայում են մեր վիրա, ամոթ է, տղամարդ լիլը, ղոչաղ կաց, այդ ի՞նչ վտքրոզություն է, ու գրկեց ինձ, դեռնեն բարձրացուց. նի՛ստ այստեղ, հանգստացի՛ր (նստեցուց ինձ մի մոտավոր նստարանի վերա): Դու ինձ ի՞նչ վնաս ես արել. ե՞րբ և ինչո՞վ ես իմ սիրտը ցավցրել. ընդհակառակըն, դու դեպի ինձ միշտ քաղաքավարի և մարդասեր ես եղել: Եթե երկու տարի առաջ հավանել էիր Սոֆիային՝ մի՞թե այդ մեկ հանցանք է, Սոֆիան չի կարողացավ քեզ հասկանալու և սիրելու՝ այժմ ես եմ քեզ սիրում: Տխրելու, խլու, հուսահատվելու տեղ, դու, ընդհակառակն, պետք է ուրախ լինես և գվարճանաս: Դե՛հ, երեխա մի լինիլ, ղոչա՛ղ կաց, ես չուտ կվերադառնամ ու կառնում, տանեմ քեզ: Ասաց ու համբուրեց ճակատս. ես առի նորա ձեռքը ու երկար ու տաք համբույր կնքեցի վրան:

Կատյան դնաց. ես էլ մտա հիվանդանոցի դահլիճը. հրամայեցի հալավներս բերելու— այնտեղ արդեն դիտեին, որ ես դուրս պիտի գամ այսօր— հավաքեցի իրեղենքս, գրի պայուսակիս մեջ, ինքս էլ հագվեցա: Բոլոր հալավներս պարկի նման կախ–կախ էին վրաս, ցայն աստիճան նիհարացել էի: Ժամ ու կես անցած–

չանցած Կատյան եկավ, մխաին նստանք կատ ու պնա-
յինք:

Կատյան ինձ համար մի մեծ, մաքուր, վառվուն կահկարասիքով զարդարած սենյակ էր վարձել, թեյ, սուրճ, ճաշընթրիք— բոլորը հետ. ամեն օր նշանակած ժամանակին այցելում էր մի զերմանացի, բժիշկ և դարմանում էր ինձ: Բժշկի խնամքը, ընակարանիս մաքրությունը և հարմարությունը, կերակուրների առատությունը և մանավանդ Կատյայի հաճախ այցելությունը չուտ վերադարձուցին իմ կորսված առողջությունը, այնպես որ մի չարաթից ես արդեն սենյակիս մեջ ազատ և հասարակաց քայլերով կարողանում էի մանզալ, երկու չարաթից՝ օրենը քանի մի ժամ թուլատրած էր ինձ քաղաքական պարտեզների և ճեմիքների մեջ զբոսնելու, իսկ մի ամսից արդեն կատարելապես առողջացա:

Մի օր Կատյային ասացի՝ «Կատյա, ես վաղուց ուզում եմ քեզ մի գաղանիք հայտնելու, բայց չեմ համարձակում»...

— Ասա՛ տեսնենք ի՞նչ գաղանիք ունես ինձ հայտնելու ասաց Կատյան այնպես սիրուն երես անելով, ասես թե մի քնքուշ մայր յուր փոքրիկ երեխայի թոթովանքն է պատրաստվում լսելու:

— Ես բժշկապետության հարցաքննության կենտրովել եմ, այժմ մնում է մյուս կեսը...

— Այդ ի՞նչ գաղանիք է, ասաց Կատյան ծաղրը երեսին. եթե հարցաքննության կիսակատար մնացել է, ինքն իրան հասկացվում է, որ պետք է ավարտես, այստեղ ի՞նչ գաղանի բան կա...

— Գաղանիքը այն է, որ՝ եթե հարցաքննությունս ավարտեմ և բժշկապետ լինիմ՝ որի՞ն ինչ օգուտ աված պիտի լինիմ: Աչխարքիս համար բոլորը մեկ է՝ թե ես ուսյալ բժշկապետ եմ, կամ հասարակ բժիշկ, կենդանի եմ, կամ մեռած. ո՞վ իմ ուրախությանս ուրախանալ պիտի լինի և տխրության ցավակից...

— Ի՞նչ ուզում ես ասել, ասաց Կատյան կարմրելով:

— Այն ուզում եմ ասել, ինչ որ սիրտդ էլ քեզ այս վայրկենիս ասաց. Կա՛տյա, այն ժամանակ կարո՞ղ եմ հուսալ, որ դու ինձ սրտանց կներես և ինձ կսիրես այնպես, ինչպես որ մի ժամանակ սիրում էիր...

— Մի՛թե այժմ ես քեզ չեմ սիրում:

— Այո, սիրում ես, բայց քրոջ պես...

Գաստոխանի տեղ, չգիտեմ ինչպես եղավ, որ երկուսս էլ մին մենի սովորականն ավելի մտերմանք, գրկեցանք և շրթունքներես Թուան շատ ուժգին համբուրեցինք:

Հունիսի վերջին ավարտեցի հարցաքննությունները և հուլիսի մեջերը համեստ կերպով կատարեց մեր պսակը նույն բարեսիրտ Մովսես քահանան:

Պսակիցս քանի մի շաբաթ անցած ես զանազան հայրենակ քաղաքներ խնդիրներ ուղարկեցի, որ ինձ քաղաքական բժշկի պաշտոն տան. բայց ոչ մեկ տեղե հրավեր չի ստացա: Շատ սպասելից ետ՝ ուրիշ քաղաքներ ուղարկեցի խնդիրներ և ամեն կողմից ստացա հրավերներ: Ես ընտրեցի Վ. քաղաքը: Կատյան յոթ դրծարանը ծախեց երեսուն հազարի (վերջի տարին նա տասը հազար ղուտ տարեկան արդյունք ուներ) ինքն էլ մոտ քսան հազար աշխատած ուներ դրամարկղի մեջ. ամենը միասին պետական դրամանոցը դրեց— նեղ օրվա համար— և տեղափոխվեցանք Վ. և ահա վեց տարի է, որ այստեղ կենում ենք հանդարտ, առողջ և հաջողակ:

Աստված մեզ երեք զավակ պարգևեց, երկու որդի ու մի դուստր. նոցա անուններն են՝ Վահան, Աշոտ և Բրաբիոն:

Ահա՛ իմ և Կատյայի պատմության չարունակությունը և վերջը:

Իսկ եթե կամենում եք իմանալ ինչ եղավ Սոֆիան, ահա լսեցեք: Երբ որ Դոռդդովը Նորան փախցրեց, նախ դնացին նոքա Սամարտալ, ուր հյուրանոցումն երեք օր

մնային, հետո, ճարելով մի չինծու անցագիրը, գնացին Փարիզ: Փարիզ հասնելով, Դոռղդովը հայտնել է Սոֆիային, որ նորա հետ պսակվելու ամենևին դիտավորություն չունի, այլ «մխասին կենանք, ասել է, այնպես, ինչպես որ այժմս ևիհիլիսթներն են կենում, այսինքն՝ որքան որ մեր փոխադարձ սերը կտեւի. մեկ մեկից ձանձրանալից ետ՝ էլ մխասին ապրելը անհնար է. ես կերթամ իմ ճամփով, դու էլ կերթաս քու ճամփով»: Բայց այդքան ևս կարողացած չէ յուր խոստումնքը կատարելու. հենց առաջին չարաթից սկսել է կամաց կամաց խաբելով ձեռքից վաղերը առնելու ու անառակ երիտասարդներին ու լկաի fոfոթներին հետ Փարիզի պանդոկներումը և զբոսարաններումը զվարճանալու: Երբ որ Սոֆիայի քսան հազար մանեթը մխսել պրծել է՝ այնուհետև սկսել է Սոֆիայի ակնեղենները գողանալ և ծախել, այս ևս երկար տևած չէ: Մեկ պատահական օր Սոֆիային հանձնել է յուր անառակ բարեկամներից մեկին, և ինքը վախել է, ոչ ոք չի իմացել, ո՛ւր: Այս կերպով Սոֆիան կարճ միջոցումը ակամա սիրուհի է դարճել մի անպիտան ֆրանսիացի երիտասարդի, որ ժամանակ ժամանակ, երբ վաղի պակասությունը չատ նեղում է եղել նորան, Սոֆիայի սերը ու գիրկը ծախում է եղել այս կամ այն վաճառատ ծերուկին և ստացած փողովն երկուսը միասին ապրում են եղել քանի մի ժամանակ: Այսպիսի կյանքե ձանձրացած, մի օր Սոֆիան վախել է այդ Ֆրանսիացիե մոտից և մտել է այնպիսի տուն, ուստի կինարմատը երբեք կենդանի չի դուրս գալիս, նա մնում է՝ թե ֆիզիքապես, թե բարոյապես:

Այս չար լուրը հասնում է Աստուր–աղայի ականջին. առաջին նվաղ նա ամենևին չի ուզում հավատալ, բայց աստիճկ վրդովվում է: Բաբեկամների խորհրդով մի նամակ է գրում Փարիզում բնակվող ռուսաց հյուպատոսին և մանրամասնաբար հայտնում է նորան յուր լսած անախորժ լուրերը և հարցնում է նորան՝ ճշմարիտ են արդյոք այդ ամենը: Հյուպատոսը՝ ստանալով

Նորա եամակը, յուր գործակալներից մինին ուղարկում է տեղեկանալու, արդյոք ճշմարի՞տ է այս չարաբաստիկ եղելությունը: Գործակալը աչքով տեսել է, որ մարդոց պատմածի մեջ ոչինչ ստություն չկար: Այդպես էլ ծանուցել է հյուպատոսը Աատուր-աղային: Այս բոթը առանալով, նույն գիշերը կաթվածը երկու անգամ զարկել է նորան, և մյուս առավոտ նա արդեն անկողնեն դուրս չէ կարողացել դնել ոտերը: Բժիշկները խորհուրդը պարզապես հայտնել է, որ նորա կյանքը մեծ վտանգի մեջ է:

Աատուր-աղան յուր բոլոր ահագին հարստությունը կտակել է, որ եւ մահվանը ընծայվի պետական գանձարանին և կտակի մեջ այսպես գրել հրամայել է «Տուք զկայսերն կայսեր», և ինքը չուտով մեռել է: Մեռնելից առաջ փոխե՛լ է հավատը, թե ոչ, այդ ոչոք չգիտե, միայն այս գիտեն, որ նորա մարմինը հայ քահանաներով չէ թաղվում:

Այսպես եղավ Աատուր-աղայի վախճանը:

Մի երեկո, նոր էի վերադարձել հիվանդանոցից և կատայի ու երեխաքիս հետ նստել էինք թեյի սեղանի առջև, հանկարծ նախասենյակումը մի չիմի բարձրացավ. մեկ մարդ ներս է ուզում մտնել. բայց ծառաս թույլ չի տալիս. մարդը տալիս է իմ և կատայի անունները, բայց դարձյալ չի թողնում ներս դալու, ասելով. куда такая дрянь лезет к господам? Ведь срам, ей Богу!

Շտապով դուրս գնացի տեսնեմ՝ թե ինչ է: Հանկարծ ծառայիս ձեռքից փախ ընկած ներս թռավ մի պատառոտած հալավով, ցիրցան եղած մազերով, կարմիր խոցերով ծածկված երեսով մի այլակերպ կին. դռպեի մեջ սենյակը օդի դարչելի հոտով լցվեցավ. ներս մտնող կինը սաստիկ հարբած էր:

— Պարո՛ն Վարդան, կատյա, այսքան միայն կարողացավ ասել նա, և հետո սկսավ մեկ լալու և մեկ ծիծաղելու:

Ես և կատյան ապշած նայում էինք և չէինք կարո-

զանում իմանալու, թե ով պիտի լիներ այս թշվառականը. վասն դի չէինք հիշում, որ երբևիցե, ուր և իցե այսպիսի կնոջ հետ ծանոթություն ունեցած լինեինք:

— Պարո՛ն Վարդան, կատա՛, ինձ չճանաչեցի՞ք... ես Սոֆիան եմ...

Բավական է. չեմ ուզում նկարագրել այս զարշելի և ցավալի պատկերը:

Սոֆիան սոսկալի հիվանդ էր: Խղուկն տալի հիվանդանոց և պատվիրեցի օգնականին, որ ամեն կերպ հանգստացնեն ողորմելի աղջկանը: Ամբողջ վեց ամիս թափեցի վրան իմ բոլոր բժշկական հմտությունը, և հազիվ հազ կարողացա ապաքինելու նորա խորտնկի և հնացած զազրելի խոցերը: Իսկոր այդ ժամանակ կատյան հայհոյքում էր նորան ամեն պիտույքը, չայ, շաքար, սուրճ, կաթ, կարագ, մեր խոհանոցում պատրաստած կերակրից— մեկ խոսքով՝ ինչ որ պետք էր, առատ-առատ ուղարկում էր նորան: Երբոր բոլորովին առողջացավ, ես հարցուցի Սոֆիային, թե ի՞նչ մխաք ունի ձեռնարկելու. «կամենաս՝ մնա՛ իմ տանս, առատ, կամենաս՝ դնա՛ Հաշտարխան— ես քեզ ամեն կերպով պատրաստ եմ օգնելու: Գուցե մի օր մի լավ մարդ գանես՝ պսակվիր, քու օժիտը ես կպատրաստեմ...»

— Հա՛, հա՛ հա՛, ծիծաղեցավ Սոֆիան, բախտ դռներն այսուհետև իմ առջև հավիտյան փակված են: Ես ձեզանից միայն ընդհակ եմ խնդրում, որ Ֆ՝ թուլ տաք ինձ, որ ես ձեր տան մեջ նաժիշտ լինիմ: Այս է իմ մեկ հատիկ փափագը, ձեզ երկուսիդ ծառայություն անելն դատ ուրիշ բախտ չէ կա ինձ համար:

Շատ զոր արի, որ հրաժարվի այդ ցնորական դիտավորությենեն, բայց համոզել չկարողացա. ու ցիջանելով նորա աղաչանքին ու արտասուքին վերջապես հոժարեցանք նորան մեր տան մեջ դայակի պաշտոն տալու:

Ամբողջ տարի չերմեռանդությամբ կատարեց Սոֆիան յուր վրա առած սուրբ պարտավորությունը. ոչ մեկ աշխատություն նորա համար ծանր, տաղտկալի

կամ նվաստացուցիչ չէր երևում, ոչ մի անդամ նա թույլ տված չէ, որ կամ ես, կամ Կատյան, կամ երեխաներս իրանից անպոհունակ մնայինք. ինչ որ ինքը կարողանում էր անելու, երբեք թույլ չէր տալիս, որ ծառաները անեին. տանս մեջ ոչ մեկ անկարգություն չէ նկատեցի ամբողջ մի տարի, ամեն բան յուր տեղումն էր. ամենայն ինչ սենյակի մեջ մաքուր էր. երեխաքս միշտ մաքուր հագված էին: Բոլոր օրը ոտքի վրա էր Սոֆիան. մեկ կահկարասիքի փոշին էր սրբում, մեկ սենյակներն էր ավելում կամ հավաք-հեղուկ անում, մեկ երեխաքի պատառոտած հալավներն էր կարկատում, մեկ նոցա ցխոտած կոշիկներն ու մաշիկներն էր սրբում, մեկ լվացք էր անում, մեկ ծծի երեխա էր օրորում. միով բանիվ՝ միշտ գոնում էր տան մեջ դործելու մի գործ. նա չդիտեր՝ թե ինչ է նշանակում մի րոպե նստել ու հանգստանալ: Որքան էլ կանուխ զարթնի՝ Սոֆիան միշտ արթնացած էր ու տան աշխատանքով էր արդեն զբաղված. որքան էլ ուշ վերադառնայի տուն՝ նա դարձյալ արթուն էր և դարձյալ մի աշխատանք կունենար: Եթե աշխատելու բան չլիներ՝ նա սկսում էր երեխաքին համար զուլպաներ գործելու: Քանի՛ քանի անդամ կասյան և ես ասել ենք. «բավական է, Սոֆիա ջան, այդ որքան աշխատես. ինքդդ քեզ խնայի, մի փոքր էլ նիստ, դաղար տուր ոտքերիդ ու ձեռքերիդ»:

— Ա՛խ, պարոն կամ տիկին, ասում էր նա, այս ի՛նչ աշխատանք է որ իմ արածը, եթե դուք տեսնեիք օտար աշխարհի կնանիք ինչպես աշխատել գիտեն, այն ժամանակ դուք ինձ մեկ րոպե ձեր տանը մեջը չէիք պահիլ: Ու նորանոր եռանդով չարունակում էր յուր ընդհիջած գործը:

Սոֆիայի գարովը տես թե՛ մի բարերար գեղեցիկ ճառագայթ փայլեցավ իմ տան մեջ. քանի՛ քանի անդամ այս խոսքերը ինձ ասել է Կատյան: Երեխայքս խոտոր պես սիրում ու պատվում էին նորան. նորա գրկից յացած չէին իջնում. «Սիրուն Սոֆիա, բարի Սոֆիա, ոս-

կի Սոֆիա» այս էր նորա անունը երեխերքիս բերան-
ներում:

Ոչ մի անգամ չհիշեց Սոֆիան ոչ յուր և ոչ մեր անցյալը. չհիշեց յուր ծնողաց անունները. չհիշեց յուր քախտավոր և չարաբաստիկ օրերը. ասես թե Սոֆիան անցյալ չուներ և նորա կյանքի սկիզբը այն օրն էր, երբ առաջին անգամ իրրև նաժիշտ մտավ նա մեր տուն: Կուզեք հավատացեք, կուզեք չէք, բայց ես այս նոր Մաղդաղինացի Մարիամին չատ անգամ կուլաների հետ չէի վոխել, եթե ամուրի երիտասարդ լինեի:

Թեև ես ատանում եմ հայոց լրագիրները՝ Մեղու Հայաստանի, Մշակ, Արձագանք և այլն, բայց ամենևին ժամանակ չունիմ նորա կարդալու. բայց Կատյան ոչ մի թվահամար չի թողնում չի կարդացած: Նորա լրագիրը կարդալու ժամանակն է ատանըմեկից մինչև ատաներկուսը, իսկ և իսկ այն ժամանակ, երբ ես անպատճառ հիվանդանոցումն պիտի դանվիմ: Կատյայի ասելովն, Սոֆիայի աչխարքիս երեսին մի հատիկ սքրած բանը եղել է լսել Հայաստանից ատացված լուրերը: Վերջին ժամանակները, երբ ատճխինների կասկածը չատացավ և քրդերի ավազակությունն ու մարդասպանությունը ատատկացավ, Սոֆիան արդեն տենդահույզ անհամբերությամբ սպասում է եղել լրագիրների դալուն:

Մի օր, երբ Կատյան ու ես նստած էինք, նկատ մտավ Սոֆիան ու ասաց մեզ. «Երեք օրից ես պետք է երթամ այստեղից, դուք ձեզ համար մեկ նաժիշտ պատրաստեցեք»:

— Ի՞նչ եղավ քեզ, Սոֆիա ջան, ասաց Կատյան երեսը սպրդնած, ինչո՞վ մեզանից անբավական ես, ո՞վ ցավեցուց քու սիրտը:

— Ամեն բանով բավական եմ ձեզանից, տիկին, իմ սիրտը ոչ ոք ցավեցրած չէ. բայց ես պետք է երթամ:

— Ո՞ւր պիտի երթաս. ինչի՞ պիտի երթաս, Սոֆիա ջան, մնա մեր մոտ, բավական է տանջվածդ, ասաց Կատյան:

— Գեաք է երթամ, ասաց Սոֆիան, թեև վրայից երևում էր, որ հազիվ կարողանում է բռնել սրտի վղճուկը և աչքերի արտասուքը:

— Կասե՞ս մեզ վերջապես, ո՞ւր պիտի երթաս, ինչո՞ւ պիտի երթաս, ասացի ես:

— Վան պիտի երթամ, ասաց Սոֆիան, այնտեղ մեր հայ եղբայրները և քույրերը տանջվում են աղքատության և անողորմ թշնամիների մեջ, իսկ ես այստեղ փափուկ և հանգիստ կյանք եմ անցնում: Կերթամ նոցա հետ կապրիմ նոցա հետ կտանջվիմ, կարելի է նոցա հետ էլ կմեռնիմ: Այս քաղաքը չատ լավ քաղաք է, բայց հայի չէ՛· ես կերթամ հայերի մեջ կկենամ, հայերի մեջ էլ կուզեմ թաղվելու:

Երբ որ այս խոսքերը վերջացուց, էլ չկարողացավ արտասուքը բռնելու ու կողկողագին ճայնով լացեց: Ես, Կատյան և երեխերքս նմանապես լռինք:

Ինչպես որ ասաց, այնպես էլ արավ Սոֆիան: Երեք օրից հետացավ մեզանից և հետը առավ միայն Կուր ռոճիկը—ու բացե ի բաց հրաժարվեցավ, երբ որ ես և Կատյան առաջարկեցինք նորան բարեկամական ընծա առնելու մեզանից հազար մանեթ:

Մեկ ամսից Արզրումից մի համառոտ նամակ ստացանք, ուր հայտնում էր նա, որ հետևյալ օրը ճանապարհ պետք է ընկնի դեպի Վան: Եվ ահա՛ ուրիշ ամսից ավելի է, որ Սոֆիայից ոչինչ լուր չունենք. կենդանի՞ է, թե մեռած՝ չգիտենք: Քանի՛ քանի անգամ մեր հյուպատոսին նամակ գրեցի և մանրամասն նշանակելով Սոֆիայի բոլոր հանգամանքն, խնդրեցի, որ ինձ տեղեկություն տա նորա մասին: Նամակներիս պատասխանը չուտ եկավ, բայց Սոֆիայի մասին հյուպատոսը ոչինչ բան չգրեց, վասն զի ինքն էլ ոչինչ տեղեկություն ստանալ կարողացած չէ: Սպանե՞լ են արդյոք քրդերը, կամ չերքեզները, կալանավո՞րել են նորան— ոչինչ չիմացանք:

Ահա ժամս այս է Սոֆիայի վախճանը:

Իսկ Դոռոդովի մասին ձեզ այս կասեմ: Տարի ու կես սորանից առաջ պաշտոնական գործերով Գեաեր-

բուլդ էլ գնացել։ Մի անգամ Յելիսեևի խանութումը կատալիկս և երեխերքիս համար ոտնամաններ էի ընտրում. հանկարծ ներս մտավ գնդապետ Նշանպղնտոմ, մի սոին պատառոտած կոշիկ և մյուս ոտին՝ դաթափեռչե կրկնակոշկի հագած, աբրշտութենից քիթը կարմրած ու կապտակած, դվխու մազերը թափած, ինքն էլ ասատիկ հարբած մի սպա և մտենալով ինձ, մատամբ ռուսերեն և մատամբ ֆրանսերեն ասաց. «Պարոն ձեր առջև կանդնած է ռուսաց քաջ զորքի սպնիլ սպան. ես ձեր երեսից տեսնում եմ, որ դուք բարի և սպնիլ մարդ եք. եթե մի քանի ռուբլի կարող են բախտավորեցնել ռուսաց քաջ զորքի սպնիլ սպային, խընդրեմ, մի խնայեք, վասն զի տանս մեջ մայրս մեռած է, սեղանի վրա դրած է, թաղելու փող չունիմ. կինս հիվանդ պառկած է, ճարի փող չունիմ, յոթը երեխայքս սովից մեռնում են, հայի փող չունիմ»։ Խանութի տեր պարոն Յելիսեևը լսելով այս ճառը, ասաց. «Պարոն սպա՝ այս քանի տարի է, որ դուս մխնուշն երդն ես երգում, եթե ասածդ ճշմարիտ լիներ՝ մայրդ վաղուց հող դարձած պիտի լիներ, կինդ և յոթը զավակներդ էլ մեռած։ Սո այս հինդ կոպեկն ու դնա. օղիի համար քեզ այսքանից ավել հարկավոր չէ»։

Ուշադրությամբ նայեցա սպայի երեսը և իսկույն ճանաչեցի իմ ախոյան Վլադիմիր Դոռդոմլին։ Բայց քանի մեջից երեք մանեթանոց հանեցի ու տվի նրան։ Տեսնելով այսպիսի անակնկալ բարձր, Դոռդոմլը բռնեց ձեռքս և ուզում էր պաղնել. բայց ես զորով ետ քաշեցի։ Այս վերջին անգամն էր, որ նորան տեսա։ Սոցա նմանների վախճանը հայտնի է. ձմեռվա մի ցուրտ գիշեր անշուշտ սառած կտեռնեն սորան կամ օղետան մոտերը կամ մեկ խուլ փողոցի տան պատի տակ։

Սոֆիայի մայրը, Օսաննան, մինչև այժմ կենդանի է, և կենում է Մոսկովի անկելանոցների մինի մեջ։ Նորա սիրած խոսակցությունն է, ասում են, հայերին հայհոյելը, որոնք երբ էին նորան այս անբախտության հասցրել են։

1884

ՉԱԽՈՒ

ՋՐԿԻՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՊԱՏՄԱԾԸ

(Գրական լեզվով)[1]

Գարունը դեռ հասած չէր, բայց էն տարին չոքը հնարես վաղ էր կոխել, որ վեսոլվարի տանուհինգին—քանդին արդեն ղալաբ—աբուռը, բանջարը դեռնից մեկ թիզ վեր էր էլել: Մարտի սկզբին արդեն տարմերը եկել էին հեռու տեղերից և տանիքների կլամիանների մեջ սկսել էին իրենց բունը չինել, կռունկները, վայրի սագերը երամ-երամ, կռկռալով Դոն գետի կողմից դեպի Ռուսաստան էին թռչում դնում. էլ ձախ չկար հանկարծակի ցրտերից: Մի քանի օր էլի անցավ, արարի՛չ աստված, հնարես չոքը արավ, որ բոլորովին հունարես տեր ու տապն էր... չորեքշաբթուց գետինը սկսեց հաքճքել, ձյունի թողած խոնավությունը վաղուց անյել անհետացել էր. հողագործները աստված աստված էին կանչում: Եթե էլի մի քանի օր էտպես չարունակվեր լիներ, ամբողջ ցորենը պիտի թառամեր, փչանար:

Էս ժամանակները ինչպես կլինի որ ձիս տաքը մնասել էր. ոչ մի ձյուն բեռ քաշելու, ոտքի վրա կանգնելու ուժ չուներ անասունը: Բայց այդիս անպատճառ ջրել էր պետք, թե չէ էնքան տարվա աշխատանքս մեկ շաբաթվա մեջ պիտի դնար: Ուզեի չուզեի մեկ ջրկիր

[1] Նախիջևանի բարբառից գրական լեզվի է փոխադրել Սա. Լիսիցյանը.

ալիսի բանեի, պետք է գետից—նկատված է որ աղբյուրի ջուրը պարանդին օգուտ չի տալիս—տակառ տակառ ջուր կրել ու դույլերով ծառերի տակը լցնել տալի: Էնպես էլ արի. բանվորիս հատկապես Ջրկիր Մարտիրոսի եռանից ղրկեցի, որ վաղվանից սկսի գետից ջուր կրել:

Մյուս օրը բազար գնացի և մինչև կեսօր, ինչպես սովորությունն էր, խանութտում մնացի: Երբ կեսօրվա ճաշին տուն վերադարձա, Մարտիրոսը երկու ձեռքին երկու դույլ անդադար տակառից ջուր էր քաշում և պարանդիս տակառիկներն էր լեցնում, բանվորս էլ Մրիմից նոր ծառեր էլ ապսպրել—տեղ-տեղ փոսեր էր փորում: Հացից դեռ նոր էի վեր կացել, մեր Մարտիրոսը էլի մեկ տակառ էր բերել գետից և պարանդիս ջրելու վրա էր, որ ես էլ էնտեղ գնացի՝ նայեմ, բանվորս ի՞նչ բանի վրա է:

Մի հին ծիրանի ծառս էն ձմեռ ցուրտը խփել էր—բացրել էր, բանվորիս պատվեր էի տվել, որ աբմատով հանի և նորից այնտեղ մի փոս փորի, որ ծառ տնկեմ: Երբ պարանդս մտա, հենց էտ փոսը փորելու վրա էր բանվորս: Գնացի կանգնեցի էտ փոսի ափին և թմբած մնացի. շատ կեցա էտպես, քիչ կեցա, չէի-տեմ. մեկն ասավական ժամանակ մնացած պիտի լինեմ, քանի որ Մարտիրոսը այդ նոր բերած տակառն էլ արդեն դատարկել էր և սուս-փուս եռանը կանգնել էր, մինչը երևի փող ուզենալն էր, բայց երեսը չէր բըռնում ինձ բան ասելու, ձեռքը խաչ կապած կանգնել էր խեղճ մարդը: Մեկ էլ ետ դառնամ, ի՞նչ տեսնեմ. էտ մեր Մարտիրոսը սառած, քար կտրած կանգնել է, աչքը փոսից չի հեռացնում, ուղիղ մեջն է նայում, ու աչքից առատ-առատ արտասուք է վազում ու գետնին է թաթիվում...

«Հա՛ծե, ի՞նչ եղավ քեզ»,— հարցնում եմ: Բան չի ասում:

«Հա՛ծե Մարտիրոս,— ասում եմ,— գժվել ե՞ս, ինչ է, էտ հասակի մարդ լաց կլինի՞ որ, չե՞ս ամաչում,

երեսիդ դուրն մեկ նայիր բոլորովին մեռնել ես ո՛ւ»։ Մարաթրոսը էլի սուս կանգնել է, վոսկ մեջն է նայում։ Էս ժամանակ բանվորս հողը վոսից հանեց ու մի կողմ չպռատեց. հողի հետ մի վտած վայտի կամ ոսկորի պես բան էլ կար, որն որ գլորվեց հենց ոտքիս հասավ։ Հանկարծ մեր Մարաթրոսը խելագարի պես վրա ընկավ էտ վտած ոսկորին, շտապով գետնից վերցրեց ու դեվահարի ձայնով սկսեց կանչել.

«Ճա՛նկա, յա՛նկա, վա՛ըլետ, վա՛ըլետ, Մկրտիչ վարպետ, ահա՛ ձեր կորած չախուն, ահա էն չախուն... դանվեց... դանվեց... Մեռնեմ անունիդ, սուրբ Մինաս, վերջը վերջը դու լույս հանեցիր իմ կորուստը»...

Կանգնած տեղս սառած մնացի, էսպիսի զարմանալի բանի դեռ իսկի հանդիպած չէի, աչքովս չտեսնել ու ուրիշից լսել—բոլորովին չէի հավատա, որ Մարաթրոսի պես ծանր բնավորով մարդը—սաստիկ քանի սարսուց ի վեր նրան ճանաչում էի—էսպես խենթ-մենթ դուրս տա։ Ի՛նչ մեղքս պահեմ, խեղճ մարդուն խելագարված կամ բռնված կարծեցի, բայց վերջը, երբ բանը տեղով իմացա, մտքիս մեջ մեղայի եկա և ետ կարծիքս փոխեցի։

Մարդուն հազիվ-հազ խելքի բերի, թե չէ խեղճը հարբածի պես բան եղել էր։ Էտ վերտած ոսկորը ձեռքը ամուր բռնած, հայ-հայ պատերն է բարձրանում, «յանկա՛» է կանչում, «վա՛ըլետ» է կանչում, մեկ էլ լռում է, մինչդեռ Մկրտիչ վարպետի մեռնելը քանի սարսուց ավելի է, նրա հնով մեռնելն էլ քառասուն սարսուց պակաս չի լինի։

Էս առնես, որտեղ այժմ ես կենում եմ, ժամանակով տիրացու Մկրտչինն էր։ Էտ տիրացու Մկրտիչը սրանից հիսուն տարի առաջ էս տան մեջ կարդացնելիս է եղել։ Ինչ էլ լինի, մեկ խոսքով, բանի եղելությունը էս էր։ Բայց դու արի ու հիմա հարցրու թե՝ ինչո՞ւ Ջրկիը Մարաթրոսը վոսկ առջև սառած մնացել էր ու լաց էր լինում, ինչո՞ւ վերտած ոսկորը տեսավ թե չէ, պժի նման գետնից վերցրեց ու սկսեց «յանկա» ու

«Վարպետ» վինտաել: Էտ էլ Ջրկիր Մարտիրոսը իր բե-
րանով թող պատմի:

«Սրանից հիսուն ու հինգ տարի առաջ, էս քո կե-
ցած տան մեջ կենում էր Մկրտիչ անունով մի տիրացու
և քանի որ էս տիրացուն իր ընկերակիցների մեջ տա-
նից գիտունն էր հիշվում—այսինքն՝ տաել եմ ուզում
թե՝ քիչ-միչ գրել-կարդալ գիտեր, մյուսները էն էլ
չգիտեին—իր համար պարապմունք էր արել աշակերտ-
ներ տալըեցնելը: Ես էլ էտ ժամանակները կլինեի դու-
ցե տասը տարեկան: Մեկ անգամ պապաս թեվիցս ըլը-
նեց ու տարավ տիրացու Մկրտիչի մոտ աշակերտ տը-
վեց:

Պապա—աստված հոգին օղորմի—չար բնութքով
մարդ էր: Ինքը որովհետև մինչև պատկվելու օրը հոր
ձեռնափայտից դողացել էր, էնպես էլ ինձ էր ուզում
խիստ պահել: Պարծանք չէինի տասծս, իմ բնութքս ա-
վելի մամայես բնութքին էր նման սուս-ու-փուս, վիզս
հոգի: Բայց էտ չօգնեց. երբ որ պապաս առաջին ան-
գամ տարավ ինձ Մկրտիչ վարպետին տվավ, նախ և
առաջ մեկ լավ ականջս ոլորեց, հետո մեկ ապտակ էլ
չխնայեց երեսիս ու ասաց. «Նայիր, վարպետ որդուս
բերել եմ, կաշին քեզ, ոսկորը ինձ. ինչ կուզես արա՛,
ուզում ես խեղդի, ուզում ես քերթի, ուզում ես մոր-
թի, էնքան է որ հիմար եմ տալիս, խելոք պիտի առ-
նեմ»:

Վարպետ տասծ բանդ մեր ժամանակները, ի՞նչ ա-
սեմ քեզ, թե որ ասեմ գայլ-գազանից էլ սասանական
էր, արդյոք դրրթ տասծ չե՞մ լինի: Էտ հիմա է, որ
էրեխին վախեցնել որ ուզում են: «Ա՛յ արջը եկավ,
ա՛յ վիշապը եկավ, ա՛յ մրոմրոտասը եկավ» են ասում,
որ երեխան մի քիչ սրտի մեջ վախ ունենա ու իր չարու-
թյունից ձեռք վերցնի. մեր ժամանակները «վարպետի»
անունը որ տային, լեղիները կպատռեր, վախչոդ-
վախչոդի կլինեինք. որս դոլորը կմտներ, որս ծակերի
մեջ կուչ կգար, ժամերով կկենար, ձայն ծպտուն չէր
հանել—էտպես սասան-սասանի կգայինք:

Երբ ես ավելի փոքր երեխա էի, վարպետի անունը լսելիս մեկ ձիդ հասակով, երեսը չոր-չոր, սուր մորուքով, չալե կապայով, մեկ ձեռքին սեր ոլորմյան, մեկել ձեռքին կարմիր ճիպոտ—էապիսի մի հրեշ էի երեվակայում: Երբ որ պապաս ձեռքիցս բռնեց, տարավ վարպետի տունն և ինձ հանձնեց նրան—իր ձեռքով սկանջս քաշածը ու ապտակ տվածը էն ոչինչ—մտքիս մեջ էնպես կարծեցի, որ ողջ-ողջ ինձ պատանքեցին և սև հողը ղրկին... Որքան պես վիզս ճոպ կանղնել եմ, իսկը այն կապած-կապկպած մատաղի գառը, որ մինչև ժամկոչի դանակ սրելը՝ սուս-փուս պառկել է նրա ոտքի տակ...

Մկրտիչ վարպետը ծալապատակ նստած էր մեկ քառակուսի պարիկ մինդարի վրա—մեր ժամանակները հիմիկվա պես վարպետի տանը աթոռներ, նստարաններ, սեղաններ չկար—երեսուն հինգ քառասուն աշակերտներ էլ կողք-կողքի, մեջքները պատերին տրած, իրենց մինդարների վրա նստած, ձեռներին մի-մի պնակիկ՝ կամ քերական[1] դասերն էին սովորում. այն սապատնական «ճիպոտը» վարպետի առջևն էր, էսօրվա պես մի քանը է. երկայնքը հինգ չարեք կլիներ, բութ մասիս հաստությունը, ծայրին ծակ ուներ, ծակի մեջն էլ թել էր անցկացրած, որ պատից կախվի: Աշակերտներից մի երեուսին ճանաչում էի, բայց չատերին առաջին անգամն էր տեսնում:

«Չէ, ինչո՞ւ, ասաց Մկրտիչ վարպետը. դուցե որդիդ ուշադիր է լինում, դասը լավ է սովորում, դուցե խեղճը իսկի չարություն չի անում: Էն ծեծը որ կա, չարերի ու ծույլերի համար է... Դու իսկի լսած չե՞ս. Տեր մեր Հիսուս Քրիստոս ասե (երեսը խաչ հանեց, պապաս էլ եռևիցը), օրհնյալ է փայտն (ճիպոտը վերցրեց և ցույց տվավ աշակերտներին), որով լինի արդարություն... Դեհ, էտ էլ էտպես...

---

[1] Պնակիա—տախտակի վրա կպցրած այբուբեն:

[2] Քերեկան—այբբենարան:

— Չէ, ասաց պապաս,— խելքի հասկնալ բան կա՛նի՞... էն ավետարանի խոսքը կա ու կա, բայց երեխան որ առանց ծեծի մեծանա, մեկ օր ինքը—հեռու տանից տեղից—հորն ու մորը վրա ձեռք կբարձրացնի: Աչխարհս հասկս եկել է, հասկս էլ պիտի գնա: Հիմա դու, ինչ էֆ վարպետ ես, մեր հնուց կարգերը ոտքի տակ պիտի տա՞ս, ի՞նչ է... Իհարկե կարդդ ասածդ հասասա պահի... բայց երբ լսել եմ թե որդուս երես ես տալիս, վախով չես պահում, երախտիքդ խնայում ես նրանից, սիրտդ թող չցավի, թքել եմ ես քո դրված կիսատ-պատռտյունդ վրա... Ի՞նչ է, դու կարծո՞մ ես, թե ես որդուս սիրացու կամ վարդապետ եմ ուզում անել... Ես չեմ ուզում,— ասաց պապաս և բութ մատը խցկեց կողքի երկու մատների մեջտեղ...— Տերտեր, վարդապետ, սիրացու, ժամկոչ էտ ամենը մեկ տեսակի բաներ են:

Նայած սիրով հայրդ դթած.
Քաղցած ենք, տուր՝ մեկ կտոր հաց...

Իհարկե, դրոց լեզուն գիտես, քերականը, ճարտասանությունն, աստվածաչունչ—ամենը կարդացել ես, բայց ասելուցս ինձնից քեզ խրատ չլինի... «Էտ աստվածապատան Ադամ-Եվային որ ստեղծեց—թե որ դրել կարդալը լավ բան էր, ինչո՞ւ իսկույն առջևները մեկ քերական չդրեց, չասաց թե «էս լավ բան է, սովորեցեք»: Ինչպե՞ս է որ ողորմած Աստված հատուկ իր ձեռքով ստեղծած ադամորդուն լավությունն չէր կամենալ... Հը՞, ինչպե՞ս ես, դորթ է ասածս, թե չէ՞... Բայց ես քեզ դրանից էլ խելոք, խելքի պատկերու բան ասեմ: Էտ դրե-կարդալ ասածդ ուրիշ հաչիվ ունի... Էտ պատիկ երեխան որ կա, կատարյալ մի վայրենի գազան է. ինչպես որ գազանին դնչկալով, չղմռտյով կզապեն, գառը կդարձնեն, հենց էնպես երեխաներին էլ կզապեն, կզապեն, հոգիները ջանից կհանեն, աչքերի լույսը կմարեն, կմաչեն. ահա դրանից հետո երեխան օրինավոր մարդ կդառնա, վիզը կծռի, սրտի մեջ ահ կլինենա, մեծի առջև ձեռքը խաչկռպած

կկանդնի, մարդու սիրտ ցավացնելու տեղ՝ սիրտ չահելու կաշխատի, հարուստի ու իշխանի պատիվը կճանաչի... Ապա, չանս, դու դիր կարթացող ես, խմաստուն ես, բայց քեղնից տեղով դիտեմ դրել-կարդալու օգուտը:

Ասաց ու տեղից ելավ:

— Լհ, ինչպես որ ասի, հնպես էլ կանես. վարձդ էլ ինչ որ է՝ չորս ամիսը մեկ կառնես:

Վարպետի վարձ, տարեկան պիտի տայինք երկու ռուբլի ասիղնացի, հիսուն հատ հավկիթ, մեկ փութ ալյուր, մեկ հավ և մեկ բաղ:

Պապան դնաց, ես մնացի: Վարպետս զարձավ ինձ և ասաց· «Հանե՛ պատիկ, անունդ ի՞նչ է»—Մարտիրոս է, ասի, ձայնս փորիցս էր դուրս գալիս: «Հա՛ծե Մարտիրոս, ասաց, էս երկայն ճիպոտը տեսնո՞ւմ ես», հետո մինդարի տակից հանեց մի փալախա, «էս փալախան էլ տեսնո՞ւմ ես», ասաց: Ողջ մարմինս փուշ-փուշ եղավ. երբոր կարմիր ճիպոտն և հատա փալախան տեսա, կարդին ջերմով բռնվածի պես ամբողջ մարմնով դողացի: «Հը՞, վախեցա՞ր, ասաց վարպետս, իշտե լավ իմացիր որ չարութիւն արել ես թե չէ, տապանիդ կաշին կպլոկեմ», ասաց ու ճիպոտը ժը՛վ ժը՛վ ժը՛վ թափ տվեց:

— Հետդ քերականն բերե՞լ ես,— հարցրեց հետո:

— Հա,— ասի ու քիսայիցս հանեցի մի հատարակ գիրք կարմիր կազմով ու պղնձե կոճակներով:

— Էս ի՞նչ է,— ասաց վարպետը, բեր մեկ տեսնեմ:

— Պապաս տվեց, ասի ու գիրքը իրեն տվի:

— Հա՛ծե ապուշ, սա քերակա՞ն է, որ ձեռքդ տվել են: Սա Նարեկ է ո՛ւ:

— Պապաս տվեց,— ասի նորից, ուրիշ բան չգտա ասելու: Ինչ նրա քերականը գիտեի, ի՛նչ Նարեկը. էն րոպեին բացի ճիպոտից ու փալախայից ուրիշ բան չէի տեսնում աչքիս առջև: Ինձ էնպես էր երևում, որ տան չորս պատերից ամեն տեղ ճիպոտներ ու փալախաններ են կախած, տղաների ձեռները մեկ-մեկ ճիպոտ էին

Երեսամ ինձ, ոնանքն էլ մեկ–մեկ ֆալախա։ Առաջին անգամն էր վարպետի մոտ գնալս, ատամած կսիրես, ես ի՞նչ գիտեի՝ ինչ ասել է կարգալ, դրել, քերահան, Նարեկ։

— Անշնորհք, ասաց Մկրտիչ վարպետը, տղան որ վարպետի մոտ է գալիս, էն գլխից ձեռքը քերահան կաան, քերահանը որ վերջացնի, պատիկ ատղոտ կըտան, էն էլ որ վերջացնի՝ մեծ ատղոտը կտան։ Նրանից հետո ժամագիրք կաան, հետո ավետարան կաան, էն վերջը Նարեկ կաան, էն էլ որ ավարտի, ասել է, օրինավոր կարդալը վերջացրած կլինի, վարպետից էլ դուրս կերթա։ Բայց ապուշի դլուխ, սրի նայինք, այսքան բան դու ե՞րբ պիտի ավարտես, որ Նարեկը կարդաձնաս կարդալ... Նայիր էս տղաներին. ո՛րը չորս տարի է մոտս, ո՛րը երեք տարի է, մեջերը էնպեսներն էլ կան, որ հինգ տարի են տովորում, բայց մեկի ձեռքը Նարեկ տեսնո՞ւմ ես... Չէ՛, տղաս, դիր կարգալը էս տեղակ հիչտ բան չէ, էս ներկարարի կաշխան չէ, որ տղային մեջը խոթես հանես ու հոր ձեռքը տաս «ահա՛, որդիդ պատրաստ է»։ Լ՛ւ որդիս, որդիս, դեռ չատ պիտի աշխատես, ձեռքիդ ափն ու ոտքիդ ներբանը դեռ չատ պիտի բշտի ու քանի՛–քանի՛ անգամ կաշին պիտի փոխի, մինչև որ Նարեկին հասնես...

Ես գլուխս կախած լուռ էի, ատածից էսքանը հասկացա, որ մկան պես թակարդ եմ ընկել, մեջիցը ազատվելու ճար չունեմ, մեկ կողմից խիստ հայրս, մյուս կողմից դևի պես վարպետս, էս կողմը կլակ, էն կողմը բոց։ որտեղ որ դառնայի՝ դժոխք էր։

Բայց դու ատածու ողորմությունը տես—մեռնեմ նրա սուրբ անունին։ Վարպետս պատից առավ պնակը, հինգ հատ դիր ցույց տվեց՝ այբ, բեն, գիմ, դա, Եչ, «Մինչև կեսօր էսքանը կատարես. դասդ չսերտած տեղիցդ վեր չկենաս ու տուն էրթալ չհամարձակվիս»։

Կարծեմ մինչև կեսօր ժամ կամ ժամուկես էր մնում, ասել է՝ բավականին ժամանակ կար։ Սկսեցի

սեղանել. հնպես սիրով կարդացի, հնպես սիրով սովրեցի որ—սուտ չասեմ—քառորդ ժամվա մեջ էն գասը սերտեցի։ Գնացի կանդնեցի վարպետիս առջև, «գասս դիտեմ» ասի։ Տեսնեմ, ասավ։ Ժը՛վս ժը՛վս ջրի պես ասի։

— Ա՛յ ապրես ասայ. հինդ հատ գիր էլի որ տամ, ասայ, կարո՞ղ ես սովորել։ «Տեսնեմ, գուցե կարողանամ», ասի։— Մեկ տեսնեմ չնորհքդ, ասայ դան, էն, ըՓը, Փոն ու ժեն տվեց։ Կհավատաս՞ս, քառորդ ժամ անցած չանցած, էն էլ սերտեցի ու գնացի ըլբուլի պես կարդացի վարպետիս առջև։ «Շեն կնստաս», ասայ վարպետս. ա՛յ էտ լավ է, շատ ապրես, Մարտիրոս, աՓերիմ քեզ։ Էլի հինդ գիր տա՞մ, էն էլ կարո՞ղ ես սերտել»։ Ես սիրտ առա։— Ինձ համար էն ի՞նչ բան է, որ ասի. Թեկուզ տասն ու հինգն էլ տուր, ասի, արդեն հանդգնացած։ «Չէ տասնուհինգը չատ է. մեկ անգամից կչհիշես. տասը հատն էլ բավական է. ահա քեզ՝ ինի, լյուն, խե, ծա, կեն, հո, ձա, դատ, ճե, մեն, հի. հերիք է էսքանը»։

Գնացի տեղս նստեցի, բայց սիրտս սկսվեց, մրտքիս մեջ կասկած ընկավ՝ իսկ եթե՞ չկարողանամ։ Աստված հոգին լուսավորե, մտածս ինձ մեկ բան սովրեցրել էր. «Երբ որ մեկ բանի հասից ես ու նրան հասնել ես ուզում—ասել էր մտածս—մտքիդ մեջ սուրբ Սարգսին կանչիր. «Սո՛ւրբ Սարգիս. դուն նեղացածիս հասնես» ու երեք անգամ երեսդ խաչ հանիր։ Հիմա ես մտքիս մեջ էտ ազոթքը ասի, բայց երեսս խաչ հանել Թե ամաչում էի և Թե վախենում։ Պատիկ էի, բայց էլի հարտար էի. կամացուկ ձեռքս վարտիկիս դրպանը կոխեցի և հնտեղ խաչ հանեցի ու մխամտած սկսեցի երրորդ դասս սերտել։ Հինգ անգամ իրար հետից կարդացել էի՝ կարդացած չէի—գու էս հրաչքին մտիկ արա—էտ էլ ջրի պես սովորեցի։

Հիմա բանը հնտեղն է հասել, որ ինքս ինձ չեմ հավատում. մտքիս մեջ ասում եմ. «Էս երազ հո չէ՞, քնի՞ս մեջը հո չեմ»։ Ձեռքս ծոծրակս եմ տանում,

դլուխս քորել եմ ուզում, լրբը թե օջիլներն են կծում— մինչդեռ երեկ մամաս ինձ տաշտը նստացրել է, լավ լվացել է, դլուխս էլ սանրով հնքան քերել է, բոլոր օջիլները կոտրել է՝ որ օջիլ չէ, մեկ անձ էլ մնացած չէ—բայց միտքս էն է, որ եղունդովս ծոծրակս կըտրեմ, որ տեղով լմանամ՝ երա՞զ է էս, թե իրական։ Ծոծրակս կսթում եմ. եղբայր, ցավ եմ զգում։ Ա՛, ասում եմ, մտքիս մեջ, երազ չէ եղել։ Ես էլ էս էի ուզում... Վերջապես կերթամ վարպետիս առջև ցցված կըկանգնեմ, «դասս դիտեմ» կասեմ ու ուշադրիվ մարդու աչքի մեջ կնայեմ։ Վարպետս տեղից վեր է թռչում, «էս ինչպե՞ս չոտռով սովորեցիր», ասում է։ Ես սուս կանգնել եմ, մտքիս մեջ խնդում եմ վրան։ Մի քիչ կենալուց հետո, «Զլինի՞ թե, ասում է, էն դլխից դիտեիր այբուբենն ու հիմա դիտեցած դասերդ եկել ես նորից տալիս», ասում է։— Չէ ասածդ վկա, ասում եմ, էսօր առաջին անդամն է պնակիտը ձեռքս, ասում եմ։ «Ղո՞րթ», ասում է մարդը։—Հա՛, ասում եմ։ Մարդը զարմանում է։

Ախար ղորթ էլ զարմանալու բան էր. քաղաքի հիմք դնելուց ի վեր էսպիսի բան տեսնված էլ չէր, լսված էլ չէր։— Որ էնպես է, արի նայեմ, դասդ ասա։— Ջրի պես դասս ասի։

— Հիմա թարս կարդա. մեկ տեսնենք, ասում է, այսինքն հը, մեն, ճե, ղթի, ինչ որ է։ Թարսից էլ կարդում եմ. մարդը էլ ավելի զարմանում է։— Մյուս դասերդ էլ մի՞տդ են, մոռացել չե՞ս, ասում է։ «Չէ մոռացած չեմ, ասում եմ։— Սա՛, ասում է։ Լեն էլ առանց չունչ քաշելու զվո՛ղ զվո՛ղ ասում եմ։— Թարս կարդա, ասում է։ Թարս էլ կարդում եմ։ Մարդուս երեսը մեկ տեսակ կլինի։ Ծոպից ժամացույցը հանում է, նայում է—մինչև կեսօր էլի ուղիղ մեկ ժամ է մընում։— Մինչև պարոց սրճախմբը պնակիտը վերջացնել կարո՞ղ ես, հարցնում է։ «Տեսնեմ՝ դասդ կկարողանամ» ասում եմ։— Լ՛, դնա սովորիր, ասում է, ու սկսում է մյուսների դասերը նայել։ Ճիպոտն ու ֆալա-

Խան տեղերից չարժվում են ու լրենց չնորհքը ցույց են տալիս: Տղաների ճիչ ու աղաղակների, լաց ու գոչյունի մեջ ես մնացած բոլոր գլուխները էլ սովորում վերջացնում եմ, այլ սե=աս, վեվ այլ=վա, սավա, ծաննի մեն=ծիմ, =աստածիմ, էտ էլ կապում եմ, բոլորը վեր պատրաստ դնում նորից վարպետիս առջև կանգնում, են էլ պատասխանում եմ: Մարդու լեզուն պարզվում է, խոսք չի կարողանում ասել, և մենակ էն է ասում «Մարտիրոս, մեկ օր դու մարդ պիտի դառնաս»:

Ուրախ-ուրախ տուն եմ գնում և տեղն ու տեղով մամայիս եմ պատմում: Մամաս սրտի ուրախությունից հա՛յ-հա՛յ ճաքվում է կլինամարդը, ինքն լրեն բռնել չի կարողանում ու խևուշն գնում է հարեվաններն մոտ և ասում է թե՝ էսպես, էսպես որդի, ունեմ, ու իմ պատմածի վրա տասնապատիկ լրենից է ավելացնում, հնարում է թե՝ կես ժամվա մեջ որդիս էնքան բան է սովորել, որ տիրացուի չափ, դուցե ավելի էլ դիպի. ես ինչ դիտեմ, չոե, հոգևոր կառավարությունից ուրար պիտի տան ինձ ու, առաջնորդը ինձ դպրաղրության համար լրեն մոտ պիտի վերցնի ու, ասում է չոե, բան չունես. կինամարդ չէ՞, մա՞յր չէ, սրտի մուրազները եղած պրծածի պես ասում է, պատմում և մի կողմը քաշվում:

Բայց պապաս մեկ անգամից չհավատաց. «Սուտ է ասում չան ցնգածը», ասաց,— երբոր մամաս նրան էլ պատմեց իմ հրաշքները: «Այբուբենը ծայրեծայր վերջացնելու համար քիչ-քիչ երեք ամիս պետք է, էն էլ սուր մտքով տղի համար: Էտ որ մենք արհեստավոր ենք՝ տասնք գրի, երեսը տեսած չե՞նք, ի՞նչ. մենք էլ էտ երեխա ժամանակներս վարպետի մոտ գնացել ենք: Մեկ երկու անգամ Փաւտախսի համր չառած՝ լավ՞ծ բան է, որ տղան այբբենը վերջացնի: Պարծենում է, չոե, բոլ-բոլ սուտեր է փչում, դուն էլ կանխիկ փողի տեղ ես ընդունում: Նա գիտե, թե ես կծուլանամ վարպետի մոտ գնալու և սուտը բռնելու... Գիր կարդալը

հանաք է կարծում, ի՞նչ է··· Ախո՛ս, ախո՛ս, մեկ քերականն էլա, որ կարդալ տալի ու սուտը բռնեի։ Հետո զարձավ ու ասաց· «հա՛ծե, էն աված դիրքս ի՞նչ արեր, մո՞ռդ է»։

Ես Նազենկը հանեցի քխայիցս, իրեն տվի ու ասի՝ վարպետը ասաց, որ էս կարդալը դեռ վազ է, դեռ քերականն պիտի վերջացնեմ, հետո սազմոս, մյուսներն էլ։ Նազենկը կարդով։

Պատահես վրայից նկատելի էր, որ կամաց-կամաց սկսել է հավատալ, որովհետև տեղից ելավ, գոահիը առավ, դուրս գնաց ու մի քիչ ժամանակից հետո նա պարձավ ձեռքը մի բարակ դիրք բռնած։ «Ահա՛ քեզ քերական, ասաց, զգուշյա եղիր, չկեզտոտես, չպատռես, թե չէ կաշիդ կպլոկեմ. երեք շահի եմ տվել մանրավաճառ Սարգսին»։ «Մեր ժամանակները—չգիտեմ հիմիկ ինչպե՞ս է— դիրքը, թուղթը, դրիչը, թանաքը մանրավաճառի խանութում կծախվեր»։

Քերականը որ ձեռք առավ, ախորժակս բոլորովին կտրավ· առավոտվանից բան կերած չէի, բայց սեղանին բերածս բան դնել չկարծացա, խելքս միտքս վարպետս էր, ֆալախայի, ճիպոտի վախը սրտիցս դուրս էր էլել։

Վարժատուն որ գնացի, դեռ տղաները հավաքված չէին, վարպետս էլ պարտեզ դուրս էր եկել—ահա էս տեղերը, ասաց ու մատով ցույց տվեց գինջիմեյիս ծառի տեղը— բոլշա կտար։ Ինձ որ տեսավ՝ «Հածե ինչո՞ւ էսպես չուտ եա գարձար, հարցրեց, կերակուր չկեր՞ած, ի՞նչ»։— Չէ, կերա, ասի։ «Էյ, մի քիչ էլ հանգստանայիր դեռ» ասաց։— Հանգստացա, ասի։— «Լավ, ասաց, ուղում եա՝ էստեղ խաղա, թե չես ուղում՝ դնա սենյակը նստիր»։ Քերականը ցույց տվի իրեն, «ահա՛ պապաս առավ», ասի։—«Լավ, ասաց, տղաները որ գան, կտավրես»։ —Չէ՛, ես հիմա եմ ուղում սովորել։ Դաս տուր ինձ ասի···«Ի՛, ասավ, ինչո՞ւ էգդան չտապով։ Չլինի չուտով սովորել, խաղ-ֆա լինել ես ուղում, որ ինձպես երեխաները կարդաց-

նես»,— ասաց հանաք անելով։ Ես բան չասի, սուս կեցա, որովհետև իսկի մտքովս անցած չէր վարժապետ կամ ախպեր կամ տերտեր լինել. հենքան ուզում էի՝ մամայիս, հարեվաններին առջև պարծենամ թե՝ նայեցեք վրաս, ես ինձ համար մեկ բան եմ։ Երեխայությո՛ւն, հնպես չէ՞։

Վարպետս ձեռքիցս առավ քերականս, մեկ երեսը դարձրեց—էն տղեն պնակիսի վրա սովորել էր— «ահա քեզ դաս», ասաց ու՝ այր խե չա, բեն ծա պեն դասը ավեց. «դնա սերմո՛ր, ասաց, երեխաները որ հավաքվեն, ես էլ որ տեղս նստեմ, կդաս դասդ կպատասխանես»։

Գնացի սենյակը, տեղս նստեցի ու սկսեցի կարդալ։ Ի՞նչ տեսնեմ. իսկի դժվար չէ եղել, էլի նույն այբ–բեն–գիմ–դան էր. էս էլ չուտ սովորեցի։ Վարպետս դեռ պարտեզումն էր, գաֆռանդի տերևներն էր փետում ու մեկ տափի մեջ չարում։ Գնացի մոտը— «դաս դիտեմ», ասի։ Մարդը ապշեց, բայց բան չասաց, առանց մեկ սխալի դաս ծայրը պատասխանեցի։ «Լա՛վ, ասաց, այժմ էս առ՝ այր ճե ուա, բեն ինի, մեն սե, չաե ինչ որ է»։ Նորից գնացի տեղս, աչքի անցկացրի նոր դասս, տեսնեմ՝ էն էլ հեշտ է եղել, էլի իմ դիտացած այբբենգիմդան է, հենքան որ դրերը մեջեմեջ չարված են։ Նորից գնացի վարպետի մոտ, դաս լավ պատասխանեցի։ Ի՞նչ խոսքս երկարացնեմ. դեռ ապտները նոր էին սկսել հավաքվել—տասը տասած չէինեմ— դուքե տասը դաս պատասխանեցի ու հասա ա–փե–նե–գերին, ու մինչև երեկոյան զանգերը դրեթե դրքի կեսը անցա։

Պապայիս ասի, պատաս չհավատաց, կարծում էր թե սուտ էլ ասում. բայց երևում էր, որ սկսել էր տղեն ավելի ինձ սիրել, վրաս տաքանալ։ Ով գի՞տե, դուքե մարդը—տասված ողորմի հոգուն— միտք էր անում «էս լակոտի տասը քսաներորդ մասն էլ ղրքի որ լիներ, էլի վատ չէ»։ Մամաս խո խեղճը տեղ չէի գտնում նստելու. սրան խնդումից ինչ անի չանի, իսկույն էր

տոնական մեսաքան-չորը քանդում է ու ինձ համար Ս. Դեվորդի օրվա զեղեցիկ չոր է ձևում, տատս էլ իր ծածուկ անդուկից հանեց մեկ թանկագին թաշկինակ, գույնը վարդի պես կարմիր, վրան՝ սիրամարդի պոչի պես կանաչ-կապույտ նախշեր ով, ու ինձ վոզ-պատցու բաշխեց. պապաս էլ խոսք տվեց, որ վաղը ա-ռավոտյան կանուխ բազար գնա, վարտիկցու կապույտ նանկա առնի ու մեկ Ջուխտ զեղին սափիանե կոշիկ գնի:

Մարդուս լեզուն կարո՞ղ է սրտիս խնդումը խոսքով մեկնել... Կհավատաս, էն րոպեին ինձ մեկը թագավորության տար— աղամարդու համար դրանից լավ էլ ի՞նչ բախտ կա— ես էնքան ուրախ չէի լինի, ինչքան որ էն երեկոյան ուրախ էի...Վերջապես մյուս օրը, մինչև կեսօր քեռականս ծայրեծայր ավարտեցի ու բերի պապայիս տվի, «ահա պապա, տես, անվնաս հանձնում եմ քեզ քեռականս, տես, էլ ինձ պետք չէ, հիմա կարզը ետ-կավ պատիկ սաղմոսին»:

Պապաս որ լսեց՝ ապշած բերանը բաց մնաց: «Հա-ՅԵ, ո՞րթի ես ասում»:— Ապա սուտ պիտի ասեի, ի՞նչ, ասի: «Հանաք ես անում, չէն ցղնած»:— Ինչո՞ւ հանաք պիտի անեմ, ասի պարծենալով,— չես հավատում, գնա վարպետիս հարցրու:

«Հայդե էրթանք», ասաց մարդը— Աստված ողորմի հոգուն— ու դրահն առավ, չոտավ, չոտավ դնաց, ես էլ ետևից դնացի: Երբոր վարպետիս տունը մտանք. «բարև՛, վարպետ, ասաց, ո՞րթի ֆ սրա ասածը թե՝ երեկ ու այսօր հա՛մ պնակիտը վերջացրել է, հա՛մ էլ քերականը»— Հա, ասաց Մկրտիչ վարպետը, ո՞րթի է, ո՞րթի, հիմա նրա համար մեկ պատիկ, սաղմոս պիտի պնես, էլի մեկ դասատ թուղթ, որովհետև, մեր կանոնով, քերական կարդացող տղան դեռ դիր չի դրել, թայց պատիկ սաղմոսը որ սկսի, դրելուն էլ պետք է տվողի: Խոպես է մեր կանոնը: Հա՛, թանաք ու գրիչ էլ առ ու տուր իրեն, դրանք էլ պետք են գրելու համար:

«Հա՛յ, չան կաթ կերած, ասաց պապաս սրտի ու—

չախուժյունից. «ո՛չ, ապրե՛ս Մարտիրոս, ապրե՛ս. մեռնելը կկարծեի, էս տեսակ խմաստուն եղածդ չէի կարծի... «Տիրացու ախպեր, զարմալ նա վարպետիս, խեղճը ասում էր, ասում էր, ես չէի հավատում. մի՛ ասիլ որ ասածը ղորթ է եղել: Հա՛յ, մայրդ մեռնի, էսպիսի էլ զարմանալի բան... Հիմա, վարպետ, ախը քեզ էլ մեկ բանով չնորհակալ պիտի լինե՞նք, թե չէ՞...»— Ի՛յ լինչ, ասաց վարպետը սուտ մուտ քաշվելով. առջևներս օրեր չատ, մեկ օր հալբաթ ամեն բան իր կարգը կգտնի.... «Կարգս ո՞րն է, հենց էստեղից ուղղակի ոսկերչի մոտ պիտի գնանք, մեկ տեսաք որ ծաթե մատանիք պիտի պատվիրենք»:—Ի՞նչ ես էսպես վռազում... դե... աստուծով... տեսնենք.... գուցե... Մարդը սրտի ուրախությունից խելքն ու գլուխը կորցրել էր:

Ինչպես որ ասել էր, հնպես էլ արավ պապաս. խնկույն գնաց ոսկերիչ Մելքոնի մոտ, մեկ հատալեկ, վըրան կինգով մատանիք առավ, հետո գնաց մանրավաճառ Սարգիսից մեկ պտիկ–սաղմոս գնեց,— հետո էլ պարծեցավ մամայիս պես, մեկի վրա տասը ավելացնելով, և տուն բերեց: «Ահա քեզ պտիկ–սաղմոս, ասաց, բայց չա՛ն երես, տե՛ս, չուտ չպրծնես, թե չէ՝ փողս դրբիդ հերիք կո՞նի», ասաց, հանաք անելով: Իսկույն դիրքը ձեռքս առա, բայց արի և սկսեցի ինձ համար կմկմալով կարդալ: Սկզբում մի քիչ դժվար երևացին վանկ–վանկ չդրած խոսքերը. բայց կարդալով, բավականին ընտելացա ու մինչև կերակուրի պատրաստ լինելը՝ դիրքը ձեռքիցս վար չդրի:

Կեսօրից հետո որ վարպետիս մոտ գնացի, վըճված հպարտ–հպարտ վարպետիս մոտեցա, էն ոսկեծաթե մատանին ձեռքը տվի, «պապաս բարև արավ, ասի, էս էլ քեզ ղրկեց, բա՛րի վայելես: Էս պտիկ սաղմոսն էլ ինձ համար առավ», ասի— Շեն կենա, ասաց վարպետս ու մատանին մատին հագավ ու ինձ էլ նոր առած դրքից դաս տվեց, «էս մի քիչ դժվար կլինի, ասաց, բայց որ աշխատես, կամաց–կամաց կվարժվես»:

Գնացի, տեղս նստեցի ու սկսեցի կարդալ։ Էլը անդամ որ եռա եռակից կարդացի գաս, համարյա թե բերան սովորեցի։ Եկա վարպետս առջև, էն տերտերի եղանակով «երանյալից» որ կարդացի, մարդը բոլորվին ապուշ կտրվեց, բերանը բաց մնաց։ Երկու գաս որ էլի պատմախոսնեցի, «հերիք է, ասաց վարպետս, հիմա թուղթ առ, ծալիր, տետրակ կարիր, բիր ինձ, քեզ համար տոզեմ, օրինակ էլ տամ որ գրես»։ Ինչպես էլ արի։ Բայց գրածս կարդալուս պես չնորքով չէր, գ, գ, չ, է, ո, ս, խիստ չարչարեցին ինձ. օրինակին որ նայում էի, կարծես հեչա կերևային, բայց երբ գրիչս ձեռքս առի ու սկսեցի գրել, մտաս ամիից ուրիշ տեսակ բաներ էին դուրս գալիս, օրինակին իսկի չէին նայում։ Մեկ էլ էս, որ առաջին անդամից իսկի չէի կարողանում տողի վրա ուղիղ գրել։ կամ գրիչս էր գեղի վեր գնում, գրերս վերևի տողերին էին կպչում, կամ հնպես ցած էր գնում, որ ներքևի տողին էին հասնում։ Հաղիվ–հազ մեկ երևս բան գրեցի հա՛յ–հա՛յ երեկոյան դասի ժամանակները, տետրակիս երեսին հինդ–վեց տեղ թանաք էր թափվել, տեղտեղ էլ գրածս վրա ե–րեսիս քրտինքն էր կաթել, թանաքը փռվել էր, ուրիշ տեղ էլ թաց-թաց գրածս թևովս ջնջել էի, վերջապես ջնջոցի պես մեկ կեղտոտ բան տարի ցույց տվի վարպետս։ Գրածս տեսավ թե չէ՝ վարպետս կարծես ուրախացավ։ «Ապա՛, Ջանս, ասաց, դու կարծում էիր թե գրել–կարդալը հե՞չ բան է։ էէ, բարս, էս հեչա, չուտով վերջացնելու բան չէ. մենք մինչև էս տեղը հասել ենք, գիտե՞ս ինչեր ենք քաշել։ Տղան մինչև մեկ դուլլ թանաք չթափի ու երեսուն դաստա թուղթ չվերչացնի, լավ գրել կսովորի»։ Գրելը կարդալու պես հեչա չդիտեցա. կարդալը ի՞նչ բան է որ, նրանից էլ հեչա բան կա՞ որ, քանի նանից էլ լավ վարպետի մոտ որ տաս, կարդալ կսովորի։ Շնորքը գրելն է»։ Տղանկին աչնպես բարձր-բարձր ծիծաղեցին վրաս, որ ամոթից աչքս մութ կոխեց, սիրտս լցվեց, սկսեցի հեկեկալով լաց լինել։ «Հա՛ծե, ինչո՞ւ ես լաց լինում, ասաց վար-

պետս, ո՛ւյ, մեծսիրտ տղա ես եղել։ Խոպես հպարտ եղածդ չէիսեի։ Ես քեզ մեկ խոնարհ տղա դիտեի, մի սասիլ որ փորիդ մեջ չար սատանա ես ունեցել... Հանճ տղո՛ւշ, դու ե՞րբ ես լսել, որ մեկ տղա առաջին անպամիկ դրիչը ձեռքը առած չառած՝ պարզ դրի։ Էտ դու կարծո՞ւմ ես, թե քերականը որ լըպա լըպա կարդացիր պրծար, սաման բան էլ էտպես չուտով պիտի սկսես ու վերջացնե՞ս։ Չէ, ջա՛նս, դրել կարդալը էդքան հեշտ բան չէ։ Հեշտ բան ուզում ե՞ս— գնա գետինը փորիր, ջուր կրիր, ժամի դռանը մուրա— չաե քեզ հեշտ արհեստ, իսկ դրել կարդալը հեշտ արհեստ չէ։ Դու չատ քիթ վեր չքաշես, որ պատիկ քերականը չուտով վերջացրիր։ Քերականը ինչ հոգս ցավն է որ, էն գեռ դրել կարդալուն առաջի երեսն է։ Մեկ տեսնելը պատիկ ոտմոան էլ վերջացրու՝ մեծ—ոտգմոսը սկսիր, մեծ—ոտմոսը վերջացրու՝ ժամադիրքը սկսիր, էն էլ որ վերջացնես՝ ավետարանը ձեռքդ առ, էն էլ վերջացրիր՝ Նաբեկը կարդա, էն էլ կարդացիր՝ հետո Զամչյան կա, Զամչյանից հետո տրամաբանությունն կա, տրամաբանությունից հետո՝ ճարտասանությունն կա կարդալու, էն էլ կարդացիր. ո՞ր մեկն ասեմ, նրանց տեղը չա՛ռ... Հապա՛, պարոնս, դու ի՞նչ դիտեիր»...

Տղաները նորից վրաս ծիծաղեցին. ես նորից ամոթով մնացի։

Մինչև էս օրս հասկացած չեմ, ինչո՞ւ էսպիսի խոսքեր ասաց վարպետս։ Հոգիս վկայում էր, որ ես վատ, անպիտան, անպետք աշակերտ չէի, էտ կծու խոսքերին, էտ ծաղրին արժանի չէի։ Էն էլ լավ դիտեի, որ ընկերներս ո՛րը մյուսներին նայելով, որն էլ նախանձից էին ծիծաղում վրաս, բայց վարպետիս էտպես հեռուս ժաժ եկածը չհամանեցի, դժվարս եկավ։ Իսկ նա չդիտեր, թե ես իրեն ինչպես սիրել էի, էս սուրբ ժամը վկա որ— ասաց, մտածվը Լուսավորչի զանգակատունը ցույց տալով—պատպիդ մամայիդ մեռցրու՝ սաեր, կմեռցնեի, էնչափ էի սիրել էտ անպիտան մարդուն։ Քեզ ի՞նչ ասեմ. էտ մարդը առաջին եկած օրս,

առանց պատճառի առնեը, վար կախեը լինճ, ոտքիս ֆալախա զարնեը— էնչափ սիրտս ցավեցրած չէր լինի, ինչպես որ էտ խոսքերովը... Դու ի՞նչ կասես, հա՛յ-հա՛յ հիսունհինգ տարի կլինի, դեռ մոքիցս եյած չէ... Մեկ մեկ ժամանակ միտք եմ անում՝ չլի-նի թե նախա՞նձ էր... մյուս կողմից էս էլ կասեմ՝ դեռ ի՞նչս էր տեսել, որ նախանձեր... Սուտ չէ, զորթ է, երկու օրվա մեջ ես էն արի, ինչ որ դուցե ուրիշները երկու տարվա մեջ չէին անի, բայց ինչպես որ վարպետն ինքն էլ իր բերանով ասաց, իմ արածս դեռ գրել-կար-դալու առաջին երեսն էր, էնտեղ դուցե դեռ հազար ե-րեսներ մնացել էին՝ մեկ մեկուց դժվար...

Էտ չար սահաթին իմ և վարպետիս միջից սեր կա-ոու անցավ. հոգիս դգաց, որ կամ ես էտ մարդու գըր-խին խաթա պիտի բերեմ, կամ նա իմ գլխիս... Ա՛խ, հայ վա՛խ, ինչո՞ւ էն երևկոյան, առն որ դնացի, էտ ամեն բանը տեղով-տեղով հոգս մորս չասի, որ նրանք էլ քաչեին առնեին ինձ նրանից ու մեկ ուրիշ վար-պետի տային... Բայց սուտ կեցա, մարդու բան չասի, դարդս սրտիս մեջ խորունկ թաղեցի, հետո էլ թաղեցի իմ բաղդս ու չահել արևս...

Կարճ ժամանակից պատիկ-սաղմոսն էլ վերջացրի. պատաս մեծ սաղմոս առավ, մեկ ամսից էն էլ պրծա, ձեռքս ժամագիրքը առա կարդալու, երկու-երեք ամսից ժամագիրքն էլ պրծա՝ ավետարանը սկսեցի: Էտ մի-ջին դիրս էլ կամաց -կամաց կարդի ընկավ, էնպես որ եթե իմ ու վարպետիս ձեռքը կողքե-կողք չդնեիր ու մեկ լավ չնայեիր, դուցե չաս տարբերությունն էլ չդաներիր:

Անցավ էսպես մեկ տարի: Ես արդեն Նարեկին էլ պրծել էի, Ջամչյանի քերականությունը սկսել: Վար-պետս մի ջից տեղ-տեղ կարդալ կտար, ինչպես որ սաղ-մոսն ու ավետարանը, տեղ-տեղ էլ բերան սերտել կը-տար, բայց իսկի խելքս չէր պահում, թե դա ի՞նչ տեսակ բան է... Ամսի վրա՝ ի՞նչ ասել է՝ «վառք, վառքի, ի վառե, զվառ», ի՞նչ ասել է էտ, դրա բուն

մխաքն ի՞նչ է, ի՞նչ է ուզում ասել, ի՞նչ է ուզում հասկացնել, ի՞նչ է ուզում սովորեցնել, այսինքն ուզում եմ ասել թե՝ դրա օգուտն ի՞նչ է: Էլի սազմոսը, ժամագիրքը, ավետարանը կարդալիս դիտեի, որ աղոթք են. ես էլ որ չհասկանամ, միտք էլ անում, ասուված կհասկանա հո և իրեն տված վառաբանութիւնները ընդունելի կլինե՞ն հո՛: Բայց այդ Զամչյանի մէջէ «փառ, փառք, զփառուն» խակի բան չհասկացա— հիմա էլ չեմ հասկանում, դուցե հնգես էլ չհասկացած պիտի մեռնեմ: Ինքս ինձ միտք եմ անում. «կամ էտ մեկ անպետք դատարկ բան է, դրանցից մարդուն ոչ մի օգուտ չկա, կամ դրա միտքը վարպետս ինքն էլ չգիտի»:

Մեկ օր, ինչպես կլինի՝ որ վեր եմ կենում, վարպետիս ասում. «էյ քերականութիւնից, ասում եմ, մարդ ի՞նչ է սովորում», ասում եմ: «էտ քո խելքի բանը չէ, ասում է, երբ կմեծանաս, ասում է, էն ժամանակ կիմանաս», ասում է:— Թե որ— ես էլ դառնում եմ իրեն ասում— թե որ մեծանալուցս հետո պիտի հասկանամ, ասում եմ, ավելի լավ չէ՞ որ, ասում եմ, թող դեռ մեծանամ և հետո սովորեմ. չհասկացած բանը սովորելը ի՞նչ չահ», ասում եմ:—Խստե՛ղ աբի, խստե՛ղ, ասում է վարպետս: Մոտն եմ գնում:— Ձեռքիդ ափը բաց ա՛րա, ասում է: Վախենալով, բայց էլի բաց եմ անում ափս... Մեկ խփում է էն ճիպոտով, մեկ էլ է խփում. «չտե՛ քեզ քերականութիւնն մեկնութիւնն ու օգուտը. հիմա հասկացա՞ր: Գնա տեղդ նիստ և մեկ էլ խելքիդ կարած չկարծը դուրս չտաս...»

Աչս գնդակի պես ուռեց. կապույտ հետքերը չորհինդ ամսից հազիվ անցան, չարաթներով չէ թե գրել, մեկ ասեղ էլ չէի կարող վերցնել— հնգես կսկծում էր ձեռիս ամեն մի մզեղը: Էլի սուս կեցա, պապալիս մայիս բան չասի: Հարցրին «ինչո՞ւ ձեռդ ուռել է», ասի թե՝ «վարպետիցս եմ դարս ժամանակ ոտքս քարին դեմ ընկավ, սայլի ճանապարհի վրա գլորվեցի, էտ մի ջոջին մեկ սայլ մատերիս վրայով անցավ»:

Կես տարուց մեծ քերականութիւնն էլ ծայրն ծայր

վերջացրի, հերթին հասավ արամաբանությանը։ բայց էս գիրքը մանրամասնորեն մոտ չգոնվեց, եղած չեղածը քաղաքի մեջ մեկ հատիկ կար, էն էլ Օ... օղլուի մոտ էր։ կամա ակամա պիտի Սոսմբուից ապսպրվեր։ Մինչև որ գիր գրեցինք, փողը ղրկեցինք, մինչև որ էս արամաբանությունը ձեռներս հասավ, անցավ կես տարի։ էս միջոցին ես մեկ անգամ էլ ծայրե ծայր քաղվածք արի Զամչյանի քերականությունը։

Ես դիտեի թե արամաբանությունը որ գա, էս անօգուտ «փատ, փատի, փատիս, վերնալ եմ, վերնալ ես, վերնալ է» դերբայից, կոչական, ածական, խղճական–ից կպատռվեմ։ Բայց երբ արամաբանությունը ձեռքս առա ու սկսեցի երես երեսի հանից բերան սերտել, էն ժամանակ տեղով հասկացա որ գրել–կարդալը հեշտ արհեստ չէ եղել ու մեկ երկու տարվա մեջ էլ վերջացվի։ Դժվարը էն չէր, որ օրը կամ երկու կամ երեք երես բան բերան անեի, էս դատարկ բան է։ էն ժամանակ հնարես սուր միտք ունեի, որ ամեհաբանից կամ սատվածաչնչից դյուրիդյուրիս բերան սերտելը ինձ համար մի գավաթ ջուր խմելու պես մեկ բան էր։ Դժվարն էն էր, որ բերանս կըլըպար, գլուխս չէր մտնում, չէի հասկանում— հիմա էլ էսպես է հա՛— բայց էն ժամանակներս մեջս ուրիշ կրակ կար, մեկ անկշտում ծարավ կար նոր–նոր բաներ իմանալու, ամեն բանի արմատը, իսկը գիտենալու, խոսքի վրա՝ ինչո՞ւ մեր ձմեռը բուք ու սառնամանիք է, իսկ Երուսաղեմում— մղղաներին ասելով— իսկի ձմեռ չկա։ ինչո՞ւ մեր տեղը ամառը տաք է, իսկ Սիբիրի կողմերը, դեռ էն կողմերն էլ, ասում են թե՝ ամառ բոլորովին չէ լինում, տարի–տասներկու ամիս ձմեռ ու բուք է, ինչո՞ւ գարնանը կռունկները, վայրենի սագերը, արագիլները հարավից դեպի հյուսիս են գնում, ինչո՞ւ աշնանը էլի նորից ետ են դառնում։ ինչո՞ւ ծովի ջուրը աղի է, ինչից է գոյանում վայրկյան ու կայծակը, ձյունը, անձրևը ու կարկուտը։ ղորթի՞ էտ ծեր մարդկանց ասածը, թե ամպը եղիա մարգարեի սայլի ակերից է գոռում, ինչպե՞ս են գործում վարչան, մամխուրը, ինչպե՞ս և ինչ-

չէ՞ն չինում էս մեր պատուհանների ապակին... Հարցնելու իմանալու, սովորելու բան չա՞ս, ո՞ր մեկը պահմ... բայց ումի՞ց իմանայի, ո՞ւմը հարցնեի, ի՞նչ հնարավ սովորեի... Երևի, ինքս ինձ միտք էի անում, կա էնպես մարդ, որ էտ ամենը գիտի, կա՞ էնպես գերք, որտեղ էտ ամենը գրված է, բայց որտե՞ղ գտնեմ էտ մարդուն, ո՞ւր է էտ գերքը, ծովի ո՞ր անդունդից հանեմ... Մեկ էլ՝ որ գերքը գտնեի՝ ի՞նչ օգուտ, որ հասկանալու չեմ, որովհետև էնքան գերք որ համարյա թե ամենն էլ բերան սերտեցի, ինչպես կասեն հոգևոր կերա ու միջից բան չհասկացա, էն գրքից էլ ի՞նչ պիտի հասկանամ... կա՞ արդյոք աշխարհքիս երեսին էնպես մի մարդ, որ կարողանար ինձ գերք հասկացնել սովորեցնել... Թե՞ ամենքն էլ ինձ պես գերքը չը-հասկացած բերան սովորել են և հետո անունները իմաստուն, վարպետ, ուրացու, վարժապետ է եղել:

Խպիխի մտածմունքների մեջ էի գիշեր-ցերեկ... Հալվում էի, մաշվում էի... չորս կոպմս մեկ խելոք մարդ չկար, որ սրտիս դարդը առջևը վոթեի, որ էս կասկածները կամ հաներ մտքիցս, կամ մեկ ուրիշ ճար ցույց տար: Աստվածային անկողնից վեր կկենայի, մամայիս կտեսնեի, երեկոյան աչքիս առջև միշտ պապան էր. էտ ողջմեղկներից ի՞նչ պիտի հարցնեի, ինչ պիտի սովորեի: Մամա— աստված ողորմի հոգուն— սիրտս չհանել որ ուզենար, կասներ ձեռքով վախվածա, խուռապա, տեսակ-տեսակ հալվաններ կեփեր, կղներ առջևս, կարծում էր, թե դրանով ինձ մեծ բախտի հասցրեց. էն տենչ՝ խեղճ ձեռքից ավելի ի՞նչ կդար: Պապաս էլ— աստված հոգին լուսավորե—բերանից կկարեր ու ինձ համար գրքի, թղթի, գրչի փող չէր խնայի— խեղճ մարդու վաստակածը քանի՞ կոպեկ էր որ— նա էլ կարծում էր, թե դրանից ավելի որդի սիրել չի կարելի, հետո երկուսն էլ զարմանում էին, թե ինչո՞ւ ես ժամանակ-ժամանակ սրտիս նեղությունից հայ-հայ միսս եմ ուտում...

Խպիխով կես տարի էլ անցավ:

Գարնան ժամանակներն էր: Մեկ օր առավոտյան վաղ վարժատուն դնացի: Վարպետը պարապում փուռ էր փորում, հենց էնտեղ, որտեղ բանվորը էս րոպեիս փորում է, և ուշում էր մի աղնիվ ծերանի ծառ արմկել, նրա կնկին էլ պատի մոտ մաղզանոս, տարխուն ու տեսակ տեսակ ուտելու կանաչեղեն էր որոնում: Մոտեցա ու «Վարպե՛տ, ասի, հոդնել ես, լնճ տուր բահը, քիչ էլ ես փորեմ»:— Առ ասաց, ավելց լնճ բահը, ու լնքը դնաց չուշանների, կակաչների, ամբուլների վրայի հողը չուռ ու մուռ տալու, որ ջահել տերևները դուրս դան: Էտ միջոցին հարևանի դռնակից մի կինտարդ դլուխը ներս խոթեց «հաքա՛, Անուշ, էստե՞ղ ես», հարցուց:— Հա, էստեղ եմ, ասաց տանուտիկինը: «Խաեղ արի մեկ րոպե, բան պիտի ասեմ», ասաց հարևանի կնիկը:— Գալիս եմ, գալիս, ասաց յանկան ու շտապով բերեց դարախով կանաչեղենը, վրան էլ մեկ սիրուն, ճերմակ ոսկրե կոթով չախու ու դրեց փոսի ափին ու ասաց լնճ. «փոսը որ փորես պրծնես, էս դարաիը խոհանոց կտանես», ասաց ու շտապով վազեց դեպի դռնակը: «Էս ի՞նչ սիրուն դանակ է», ասի ու էլի իմ բանս եմ չարունակում: Փոսը փորեցի պրծա, բահը դրի փոսի ափին ու լնքս դնացի սենյակը դասս սերտելու, մտքիցս րոլորովին ելավ կանաչեղենով դարաիը խոհանոց տանելը:

Անց է կենում ժամ-ժամուկես: Մեկել տեսնեմ յանկան, լեղին պատռած, ներս է մտնում: «Հա՛ճե Մարտրոս, ասում է, դարաիը խոհանոց չտարա՞ր», ասում է:— Չէ, յանկա՛, ասում եմ, մոքիցս ելավ, ասում եմ, էս րոպեիս կրերեմ: Գնում եմ դարաիը առնում ու տանում տալիս յանկային: «Ջահուն ապա որտե՞ղ է», ասում է: Այն ժամանակ մենակ նկատում եմ, որ դանակը չկա: Վազելով գնում եմ պարտեզ, փոսի մեջ եմ նայում, բերանի հոդն եմ չուռ ու մուռ տալիս, քրքրում, անցած ճանապարհս եմ տնտղում, դես ու դեն ընկնում—դանակը չկա: Գալիս եմ յանկայիս մոտ, էսպես-էսպես բան է, ասում

եմ, գանակը կորել է, ասում եմ։— Ի՛, ասում է, քա-
կի էտպիսի բան կլինի՞, ասում է. խակի լույս ցերեկով
ահագին դանակը կկորչի՞, ասում է, քորո՞ց է, կեռի՞կ
է, ինչ։ Շուտով գնա գտիր, թե չէ գլխիդ էնպիսի բան
կբերեմ, որ մինչև սև հող մտնելդ չմոռանաս,— ասաց
էլ, արավ էլ անօրեն անհամարտը։

Մեկ էլ գնացի պարտեզ, ամեն ծակ ու ծուկ
փնտռեցի, ամեն քարի, տերևի, ճյուղի տակ նայեցի,
չկա, չկա, ու չկա էտ դանակը, ոտով գլխով կորավ,
գետին մտավ։ Նորից գնացի խոհանոց. «յանկա՛, ա-
սի, ամբողջ պարտեզը քրքրեցի, տեղ չմնաց, որ չնա-
յեի, հոգնեցի, բայց չխաուն չգտա... Ինչ ուզում ես
արա»...— Թե դու չգտար, ես կգտնեմ, ասաց, ու
էնպես խոժոռ աչքով նայեց վրաս, որ կարծես կանգ-
նած տեղս հում-հում ուտել էր ուզում ինձ։ «Է՛յ,
գաիր, տեսնեմ՝ ինչպես ես գտնում», ասի սիրտս և-
լած։ Ասի ու դուրս եկա խոհանոցից։

Կատաղած երեսով վազեց կինամարդը վարպետիս
մոտ։ Ի՞նչ խոսեցին, չգիտեմ։ Վարպետը մնաց սե-
նյակում, կնիկն էլ խոհանոց գնաց։ Երկու-երեք րո-
պեից երկու աչակերտ գդակները առան, փողոցի դռնից
դուրս գնացին (ես դեռ բակում կանգնած եմ)։ Երբ որ
երեխաները փողոց գնացին, ես էլ մտա ներս ու տեղս
նստեցի, սիրտս էլ էնպես վատ է, էնպես վատ է, որ
կարծես մահս եկել է. էս է կմարեմ, սիրտս կանցնի։
Ընկերներիցս մեկը կամացուկ ինձ ասաց, որ վարպետս
պապայիս եռևից ղրկեց էն երկու տղաներին։ Վախե-
նում եմ, բայց չեմ երևցնում։

Կես ժամ չանցած տղաները վերադարձան, պապա
էլ նրանց եռևից ներս մտավ։ Վարպետս տեղից վեր
կացավ։

«Ես քեզ ճայն էի տվել, ասաց, որ որդուդ վատ,
անազնիվ, բնավորությունը աչքովդ տեսնես ու հաս-
կանաս։ Էս անպատկառին, էս անպիտանին—մատով
վրաս ցույց տվավ—ինչքան կարողացա սովորեցրի,
աստուծու առջև կարող եմ ասել, որ ոչ մեկ աշակեր-

ախ էնպես սրտով կպած չեմ եղել, ինչպես էս լիրբ չանը: Իսկի սուտ ասած չեմ լինի, եթե ասեմ, թե իմ հաբաղատ որդուս պես խնամք եմ ունեցել վրան... Բայց էսքան տարիա տանջանքիս վոխարեն որդիդ, էս հաբամ–սատկելու տղադ ինչո՞վ վճարեց... Ախանջդ լաց արա ու մեկ լավ լսիր: Մեկ որ էս անզգամը ինձ չի հավանում, ինձ խենթ, բան չհասցող, իբենից ցած, անպետք մարդ է համարում. դրթի է, բերանով չի ասում, բայց նշանով, աչքով ցույց է տալիս, էտ ես նրա շարժումնքից եմ նկատում: Մեկ էլ աշակերտներիս սիրտը ինձնից սառեցնում է. «Ի՞նչ է մեր վարպետը, ոչ մի բան չդիտի ինքը, ի՞նչ է դլխին մեկ ահագին խումբ աշակերտ հավաքել»: Շատ էպիսի բաներ. էս էլ ես վրայից, շարժմունքից, քիթ–պռունգից նկատում եմ—չկարծես թե ականջովս լսել եմ, չէ, սիրտս իմանում է, որ էտպես պիտի լինի: Դրթի է, ասպցույց բերել չեմ կարող—մեղքը ի՞նչ ասնեմ—ինքս չեմ լսել, մարդ էլ չի ասել, բայց դիտես՝ որ ասածիս մեջ ոչ մի սուտ չկա: Վրա երեքն էլ էս, որ որդիդ դպրոցի ամենամեծն է. էս որդուն կարող եմ ապացուցել. էսօր առավոտ որդիդ խիստ վազ վարժատուն է գնում, երբ որ հասատատ դիտի, որ էտ ժամանակ աշակերտները դեռ հավաքված չպիտի լինեն: Ի՞նչ է դրա պատճառը, մտքումի վատ բան չունե՞ր, ով դիտի՝ ինչի՞ր էր միտքը դրել անելու. իմ քնած ժամանակը առնում մտնել ուզեցել է, ինձ կամ ինկանո դեղ տալ ուզեցել է, ես ի՞նչ դիտենամ, ախպեր. ասելմած չեմ, որ սիրտը մտնեմ, մեջը եղածը տեսնեմ—թե ապտամորդու սիրտը, թե ծովի անդունդը, երկուսն էլ մեզ համար մութ են. էս մեկ: Ես ինձ համար փոս էլ փորում: Որդիդ մոտ եկավ, աչքիս լավ մարդ երեվալու համար՝ «տուր սուտ է, վարպետ, բահդ ինձ, դու հոգնել ես, ես փորեմ»: Դրան ո՞վ էր ասել՝ ասելմած կսիրես, արի ինձ օգնիր: Չամաչայ քանի տարի վարժապետությունն եմ անում, էտ քանի տարիա մեջ քչից–քչից ձեռքիս տակից վեց հարյուր երեխա է անցել, էսկի մեկ անգամ

Եղած չէ որ աչակերտներից մեկը գար ու ասեր. «Վարպե՛տ, բահդ տուր, ինս փորեմ»: Ինչպե՞ս է որ հենց Մարտիրոսն է ասում ինձ էս խոսքը: Եթե արածը լավություն էր, էս վեց հարյուր աչակերտներից ոչ ոք ինձ լավություն կամեցած չէ՞ ի՞նչ, բոլորն էլ ինձ թշնա՞մի էին, բոլորն էլ անպետնիվ, վատ ուզանե՞ր էին: Իսկ որվեղ նրանց միջից առաջինը եղավ, որ ասաց «դու հոգնել ես, արի քեզ օգնեմ»: Ասել է, որ մեռքը ծուռ էր· էս երկու: Նշանածս նրան տալիս է կանաչեղենով գարեխա ու ասում է՝ «խնկուն այս գարեխը տար, խոհանոց դիր»: Թե որ որվեղ լավ մարդ է, մարի մեջ վատություն չկար, ինչո՞ւ խնկուն չառավ, չառարավ ու ժամերով դգում է գետնի վրա, ինչո՞ւ է էապես անում: Մոռացա՞վ, կասես, բայց Մարտիրոսի սուր մեռք ունենալը ես երկու տարուց լ վեր գիտեմ, էս ինչպե՞ս է, որ ժամագիրք, ավետարան, քերականություն, տրամաբանություն ծայրե ծայր բերան է տալորում՝ չի մոռանում ու մեկ չուխա խոսքը մոռանում է· խելի հավատալ կարելի՞ է էս բանին… Ասել է՝ որ «մոռացա» ասածը սուտ է, էս մեկ գարարկ պատրվակ է· նա մոռացած չէ, այլ դիտմամբ էապես արել է, մարի մեջ վատություն է ունեցել: Էս քեզ երեք: Վերջիվերջո նշանածիս պապայից մնացած Թանկապին լենգլիզի չախոն, որը երկուսս էլ աչքերիս լույսի պես սիրում էինք, գարաթի վրայից գոդանում է, ո՞վ գիտի որտեղ է թաքցնում ու մեզ ասում է, թե կորավ: Իսկի էապես բո՞ն կլինի ախպեր… աչկարա բան է, որ որվեղ վազուց մարդում գրել է էս գոդանակը գողանալ, բայց առիթ ունեցած չէ, էսօր որ առիթը պատահել է, էլ ձեռքից բաց չի թողել: Եթե որվեղ գողանալու մարդ ունեցած չէ, ապա ինչո՞ւ նշանածիս ասել է՝ «էս ինչ սիրուն գոդանակ է». երևի համանել է որ գավել է, էս ծծի երեխան էլ գիտի, որ գողը իր համանած բանը կգողանա… Շատ ասելս էս էր: Ահա՛ որվեղ, ահա՛ ես, դու եղիր մեր գատավորը: Պապաս տեղն ու տեղը սառավ. երեսը մեկ ձյունի

պես սպիտակում էր, մեկ կրակի պես կարմրում էր. հա՛ իմ վրաս էր նայում, հա՛ վարպետիս վրա: Ինչ աներ խեղճ մարդը. հավատար՝ մեղավորը որդին էր, չհավատար՝ դանակի կորչելը շատ կասկածավոր բան էր:

«Հածե Մարտիրոս, ասաց ինձ, էս տահաթխս որտեղից ուզում ես դանակը հանիր ու վարպետիդ տուր»:

— Պապա, ասի, չառած բանը ինչպե՞ս տամ, էդ պահած բանս որտեղի՞ց դռնեմ:

«Մարտիրո՛ս», կանչեց պապաս հնպիսի սառնասիրտ ձայնով, որ քիչ մնաց խելքս կորցնեի:

— Պապա, իսկի չհավատաս, բոլորը սուտ է: Ես գող չեմ, մի հավատալ, ես չեմ գողացել: Վարպետս իմ վրա չիդր ունի, երկու տարի է: Համաբյա վարժարան մտնելու օրից ինձ վատությունն է ուզում, բայց որ սիրտ չհատրվի, քեզ բան չէի ասում: Մի հավատալ էս մարդուն: Զգիտեմ ի՞նչ է եղել չախուն, դուցե մեկը ծածուկ պարտեզ մտել է, գողացել, դուցե ապուռաքը ոսկոր կարծելով թռցրել է, ես ի՞նչ գիտեմ, բայց կուբանամ, կուբ մանդամ, որ ես առած չեմ... Պապա, վարպետս քեզ հիմարացնում է, նրա միտքը դանակը չէ, այլ դանակի պատրվակով իր հին ոխը ինձնից հանել է ուզում:

Էսպիսի շատ բաներ ասի, բայց ո՞մը կասես. պապայիս աչքը մութ էր կոխել, խոսքը ականջը չէր մտնում, նա էլի մեկ բերան «հանիր չախուն» էր ասում:

Վերջը վերջը ես էլ վերկացա ու՝ «պապա, ասի, քեզ մեկ բան ասե՞մ, ասի. ես տեսնում եմ, որ էսօր մահս եկել է. ինչ կուզես արա, ես պատրաստ եմ»:

«Մարտիրոս կանչեց պապաս, երեք անգամ քեզ կասեմ՝ կհանե՞ս չախուն թե չէ՞»:

— Չախուն վերցրած չեմ ասի:

«Չախուն կհանե՞ս թե չէ», ասաց երկրորդ անգամ:

— Չախու չկա մոտս, ասի ես նորից:

«Վերջին անգամ եմ ասում քեզ, չախուն կհանեմ քե չէ»։

— Պապա, ոտքըդ պագնեմ, չախուն չեմ վերցրել, ասի ու պապային ոտքերն ընկա։

«Բերեք Ֆալախան», ասաց պապաս։

Հայտնի երևում էր որ մարդու խելքը վրան չէր։

— Վա՛յ մամա, կանչեցեք, փրկիր որդուդ, ինձ պետք է մեռցնեն էսօր։— Երևակ թե զորք մեռցրած լինեին։

Ֆալախան վաղուց պատրաստ է, երկու ճիպոտ էլ հետը։

Երեք հատ ուժեղ տղաներ վրաս թափվեցին, ինչպես որ գասաորը կովին, էնպես էլ նրանք ինձ վայր գլորեցին, կոչիկներս, վաթթոցներս ոտքիցս հանեցին, Ֆալախայի պարանը ոտքիս ձիգ ոլորեցին ու էնպես բռնած պահեցին, մեկ ճիպոտը պապաս առավ, մեկելը վարպետս... էլ մխքս չէ...

Երեք օրից որ ուշքի եմ գալիս, տեսնում եմ, որ անկողնիս մեջ պառկած եմ, մամաս ու մեծաս, մեկը մեկ կողմս, մեկելը մեկել կողմս, աչքերը ուռած, կեկել են, երեսս են նայում։ Տեղիցս չարժվել չեմ կարողանում, ամեն ժամ եկածիս՝ կարծես հազար բիզ են խրում ողջ մարմինս։ Ոտք ունեցածս չեմ հասկանում, կարծես կտրել են, գեն են դցել։ Կամաց-կամաց մխքս վրա եմ հավաքում ու անցած բաները մեկ-մեկ, մեկ-մեկ մխքս են գալիս։

Մեկ էլ տեսնես մյուս սենյակից սասանական մի ձայն է գալիս. չգիտեմ մարդու է, չգիտեմ՝ գաղանի ու չղթայի զնգզնգոց։

«Էս ի՞նչ է»—հարցնում եմ մամայիս։

— Սուս, ասում է, պապաղ է, ասում է։

Ինձ պապաս, խելքը կորցրել էր ու կատաղել։

Յոթն ամիս տեղաշորերիցս չեմ վեր կացել, հինգ ամիս էլ էնպես տկար եմ լինում, որ պատերին քաքալելով կամ նստարանները բռնելով հազիվ հազ մանեմ գալիս սենյակի մեջ։ Էս միջոցին պապաս էլ մեռնում

է—Աստված գերեզմանը լույս լինցնի—երեք հոգի՝ ես մամաս ու մեծաս մնում ենք որը ու մեկ կաթը սև հագի կարում: Մամաս լուսե լուս ժողովրդի կարն է կարում, մեծաս էլ գալոշ ֆյուն անելով, ֆալ բանալով, շալ-աչք ադեթելով՝ կաթը փող են վաստակում. գրանով չան գլուխներս ապրեցնում ենք:

Քաղաքի մեջ անունս չախուռ դող է դուրս գալիս: Ես էլ ասան չորս տարիս եմ մանում:

Էս մի կիրակին ադա Լազարովից հասեղի մեկ ադայի վրա գիր է գալիս թե՝ «եթե մեկ էնպիսի գրել-կարդալուն սեր ունեցող աղքատ ադա կա հասեղ, խնդրեմ վերցնես ուղարկես Մոսկով հայի ճեմարան»: Էս որ լսում եմ՝ խակուդն գնում եմ էտ ադայի մոտ, ոտներն եմ ընկնում, «ադի էտ լավությունը ադա ինձ, ասում եմ, համ որը եմ, համ աղքատ եմ, համ էլ կարգալուսեր ունեմ»—ասում եմ չեմ՝ ինչ որ բերանս գալիս է: Նա էլ—ասեված բանը աչդոգ—խոսք է տալիս. «Երկու չարաճից պատրաստ եղիր, ասում է. գնացող որ լինեն, հեռը կղնեմ կուզարկեմ»: Ձեռքը պաչում եմ, դուրս եմ գնում, ուրախությունից վեր-վեր եմ թռչկոտում, բայց մեկոնց բան չեմ ասում: Երեք չորս օրից մի քաղաքային պահապան է գալիս մեր դուռը ծեծում. «Մարիամ անունով հապես հապես ադա կա հասեղ», ասում է:— Ես եմ, ասում եմ: «Հայդա, արի հեռս, ադան քեզ կանչում է», ասում է: Մամաս կարծում է, թե էլի ո՞վ գիսի ինչ վորճանք պիտի գա գլխիս, խեղճը քիչ է մնում խելքից գրկվի:— Մի վախենար, մամա, ասում եմ, ու մի երկու խոսքով հայտնում եմ բանի եղելությունը:— Որ հապես է, ասավածամայրը բախտդ բանան, բալաս, ասում է ու ճամփու է գցում. մեծաս էլ չհապալ ֆայն է առնում, որ առաջուց իմանա, թե ի՞նչ լուր պիտի բերեմ: Գնում ենք ադայի մոտ. մարդու խոժոռած երեսից հասկանում եմ, որ ասելուն ուրախ բան չպիտի լինի:

«Հա՛ծե, ասում է, դու ի՞նչ երեսով էկր ուզում ադա Լազարովի վարժարանը մանել. մեկ-երկու չհասու

էլ որ էնտեղ գողանաս, էտ հո բոլորովին ուրիշ նախիջևանցու մաքուր անունը, ասում է՝—երբ որ պռշդ էաքան կեղտոտած էր, դու ինչպես համարձակվեցիր գալ ու խնդրվել ինձ: Դեհ, աչքից կորիր, գազաղաչակ, մեկել երեսդ չտեսնեմ...»:

Էսպես ինձ իր տնից դուրս վռնդեց մեր աղան:

Լալով լալով տուն եկա: Խեղճ մամաս, աչքը դռանը պահելիս է եղել, թե որդին ի՞նչ ուրախ լուր պիտի երևն բերի ու ծերությունը մխիթարի. մեծացիս ջալն էլ դուրս է եկել չուստով ճամփա, չատ փող, աղուհաց ու տեսակ-տեսակ բարություններ: Էս որ լսեցին ողորմելի կինտարմարդիկը, ավելի մեծ տրտմության մեջ ընկան:

Մեկ օր մեծացիս մեկ տուն թևթև թափելու[1] կանչեցին: Էտ տան տերը տարվա մեջ հինն ամիս Ստավրապոլ էր կենում իր առուտուրի պատճառով, տասներկու տարեկան որդուն էլ հետը առել էր ու էնտեղի թաղավորական վարժատունն էր տվել կարդալու: Մեծացս վարժարանի անունը որ լսում է, կինտարմարդոց ոտքերն է ընկնում թե էսպես էսպես մի թոռ ունեմ, ասում է, կարդալու չատ սեր ունի, ինքը պատիկ է, բայց մեծ մտքով տերտերից, վարդապետից ավելի քան դիսե, դովում է մի խոսքով ինձ, էնքան է ասում, էնքան է աղաչում, պաղատում, որ էտ կինտարմարդկանցից խոսք է առնում, որ ինձ էլ Ստավրապոլ գրկին Մատթեոս աղայի մոտ, որ նա էլ վարժատուն տա: Էս որ սպրդում է, պրծնում, չատպով տուն է գալիս, «աչքդ լույս, Մարտիրոս, ասում է, չարը խափանեցավ, բարին կատարեցավ», ու մեկիկ մեկիկ պատմում

---

[1] Հիվանդություն կամ թուլություն ունեցողի հին շորը մեջ կիսայրյալ մոմ են բերում եկեղեցուց, հիվանդի գլխի տակն են դնում. մյուս օրը ամանի մեջ հալեցնում են և հետո թափում ջրով լցված պնակի մեջ՝ երեք անգամ գլխի վրա բռնած, երեք անգամ սրտի, երկու անգամ ծնկների և մեկ անգամ ոտների վրա: Իբրև թե սրանով հիվանդը բժշկվում է:

Է ինձ, ինչ որ խոսվել էր իմ մասին: Ամենքս էլ ուրա-խանում ենք:

Բայց օրերը են անցնում՝ բան չկա, շաբաթ է անց-նում՝ բան չկա, վերջը վերջը ամիս է անցնում, էլի բան չկա: Մեկ օր մեծաս վեր է կենում, ասում է. «Ես ի՞նչ զարմանք բան է, ասում է, Հաքան ժամանակ մեկ խարար էլի լսվում, ասում է, մոռացե՞լ են թե խաբե-ցին մեզ, ասում է. հապհով բան դուրս չի, գալ, վեր կենամ մեկ ինքս դնամ իմանամ. ծանդր կեցած քարի տակից ջուր չի վազիլ» ասում է՝ ու ֆարաջան հագ-նում է, գլխին թաշկինակ է փաթաթում, փայտը ձեռքն է առնում, ապտալով ուզիղ դեպի Մատթեոս աղայի նշանածն է գնում: Իրիկնադեմին ճրագ վառե-լու ժամանակները ոտները քաշքշացնելով, ուրախ ու-րեխով ետ է գալիս:

«Ի՞նչ մազարիչ ես տալու», ասում է ինձ:

— Առաջին տալվա ոռճիկս ամբողջովին քեզ Երու-սազեմի ճամփի փող, ասում եմ:

«Ի՛յ, բալաս, ասում է մեծաս, էն օրը որ գա, ոլ՝ դիմի՝ ոսկորներս էլ փխած կլինեն: Ավելի լավ է, ի-գուցիա բանը տեսնենք: Ահա քեզ ուրախ խաբար. վա-ղը չէ մեկել օր Մատթեոս աղային Հատեղից երեք սայլ թաղկալի տալանք պիտի ղրկեն: Եթե չես վախենում— որովհետև էն ժամանակները ավազակ էերքեզներից վախ կար—նստիր և գնա. մնացածն էլ ասված կաս»:

Ինչպես որ ասում է, էնպես էլ անում ենք: Մեծաս դռռանեղուս ման է գալիս, մեկից հին մուշտակ է խնդրում, մյուսից տաք մեխթե[1] է մուրում, մեկ ուրիշից էլ մորթե գդակ է առնում. փաթաթվում եմ, կապկպվում եմ, մեկ պտիկ բոխչա՝ ինչ ասես չորե-րով, ճամփի պաշարով, կռան տակս եմ դնում, դնում եմ՝ սայլն եմ նստում ու ճամփա ընկնում:

Ինն օրից Ստավրապոլ ենք հասնում: Գնում եմ հա Մատթեոս աղայի մոտ, գլխիս եկած ամեն բանը պատ-

---

1 Փափուկ կաշվե (սափիանե) դուլպա:

մում եմ, որ ասես մեկ բան չեմ թաքցնում՝ լավն էլ ասում, վատն էլ ասում: Բայց տեսնում եմ, որ մարդու երեսը մեկ տեսակ է լինում, երևում է որ պատմածիս չի հավանում, կարծես դժվարանում է, բայց էլի չեն կենա—բան չի ասում:

Մեկել օրը ինձ վերցնում է, տանում է մեծավորի մոտ և խնդրում է, որ վարժատուն առնի:

«Գլխապիր ունե՞ս, հարցնում է ինձ մեծավորը: Հանում եմ ծոցից, լրեն եմ տալիս:

«Տասչորս տարեկա՞ն ես», հարցնում է:

— Հա, ասում եմ:

«Ռուսերեն գիտե՞ս» ասում է:

— Չէ՛, սովորած չեմ, ասում եմ:

«Թվաբանություն գիտե՞ս», ասում է:

— Չէ՛, սովորած չեմ, ասում եմ:

Էլի մի քանի չսովորած բաներս է հարցնում: Ամբը հասկանում եմ, որը չէ: Մեծավորը քթթոպոտնդ է անում: Մատթեոս աղան կարմրում է:

«Օրենքով վարժատուն առնել չէը կարելի քեզ, բայց, ասում է, Մատվեյ Կարպիչի խաթեր համար ուզեմ—չուզեմ պետք է ուշաժիտ անեմ, ասում է մեծավորը, բայց ամենամարի գասատրանը պետք է քեզ նատեցնեմ», ասում է: Ուրախությունից չգիտեմ՝ ի՞նչ անեմ. մեր աղաթով դնում եմ մեծավորի ձեռքն եմ պաչում. մարդուն դուր է գալիս:

«Վրայից երևում է մաքուր սրտով տղա է, բնավորությունն էլ դեռ փչացած չէ», ասում է Մատթեոս աղային, վրան աչքով նշան անելով. «կաչխատե՞ս, լավ կսովորե՞ս», հարցնում է ինձ:

— Սովորելու որ չլինեի, ինչո՞ւ համար չորերը կրնկինեի, կգայի էստեղ, ասում եմ:— Ծիծաղեց մարդը. մի քիչ էլ մնացինք ու վեր կացանք տուն եկանք:

Ճամփին Մատթեոս աղան դառնում է ինձ և ասում.

«Հա՛ձև, դլուխդ դովում էիր, թե շատ բան գիտես,

տեղը որ եկավ ինչո՞ւ պղտի քաշկիլը, ինձ էլ սմոթով թողիր»:

Ես բան չասի, սուս կեցա: Ախպեր, ի՞նչ ասեի. իմ տաքլինելով սավորածս էստեղ բանի պետք չեկավ, գրանց սավորեցրածն էլ ես սավորած չէի: Տեսա, որ Մատթեոս աղան առաջին օրից վատ աչքով նայեց ինձ, բայց բան չասավ, էն էլ շնորհակալ եմ:

Մեկել օրը առավոտյան վաղ դնացի վարժատուն, մինչև կեսօր մնացի. երկու վարժապետ եկան, երկուսն էլ դաս ավին. կեսօրից հետո մեկ էլ դնացի, էլի երկու ուրիշ վարժապետ եկան, նրանք էլ դասեր ավին: Մյուս օրը բացի նրանցից, էլի չորս ուրիշ վարժապետներ եկան, ամենքն էլ ուրիշ-ուրիշ դասեր ավին, դնացին: Գիրք չունեի, ի՞նչ անեի, ո՞ւմն ասեի, ումի՞ց աղաչեի, առնեի: Եթե Մատթեոս աղային ասեի, թե ինձ ութը հատ գիրք է պետք, հավիկ թե առներ տար, որովհետև վրայից երևում էր, որ ինձ տաք աչքով չէր նայում, էնքան էր որ մեկ վոր հաց խնայելու քաշմամ էր: Նրա որդուց ուզեի՞, էն էլ պիտեմ, որ խոսքս դուբ պիտի անցներ, քանի որ նա առանց իմ ասելուն էլ պետը գիրք չունեցածս, բայց մեկ բերան խոսք չասավ թե՝ ինչի վրա դասերդ պիտի սավորես. երևում էր, որ նրան էլ դուբ չէր գալիս վարժատուն մանելս:

Դասատան մեջ մի քանի բարի երեսով ուս աղաներ նկատեի էի, հարցնելով-հարցնելով դնացի դասներուն առնը, ամենքից էլ մեկ-մեկ կամ երկու-երկու գիրք վերցրի, եկա տուն, քաշվեցի մի անկյուն և սկսեցի ինձ ու ինձ սավորել: Մի խոքս, փառք աստծու սուբ էր. էս կողմից միամիտ էի. դասերս էլ ո՛րը վեց տող էր, ո՛րը ութը տող—էս ինձ համար մի բան չէր. Թվաբանութեան վարժապետը ոչինչ աված չէր սովորելու, նրանը՝ սև տախտակի վրա սեռակ-սեռակ հավիներ էին, էս ոչինչ. դեռ դասարանից դուրս չեկած պիտեի:

Մեկել օրը, երբ վարժատուն դնացի և հերթը ինձ հասավ, դասերս հնչես լավ պատասխանեցի, որ վար-

Ժապեանները պարմացած մնացին, իրենց ձեռքի թղթի մեջ անունն ու ազգանունը գրեցին և դուրս եկան. էս թղթի անունը մեկ տեսակ էր, բայց վաղուցվա բան է, մոռացել եմ՝ ինչպես է: Մեծավորը եկավ, էս թուղթը աչքի անցրեց, «մալադեց Սվաճիով տասց, աչխատիր, տասց, մեկ օր մարդ կլինես», տասց:

Երեսից երևում էր որ լավ մարդ էր: Ախպեր, ժողովուրդը ինչ կուզե թող ասի, բայց էտ կապակ ազգը,— հարբան է, ինչ է, ինչ չէ,—էլի սիրտը մաքուր է, մեզպես նախանձոտ, չարխամ, բամբասող, մարդու մեռը ուտող չէ...

Խսկիսով կես տարի ինչպես եկա վարժատուն, պարծանք չլինի տասծս, օրեցօր ավելի ու ավելի լավ էի սովորում և վարժապետներիս ու մեծավորիս աչքն էի մտնում. ոտս ընկերներս ինձ սիրում էին, չեն կերնան, գիրք, տետրակ, թուղթ, գրիչ, քարեգրիչ, ինչ որ պետք էր, ամեն բան տալիս էին, ես էլ որին դասը պետք էր, ամեն բան տալիս էի, ես էլ որին դասը էի սովորեցնում, որին էլ ձեռքիցս եկած պատիկ մոտիկ լավությունները էի անում, մեկ խոսքով եղբայր եղբոր պես էինք ապրում: Բայց Մատթեոս աղայի որդին հետս լավ չէր. վրաս նայել չէր ուզում, ամաչում էր հետս խոսել, խաղալ կամ դաս սովորել, ամեն պատահողին ասում էր թե՝ ես վատ ազգից, աղքատ, ռամիկ տղա եմ... պապան էլ էսօր էգուց անից փախցնել է ուզում, էնքան է որ՝ մեկ պատճառի է մեն գալիս: Ասում էր, բայց նրա խոսքը բանի տեղ դնող չկար:

Ամառը եկավ, քննությունները սկսվեցին: Ինձ առաջին դասարանից երկրորդը տարան—ընդամենը կես տարի մնացի առաջին դասարանում,— լավ սովորելուս ու գովելի բարքիս համար անունս կարմիր տախտակի վրա գրեցին, մեկ հատ էլ գիրք բախշեցին:

Մեկել տարին դասատան մեջ էլ առաջին աչքերան էի հիշվում, էտպես էլ մնացի մինչև դուրս գալս. դասատուն դասատան եռանից, դասատուն դասատան եռանից փոխեցի ու Ստավրապոլ գալուս երրորդ տարին արդեն չորրորդ դասատանն էի:

Դեռ նոր էի չորրորդ դասատունը անցել, որ գլխիս նոթից փորձանք եկավ։

Մեկ օր Մատթեոս աղան առավաճառից ուշ տուն է գալիս, հանվում է, ծոցի փողը—իբեն ասելով—քսակով սեղանի վրա է դնում, ճրագը հանգցնում է, պառկում։ Մյուս օրը որ անկողնից վեր է կենում, քսակը փնտռում է—քսակը չկա։ Խանութի տղաներից մեկն էլ չկար, ամենքն էլ առևտրական էին. ծառա էլ չունեինք—նոր դուրս էր դնացել—տանը ես էի, ինքն էր և որդին էր. երեքիցս մեկն ու մեկը գողացած պիտի լիներ, բայց ո՞վ. պարզ չէ։ կասկածը խակուն ինձ վրա է ընկնում. էս չախուռ բանն էլ նոթից աչքարհ է գալիս։ Ես երդում պատառ եմ լինում, երկնքի ամեն տերբերի անունն եմ տալիս, վկա եմ բերում, բոլորն էլ զուր է։ Մատթեոս աղան հրամայում է, որ չուտով ախուռ-չուխուռս հավաքեմ, վեր կենամ Նախիջևանն գնամ։ Լաց լինելով գնում եմ մեծավորիս մոտ, էսպես էսպես բան է, ասում եմ։ Նա էլ ի՞նչ անի խեղճը։ «Ժամկիը, ժամկիը, ասում է, բայց ցավիս դարման չի գտնում։ Դղեակս ձեռքս է տալիս ու հայ վախ հայ...

Նոթից նստում եմ սայլը, գալիս եմ Նախիջևան։

Մամաս որ լսմանում է էս նոր անբախտությունս, թռլանում ընկնում է. քայլախով, ջրով, նաշադրով հազիվ ուշքի են բերում ողորմելի կինտրամարդուն։ Մեծաս ֆալ է բաց անում ու ասում է. «փողը անպատճառ պիտի գտնվի ու անմեղությունս լույս պիտի գա. ինձ էլ նոթից պիտի կանչեն Սատրապոլ»։

Էս անգամ մեծայիս ֆալը դորթ է դուրս գալիս, բայց մյուս կեսը. էս կորած քսակը Մատթեոս աղայի վարաիկի դրպանից է դուրս գալիս։ Սերտս չահելու համար նշանածին նամակով ապսպրում է, որ ինձ երկու ֆունտ չամիչ, երկու ֆունտ խաբրամա, քանի կոպեկ էլ սև փող տան ձեռքս ու ճամփեն։ Ինչպես է լինում որ մեծաս նրանց տունն է դնում. էս նամակը առջևը կարդում են, չամիչն ու խաբրման թղթի մեջ են փաթաթում, ձեռքը տալիս, փողն էլ ծոցն են դնում։

«Մեծա, ասում եմ, ինչո՞ւ ասիր, ասում եմ, էս բոլորը մեկ թե իմ անմեղությունս ծախածի պես բան եղավ», ասում եմ:

— Որ չառնեի, ասում է մեծաս, անմեղությունդ բոլորովին ձրի տված պիտի լինելը, հո ասում է:

Լավ որ միտք անես, մեծայիս ասածը ղորթ էր, բայց միայն հայերիս մեջ: Ջահուի բիծը կար հո վրաս, քահոմ փողինն էլ որ կպավ, բոլորովին արատավորվեցի, էլ երես չունեի քաղաքի մեջ մնալու, չուտով մի հնար պիտի դանվեր Նախիջևանից էլնելու, բայց որտե՞ղ երթայի, ո՞վ իր տանը կառներ աշկարա երկու գողությունների մեջ բռնված տղին...

Մարդը երբեմն վատ բան լսելու երկու սուբ ականջ ունի, լավ բանի համար ոչ մեկը: Բսակով փող գողացածս ամենքն էլ լսել էին, բայց քահվի Մատթեոս աղայի վարաիկի գլոպանից ելածը՝ մեկ մարդ էլ լսած չէր. ինչպե՞ս ախը չտրաքվես...

Մեկ օր տան դռնակի առջև կանգնած եմ ինձ համար, նայում եմ՝ առջևիցս մի ռուս մարդ է անցնում, գոտակը հանում է և գլուխ է տալիս. «Էս ինչ մարդու տունը ո՞րն է», հարցնում է:

— «Էսպես էսպես գնա, կդանես», ասում եմ. հետո իրեն եմ դառնում և հարցնում. «Դու ո՞վ ես»:

— Ես Նրա չորանն եմ, ասում է:

«Որտեղի՞ց ես գալիս», ասում եմ:

— Սև ծովի ափերից, ասում է:

«Ախը—սայլդ ապա որտե՞ղ է», ասում եմ:

— Չէ—սայլ չունեմ, ասում է, ոտքով եմ եկել, ասում է:

Իսկույն մտքս բան է ընկնում: Մարդը գնում է:

Մյուս օրը մերոնց բան չեմ ասում, կամացուկ տնից դուրս եմ գալիս, ուղղակի գնում, ռաստ եկողին հարցնելով, ճիշտ երկու չաբաթից ոտքս Եկատերինադար եմ գնում: Էս հային եմ գնում, էն հային եմ գնում, վերջը մեկին գտնում եմ, տարին երեսուն և հինգ ռուբլի վարձով,— էն ժամանակները վողը գնա

ասեղնագիրքով կհամաբերեն,— խանութի աշակերտ եմ մանում: Որտեղ սովորած, ինչ պետեցածս, ում օգնին եղածս ոչ մեկին էլ չեմ ասում,— ճշմարտությունը ասելու համար մեկ անգամ ասել էի:

Վեց տարի մնացի տիրոջս խանութում. էս մեջս-ցամ մեկ անգամ իսկս էսաք ասել չավի, մեկ օր հաշվ-վին մեջ մի դուռ պահսա չեկավ,— հարյուրները հա ա-վելի էր ձեռքիցս անցնում—էն ոչինչ: Խանութպանը էնքան վստահացել, հավատացել էր ինձ, որ ամբանե-րով ոսքը խանութը չէր դնում... Եղած չեղածը մի տոնդրեսը—տոնը չորս տարեկան աղջիկ ուներ, տեղն եկած ժամանակ միշտ ասելիս է եղել մոռիկ մարդ-կանց— «կատինիս Թող տարիքը լասնա, կառնեմ Մար-տիրոսին կտամ, խանութս էլ նրա վրա կդրեմ, դրանից հետո հայր-որդու պես բան կլինենք»: Լաղդներն էլ խո-կուն լուրը ինձ կրերեին: Ես էլ հուսով կնկել եմ թե էսօր չէ վաղը քառասուն հազարանոց խանութի տեր պիտի լինեմ: Վարձս էլ չեմ ասնում, թե ինչ է՝ երբ էլ որ լինի՝ ամենն էլ իմն է...

Դու մեկ նայի գեռ գլխիս կան գալու...

Տերս վաղուց Նախիջևան գնացած չէր: Մեկ օր էլ վեր է կենում և ասում ինձ. «Հա՛ծե, պիտ՞ս ինչ, ա-սում է, սերտս մեկ Նախիջևան գնալ է ուզում, ասում է. ի՞նչ ես ասում», ասում է: Ես բան չասի, բայց սերտս սեղմվեց: «Էս ամենը մի հարյուր հիսուն ռուբ-լու բան չէ՞, ասում է տերս, թքել եմ վրան, հայդե աքի երթամ... Ես որ գամ, ասուծով, նշանդ էլ կդնենք, աղջիկս էս էս է տասնըհինգ տարեկան կլինի. եկող տարի էս ժամանակները պահնեղդ էլ կհամբու-թեմ ու՝ մաղս էլ պատից կկախեմ... Հերիք է ինչքան չարչարվեցի, հանգստանալու ժամանակն է, մի քիչ էլ դու տանջվիր...

Կուզեի ասել՝ «մի գնա», տեղով էլ պիտեի որ խոսքս կլսեր, բայց չասի. «ինչ լինելու է՝ Թող լինի», ասի մտքիս մեջ... Ինչ ես կարծում, հոգուս զրացածը հա զուր չեղավ...

Էս իմ տերս որ նախիջևանից էս գարձավ, էլ առաջվա մարդը չէր, բոլորովին փոխվել էր. մեջը սառնություն մտել էր: Առավոտվանից մինչև երեկոն կըգար խանութում կմնար, ամեն րոպե մատյանս աչքը կանցներ, գալիք մանր փողը կհամարեր, չէի ու ապրանքի թռփերը չսվիել կտար: Շուտ հասկացա քամու սրտեղից փչածը, բայց սուս կեցա. տեսնեմ՝ ղրա վերջը ինչ կլինի, տսի մաքիս մնչ:

Անցնում է հապտա չարաթ ու կես... Մեկ օր տեսնեմ, տերս մի ամուրի նախիջևանցի տգա է բերում խանութ ու խանութի բարին ամենը նրան հաչվով է տալիս, ինձ էլ նրա ձեռքի տակ է դնում: Էլի սուս կեցա, տեսնեմ սրա վերջն էլ ինչ կլինի, տասամ եմ մաքիս մնչ: Մեկ էլ ի՞նչ լսեմ. տերս էս նոր մտած խանութի տղին խոսք է տվել իր աղջիկը նրա հետ նշանելու... էս էլ կուլ տվինք:

Երբեմն մտքերս կանցնի, թե կենդանիների մեջ ո՞րը տվելի է չարքաշը, դիմացկունը. մի տսիլ որ ադամորդուց տվելի դիմացկունը չի եղել: Աստղեր կան, որ ինքն երեն մեռնելը հոդուն մեղք բան է, ղրա համար, տասում են, տասված մեր հոդին դժոխք է տանում. որ էտպես է, տպա ինչո՞ւ մարդս անբախտ է, ուզում եմ տսել թե՝ էս հրաման տվողը ինչի՞ բանը էն տեղն է հասցնում, որ աղորմելի մարդը աշխարհս վրա տպրելը մեռնելուց վատ է ճանաչում ու—մեղա տասում—կամ դեղ կխմի, կամ պարանը վղին կդցի, կամ ջուրը կընկնի, կամ ճակատին դնչակ կտա... Զգիտեմ տխպեր, խելքիս բանը չէ...

Մեկ օր խանութում նստել եմ, վիզս ճուկ: Միտք եմ անում, ղլխս անցած բաները չարան-չարան աչքիս առջևից կանցնեն ու ինքս ինձ կհարցնեմ՝ արդյոք անբախտությունս վերջացա՞վ. մեկ էլ ղլուխս բարձրացնեմ, ի՞նչ տեսնեմ, տերս դիմացս կանգնել է, վրաս է նայում:

«Հածե Մարտիրո՛ս», տասում է:

— Համմե՛, տղա, տասում եմ:

«Դիտես՝ մեկ բան ունեմ քեզ ասելու», ասում է։

— Ի՞նչ է ասելուդ, ասում եմ։

«Ես քեզ ճամփա դնել եմ ուզում», ասում է։

Սարսափս գալիս է։

— Ինչո՞ւ, ասում եմ

— Սիրտս չեմ էնպես կուզե, ասում է. էս խանութը տերը ես չե՞մ...

— Պատճա՞ռը, ասում եմ։

Երեսը դարձնում է նոր եկած խանութի տղին ու ասում է— իսկ խոսքը ինձ է, դիտե՞ս։— «Մեկ էս լիրբ անամոթին տես, երեսը կաչի է պրել ու ինձնից պատճառներ է ուզում իմանալ, ամեն տեղից հանած-վարածը դեռ համարձակվում է ուղիղ աչքիս մեջ նայել»։

Հետո դառնում է ինձ և ասում..

«Դու պատճառը կուզես իմանալ, հա՞. պատճառը էս է— դու դող ես»։

— Ե՞րբ դողությունս բռնել ես, ասի։

«Մենակ ես բռնած չեմ քո դողությունդ, հազար մարդ բռնել է։ Դու չէիր վարպետիդ չախու դռդռացողը, դրա՞ համար չէր որ քեզ վարպետիդ մոտից փախավին, քո՞ պատճառով չէր որ պապաղ խելցավ, հետո էլ մեռավ ողորմելին, ապա լաստրովի ուսումնարանից քեզ դուրս չա՞րին։ Սատվրապոլ Մատթեոս աղայի քեսակով փողը դո՞ւ չէիր դողացողը. դրա համար քեզ թաղավորական վարժանոցից չէլոնդեցի՞ն, անամոթ չուն... Մեղքդ որ գիտես, դոնե չան պես պոչդ քեզ քաշիր, է՛... Էս խաբեբային նայիր, պատճառ կուզե իմանալ։ Անամոթ երեսիդ թքեմ—չեմ քեզ պատճառ. դող ես, չեմ, դող ես։ Ես խանութիս մեջ դող մարդ ունենալ չեմ ուզում, հասկացա՞ր, գլուխդ մտա՛ր։ Շուտ քեզ պատճառ»։

— Լավ, ասի, տուր վեց ու կես տարվա վարձս, երթամ։

«Ի՞նչ վարձ, ի՞նչ բան, ի՞նչ փսսան... Ո՞վ ես հիմարացնում։ Քեզ պես աչկարա դողը իր վարձը վաղուց առած կլինի, դուցե ավելով էլ... Շուտով է՛

խանութից, թե չէ ոսկիականներով կհանեմ ու ձեռքդ ոտքդ չպիտակապ անել կտամ, հնգես ոտքով կուղարկեմ Նախիջևան: Էս օտար քաղաք է, դու Նախիջևան չպիտենաս, էստեղ մենք դղուշ պիտի կենանք, թե չէ մեկ որ հայերիս անունը կոտրվի, մեկ էլ ուղղելու դուռը չկա. դրա համար չտե չեմ ուզում դլխիդ գալմաղալ բանալ... Դե, հա՛յդե, որտեղից եկել ես, էլի հնտեղ գնա»...

— Աղա, ասի, առանց փողի ինչպե՞ս երթամ, ո՞վ ինձ կտանի. ճամփին ախոր ուտել–խմել պետք է, ո՞վ ինձ ձրի հաց, ջուր, պատկելու տեղ կտա: Մեկել որ Նախիջևան գնացել եմ, գիտե՞ս հո,— զանակ ու քսակ գողանալը քեզ ասողը էս էլ երևի տասծ կլինի— հնտեղ ծեր մայր ու մեծ մամա ունեմ, ի՞նչ ասեմ երթամ, նրա ծերության նեցուկ լինելու տեղ՝ գլուխներին ծանրություն երթա՞մ... Աղա ոտքդ պապնեմ, մի անի էս վատությունը, անկյդ վախ մի տալ, ինձ մի խայտառակիլ: Վեց տարվա երախտիքս ինչո՞ւ մոռացար, որ–բանից երկու ամիս առաջ...

Էլ չկարողացա բան ասել, արցունքս հայ–հա՛յ թեղդում էր...

Տերս քսակը բացեց, մի քիչ տասը հատ կապույտ թուղթ փող հանեց, առջևս չպրտեց ու ասաց.

— Էս քեզ չէ, ծեր մարդ, մեծամիտ է. քեզ էն էլ բավական է, ինչ որ վրայի չորիդ ու ժիլետիդ տատառին մեջ կարել ես, թաղցրել»:

Առի հիսուն ռուբլին, պաչեցի տիրոջս ձեռքը և ելա խանութից: Իսկույն բազար գնացի, վրայիս մահուզե չորը ծախեցի, տեղը ռուս մուժիկի կոշտ չորը առա, հագա և ոտքով եկա Նախիջևան: Մեծամս մեռել էր, մամաս էլ իրեն ծեր տեղով մեկի մյուսի լվացքն անելով օրն էլ անցկացնում, էսօր կուշտ, վաղը քաղցած:

Նախիջևան որ եկա, քսաներեքիս մեջն էի. ճիշտ էն տարիքս էր, երբ մարդ դեռ նոր աշխարք է մտնում և աշխարքի համն է տեսնում: Բայց դու աչքն տես, որ էս ծաղիկ տարիքիս մեջ աշխարքիս բանից պրծել,

ձեռք էի վերցրել ու կյանքիս թուղթը պիտի ուտեի ու լեղին խմեի... Ա՛խ, աշխա՛րք, աշխա՛րք:

Իմ բախտից էս վեց ու կես տարվա մեջ երեսս էլ փոխվել էր, էն գանակի ու քսակի պատմությունն էլ մոռացվել էր: Իմ ուզածս էլ էս էր:

Մեկ օր բազար եյա, մի հատ չժան ձի առա, հետո պատահմամբ մի տակառասայլ և ձիու սարք առա և էն օրից ի վեր մինչև էսօր— ճիշտ քառասուն և երկու տարի է— ջրկիրություն եմ անում»...

Մի քիչ հետո ասաց.

«Աչա, մտոք մանը վոզ չունե՞ս, հինգ տակառ ջուր եմ բերել, մի մանեթ կանի... Ձիուս համար մի քիչ խոտ ու դարի պիտի առնեմ, հայվանս երեկվանից ի վեր քաղցած է, տանն էլ խեղճերը քանի ժամանակ է ինձ են սպասում, մե—մե կտոր հաց նրանց էլ պիտի տրվի»:

— Ահա քիզ քսան մանեթ,—ասի ու ձեռքը կուզեի երկու տասանոց դնել,— մեկ մանեթը ջրիդ համար, տասներինն էլ պատմածիդ համար:

«Ի՞նչ էս անում,— ասավ Մարտիրոսը,— վարձս ինչ որ է՝ էն տուր. դրա համար էլ չնորհակալ կլինեմ: Վաթսունհինգս լրանում է, աղքատությունից աչք բացած չեմ, բայց էլի մարդու ձեռքս մեկնած չեմ, սրանից հետո ոչ թե ամոթ, հոգուս մեղք էլ է մուրալը: Էսօրվա օրս ջրկիր եմ—սրանից ցածր էլ ի՞նչ արհեստ կա— բայց էլի մաքիցս դուրս չի գալիս, որ մեկ օր աղնվական տղաների հետ կողքե կողք նստել եմ ու լավ-լավ մարդկանցից բան սովորել եմ...Վաղուց է մոռացել էի էս չախուռ պատմությունը, կարծում էի թե սրտիս վերքը արդեն փակվել էր, բայց էսօր հիշուն ու հինգ տարվա կորուստս որ դուս՝ նորից արյունը սկսեց կաթել... Հե՛յ ժամանակ, ո՞ւմ մաքից կանցներ, որ էս ժանգոտած չախուն, որ դուռ չարժե, ժամանակով մի չենքով օջախ քանդել է...»

— Մարտիկոս, ասի, քեզ մի բան հարցնեմ, ղրթը կասե՞ս, ասի:

«Մեկ տեսնենք ի՞նչ պիտի հարցնես, ասաց. թե որ կարողանամ՝ կասեմ, ինչո՞ւ չէ»:

— Էտքան անբախտությունիդ մեջ ո՞մն էս ավելի մեղավոր ճանաչում, ասի:

— Ես քեզ մի ղրթի բան ասե՞մ, ասաց: Երբ որ դու ուղիղը կուզես իմանալ, ասաց, իմ անբախտությունես մեջ մեղավորը մենակ ես եմ»:

— Ինչպե՞ս, ասի, զարմանալով. ապա Մկրտիչ վարպե՞տ, ապա Մատթեոս ազա՞ն, ապա խանութպա՞նը...

«Էս ամենը դատարկ բան է, նրանք ոչ մի մեղք չունեն, նրանք էն արին, ինչ որ խելքները կտրեց, ես էլ էն պիտի անեի, ինչ որ իմ խելքն էր կտրում: Ես քեզ կարճ ասեմ. աչխարքս էսպես է. ուզո՞ւմ ես, որ քեզ չկծեն՝ նախ ինքդ կծիր ամենքին, կուզե՞ս, որ վրադ չհաչեն, նախ ինքդ ամենի վրա հաչի. ուզո՞ւմ ես որ անունդ չեվմացնեն՝ ուրտ եկողի անունը սեվացրու. էտ ամենը ես վադուց դիտեի...բայց մեջս մի բան կար, էտ բանի անունը խղճմտանք է, չտե նա էր իմ էն ամենավատ թշնամիս, նա էր իմ գլխին էս ամեն վատությունը բերողը... Ախպեր, մեզ ո՞վ է ասել, թե գառը լինենք, որ գայլերը մեզ ուտեն»:

1875

———

ՓՈՒՇՈՒԽԻՆ ՍՎԱԴԸ

(Գրական լեզվով)

— Հեռո՞,— ասացի Փոռսուխ[1] Սվադին. վերջը-վերջը արժանի եղար այդ զաղրանից (արտասահման) ասած տեղերը տեսնելու— հա՞, հա՛յ մայրդ լամ. Փոռսուխ Սվադ, արտասահման էլ դնացիր, հա՞:

— Չա-պա չը-դը-նա-յի՞, կաշին էլ քերթեցի.— ասաց Սվադը հորթային աչքերը թարթելով և հորթի պես խնդալով, այնպես որ բերնից լորճունք թափվեց և ճպուռ աչքերը սեղմվեցին ու ճիշտ պատռված սամասայի[2] նմանեցին:

— Հայ մայրդ լամ, Փոռսուխով. հեռո՞ այդ արտասահման ասածդ ի՞նչ հող է. մեջը ապրող մարդիկ ի՞նչ տեսակ են, մերոնց նմանո՞վ են, թե՞ ուրիշ տեսակ բան են... Չա՛, մոռացա հարցնելու. քանի ամիս մնացիր այնտեղ:

— Արտասհման մնացի, Չանա[3], ընդամենը երկու ամիս. մեկ ամիսը վենման անցկացրի, մյուս մեկ ամիսն էլ չրջեցի Փարիզ, Ստրասբուրգ, Ուլմ և շատ այդպես տեղեր: (Փոքր ինչ լռելուց հետո): Չաձե[4]), ես ձեր խելքին լի՛նչ ասեմ, արտասահման որ ասում եք՝ մեկ էլ կարծում եք մի տարօրինակ բան է. այն բոլորը, ինչ որ տեսա, ասելամբ է վկա, մեր Ռոստովին

---

1 Փոռսուխ՝ նշանակում է մեծ փոր ունեցող:

2 Մի տեսակ կարկանդակ է:

3 Հոգիս:

4 Մի բացականչություն է՝ համապատասխան «ծո, տա»-ի:

չարժե: Այդ որ Սարասբուրգ են ասում, կարծո՞ւմ եք թե մի չքնաղ վայրկենական քաղաք է: Մեր Մեծ-Սալան տեսել ես, համարյա ազգիս մի բան է. փողոցները նեղ, տները սեղմված, քիչ է մնում միմյանց վրա ընկնեն, նեղ-վա՛ծք: Քաղաքի մի լավ ամենագլխավոր բանը նրա ուռուցան է, նրա էլ հնարքը չտեսած մնացինք. ներկայացո՞ւմ եք— լինչ հորս ցավն է, ժամը չորսին պիտի սկսեր, մենք էլ ժամանակ չունեինք մնալու. և այդպես էլ չտեսած մնացինք: Ուռնա որ ասում են, մի մեծ ժամացույց է. ասելուն նայելով՝ մեջը տեսակ-տեսակ ներկայացումներ են լինում: Երբեմն մեր փողոցներով չե՞ն ման ածում այն հայելիով արդանը, մեջը փայտե ասկնկները են խաղացնում. ահա այդ տեսակ բան է. չտեսնելուս համար էլ չզղջացի. փորս խո չէը կշտացնելու: Մի լավ (այսինքն Սարասբուրգի) մարդիկն էլ վատուժ, ճոռաժ, փորերը քաղցած...ի հարկե. կերածները ի՞նչ է որ...

— Այդ ի՞նչ է ասածդ, Աֆանասիյ Յակուլիչ, մի թե՞ ամբողջ աշխարհի դռված Եվրոպան ոչ մի լավ բան չունի, դուցե դո՞ւ չես տեսել:

— Ո՞վ քեզ ասաց. ամեն տեղ չքնեցի, ամեն բան տեսա. չքնված տեղ, չիմացած բանս չմնաց. բայց ինչ որ ասես՝ ամենը մեր տեղում կա. այնտեղ սկի այնպես բան չկա, որ կամ Նախիջևան[1] կամ Ռոստով չըլինի: Եվրոպայում ձիաքարշ կա:— Ռոստով էլ խո կա այդ բանը, այսօր—վաղը ասուածով Նախիջևան էլ կլինի: Այնտեղ բուլվար կա— մենք էլ ունենք խո, չունենալու բան չէ որ... Այնտեղ զագի լապտերներ կան— Ռոստով էլ խո կա. այնտեղ հազուստը և կտորները էժան է—Ռոստով էլ խո պատրաստ հագուստ ծախում են և սկի էլ Եվրոպայից թանդ չէ. Ռոստովի նովբա-բազարը դնացե՞լ ես. հրեաների փոքրիկ խանութները մտե՞լ ես. չալ ապրանքը այնտեղ էլ թանդ է, բայց Եվրոպա էլ էժան չէ: Հետո՞, էլ ի՞նչ մնաց Եվրոպայում զարմա-

[1] Նոր-Նախիջևանի մոտ հայկական մի մեծ գյուղ:

նալու բան... Սակայն այստեղի եղածները այնտեղ գերեզը լսատեղով չեն գանել: Այնտեղ ո՞վ կուա քեզ մեր եղուա, Թաժա, կաթի պես մատղաշ աչխարի մեր. ո՞վ կուա քեզ մեր բազարի կախուղ, տաք, էժան հացը. որտեղի՞ց պիտի գտնես մեր ասեղան[1], որ խաչած չոզարձակ, մեծ ափսեով բերում են, սեղանի վրա դնում. դու էլ, այստեղ նայիր, կարում ես վրայից մի մեծ կտոր, վրան մի լավ լիմոն քամում, ափսեդ կոզքին մանանեխ ու աղ դնում, առնում ես մեծ կտոր հացը, մեկդի քաչփում և սկսում քեզ համար ուտել.— ասաց Փոռսուխին Սմախը՝ բերնից ջրեր վազեցնելով— փամի՛լլյ[2], ի՞նչ է քո ասածդ, Եվրոպան չաս հեռու է Ռուսիայից հասնելու: Հաշվիր որ երկու ամիս մնացի Եվրոպա, բայց չեղավ մի օր փորս կուշտ հաց, կամ միս, կամ այդ տեսակ բան տեսնեի:

— Աֆանասիյ Յակուլիչ,— ասացի.— ասենք որ հացի և մսի կողմից մեր տեղը Եվրոպայից լավ է. բայց միթե՞ այդ՝ աչխարհի գոված տեղը ոչ մի լավ բան չունի: Երբ որ այդպես է, ապա ինչո՞ւ Ռուսաստանից մարդիկ ամեն տարի հազարներով են վազում այնտեղ: Իհարկե մի բան կա, որ ամենքը տեսնել են ուզում այդ Եվրոպա ասած տեղը:

— Կա, ինչո՞ւ չէ, ամեն բանն էլ կա, միայն թե փող չհնացես. Թատրոն էլ կա, մասկարադ էլ կա, ես ի՞նչ գիտեմ— բանկ էլ կա, պարտեզներ էլ կան, ամեն բան կա... է՛, հետո՞, այստեղ կամ Ռոստով չկա՞, ի՞նչ է... Համեցեք, որքա՞ն կուզես...

— Այնտեղի Թատրոնը դնացի՞ր, տեսա՞ր, ինչպե՞ս է...

— Ես այդ տեսակ բաներ չաս չեմ սիրում, բայց մի երկու—անգամ դնացի. դնալուս պատճառն էլ քեզ ասեմ: Ընկերս մի օր ինձ ասաց թե՝ «Հածե՛, Սմախ,—

---

[1] Ձկան մի տեսակը—Թառափ

[2] Ռուսական помилуй ոճն է, որ հայերեն կարելի է արտահայտել «է սեր ասածս» ոճով միայն:

ասում է— կուզե՞ս այսօր թատրոն գնանք, ասում է, նայենք, ասում է, այստեղի թատրոնը ի՞նչ տեսակ բան է, ասում է»:

— Չէ՛, չեմ ուզում,— ասացի— ես քիչ կսպասեմ, հետո կգնեմ— ասացի, որովհետև կուշտ տալեքին էի կերել (հետո ես քեզ մանարմանն կպատմեմ, թե ի՞նչ տեսակ բան է այդ տալեքին կոչվող կերակուրը)· քունը էլ չատ տանում էր: Ընկերս պնդեց—«զատարկ բան է քնելը, ասաց, հայդե, գնանք թատրոն, այնտեղից էլ հյուրանոց կգրթանք, մի լավ ընթրիք կուտեցնեմ քեզ», ասաց: Ընթրիքի անունը որ լսեցի, իսկույն քունը վախավ աչքիցս: Գնացինք: Ինչ մեղքս պահեմ, թատրոն որ մտանք և տեղերս նստեցինք թե չէ՝ ես խաղացողների վրա էլ չնայեցի, հանդիսականների վրա էլ, իմ խելքն ու միտքը ընկերոջս խոստացած ընթրիքի հետն էր· լուռ նստել եմ և ինքն իրենս միտք եմ անում, թե արդյոք ի՞նչ պիտի ուտենք, արդյոք մսեղենը չա՞տ կլինի, փորերս պիտի կշտացնե՞, թե՞ ոտեղոցներ, ջրալի, անհամ բաներ պիտի բերեն դիմացներս դնեն: Ասաված վկա, սուտ չէ ասածս, մեր տեղի այսքան փոքր տղան (ձեռքը դեռնոից կես արշին վեր է ցույց տալիս) նրանց մեծ մարդուց չատ է ուտում: «Помилуй братец ты мой» (ի սեր ասածս, եղբայր), նրանց կերածի չափ որ մեր դեղձանիկն ուտե, խաչը վկա, երկու օր չի քաշի կընկնի կատակի:— Դիմացս էրիվմարդ, կինմարդ (խոսքը դերասանների վրա է) իրանց մեջ խոսակցում են, կանչվռտում, երգեր ասում, խաղում· մյուս կողմից էլ նայողները ծափ են զարնում—սկի իմ փուլթս չէ, վրանները նայել անգամ չեմ ուզում, ես մտքովս մեր տեղի կերակուրների հետ եմ: Մեկ միտքս է գալիս մեծ սուպնիկով (ապուրի ասան) դաշըղ-բյորեկը[1], որ տաք-տաք ներս բերում՝ վրայից էլ ծոթրվնի հոտ է գալիս· մեծ քանակու-

[1] Մսե փոքրիկ կարկանդակով մի տեսակ սուպ է, հատուկ Նախիջևանին, վրան ծոթրվին և մեջը մածուն խառնած,

Թյամբը լեցնում ես խորունկ ափսեիդ մեջ և սկսում չծամած՝ լուկ-լուկ կուլ տալ, մեկ ափսեն վերջացրիր՝ հախուն չերեսիով երկրորդն ես լեցնում, քաշում ես առաջդ: Հեռո միաքա է գալիս մեր հարխան—վրան սոխառածը և մանրած չաքարը չա՞ս... Նրանցից էլ երկու անգամ ահագին կույտով դնում ես ափսեիդ մեջ, ուտում ես և չես կշտանում: Ապա մեր Թարմ սամսա՞ի (կարկանդակ), ապա չաո յուղով ճավարե փլա՞վը, ապա ձկնով կուպաթի՞ն (կարկանդակ), ապա խաշած հնդկահա՞վը մանանեխով՝ դրա՞ն ինչ կասես, դրա՞ն... այդ կերակուրները ոչ միայն Եվրոպայի մարդը, այլև նրա թագավորը չէ տեսել: Հեռո՞, այդ քաղցածնե՞րը մեջինի հետ կռիվ սկսի բաց անեն. վա՛յ նրանց դեմ-լեն, մեզը նրանց հում-հում կուտե, ասածի վիա՝ կուտե:

Այդ որ ասաց միաքա բան ընկավ.

— Հա՛,— ասացի,— խնդրեմ ասա, տեսա՞ր Եվրոպական զինվորները, ինչպե՞ս են:

— Ապա չտեսա՞, ամեն բան տեսա,— ասաց Սվադը,— ավտոբիացին՝ այն ոչինչ, բոլորը քաղցած, վռնքերը ներս քաշած, վատուժ-նիհար բաներ են, ճիշդ սուդակ ձկան նման. ֆրանսիացունը, է՛հ, մի չատ էլ գովելու բան չէ. գերմանացունը, ճիշտ է, նրանցից քիչ լավ է, բայց մեզը, դու ի՞նչ ես ասում, ճիշտ արծիվ է մեզը նրանց դիմաց: Մեզը հաճարի հաց է ուտում, մեզը կաշա է ուտում, վրայից էլ կվաս խմում. դու հաճար-հացի հետ կատակ մի անիլ. հաճարի հացն ու կաշան մարդուն առյուծի ուժ է տալիս: Եվրոպայի զինվորի կերածը ի՞նչ է որ—թղթի պես բարակ մի կտոր հաց, մեկ բուռ էլ մաղդանոս— եղավ գնաց. երբեմն էլ սիսեռի կալլաս են տալիս, հեռո՞, դրանով մարդու վո՞ր կկշտանա: Աստվածդ սիրես, եթե մարդ չուտե, վրայից էլ լավ չխմե, ուժը որտեղի՞ց կգա:

Ես քեզ ասում եմ, այդ Եվրոպայի մարդիկ մի օր մեզ պես կուշտ փորով հաց չեն ուտում: Նրանց ո՞վ է

ավել ուժը, մեր մեկ հատ ղինվորը նրանց տասնի դեմ կղնի։

— Այդ ի՞նչ է ասածներդ,— ասացի.— մարդ ես հիմարացնում. ի՞նչ ես ասում, ամբողջ ախարհը Եվրոպային զովում է, թե՛ նրա մարդկանց ուսումը, թե՛ նրանց լավ-լավ տեղերը, թե նրանց հարստությունը. իսկ քո ասածներին եթե նայես՝ ամբողջ Եվրոպայի մարդիկ մեր մուրացկանների պես են։

— Ապա ի՞նչ են, որ մուրացկան չեն. աստվածդ սիրես, մի մարդ, որ ամբողջ օրը քաղցած լինի՝ դու այդ մարդուց ի՞նչ կպահանջես։ Հա՛, ասում չէ, ճիշտ է, նրանց գործարանները, նրանց մեքենաները զավաճ են նրանց հնարած մոդան ամենքն էլ ընդունում են բայց այդ գործարանները, այդ մեքենաները, այդ մոդնի հագուստները կուտվի՞ն, ինչ է, նրանք մարդուս փորը կկշտացնե՞ն։ Ո՞վ է նրանց ավել մեր ասածո օրհնած տաք-տաք յուղոտ մատաղի միսը. դրա համը նրանք դիտե՞ն։ Նրանք մեր թարմ ասեորա-յի երեսը տեսե՞լ են, մանավանդ եթե վրան լավ տեսակի լիմոնը քամած, հետո էլ մանանեխ լինի։ Ո՞վ է նրանց ավել մեր ճմերուկը, որին եթե դանակի ծայրը կպցնես՝ ինքն իրան կճաքի։ Նրանք իրանց կյանքի մեջ տեսե՞լ են մեր՝ չորս մատիս հաստությամբ սերը... Թքեմ ես նրանց մեքենաների վրա, երբ ողջ օրը փորս պիտի քաղցած մնա։ Չէ՛, ես ինչ ասել եմ, նորից կասեմ—Ռուսիայի պես հող ոչ մի աշխարհի մեջ չկա. մեր թագավորն էլ Եվրոպայի թագավորներից ուժեղ է, մեր զորքերն էլ նրանց զորքից ուժով, մեր հողն էլ նրանց հողից պաղարեր է։ Պաշարի, այսինքն հացի, ասի, ճկան համար եթե ասես՝ մեր Ռուսիան Եվրոպայից վեր է ու վեր։ Աստվածդ սիրես, մեր գյուղացին եթե գործել կամենա—հողը նրա առաջ չա՜ս—վարիր, ցանիր որքան ուզես նորե։ Եվրոպայի հողը ինչ հորա ցանի է. նրանց գյուղացին 10—12 արշին հող ունի—այդ է ահա նրա ցորեն ցանելու էլ, խոտ քաղելու էլ, իրան ապրելու էլ, տավար արածացնելու էլ՝ տեղը.

բացի դրանից՝ ուրիշ ոչինչ չունի։ Ասա՛ խնդրեմ, մարդ ինչպե՞ս պիտի կարողանա դրանով թե՛ ինքը կուշտ լինել, թե՛ ընտանիքը կերակրել, թե՛ թոռավորի տուրքը տալ։ ուրեմն տարին 12 ամիս՝ ոդսրմելին քաղցած վորով պիտի մնա է՛լի։ Չէ դո՞ւ ինչ ես ասում Եվրոպան չատ հետաս է մեր Ռուսիայի հետ կռվելուց։ քաղցած կատաղեցնենք։ նրանց դեմ ի՞նչ հարկավո՞ր է զորքով գնալ։ հաց չտվիր՝ բոլորն էլ մեկ մեկ կատակլին։ Դու Ռուսիայի հետ կատակ մի անիլ։

— Ամաղ ապա, ես նկատում եմ, որ ինչ բանի վրա էլ հարցնում եմ, դու միշտ խոսքը կերակուրի վրա ես դարձնում։ Լրը թե Եվրոպան ուտելու բան չունի և խելքը–միտքը՝ կերակուրի վրա է։ Եվրոպացին քո սեղանն նայած, սմրդղջ օրը երե քաղցած է անկացնում, ապա ինչպե՞ս կարողացել են նրանք այսքան գիտություն, մեքենաներ, գործարաններ, ես ի՞նչ գիտեմ, այսքան օդապարիկներ, էլեկտրական լուսավորություն հնարել։ ասում՝ սիրես, քաղցած մարդը կարո՞ղ է այդքան խմաստություն հասնել։

— Ո՞վ է ձեզ ասել Եվրոպացու այդքան գիտությամ հասնելը։ ես ամբողջ Եվրոպան չըկեցի, երբեք մեկ այնպես զարմանալու մարդի չպատահեցի, բոլորը հասարակ մարդիկ էին։ Մեր տեղն էլ գալիս են նրանցից. չե՞ս տեսել սիկ, որ գալիս են և ծախում մեզ մըկան թակարդներ և երկաթե թելերով չինած ամաններըը— ճիշտ դրանց էլ, իրանց տեղում, Եվրոպայում տեսա։

— Ուրիշ լավ մարդիկ, լավ բաներ չտեսա՞ր։

— Կա՞ր որ տեսնեի...

— Ապա ինչո՞ւ գնացող–տեսնողներն այնքան գովում են։

— Ո՞վ է այդ գովողը, ասա տեսնեմ անուններըը։

— Ես ի՞նչ գիտեմ. գնացող–տեսնողներ չա՛տ. ո՞ր մեկը ասեմ. ահա՛ Ղազարոսը, ահա՛ Մինասը, ահա՛ Գևորգ ազան...

— Թքել եմ ես նրանց վրա. նրանք իրանց կյան–

քոսմ չնարհքավ բան տեսե՞լ են որ. չտեսը ճիշտ այդպես կլինի. ինչ նոր բան տեսնե՝ իսկույն կզարմանա: Մեր Նախիջևանը, մեր Ռոստովը, մեր Օդեսան տեսնողը Եվրոպայում զարմանալու բան կտեսնե՞ որ... Աստ խնդրեմ, ի՞նչ զարմանալու բան են գտել Եվրոպայում— նրանց քաղցած ժողովուրդը՞, նրանց նեղ փողոցները՞, նրանց թխած կրակ հո՞ցը, մի՞սը, հնդկահա՞վը:

Այլևս չկարողացա համբերել, քիչ մնաց սրաքեի:

— Հա՛ձե, Սվագ,—ասացի—ես քեզ մի բան ասե՞մ. դու այդ Եվրոպա գնալու փոխարեն եթե Ռոստովի աբժորնիյ ռյադը[1] մտնեիր, ավելի շահ կտեսնեիր և բավական կլիներ: Ջե՞զ էր մնացել Եվրոպայի պես լուսավորյալ աշխարհը իր քաղաքավարի ժողովրդովը տեսնելու. դու նրանից բան կհասկանա՞ս որ...

— Է՛, մեկ էլ ասա, տեսնե՞մ.— ասաց բարկացած Փոստալիոնը— քեզ ո՞վ ասաց որ Եվրոպայի ժողովուրդը քաղաքավարի է իրը թե. նրանից անամոթ, նրանից էլ երեսը պատռած, նրանից էլ լիրբ, մարդու պատիվ չիմացող ժողովուրդ կա՞ որ. մեր հասարակ գյուղացին նրանց համեմատությամբ— աղնվական է... ասավածդ սիրես՝ լսիր. մեկ օր, ինձ համար էլել գնում եմ: Այս բանը փաթիլի մեջ եղավ: Զորս կողմս երեխաները հավաքվեցին, այնքան երեխա, որ եթե սուտ չասեմ, հարյուր հիսուն հոգի կլինեին. երեխաներն էլ խոշոր չդիտենաս. մանր (ձեռքը գետնին մոտեցրեց) այնքան փոքրիկներ, եևիցս վազում են, փեչերիցս քաշոտում ու «էլեֆան-էլեֆան» կանչում: «Էլեֆանը» նրանց լեզվավ փիղ ասել է: Իրը թե հասկացնել են ուզում, որ ես փիղ եմ: Հեռո՛, դու ու քո հոգին, ես ինչո՞վ եմ փղի նմանում. մեկ լավ նայիր աչքերիս— փղի աչքերի նման ե՞ն, վզիս նայիր—փղի վի՞զ է. կռնակիս նայիր—փղի կռնա՞կ է, քայլվածքիս նայիր— փղի քայլվա՞ծք է: Հեռո՛, ա՞յդ է դրանց կրթությունը, լուսավորությունը, մարդավարությունը: Մեր ամենից հեռին

[1] Որկրամոլների շուկան:

Ջրկիը—սայլասպանի տղան այդպես չէ վարվել օրինավոր— պատվավոր մարդու հետ: Դու չմոռանաս, որ այդ բանը գլխիս բերին Փարիզի մեջաեղը, Բուլվար-Իտալիեն տասած վողոցում: Հը՞, ինչպե՞ս եք, քաղաքավարի մարդի՞կ են ձեզ գտած եվրոպացի ժողովուրդը (Ջիչ լռելուց հետո): Ջիչ առաջ դու ծաղրելով՝ Ռոստովի աբժորնի ոյադի անունը տվիր. դու եղել ե՞ այնտեղ, այնտեղի կերակուրների համը տեսե՞լ ես... Ինչ անենք որ անունը վատ է. դու մեկ նրա կերակուրների համը նայիր և հետո վրան խնդա: Տաշտի չափ մեծ պնակով մեծ քանակությամբ առաջդ են դնում բորշչը, մեջը գլխիս մեծությունով եղոտ միս, հետո էլ չորս փունտի չափ հաճարի հաց. լավ բորշչի թթու հոտը ու տաք չոլին քթիդ որ կպչում են— մարդուս ախորժակը կատաղած չոն պես վրդովում է: Առնում ես հաճարի հացը, բրդում ես պնակի մեջ, մի լավ խառնում և ոչ թե համաբ ուտում: Թե՛ փորդ է լցվում, թե՛ երեսդ քրտինք ըռնում և թե փորիդ կշտությունից ամբողջ օրը զկտում ես: Գինն էլ ինչ, որ է— որևիցե 5—10 կոպեկ: Դոնեն կգիտնաս որ փորիդ մեջ կեցակուրկա և ոչ թե եվրոպայի տեսակ մաղդանոսներ, սալաթի տերևներ և թաղանթի հատուկտությամբ հաց ու միս: (Ջիչ լռելուց հետո): Դու ի՞նչ ես ասում, մեր Ռուսիայի ուժին ույժ կհասնի՞: Անգլիացին չէ հետն էլ դերմանացի թող գա, ավստրիացին էլ, վենգերն էլ թող գա, ռաճիկն էլ թող գա,— ամենքին կտոր-կտոր կանե և մի կողմը կնետե, որովհետև ռուս գինվորը հաճարի հաց ու կաշա է ուտում, վրան էլ կվաս խըմում. դու հաճարի հաց ու կաշայի ույժը գիտե՞ս, մարդուս իսկական ստյուծ է դարձնում:

— Աստ խնդրեմ,— ասացի.— դու այժմ Ռոստովի աբժորնիյ ոյադը դավեցիը. դրա պես տեղ չկա՞ ինչ է Եվրոպայում:

— Կա, ինչո՞ւ չէ. բայց ափսոս որ ես այդ չատ ուշ իմացա, Փարիզից մեկնելուս ժամանակ: Բայց այնտեղի աբժորնին մերինի պես չէ, ուրիշ տեսակ է: Մեջ

տեղինը ինչ որ լինի՝ պարզ է, կերակուրն էլ չժան–մին է, կաղամբ է, ճակնդեղ է, սոխ է, գետնախնձոր է. բայց այնտեղինը ուրիշ տեսակ է, համն էլ ավելի նուրբ: Ես քեզ պատմեմ թե ինչպես են պատրաստում այնտեղի կերակուրը, որ նրանց լեզվով ապլեֆին է կոչվում: Ապլեֆին ասածդ այսպես է լինում: Հարուստ տների և թանդանոց հյուրանոցների խոհարարները հյուրերի ամանից ինչ որ ավելանա, բոլոր լեցնում են մի մեծ տակառի մեջ և պահում են իրանց հաճախորդների համար. ո՛րը գալիս է խոզերի համար է առնում, ո՛րը իր կովի, ո՛րը իր չան համար. բազարի կերակուր ծախողներն էլ՝ իրանց աբժռրնիյ պանդոկի համար–դուլլերով առնում են և մեծ ամաններով իրանց հաճախորդների դիմացը դնում: Ապլեֆինը թե գդալով պիտի ուտես, թե պատառաքաղով և թե մատներով: Մեկ կոխում ես պատառաքաղդ՝ պանիրի կտոր է ելնում, մեկ էլ կոխում ես՝ թռչունի ոսկոր է ելնում, էլի կոխում ես պատառաքաղդ՝ ձկան գլուխ կամ պոչ է ելնում, երբեմն էլ սիգարի կտոր է դուրս գալիս: Գրգալով կերածդ ժամանակ երբեմն բերանդ մանանեխի համ է առնում, երբեմն պաղպաղակի. էլի գդալդ կոխում ես ամանի մեջ, առնում բերանդ՝ քացախի և պասուց յուղի համ առնում: Մարդուս քեֆն է գալիս. թե ուտում ես թե՛ ծիծաղում: Ապլեֆին ուտելու ժամանակ այնքան լիմոնի և փորթուգալի կճեպ եմ կերել, որ... Նաղեր ծախելու և դզվելու իրավունք չունիս, որովհետև տվածդ ի՞նչ է որ — ամբողջը մեկ սու, որ մեր փողով 5 կոպեկ է: Համ ժամն, համ կուշտ, համ էլ տեսակ–տեսակ:

— Իսկ ընկերներդ ասում են, թե քեզ և թե իրենց մասին, որ ամեն անգամ 5 ֆրանկ էիք տալիս կերակուրի համար. հինգ ֆրանկը մեր փողով մոտ երեք ռուբլի է անում. հեսո՞, այդ քի՞չ փող է:

— Սուտ չէ, ճիշտ է, ամեն օր 5–ական ֆրանկ էինք տալիս ամեն ճաշի համար, բայց տասնականն էլ

ավաճնեբա կա. բայց ինչ օգուտ: Եվրոպական կեբա-
կուբները այնպես դատարկ բաներ են, որ ինչ նրանք
ճաչ են ասում— մեր տեղի մարդը մի պղտուց քմախո-
ափ պես կարող է քմի ծակը կոխել: Եվրոպայի կեբա-
կուբի մեջը ուտելու բան կա՞ որ: Մի ափսե ապուր են
բերում դնում առաջը (ձերի-մերի բան) «այս կոնսո-
մե է», ասում են. հետո էլ ճկուքիս ծայրի չափ կար-
կանդակ՝ «այս էլ գաթա է», ասում են: Հետո բերում
են երկու հատ փոքրիկ ճուկ՝ ասեղի բարակությամբ—
«այս էլ նոր տապակած սարդին է», ասում են: Հետո
բերում են ճնճղուկի չափ պաշտային թռչուն տապա-
կած»—«այս էլ բեքասն է», ասում են: Հետո բերում են
մի գդալ չաքարոտ խլինք—«այս էլ ժելեյ է», ասում են:
Ամենից վերջը բերում են այդ «պապաքում-մամաքում»
տապակած խոտը, «այս էլ սալաթ է», ասում են: Այդ ե-
զդալ ցերեկվա ճաշը, որի համար առնում են 5—10 փը-
բանկը: Էհ՛, մոռացա ասելու, հացից հետո էլ բերում
են մատանոցի մեծությամբ գավաթով, առանց կաթի
սուրճ: Հետո՞, Ռուսլանցի մարդը ինչպե՞ս կարող է
կշտանալ այդ ղեղձանիկի ճաշով: Կամա—ակամա դնում
էլ աւելքին ծախած ճաշարանը, որ դռնե վորպես ճի-
ճուն հանդստացնեմ: Էհ՛, սուտ չէ, ճիշտ է, սեղանի
վրան դիմացդ դնում են մեկ—մեկ չիշ պինդ, բայց չիշը
մեր չիշերի չափ չպերճեցնա— այն հոփմանիա կաթիլ-
ների չիշը էհ՞, ճիշտ նրա մեծությունով մի չիշ են
տալիս քեզ. մեջի եղածը առանձնդրդ թրջելու բավա-
կան չէ, ինչ մնաց խմելու. բայց անունը մեծ է. «գի-
նիով ճաչ է», ասում են եղել: Դու մի ասիլ՝ որ եթե
նրա վոխարեն մի մեծ ամանով հասարակ կվաս որ
ուան՝ ավելի բավական պիտի լինեին: Դռնե մարդուս թե
ծարավը կկորչ, թե փորը կկեցնի: Չէ՛, դու ինչ ես ա-
սում. դնա ամբողջ աշխարհը քայլիր, մեր Ռուսլանչի
պես տերություն դռնել չես կարող. մարդուս ամենից
պետքական բանը թե առատ և թե էժան: Այդ Եվրո-
պայի քաղցածները՞ կռիվ պիտի մղեն մեր ռուսի հե-
ռը. վա՛յ նրանց գլխին. մեկ շաբաթ չէ անցնիլ, ամեն-

քը ձմեռվա ճանճերի պես կսատկեն կոչնչանան։ Մեր ղինվորը, ինձ նայիր, լավ հաճարի հացը կուշտ, վրայից էլ կաշան, նրա վրայից էլ լավ կխմե թեթու կվասը, հուռա կանչելով վրա կտա— մի րոպեի, մի ժամվա մեջ բոլորին թքի կառնե։ Դու Ռուսիայի հետ կատակ մի անիլ...

— Այն չէ՝ բայց,— ասացի— ինչպե՞ս եղավ որ դու Եվրոպա գնացիր. կարծեմ դու այնտեղ գործ չունեիր չէ՞. ապրանք տարա՞ր, թե ապրանք բերիր. թե՞ որևէ հանձնարարութիւն ունեիր։

— Ապրանք էլ չտարա, ապրանք էլ չբերի, հանձնարարութիւն էլ չունեի։ Իմ Եվրոպա երթալս հեքիաթի պես մի բան էր. բարեկամիս մեկը մի ավրված ժամացույց ունեը և որովհետև մեր կողմերը նրան նորոգող վարպետ չէր գտնվում, բարեկամիս խնդրեց փչեց տանել Եվրոպա։ Ժամացույցի կոթը չկա՞— այդ բանը ըշտե փչացել էր. մեր տեղի ժամագործնեերը չատ վրան կտորներ դրին. այնպես որ կոթը հատացել էր ու նեռի անիվներին նեղութիւն էր տալիս. ժամացույցը Եվրոպա տարինք, այնտեղ մի լավ վարպետ գտանք, որ դժուարութիւմբ ժամացույցի հատատացած կոթը բարակցրեց, ձեվի բերեց։

— Բանը-գործդ թողած ինչո՞ւ ելար գնացիր. դու այտեղ պաշտոն ունեիր, չէ՞։

— Եվրոպա որ գնայի, պաշտոնս արդեն վերջացած էր. ամիսը 100 րուբլի ռոճիկ ունեի, գործս էլ չատ թեթև բան էր. քաղաքային վարչութիւնը ինձ հրաման էր արել ծովի եզերքը կանգնելու և ջրի միջով անցնող ձկները համրելու. հեչ սրհեսա։ Բայց, թըշնամիները հրապարակ եկան և ժողովրդին հավատացրին, որ դրանից քաղաքը մի կսկիվի օդուտ չունի. ի՞նչ պետք է դուր տեղ դրամ վատնելը։

— Ծովի ձուկը համրելուց առաջ ի՞նչ ծառայութիւն կամ արհեստ ունեիր։— հարցրի նրան։

— Նրանից առաջ, հոգիս, այդ անկյունը չկա՞— բամբասարանից քիչ վեր. ըշտե, այնտեղ առավոտյա-

նից մինչև երեկոյան զանգերը՝ կանգնում էի և անցող-դարձողների վրա կատաղած չէն պես հայհոյում:

— Այդ ի՞նչ տարօրինակ արհեստ է... ամո՞թ չէ օրինավոր մարդուն՝ չէն պարտավորություն վրան առնելը, ասացի զարմացած և նեղացած:

— Ջի՛, հոգիս, այդպես մի դատի: Ինչպես երևում է, դու կարծես մեր քաղաքը երբեք չես ճանաչում: Այդքան հասակ առած՝ դեռ չգիտե՞ս, որ մեր տեղում հաջելը անօգուտ և սուր արհեստ չէ: Հաջելով չէ՞ որ այսքան մարդիկ՝ ո՛րը ձայնավոր եղավ, ո՛րը անդամ, ո՛րը հոգաբարձու, ո՛րը երեսփոխան, որը պատվի հասավ, ո՛րը չատ սահկի տեր եղավ, որն էլ արդյունավոր պաշտոն ձեռք բերեց. բոլորը հաջելուց էր: Բայց հաջելու մեջ էլ ընորհք կա: Հաջելուց չէ՞ որ մեր սահիչ Օվանեսը թե՛ իրեն մեջքը տաքացրեց, թե՛ իրեն օգտակար բարեկամներինը. կարծում ես թե իր արհեստի ընորհքն է՞—չատ ես սխալվում: Մի՛ հաջիլ, տանդ փակված նստիր և տես դրանից ի՞նչ կդուրանա: Կկորչես բոլորովին: Լսե՞լ ես մի առած կա որ ասում է. «իրեն տեղ ծանր կեցած քարին տակեն ջուր չի վազիլ»· այդպես էլ մեր բանն է. եթե չհաջես, քեզ ոչ ոք մարդու կարգը չի դնիլ: Դու ինչ ես ասում, հաջելու մեջ չատ բան կա: Մեկ չորս քովդ նայիր· այս մեր խոշոր-խոշոր աղաները բոլորն էլ իրենց փառքին և պատվին հասել են կամ հաջելով և կամ իրենց մոտիկ մարդոցը հաջեցնելուց: Այսօր-վաղը, դիտես արդեն, քաղաքիս մեջ ձայնավորներ, անդամներ քաղաքապետ լուս և քարտուղար պիտի ընտրվին· դու մեկ նայիր թե որքան հաջող չներ հա՛րբ-հա՛րբ հրապարակ պիտի ելնեն: Դու լավ հաջելը կատա՞կ ես համարում:

— Լավ, համաձայն եմ, որ մարդիկ հաջելով կամ հաջել տալով՝ տեսակ-տեսակ օգուտներ են վիճառում և դտնում. դու ի՞նչ օգուտ ունիս դրանից:

— Ե՞ս,— ասաց քթի տակից խնդալով և աչքերը փոքրացնելով՝ Փոռսուխին Ամագը:

— Հա, դու,— ասի·

— Ես ի՞նչ օգուտ ունիմ.— ասաց նա նորեն.—Իմ օգուտն էլ եթե ավել չէ ուրիշներից, պակաս էլ չէ: Ամբ դու մի լավ միտք արա. ես ինչ չգանվելիք մարդ եմ, ո՞ր աղայի որդին եմ, ո՞ր համալսարանն եմ ավարտել, ծոցս մի թե՞ լիքն է փողով, թե գեղեցկութիւնն ու երիտասարդութիւնը երեսից կաթում են... Բայց այսօրվա օրս, ինձ նայիր, մեր բամբասարանի[1] ամենառաջին անպատն եմ, քաղաքային վարչութեան մեջ՝ ձայնավոր և դպրոցի մեջ հոգաբարձու: Էլ ի՞նչ կուզեիր: Այս բոլորը գիտե՞ս ինչու ձեռքս ընկավ. նըրա համար, որ առավոտյանից մինչև երեկո, անկյունը կանգնած, չորս կողմս էլ մի կարգ տխմարներ ժողոված, աչ ու ձախ հայհոյում եմ: Հա—պա, որդիս, դու ի՞նչ գիտեիր: Վարպետութեամբ հայհոյելու մեջ չատ բան կա: Դու նո՛րից կրկնիր, թե հայհոյելը գեշ բան է թե հաջելը մեղք է և ամոթ, հայհոյելը չեներին կվայելի, չգիտեմ ինչ՝ չգիտես ինչ: Ջի՛, հոգիս, չես հայհոյի՝ չես ուտիլ: Ինձ նման մեծ փորով և գայլի ախորժակով մարդուն կարելի՞ է քաղցած օրեր անցկացնել:

— Աւենք որ հայհոյուց ձայնավոր և անպատ եղար. հետո, ի՞նչ չահ դրանից. կամ թե ուրիշը քեզնից ի՞նչ չահ պիտի ունենա:

— Ձայնավոր լինելս չգիտեմ ուրիշներին օգուտ ունի՞, թե ոչ, բայց ինձ մեծ օգուտ է:

— Աստ տեսնե՞նք. ի՞նչ օգուտ ունիս:

— Օ՛, օգուտը չատ մեծ է: Այդ մեր քաղաքային վարչութեան մեջ այնպես չէ՞ որ ինձնից բացի յոթանասուն մեկ ձայնավոր կա. այդ ձայնավորներից յուրաքանչյուրը անուն ունի՞ թե ոչ. անուն ունեցողը տո՞ղն էլ ունի, թե ոչ. տուն ունեցողը տարին մեկ դոնի մի անպատ ճաչ կատ՞, թե ոչ: Եղավ որ այդպես տարին յոթանասուն մեկ ցերեկվա ճաշս ապահովված է և տաները մեկ ծախսելու փողը գրպանումս կմնա: Ո՛վ մարդ,

[1] Բամբասարան՝ ակնարկում է Բարեգործ. ընկերության խորհրդարանը:

ի՞նչ է քո ասածդ. ասված մեր սուրբ հայրապետների հոգիները արքայությունն տանե, որ նրանք այդպես խելոք օրենք են մտցրել մեր մեջ: Ամեն երեկո օրացույցը բաց կանեմ, կնայեմ թե վաղը տոն կա՞, թե ոչ: Եթե մեր ծանոթների անունների տոները եղան, մեջերլցը երեք հոգսը ընկրտամ եմ. բայց այնպիսինները, որոնք սովորություն ունին լավ սեղան սարքելու և մյուս օրը, ժամը 11-ին—12-ին նշանակած աղանների (օրինակ Ավոր, Մարկոս, Կարապետ) տունն եմ գնում. ներս մտած-չմտած, գաղտագողի աչքի կանցնեմ սեղանի վրա եղածները. եթե սեղանի մեջտեղը տեսա մեծ ամանով խաշած ասետրան և քիչ էլ հետու տեսակ-տեսակ գինիներով չերքի բատարեյը, այն է որ այնտեղ կմոտեցվեմ հաստատվելու, երբ թե չուզենալով՝ կմոտենամ թանգանոց կոնյակին, մեկ-երկու կխմեմ տոնավորի կենացը, հետո կառնեմ մի ափսե, պատառաքաղ, դանակ. ափսեի մեջ առաջ կքամեմ լիմոնի ջուրը, քիչ էլ մանանեխ ու աղ կդնեմ, կմոտենամ ասետրային, դանակով չորս մատիս հաստությամբ կկտրեմ վրայից, կքաշվեմ մի առանձին լուսամուտի առջև՝ մեջքս դեպի հյուրերը արած՝ կսկսեմ իմ բանը: Եթե ուսածս կտորը փունտովկես կամ 2 փունտ եղավ, այն է որ այն օրվա հացիս փողր գրպանումս մնաց: Այդ որ վերջացրի, կերթամ կմոտենամ չիչերին, որովհետև ձկան վրա լավ գինին հարմարում է. նորից կմոտենամ տոնավորին, ինչ որ ասես օրհնություն կանեմ, որ եկող տարի էլ ասված ողջ-առողջ այդ օրին հասցնեն երկուսիս էլ և կխմեմ գինին: Դրանից հետո՝ երրորդն կմոտենամ մանր զակուսկաներին. այստեղ պանիրի փոքրիկ կտոր կդնեմ բերանս, այնտեղ գդալի ծայրով մի քիչ կառնեմ խավյարից (ձկնկիթ), էլի այն կտորի՝ բողկը կթաթախեմ ադի մեջ և բերանս կդնեմ—իսկ թե մանր բաներ ուտող եմ, որ մատղիկ չնկատեն թե տանչնորհավորության անունով՝ փորս լեցնող եմ: Այդ ժամը կերակուրի հոգը հոգացի, դրամը մնաց գրպանս: Ես որ այդպես, տարվա մեջ գոնե հարյուր տեղ մրցնեմ-ելնեմ, ահա քեզ ճարտավոր լինելուս օդուտը. էլ

ի՞նչ ես ուզում: Տարվա մեջ հարյուր թանգանոց և կուշտ զակուսկա իր կոնյակով և գինիով—դա անգո՞ստ բան է: Այս մեկ: Այժմ դու ինձ ասա՝ տարին 2—3 անգամ թագավորական տոն, աչքալուսա, պսակ չի՞ լինել: Է՛յ— ըչտե, մաղթանքից հետո ճայնավորի առնությամբ առած-փառած կերթաս քաղաքագլխի տունը (ի հարկե նա էլ թագավորի պատվի համար սեղան սարքած կլինի), այնտեղից էլ խո ես չե՞ս գառնալ տուն դատարկ փորով: Այս էլ քեզ երկու: Տարին 3—4 անգամ դրսից մի իշխանավոր կամ մեծավոր չի՞ գալ քաղաքը. մեր հարուստ աղաներից մեկն ու մեկը նրան հա՞ց չի՞ տալ. դու էլ, ինձ լսիր, ճայնավոր անունով կպատահես այդ թանգանոց ճաշին: Այս էլ քեզ երեք: Բաղաքային վարչության ժողովի ժամանակ աղաները կսկսեն մի հասարակ բանի վրա վիճել, կասե-կառնեն և վերջ ու վերջ՝ կխռովեն. դու մեջերը կմտնես, լավ մարդ կլինես, կհաչատացնես. մեջտեղը երկու կողմից էլ մադարիչ լինում է— կեր, խում, երաժշտություն. դու էլ մեջերն ես՝ ճայնավոր անունով. աստվածդ սիրես քեֆ է ու... մեռնել պե՞տք է որ: Այժմ հասկացա՞ր, թե ինչո՞ւ ես ամեն չանք գործ եմ դնում, որ ճայնավոր ընտրվեմ: Դու ասում ես թե ինչո՞ւ անկյունը կանգնած՝ հայհոյում եմ: Հաճե՛, տխմար, եթե չհայհոյե՝ ո՞վ ինձ ճայնավոր պիտի ընտրեր: Հապա այն մուսացա՞ր, որ բամբասարանի անդամ լինելուցս էլ բավական չահ կա փորիս. որ տարին մի անգամ ժողովըրդով պարահովի մեջը քեֆ ենք անում՝ այդ ոչինչ. դու այդ ասա, որ մեր 5—6 հարյուր անդամներից տարին 3—4-ը չե՞ն մեռնիլ: Մեռելի գանդը լսում եմ թե չէ՝ մի քանի մարդ ժողովում եմ գլխիս, չիտակ գնում մեռելի տունը, սգավորներին խրատ տվող եմ լինում, ըչտե հանդուցյալին պատիվ տվող եմ լինում, կտակը կարդացող լինում, է՛յ ըչտե, բան չունես, բամբասարանի կողմից, տուա-դարը, բանի մեջ եմ լինում: Տնեցիք տեսնում են, որ հանդուցյալի չատ սրտակից բարեկամն եմ եղել, և հոգու-հացի, այդողքի, քառա-

սունքի, տարեգլխի հացերին կանչում են ինձ: Այդ էլ թե՛ պատիվ է և թե՛ փոր կշտացնելու թանգանոց դեպք: Այժմ հասկացա՞ր հաջելու զորությունը: Բայց հաջել կա, հաջել էլ կա: Մի քանիսը այնպես են հաջում, որ ամբողջ քաղաքը իրենց թշնամի են դարձնում. այդ տեսակ հաջելը օգտակար չէ: Հաջելն էլ իր տեղը, հնարքներն ունի: Հաջելու ժամանակ պիտի ջանաս ցույց տալու, որ իբր թե ժողովրդյան օգտի համար ես հաջում: Այս մեկ: Մեկ էլ այնպես պիտի հաջես, որ ոչ հարուստների սիրտը ցավացնես, ոչ էլ դատարկ գրպանով մարդկանց կողմը անցած լինես...

Սիբելի նախիջևանցի, մի՞թե դու դեռ չես հասկացել, որ ինչ բանի ձեռնարկես՝ բոլորը թեթատ և անշնորհք է լինում: Ինչո՞ւ ես զարմանում, որ քո քաղաքը տարեց տարի առաջ գնալու փոխարեն՝ դեպի ետ է դարնում: Դու ինչո՞ւ ես զարմանում, որ հերվան դյուղից վատ Ռոստովը այսօրվան օրս Նախիջևանից տասն անգամ մեծ է և նրա մեջը ապրողները նախիջևանցիներից հարյուր անգամ ավելի հարուստ են: Դու ինչո՞ւ ես զարմանում, որ Նախիջևանը աճելու, ծաղկելու փոխարեն՝ քանի գնում է՝ բորբոսնում է, թոռոմում է և փչանում քո ձեռքի մեջ: Ասա մեկ տեսնեմ, տարին-տասներկու ամիս դու որի՞ խելքով ես կառավարում— Փոռսուխ Ավագների: Ովքե՞ր են քո քաղաքի կառավարողները— Փոռսուխ Ավագները. ովքե՞ր են բանկիր չահադործողները—Փոռսուխ Ավագներ. ովքե՞ր են քաղաքային վարչության ճայնավորները— Փոռսուխ Ավագներ. ովքե՞ր են քո դպրոցներիդ հոգաբարձուները— Փոռսուխ Ավագներ:

Հետո՞, ի՞նչ զարմանալու բան կա, որ ամբողջ քաղաքդ դարձել է մի 5—6 հազար Փոռսուխ Ավագներով լցված աղբանոց...

———

ՍԱՐՍՈՒՐ

ՆՎԵՐ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Գաղթականները խումբը, թշնամիեն փախչելով, մեկ ամայի անապատ տեղ հաստատեց իր բնակութիւնը: Ժամանակը գարնանային էր. անձրևները, որ այդ եղանակին չուտ-չուտ կուգային, գաղթականներուն անուշադիր գարձուցին այն հանդամանքին, որ նրանց բնակված տեղերու մոտերը ոչ գետ կար, ոչ աղբյուր: Գաղթականներեն մեկը, որ ավելի խորագետ և հեռատես էր, առաջինը ուշ գարձուց այդ ձախողակ բանին, և յուր բռնած տեղի վերա սկսավ չուտ-չուտ ջրհոր փորելու, նրա միամիտ ընկերները, որովհետև ազատ ժամանակ ունեին, սրան մոտը կօգնեին նրան: Հազիվ թե բահը քանի մի անգամ գետնին զարկին, ո՛վ հրաշք, խրցված աղբյուրի ակը բացվեցավ և մեջեն սկսավ ջուրը առատորեն բխելու: Տերը— նրա անունը Հազար էր— չատ ուրախացավ, նրա հետ միասին ուրախ էին նրա միամիտ ընկերները Աստուծո այս անակնկալ ողորմութիյանը, որ չնորհել էր նա իրենց դրացիին. նրանք վստահ էին, որ երկնքի անձրևը տարին-տասներկու ամիս նոցանին անպակաս պիտի լինի, բայց եթե երբեմն ջրի պակասութիյուն ևս լիներ, այնուամենայնիվ նրանք երկյուղ ունենալու չէին, վասնզի նրանց դրացին ուներ ազատ աղբյուր, որի ջրեն անչուշտ նա մասն պիտի հաներ կարոտյալներուն, նա մանավանդ, որ— նրանք միտք կանեին— այդքան ջուր նա երբեք սպառեցնել կարողանալու չէ և նրա պետքեն միշտ պիտի ավելանար: Թեև նրանց բնական խելքը և առողջ

դատաստանը այդպես կարճել կուտար նրանց, բայց Հազար կարճելը բոլորովին տարբեր էր նրանցից: Իսկ աղբյուրի ջուրը միշտ ու միշտ կվազեր կերթար:

Դաշտերը վարվեցան և ցանվեցան, անձրևները չարունակ գալով և արեգակն ալ իր ջերմությունը տարածելով դաշտերու երեսին՝ սերմերը ծլեցան ու բույսերը կանանչցան ու մի քանի ժամանակեն ցորեկի հասկերը մեկ թիզ բարձրացան գետնեն: Եգնտակը փոխվեցավ, առավոտեն մինչև երեկո անընդհատ պարզ էր երկինքը: Արևը ամեն կատաղացներ չերմությունը. արևելքեն չոր քամիները փչելով՝ սկսան դեղնացնել ցորենի բույսը: Աղբյուրի տերը անհոգ էր. նա ջուրը տարավ և ջրեց չուր արտը և նրա ցորենը ապահով մնաց երաշտեն: Մյուս դաղթականները՝ տեսնելով ջրի այդպիսի բարեբար դարմանությունը, նույնպես կուզեին ջրել իրենց արտերը, բայց Հազան նրանց առջև պայման դրեց, ասելով. «Եթե ինձ կօգնեք ջրադացը չինելու, այն ժամանակ ոչ միայն կուտամ քեզ ջուր, այլ և չինելու ջրադացս ամառվա մեջ ձեր ցորենը կաղա և ալյուր կանեմ:

Գաղթականները տեսան որ իրավ էր նրա ասածը, որ ջրադացը պետք է, ուստի ուրախ-ուրախ սկսան չինել ջրադացք և փոխարեն նրանց աշխատանքին Հազան թույլ տվեց նրանց արտերը ջրելու: Ամառվա մեջն էր. հասան ցորենները: Երբ գաղթականները հասկերը հնձեցին, կալ արին կամնեցին ու ցորեն առացան, եկան Հազային և ասացին. «Տուր ջրադացդ ցորեններս աղանք»: Հազան ասաց. «Իմ բնակարանիս չուրջը չինեցեք քարե ամուր պատ, այն ժամանակ ես կթողում ջրադացքիս մեջ ձեր ցորենը աղալու»: Նրա տան չորս կողմը հաստ ու բարձր քարե պատեր ու ամուր դռներ չինվեցան, և գաղթականները ադացին իրենց առաջին հունձի ցորենը: Ձմեռը անցավ, գարունը եկավ. գաղթականները նորեն վարուցանք երան: Ամառ նրանց Հազան. «Վարեցեք, ցանեցեք, հնձեցեք իմ արտերը, ապա թե ոչ՝ չեմ տալ ձեզ ոչ արտերդ ջրելու և ոչ ցո-

թեններդ ազատու Ջրաղացք»: Գաղթականները մխիթ ա-րին, և հոժարացան նրա մխիթը կատարելու. վարեցին, ցանեցին և հնձեցին նրա արտերը. իսկ ինքը Հագան ոչ միայն անանձնատ էր, այլև զլուխներուն վերա պտուտ գալով՝ տատիկ հրամաններ կուտար նրանց, առանց թաղէ թաղալոր էր նրանց վերա: Փոքր ինչ ժամանակ անցնելեն ետև, տատ Հագան. «Աբտերուս վերա աչխա-տելու համար ամառները ազբյուրես Ջուր կառնուք, բայց ի՞նչ վարձատրութիւն պիտի տաք ինձ տարվա ուրիչ եղանակներուն Ջուրս առնելու համար: Ահա ձեզ վերա հարկ կդնեմ. ամեն մեկ կուժ Ջուրին այսքան բուռ (ափուռ) ցորեն պիտի հատուցանեք ինձ. տալա թե ոչ՝ Ջուր չի կա ձեզ»: Եվ փորեց իր բակի (եզեա-րի) մեջ ահագին պրպա և ազբյուրի Ջուրը այնտեղ վազցուց: Գաղթականները անջուր մնացին: Ջուրը և մարդուս ամեն մի օր պետք է խմելու, լվայվելու, կե-րակուր եփելու, ձի ու տավար ջրելու: Զեղացիները ա-մեն օր իրենց պետք Ջուրի համար կտանեին իրենց ցո-րենը ու կուտային Հագային, նրա ամբարները կլցնեին և իբրաններին հացը կկտրեին: Բանի օր Հագայի տու-նը կչհննար, այնքան նրա դրացիները կպզտատանային, և որքան դրացիներու վիճակը կը դառնար՝ այնքան Հագան իրեն երջանիկ կհամարեր, վասնզի դա այն ան-դութ մարդոցմեն էր, որոնց տատ ուրախութիւնը կրազմանար ընկերներու տխրութիւններն ու չվաուերն-նեն:

«Ո՛վ մարդ, կասեին նրան դրացիները, Աստված «քեզ յոր առատ աչխովը օրհնել է. ոչ հացդ պակաս է «ոչ Ջուրդ և ոչ մեր պատիվն ու ծառայութիւնը քեզ-«մեն: Այդ անպատ Ջուրը, որ կժողովես անհատակ «ալբիւրիդ մեջ, դու երբեք կարողանալու չես սպառե-«ցնելու ոչ քու և ոչ զավակացդ պետքի համար. ժա-«մանակ-ժամանակ մեզի ալ տուր նրանեն. մեր բերան-«ները պանդակեցան, մեր անասունները կտանջվին, «մեր մարմինը ազատ մեջ փտեցավ, մեր արտերը կցա-«մաքին, խնայե մեզ, մեր կուշտ լինելովը դու երբեք

«սովելու չես. ինչո՞ւ անդուրի սրտով կնայիս մեր տը-
«վայտանքի վերա: Աղքատությունը կմաշե մեր կյան-
«քը, մեղքացիր մեզի»:

Հաղան առանց չահի ու տոկոսի ոչ մի կաթիլ ջուր
չէր տալ իր պրդայեն և ոչ մի բուռ ցորեն իր ամբա-
րեն. իր չուրջը կեցած մարդոց լացը, արտասուքը և
կողկողաձին աղաչանքը կբերկրեցնեին նրան, բայց և
դուխ չէին չարժել նրա սիրտը: Նա այն ժամանակ
միայն ուրախ և գնծում էր, երբ քովի կեցողները լացի
ու սուգի մեջ էին:

Մեկ գարնան գիշեր, երբ Հաղայի պրդան արդեն
բերնե բերան լիքն էր ու նրա բակի երկաթապատ դըռ-
նները ամուր փակված ու նիդերը վրանները դրած էին,—
հանկարծ դուռտյին ամպերը, կրակատց երկինքը և վե-
րեն սկսավ տեղալու (սաչանախ գալու). անձրևը այն-
պես սաստիկ էր, որ կարծես թե կաթիլներու տեղ եր-
կինքեն փարչեր կպարպեին: Ջուրը սկսավ պրդային
վայր թափվելու. և որովհետև քարե ամուր պատերը
և փակված դռները ջրի ճամփան փակել էին, ջուրը
սկսավ բակի մեջ բարձրանալու: Անձրևը քանի կերթար
կաստհանար և բակի ջուրը ավելի ու ավելի կբարձրա-
նար: Տան դռները չդիմացան ջրի ուժին, ծխնիները
թռան տախտակներեն, դռներր բացվեցան և ջուրը հեղե-
դատի պես ներս մտավ: Հաղան և նրա ընտանիքը
կանգնեցան աթոռներու ու սեղաններու վրա, բայց
ջուրը այնտեղ էլ հասավ նրանց: Բայց անձրևը չէր դա-
դարել, աղբյուրը առատ-առատ կրխեր դեռևեն, ջուրը
մտավ ամբարները, թրջեց ցորենը, ապականեց ամեն
կերակրաց պաշար և խեղդեց տարավ Հաղայի անա-
սունները: Անձրևը անընդհատ կուգար, ամպերը կա-
տաղի կգոռային. ջուրը հասավ Հաղայի կրունկին,
ծնկին, փորին, անթին և վիզին... «Մ՛ա, մխիթ արավ
Հաղան, ինչո՞ւ մեկ հրաչքով չի բացվիլ բակս դուռը,
որ ջուրը ազատ երթ դռներ և ինձ խեղդվելե ազա-
տեր»... Բայց բակի դուռը ինքը իր ձեռքովը ամուր
փակել ու կղպել էր, որ դրացիները գաղտուկ ներս

չմտնեին ու պապակած բերաններըը թաց չանեին: Ջուրը ճամփա չի գտավ, ավելի բարձրացավ ու խեղդեց նըրան, որ խեղճերեն մեկ կաթիլ կխնայեր:

Աղահ–հարուստ, ահա՛ քու պատկերը: Գանձը, որ դու այդպիսի ագահությամբ ժողովել և այդպիսի անդթությամբ պահել ես, մի օր քու և ընտանիքիդ կորստյան պատճառը պիտի լինի: Գանձը խելոք մարդու ձեռք Աստվածային զորություն է, իսկ հիմարի ձեռք՝ մահաբեր թույն է: Ես համոզված եմ, որ հարուստների մեծ մասը հիմարները են: Եթե նրանք հիմար չլինեին, ի՞նչպես կհոժարեին արբեցության, զեղխության, վավաշոտության և այլ այսպիսի կյանք կարճացնող վայելչությունների համար վատնել այն փողը, որն կարելի էր գործ դնել հօգուտ լուսավորության, աղքի հառաջադիմության և չքավոր եղբարց օգնության համար:

Չարուստ հայ, այո՛, կկորչին, մեր հայ եղբարքը չքավորության ցեխի մեջ, բայց և դու և քու սերունդը կկորչին անառակության մորատի մեջ: Գիտեմ, դու կկասկածես իմ խոսքերի ճշմարտությանը: Թե մարդ ես՝ ապա ցույց տուր ինձ մեկ հարուստ պապ, որի թոռն ևս այդ վայրկենիս հարուստ և երջանիկ լիներ...

Բայց ես առջևե դիտեմ, որ այս ամեն խոսքերս ձայն բարբառո հանապատի են:

Եվ առջևե դիտեմ, որ մեր չքավոր եղբարց օգնության դանձանակի մեջ ոչ մի հարուստ մեծատունի «հավասարաչափ լուման» չի գտնվիլ:

1883

———

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ես նշանած էի 5
2. Փառասեր 91
3. Տիկին եվ նաժիշտ (վեպ) 141
4. Ձախու 221
5. Փոստալեին Ավագը 262
6. Ազրյուբը 279

Պատ. խմբագիր՝ Ռ. ՁԱՐՅԱՆ

ՎՖ 12280. Պատ. 361. Տիրաժ 4000. տպ. 17 3/4 մ. հեղ. 12,9 մ.
Ստորագրված է տպագրության 1/XI 46 թ.

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգր. և հրատ. Վարչ.
№ 1 տպարան, Երևան, 1946

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220029207

II
29207

4° Lc 12 6a